VAYO-019-0240		VAYOTS DZOR	019-B-a	J-38-019	39	38	44	45	19	55	2218	400	900	25	III	L	D					
VAYO-019-0250		VAYOTS DZOR	019-B-a	J-38-019	39	36	50	45	20	28	2155	300	300	9	III	L	D					
VAYO-019-0260		VAYOTS DZOR	019-B-a	J-38-019	39	36	31	45	20	6.2	2150	500	850	31	III	L	D					
VAYO-019-0270		VAYOTS DZOR	019-B-a	J-38-019	39	34	51	45	20	37	1971	700	2100	82	III	L	D					
VAYO-019-0280		VAYOTS DZOR	019-B-a	J-38-019	39	39	30	45	21	25	2110	900	1250	73	III	L	D					
VAYO-019-0290		VAYOTS DZOR	019-B-a	J-38-019	39	38	39	45	21	15	2092	400	1050	19	III	L	D					
VAYO-019-0300		VAYOTS DZOR	019-B-a	J-38-019	39	37	47	45	20	58	2386	400	550	14	III	L	D					
VAYO-019-0310		VAYOTS DZOR	019-B-a	J-38-019	39	36	11	45	21	58	2036	350	500	10	III	L	D					
VAYO-019-0320		VAYOTS DZOR	Khndzorut	J-38-019	39	33	51	45	21	47	1973	1350	4300	315	III	M	C					
VAYO-019-0330		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	37	24	45	23	40	2067	550	550	23	III	L	D					
VAYO-019-0340		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	36	17	45	23	44	1994	950	2050	151	III	L	D					
VAYO-019-0350		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	35	18	45	22	56	1998	150	250	6	III	L	D					
VAYO-019-0360		VAYOTS DZOR	Khndzorut	J-38-019	39	34	26	45	22	25	1759	500	800	50	III	M	C					
VAYO-019-0370		VAYOTS DZOR	Khndzorut	J-38-019	39	33	34	45	22	44	1738	600	550	39	III	M	C					
VAYO-019-0380		VAYOTS DZOR	019-B-d	J-38-019	39	32	38	45	23	3.8	2026	100	100	1	III	L	D					
VAYO-019-0390		VAYOTS DZOR	019-B-d	J-38-019	39	32	35	45	23	29	1900	300	400	11	III	L	D					
VAYO-019-0400		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	39	42	45	24	3	1898	400	800	16	III	L	D					
VAYO-019-0410		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	38	26	45	24	53	1984	300	550	15	III	L	D					
VAYO-019-0420		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	36	47	45	23	53	1975	650	500	24	III	L	D					
VAYO-019-0430		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	35	50	45	24	18	1833	200	350	9	III	L	D					
VAYO-019-0440		VAYOTS DZOR	Khndzorut	J-38-019	39	35	5.9	45	24	45	1891	1250	1250	95	III	M	C					
VAYO-019-0450		VAYOTS DZOR	Khndzorut	J-38-019	39	32	49	45	24	5.4	1718	250	250	6	III	M	C					
VAYO-019-0460		VAYOTS DZOR	Khndzorut	J-38-019	39	32	14	45	24	40	1656	1800	1650	155	III	M	C					
VAYO-019-0470		VAYOTS DZOR	Azatek	J-38-019	39	39	41	45	25	27	1679	100	100	1	III	M	C					
VAYO-019-0471		VAYOTS DZOR	Azatek	J-38-019	39	39	23	45	25	58	1629	500	500	19	III	M	C					
VAYO-019-0472	Azatek	VAYOTS DZOR	Azatek	J-38-19	39	39	4	45	26	40	1578	720	1400	58	II	M	C					
VAYO-019-0473		VAYOTS DZOR	Azatek	J-38-019	39	38	45	45	25	51	1712	300	350	6	III	M	C					
VAYO-019-0480		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	37	59	45	25	43	1861	150	700	16	III	L	D					
VAYO-019-0490		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	37	27	45	25	57	1964	300	750	17	III	L	D					
VAYO-019-0500		VAYOTS DZOR	Khndzorut	J-38-019	39	33	57	45	25	37	1791	500	800	23	III	M	C					

Form-1 List of Landslides

Landslide ID	Landslide Name	Location			Coordinate and Altitude of Landslide Center						Scale			Hazard Level	Risk Level	Priority Rank for Field Survey	Remark (Hazard)	Remark (Risk)	Remark (Reason for priority)
					Latitude N			Longitude E			Altitude (m)	Width (m)	Length (m)						
		Marz /Yerevan City	Community (If no community, describe the map code)	Map Code (1:100,000)	Deg	Min	Sec	Deg	Min	Sec									
VAYO-019-0510		VAYOTS DZOR	019-B-d	J-38-019	39	31	57	45	25	40	1683	250	250	5	III	L	D		
VAYO-019-0520		VAYOTS DZOR	019-B-d	J-38-019	39	31	43	45	25	42	1645	200	300	8	III	L	D		
VAYO-019-0530		VAYOTS DZOR	019-B-d	J-38-019	39	31	44	45	25	55	1687	250	350	11	III	L	D		
VAYO-019-0540		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	37	10	45	26	53	1920	150	350	9	III	L	D		
VAYO-019-0550		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	36	53	45	27	31	1887	200	350	9	III	L	D		
VAYO-019-0560		VAYOTS DZOR	Khndzorut	J-38-019	39	33	59	45	26	38	1799	1250	950	57	III	M	C		
VAYO-019-0570		VAYOTS DZOR	019-B-d	J-38-019	39	31	53	45	26	37	1846	900	1750	89	III	L	D		
VAYO-019-0580		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	37	10	45	28	24	1816	650	950	34	III	L	D		
VAYO-019-0590		VAYOTS DZOR	Bartsruni	J-38-019	39	30	42	45	28	36	1869	1400	500	62	III	M	C		
VAYO-019-0600		VAYOTS DZOR	Bartsruni	J-38-019	39	30	19	45	28	27	1969	100	100	1	III	M	C		
VAYO-019-0610		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	39	26	45	29	38	1492	100	100	1	III	L	D		
VAYO-019-0620		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	37	59	45	29	52	1652	100	100	1	III	L	D		
VAYO-019-0630	Martiros	VAYOTS DZOR	Martiros	J-38-19	39	35	57	45	29	33	1889	1100	2400	148	I	H	A		
VAYO-019-0635		VAYOTS DZOR	019-B-b	J-38-019	39	35	31	45	29	24	1926	300	1500	42	III	L	D		
VAYO-019-0650		VAYOTS DZOR	Bartsruni	J-38-019	39	31	20	45	29	23	1968	100	100	1	III	M	C		
VAYO-020-0010		VAYOTS DZOR	Zaritap	J-38-020	39	38	13	45	30	4.2	1606	100	100	1	III	M	C		
VAYO-020-0020		VAYOTS DZOR	Martiros	J-38-020	39	35	60	45	30	40	1889	500	750	60	III	M	C		
VAYO-020-0021		VAYOTS DZOR	Martiros	J-38-020	39	35	34	45	30	60	1939	300	600	13	III	M	C		
VAYO-020-0030		VAYOTS DZOR	Martiros	J-38-020	39	34	39	45	30	37	2144	350	900	29	III	M	C		
VAYO-020-0040		VAYOTS DZOR	020-A-c	J-38-020	39	33	3.5	45	30	11	2188	400	1800	52	III	L	D		
VAYO-020-0050	Bardzruni upstream dam	VAYOTS DZOR	Bardzruni	J-38-20	39	31	57	45	31	17	2444	1000	2150	79	I	M	B		The risk on dam collapse, but not for the village
VAYO-020-0060		VAYOTS DZOR	020-A-c	J-38-020	39	31	23	45	30	30	2210	500	1400	45	III	L	D		
VAYO-020-0070		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	39	45	45	31	56	1431	650	1000	43	III	L	D		
VAYO-020-0080		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	39	26	45	31	59	1528	200	550	10	III	L	D		
VAYO-020-0090		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	39	20	45	32	7	1557	300	700	16	III	L	D		
VAYO-020-0095		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	38	54	45	32	34	1634	300	600	15	III	L	D		
VAYO-020-0100		VAYOTS DZOR	Zaritap	J-38-020	39	38	29	45	30	52	1556	350	600	22	III	M	C		
VAYO-020-0105	Zaritap	VAYOTS DZOR	Zaritap	J-38-20	39	38	15	45	30	57	1572	200	450	1	II	H	B		
VAYO-020-0110		VAYOTS DZOR	Zaritap	J-38-020	39	37	24	45	31	51	1900	1350	3950	304	III	M	C		
VAYO-020-0120		VAYOTS DZOR	Martiros	J-38-020	39	36	35	45	30	55	1812	500	2200	70	III	M	C		
VAYO-020-0130		VAYOTS DZOR	Martiros	J-38-020	39	36	12	45	31	59	2169	1000	500	41	III	M	C		
VAYO-020-0140		VAYOTS DZOR	Martiros	J-38-020	39	35	54	45	31	14	1989	300	500	14	III	M	C		
VAYO-020-0150		VAYOTS DZOR	Martiros	J-38-020	39	35	43	45	31	19	2008	250	500	12	III	M	C		
VAYO-020-0160		VAYOTS DZOR	Martiros	J-38-020	39	34	53	45	31	10	2101	300	350	11	III	M	C		
VAYO-020-0170		VAYOTS DZOR	Martiros	J-38-020	39	34	43	45	31	39	2292	550	1150	43	III	M	C		
VAYO-020-0180		VAYOTS DZOR	020-A-c	J-38-020	39	34	5.1	45	31	43	2441	500	1200	29	III	L	D		
VAYO-020-0190		VAYOTS DZOR	Akhta	J-38-020	39	38	56	45	33	23	1531	100	100	1	III	M	C		
VAYO-020-0200		VAYOTS DZOR	Akhta	J-38-020	39	39	8.9	45	33	30	1549	250	500	8	III	M	C		
VAYO-020-0210		VAYOTS DZOR	Akhta	J-38-020	39	38	39	45	33	3.5	1676	500	1600	43	III	M	C		
VAYO-020-0220		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	37	21	45	33	1.1	2072	650	1600	87	III	L	D		
VAYO-020-0230		VAYOTS DZOR	020-A-c	J-38-020	39	34	30	45	32	20	2422	300	500	14	III	L	D		
VAYO-020-0240		VAYOTS DZOR	020-A-c	J-38-020	39	34	3.2	45	33	2.4	2633	500	2000	90	III	L	D		
VAYO-020-0250		VAYOTS DZOR	020-A-c	J-38-020	39	33	41	45	32	46	2779	600	600	21	III	L	D		
VAYO-020-0260		VAYOTS DZOR	020-A-c	J-38-020	39	33	25	45	32	14	2711	900	1700	70	III	L	D		
VAYO-020-0280	Akhta	VAYOTS DZOR	Akhta	J-38-20	39	38	47	45	34	14	1728	300	370	22	I	M	B		The village is abandoned
VAYO-020-0290		VAYOTS DZOR	Akhta	J-38-020	39	38	15	45	34	13	1638	200	250	5	III	M	C		
VAYO-020-0291		VAYOTS DZOR	Akhta	J-38-020	39	38	5.2	45	34	19	1670	150	250	5	III	M	C		
VAYO-020-0300		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	37	47	45	33	43	1900	550	2300	98	III	L	D		
VAYO-020-0320	Gomk-Gomur	VAYOTS DZOR	Gomk-Gomur	J-38-20	39	37	31	45	34	24	1941	570	1100	46	I	M	B		Two families remain living
VAYO-020-0321		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	37	54	45	34	52	1732	300	300	10	III	L	D		
VAYO-020-0322		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	38	5	45	34	34	1704	150	250	6	III	L	D		
VAYO-020-0323		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	37	41	45	35	6.9	1791	200	400	8	III	L	D		
VAYO-020-0330		VAYOTS DZOR	020-A-c	J-38-020	39	35	2.9	45	33	44	2577	1100	3300	195	III	L	D		
VAYO-020-0340		VAYOTS DZOR	Artavan	J-38-020	39	39	23	45	36	2.5	1889	2300	1500	272	III	M	C		

Form-1 List of Landslides

Landslide ID	Landslide Name	Location			Coordinate and Altitude of Landslide Center						Scale			Hazard Level	Risk Level	Priority Rank for Field Survey	Remark (Hazard)	Remark (Risk)	Remark (Reason for priority)
					Latitude N			Longitude E			Altitude (m)	Width (m)	Length (m)						
		Marz /Yerevan City	Community (If no community, describe the map code)	Map Code (1:100,000)	Deg	Min	Sec	Deg	Min	Sec									
VAYO-020-0350		VAYOTS DZOR	Kapuyt	J-38-020	39	37	14	45	35	11	1891	450	500	22	III	M	C		
VAYO-020-0360		VAYOTS DZOR	Kapuyt	J-38-020	39	37	5.2	45	35	20	1912	400	1000	31	III	M	C		
VAYO-020-0361	Kapuyt	VAYOTS DZOR	Kapuyt	J-38-20	39	37	28	45	35	40	1934	380	480	11	I	M	B		
VAYO-020-0362		VAYOTS DZOR	Kapuyt	J-38-020	39	37	42	45	35	45	1940	100	100	1	III	M	C		
VAYO-020-0370		VAYOTS DZOR	Kapuyt	J-38-020	39	36	41	45	35	20	2035	550	1200	51	III	M	C		
VAYO-020-0380		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	36	17	45	35	37	2135	350	850	25	III	L	D		
VAYO-020-0390		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	36	29	45	35	58	1972	350	450	13	III	L	D		
VAYO-020-0400		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	35	50	45	36	15	2164	500	1050	54	III	L	D		
VAYO-020-0401		VAYOTS DZOR	020-A-a	J-38-020	39	36	9.8	45	36	41	2164	250	700	18	III	L	D		
VAYO-020-0410	Aratavan-1	VAYOTS DZOR	Aratavan	J-38-20	39	39	15	45	36	52	1887	600	500	39	II	H	B		
VAYO-020-0420		VAYOTS DZOR	Aratavan	J-38-020	39	34	52	45	36	22	2414	1300	2300	84	III	M	C		
VAYO-020-0430		VAYOTS DZOR	Aratavan	J-38-020	39	35	33	45	37	29	2252	500	700	20	III	M	C		
VAYO-020-0440	Aratavan-2	VAYOTS DZOR	Aratavan	J-38-20	39	39	28	45	37	47	2072	3500	5650	1179	II	M	C		
VAYO-020-0450		VAYOTS DZOR	020-A-b	J-38-020	39	37	57	45	38	28	2170	400	600	16	III	L	D		
VAYO-020-0460		VAYOTS DZOR	020-A-b	J-38-020	39	37	25	45	38	52	2290	400	900	20	III	L	D		
VAYO-020-0470		VAYOTS DZOR	020-A-b	J-38-020	39	37	11	45	39	29	2404	500	800	31	III	L	D		
VAYO-020-0480		VAYOTS DZOR	020-A-b	J-38-020	39	39	27	45	41	46	2536	1200	400	52	III	L	D		
VAYO-020-0490		VAYOTS DZOR	020-A-b	J-38-020	39	38	47	45	41	49	2686	400	700	21	III	L	D		
VAYO-020-0500		VAYOTS DZOR	020-A-b	J-38-020	39	37	31	45	40	48	2761	600	900	32	III	L	D		
VAYO-020-0510		VAYOTS DZOR	020-A-b	J-38-020	39	35	53	45	40	19	2648	400	1200	25	III	L	D		
YERE-137-0010		YEREVAN	Spandaryan	K-38-137	40	13	5.3	44	26	25	1107	200	250	7	III	M	C		
YERE-138-0020		YEREVAN	138-C-a	K-38-138	40	6	33	44	31	43	1023	800	400	22	III	L	D		
YERE-138-0060	Sari tag	YEREBAN	Sari tag streets N20,26,27	K-38-138	40	9	37	44	32	11	1056	300	550	25	II	H	B	Houses,public buildings	(5,000 persons)
YERE-138-0070		YEREVAN	Verin Jrashen	K-38-138	40	7	50	44	34	27	1137	250	300	8	III	M	C		
YERE-138-0080		YEREVAN	138-C-a	K-38-138	40	7	39	44	33	56	1100	100	100	1	III	L	D		
YERE-138-0082		YEREVAN	Villas	K-38-138	40	6	22	44	30	16	987	100	100	1	III	M	C		
YERE-138-0083		YEREVAN	Villas	K-38-138	40	6	20	44	30	34	995	100	100	1	III	M	C		
YERE-138-0084		YEREVAN	Villas	K-38-138	40	6	13	44	30	49	1026	100	100	1	III	M	C		
YERE-138-0085	Yerevan Chemical plant	YEREBAN	Chemical plant	K-38-138	40	6	19	44	31	24	1022	260	414	8	I	M	B	Risk on air intake of the Nairit Plant,road 6(8) Å, 2 water pipelines of 1000mm diameter, a private plant and	
YERE-138-0086		YEREVAN	Nubarashen	K-38-138	40	5	53	44	31	57	1114	300	300	5	III	M	C		
YERE-138-0087		YEREVAN	Nubarashen	K-38-138	40	6	19	44	32	8.5	1088	200	200	3	III	M	C		
YERE-138-0088	Yerevan bypass road	YEREBAN	By-pass road	K-38-138	40	6	13	44	32	47	1124	410	618	16	I	M	B		
YERE-138-0089	Yerevan hospital	YEREBAN	hospital	K-38-138	40	6	24	44	33	28	1136	400	472	23	I	M	B		
YERE-138-0090	Nubarashen graveyard	YEREBAN	Nubarashen	K-38-138	40	6	29	44	33	30	1131	699	290	11	I	H	A	Tombs road and other objects	Epidemic danger due to thumbs destruction, threatens the roundabout road and other communications.
YERE-138-0091		YEREVAN	Nubarashen	K-38-138	40	6	26	44	33	52	1200	300	300	7	III	M	C		
YERE-138-0100		YEREVAN	138-C-a	K-38-138	40	6	47	44	33	48	1151	300	700	20	III	L	D		
YERE-138-0110		YEREVAN	Jrvej	K-38-138	40	10	16	44	34	47	1196	350	400	16	III	M	C		
YERE-138-0120		YEREVAN	Jrvej	K-38-138	40	10	28	44	35	17	1245	500	500	21	III	M	C		
YERE-138-0138		YEREVAN	138-C-a	K-38-138	40	7	22	44	33	37	1114	300	400	10	III	L	D		
YERE-138-0139	Yerevan summer houses, and bypass road-1	YEREBAN	summer houses and by-pass road	K-38-138	40	6	56	44	34	24	1202	390	1135	31	I	M	B		
YERE-138-0140	Yerevan summer houses and bypass road-2	YEREBAN	summer houses and by-pass road	K-38-138	40	7	17	44	34	47	1229	650	830	45	I	M	B		

Form-1 List of Landslides

Landslide ID	Landslide Name	Location			Coordinate and Altitude of Landslide Center						Scale			Hazard Level	Risk Level	Priority Rank for Field Survey	Remark (Hazard)	Remark (Risk)	Remark (Reason for priority)	
					Latitude N			Longitude E			Altitude (m)	Width (m)	Length (m)							Area (ha)
		Marz /Yerevan City	Community (If no community, describe the map code)	Map Code (1:100,000)	Deg	Min	Sec	Deg	Min	Sec	Altitude (m)									
YERE-138-0141	Yerevan summer houses and bypass road-3	YEREBAN	summer houses and by-pass road	K-38-138	40	7	36	44	34	20	1160	170	170	10	I	M	B			
YERE-138-0142	Yerevan summer houses and bypass road-4	YEREBAN	summer houses and by-pass road	K-38-138	40	7	37	44	35	2	1237	680	1798.5	4	I	M	B			
YERE-138-0143	Yerevan summer houses and bypass road-5	YEREBAN	summer houses and by-pass road	K-38-138	40	7	51	44	35	11	1247	462	818	88	I	M	B			
YERE-138-0144		YEREVAN	138-C-a	K-38-138	40	8	15	44	35	53	1289	700	500	32	III	L	D			
YERE-138-0145		YEREVAN	138-C-a	K-38-138	40	8	23	44	34	28	1110	100	100	1	III	L	D			
YERE-138-0146		YEREVAN	138-C-a	K-38-138	40	8	33	44	34	30	1122	200	400	8	III	L	D			
YERE-138-0147		YEREVAN	138-C-a	K-38-138	40	8	17	44	34	38	1131	150	300	4	III	L	D			
YERE-138-0150		YEREVAN	Avan	K-38-138	40	13	2.4	44	35	42	1379	1100	1300	102	III	M	C			
YERE-138-0160		YEREVAN	Jrvej	K-38-138	40	10	56	44	36	14	1334	100	100	1	III	M	C			
YERE-138-0161		YEREVAN	Jrvej	K-38-138	40	11	2.2	44	36	28	1416	100	100	1	III	M	C			
YERE-138-0170		YEREVAN	Jrvej	K-38-138	40	10	39	44	35	42	1295	400	300	10	III	M	C			
YERE-138-0180		YEREVAN	Shorbulakh	K-38-138	40	9	34	44	35	54	1224	300	300	10	III	M	C			
YERE-138-0200		YEREVAN	138-C-a	K-38-138	40	11	21	44	37	38	1519	700	550	33	III	L	D			
YERE-138-0210		YEREVAN	138-C-a	K-38-138	40	6	45	44	36	59	1226	250	300	7	III	L	D			
YERE-138-0220		YEREVAN	138-C-a	K-38-138	40	6	55	44	37	5.5	1275	100	100	1	III	L	D			
YERE-138-0230		YEREVAN	138-C-b	K-38-138	40	7	57	44	37	33	1393	700	1100	68	III	L	D			
YERE-138-0240		YEREVAN	138-C-b	K-38-138	40	8	0.3	44	38	19	1426	650	850	55	III	L	D			
YERE-138-0260		YEREVAN	138-C-b	K-38-138	40	7	36	44	38	21	1391	550	750	40	III	L	D			
YERE-138-0270		YEREVAN	138-D-c	K-38-138	40	7	13	44	38	3.1	1314	300	400	10	III	L	D			



Առանձնացված հավելված 2 Սողանքային աղետի կառավարման պլան



Մաս 1	Հիմնական դրույթներ .....	3
Գլուխ 1	Հիմնական դրույթներ .....	1
1.1	Պլանի նպատակն ու ուղղվածությունը .....	1
1.2	Առաջնահերթություններ պլանի համար .....	4
1.4	Այլ դրույթներ .....	4
1.5	Պլանի կառուցվածը և բովանդակությունը .....	5
Գլուխ 2	Ընդհանուր ակնարկ և վնասի գնահատում .....	9
2.1	Սողանքների ընդհանուր նկարագիր .....	9
2.2	Սողանքի հիմնական գործոններ .....	9
2.3	Մարդկային գործունեության հետևանքով առաջացած հարուցող գործոններ .....	13
2.4	Սողանքների բաշխվածությունն ու առաջնահերթությունը .....	13
2.5	Սողանքային աղետ .....	14
Գլուխ 3	Միջոցառումներ իրականացնող մարմինների հիմնական պատասխանատվությունները .....	18
3.1	Հիմնարար սկզբունքներ .....	18
3.2	Առնչվող նախարարությունների և մարզերի պատասխանատվությունը .....	19
3.3	Համայնքների պատասխանատվությունը .....	19
3.4	Բնակիչների պատասխանատվությունը .....	20
Մաս 2	Մեղմացման պլան .....	21
Գլուխ 4	Մեղմացման միջոցառումների խթանում .....	22
4.1	ՀՀ ՏԿԱԻՆ և այլ նախարարությունների դերը մեղմացման միջոցառումների իրականացման գործում .....	22
4.2	ՀՀ ՏԿԱԻՆ և այլ նախարարությունների գործողությունները .....	22
Գլուխ 5	Սողանքակայուն մարդկային ռեսուրսների ձևավորում .....	24
5.1	Բնակիչների դերը .....	24
5.2	Բնակիչների աղետների կառավարման ինքնուրույն գործողությունների խթանում .....	24
5.3	Աղետների կառավարման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում և աղետների մասին տեղեկատվության տարածում .....	25
Գլուխ 6	Սողանքակայուն համայնքի ձևավորում .....	29
6.1	Համայնքի դերը .....	29
6.2	Աղետների կառավարման ինքնուրույն խմբերի ստեղծում և զարգացում .....	29
6.3	Համայնքի աղետի կառավարման պլանի մշակում .....	30
6.4	Սողանքի շարժի վերաբերյալ տեղեկատվության հավաքում, փոխանցում և զեկուցում .....	30
6.5	Համայնքային սեփականությունը հանդիսացող շենքերի և կառույցների անվտանգության ապահովում, վերանորոգում և օգտագործման վերահսկում ....	31
6.6	Աղետների վերաբերյալ կրթության և ուսուցման խթանում .....	31
6.7	Օգնության հայտ և տեղեկատվության ու նյութերի կիսում .....	32
6.8	Օժանդակություն և համագործակցություն համայնքների աղետների կառավարման գործողությունները խթանելու համար .....	32
6.9	Տնտեսության և արդյունաբերության վերակառուցման նախապատրաստում .....	33
Մաս 3	Պատրաստվածության պլան .....	35
Գլուխ 10	Պատրաստվածության և օժանդակության խթանման գործընթաց և խթանմանը նպաստող համակարգ .....	36
Գլուխ 11	Բնակիչների և համայնքների կողմից պատրաստվածության խթանում և	

	նպաստող համակարգ .....	38
Գլուխ 12	Մոնիթորինգի տվյալների մշակում և մոնիթորինգի համակարգի ամրապնդում:.....	40
Գլուխ 13	Պատրաստվածություն կապված տեղեկատվության հավաքման և փոխանցման հետ .....	41
Գլուխ 14	Պատրաստվածություն հրատապ հակասողանքային միջոցառումների և շրջանցիկ երթուղիների համար.....	42
Գլուխ 15	Պատրաստավածություն ազդարարման, տարահանման և դրա ուղղորդման համար.....	43
Գլուխ 16	Պատրաստվածություն անվտանգության, երթևեկության վերահսկման ու հրատապ փոխադրման համար.....	44
Գլուխ 17	Պատրաստավածություն որոնողափրկարարական աշխատանքներին .....	45
Գլուխ 18	Պատրաստվածություն հրատապ բուժօնության, առողջապահության, խմելու ջրի և սննդի .....	46
Գլուխ 19	Պատրաստվածություն կենսապահովման գծերի և ենթակառուցվածքների ժամանակավոր վերանորոգման համար .....	48
Գլուխ 20	Պատրաստվածություն ժամանակավոր տեղակայման, վերաբնակեցման և կենսամիջոցների համար.....	49
Մաս 4	ԱԻ Արձագանքման պլան.....	51
Գլուխ 21	ԱԻ արձագանքման հիմունքները (ոխակի մեծանալու փուլ, մասնակի փլուզման և վնասների փուլ, լայնամաշտաբ փլուզման և վնասների փուլ) .....	52
Գլուխ 22	Հրատապ միջոցառումների համակարգն ու գործունեությունը ըստ փուլի և առնչվող կազմակերպությունների միջև փոխհամագործակցությունը .....	54

Մաս 1 Հիմնական դրույթներ



## Գլուխ 1 Հիմնական դրույթներ

### 1.1 Պլանի նպատակն ու ուղղվածությունը

Այս պլանի նպատակն է նվազեցնել սողանքային աղետի ռիսկերն ու վնասները՝ ձեռնարկելով համապատասխան հակասողանքային միջոցառումներ առնչվող բոլոր մարմինների պատասխանատվության իրականացման և այդ մարմինների միջև համագործակցության միջոցով: Այս պլանն ուշադրություն է դարձնում կազմակերպչական կառուցվածքին (խնդիրների կիսում և համագործակցություն), կարողությունների զարգացմանը և նյութերի (ֆինանսական ռեսուրսների)/ տեղեկատվության կառավարմանը:

Այս պլանի քաղաքականությունն է ցույց տալ միջոցառումների ուղղվածությունը սողանքային աղետի համապարփակ կառավարման միջոցառումներն իրականացնելու համար՝ խթանելով ռիսկի նվազեցման գործողությունները, որոնք ներառում են պլանների մշակումն ու իրականացումը, ինչպես նաև սահմանելով սողանքային աղետից հետո վերակառուցման և վերականգնման շրջանակը:


Սողանքային աղետի համապարփակ կառավարման միջոցառումները հիմնված են “Աղետի համապարփակ կառավարման գործողությունների խթանում” գաղափարի վրա, որը կիրառվում է նաև մյուս տարերային աղետների դեպքում: “Աղետի համապարփակ կառավարման գործողությունների խթանում” նշանակում է, որ ամբողջ անձնակազմը և բոլոր մարմիններն ինքնուրույն և ակտիվորեն խթանում են աղետի կառավարման գործողությունները՝ հիմնվելով պլանների վրա, ստորև նշված մի քանի տեսանկյուններից:

#### (1) Աղետների հեռանկատ կառավարում (վերջնական նպատակների սահմանում)

Սողանքային աղետին առնչվող ռիսկերը մեղմացնելու նպատակով, վերջնական նպատակները սահմանելիս, խթանվում են սողանքային աղետի կառավարման գործողությունները, որոնք են՝ 1) մարդկային կյանքերի փրկումը, 2) բնակիչների կենսամիջոցների ապահովումը, 3) սոցիալական/տնտեսական համակարգերի պահպանումը և 4) տարածքների կառավարման պահպանումը:

#### (2) Աղետների ընդհանուր կառավարում (ուղղաձիգ և հորիզոնական հարթությունների վրա գտնվող կազմակերպություններում պատասխանատվությունների կիսում, ինչպես նաև համագործակցություն բոլոր շահառուների կողմից գործողությունների իրականացման ոլորտում՝ սեփականության զգացումով)


Ներգրավված բոլոր անձինք և կազմակերպությունները պետք է խթանեն սողանքային աղետի կառավարման գործողությունները: Սողանքային աղետի կառավարման գործողությունները հեշտացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի ներգրավված բոլոր անձինք/կազմակերպությունները հստակեցնեն իրենց դերերը և ներգրավվեն գործողություններում սեփականության զգացումով՝ միմյանց հետ համակարգման միջոցով (տես Նկար 1.1):



Նկար 1.1 Ուղղաձիգ և հորիզոնական հարթություններում գտնվող կազմակերպությունների համագործակցություն

(3) Աղետների սիստեմատիկ կառավարում (Գործողությունների հերթականություն աղետի կառավարման ցիկլի շրջանակներում)

Ստղանքային աղետի ռիսկերը նվազեցնելու նպատակով կարևոր է, որպեսզի մեղմացման գործողությունները և անհապաղ արձագանքման գործողություններ կատարելու պատրաստվածությունը նախաձեռնվեն մինչև աղետի տեղի ունենալը: Աղետի տեղի ունենալուց անմիջապես հետո իրականացվող արձագանքմանը պետք է հետևեն վերականգնման/վերակառուցման գործողությունները: Ավելին, վերականգնումը/վերակառուցումը պետք է իրականացվի հետևողական մոտեցմամբ ստղանքակալուն զարգացման համար՝ ոչ միայն վերականգնելով մինչստղանքային վիճակի, այլև կապելով աղետի մեղմացման և պատրաստվածության հետ ապագա ստղանքների համար: (Տես Նկարներ 1.2 և 1.3).



Նկար 1.1.2 Ստղանքի կառավարման ցիկլի գաղափար



		Սողանքի առաջացում			
Մասնակ		72 ժամ հետո	10 տարի հետո	100 տարի հետո	100 տարի հետո?
Աղետի կառավարման ցիկլ	ժամանակ	72 ժամ հետո	10 տարի հետո	100 տարի հետո	100 տարի հետո?
Մինչ	Անհապաղ արձագանքում	Կյանքի փրկման առաջնահերթություն	նորոշ չափով տանելի վիճակի	ձեռքբերում	
Անմիջ. հետո	Վերականգնում	Ընդունելի	վիճակի ձեռքբերում		
Հետո	Վերակառուցում		Վերականգնում մինչև սողանքային նորմալ վիճակի		
Հետո	Մեղմացում/ պատրաստվածություն			Մինչև սողանքային վիճակից ավելի լավ վիճակի ձեռքբերում	

Նկար 1.3 Աղետի կառավարման ցիկլի ներքո իրականացվող գործողությունները ժամանակագրական կարգով

- (4) Աղետի որոշակի/ արդյունավետ կառավարում (գործողություններ ռիսկի մասին իրագեկվելիս)

Աղետի կառավարման գործողություններն արդյունավետ իրականացնելու նպատակով, նախևառաջ վտանգը և խոցելիությունը, ինչպես նաև ռիսկերը՝ իրենց տեղական տարատեսակներով, գիտակցելուց հետո, անհրաժեշտ է մշակել աղետի կառավարման պլան և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ արձագանքման միջոցառումների կարևորության, անհապաղության և արդյունավետության տեսանկյունից ընտրված ռիսկերը մեղմելու համար:

- (5) Աղետի կոնկրետ և իրագործելի կառավարում (մարդու կարողություններին համապատասխանող գործողություններ և դրանց կուտակում)

Ինչ վերաբերում է սողանքին, անհրաժեշտ է իրականացնել երկրաբանական հետազոտություն, մոնիթորինգ, վերլուծություն կանխատեսելու համար, թե երբ, որտեղ և որքան մեծ վտանգ/վնաս կարող է առաջանալ, չնայած սողանքային գոտիները կարող են հստակեցվել աշխարհագրական առանձնահատկությունների և անցած վնասների հիման վրա: Բացի այդ, անհրաժեշտ է իրականացնել մանրամասն հետազոտություն և մոնիթորինգ արդյունավետ միջոցառումներ մշակելու և իրականացնելու համար: Հայաստանում կա ավելի քան 1,300 կարևոր սողանք, որոնք պահանջում են առաջնահերթ միջոցառումներ, բայց դժվար է կարճ ժամանակահատվածում իրականացնել բավարար միջոցառումներ: Հետևաբար, կձեռնարկվեն իրատեսական միջոցառումներ, ինչպիսիք են մոնիթորինգը, ելնելով բնակիչների պահանջներից և ֆինանսական տեսանկյունից, ինչպես նաև ռիսկի գնահատման հնարավոր մակարդակից, չնայած անհապաղ արձագանքում պետք է իրականացվի կոնկրետ դեպքերում: Սողանքային աղետի ռիսկերը կնվազեն իրագործելի միջոցառումների կուտակման արդյունքում: Միջոցառումների իրականացման հետ միասին պահանջվում է թարմացնել ռիսկի գնահատման արդյունքները և վերանայել պլանները՝ հիմնվելով թարմացվող գնահատման վրա:

---

## 1.2 Առաջնահերթություններ պլանի համար

Այս պլանի առաջնահերթ կետերը հետևյալն են՝ հաշվի առնելով հարցերը.

- ա) Սողանքային աղետի վերաբերյալ տեղեկատվության կիրառում՝ օգտագործելով սողանքների բաշխվածության քարտեզները և սողանքի գրանցամատյանները
- բ) Մոնիթորինգի խթանում նախնական միջոցառումները և կառուցվածքային միջոցառումների համար հիմնական տեղեկատվության կարգավորումը խթանելու նպատակով
- գ) Բնակիչների իրազեկվածության բարձրացում և վերջիններիս՝ աղետի կառավարման ինքնուրույն գործողությունների խթանում, ինչպես նաև կենտրոնական և տեղական կառավարությունների օժանդակում
- դ) Հակասողանքային միջոցառումների խթանում՝ հաշվի առնելով բնակիչների կյանքի ապահովումը և տարածքի տնտեսական գործունեությունը
- ե) Նախնական միջոցառումների արդյունավետության բարձրացում պատշաճ հողօգտագործման և բնակիչների գործողությունների խթանման միջոցով
- զ) Միջոցառումների խթանում՝ աղետի ժամանակ ուշադրություն դարձնելով խոցելի մարդկանց

Կմշակվեն գործողությունների պլաններ դրանց հետ կապված միջոցառումների սահուն և ժամանակին իրականացման համար:

## 1.4 Այլ դրույթներ

### (1) Մանրամասն պլաններ

Տարածաշրջանային յուրահատկություններով յուրաքանչյուր սողանքային տարածքի համար համապատասխան միջոցառումներ իրականացնելու, ինչպես նաև յուրաքանչյուր կազմակերպության խնդիրների հստակ բաշխմամբ առնչվող այլ կազմակերպությունների հետ համագործակցությունը խթանելու նպատակով անհրաժեշտ է մշակել կոնկրետ սողանքային տարածքի մանրամասն պլան: Ստորև բերված կազմակերպությունները, փոխադարձ համագործակցելով, կմշակեն մանրամասն պլան ՀՀ ՏԿԱԻՆ հետ քննարկման միջոցով, և մշակված պլանը կհաստատվի ՀՀ ՏԿԱԻՆ կողմից:

- Նախարարություններ, որոնց ենթակայության տակ գտնվող կառույցները գտնվում են սողանքային գոտում և որոնք կրում են պատասխանատվություն այդ տարածքների համար
- Սողանքային աղետի կառավարմանն առնչվող կրթությամբ զբաղվող ինստիտուտ և կազմակերպություն
- Սողանքային գոտում գտնվող համայնք

### (2) Պլանի ներկայացում և թարմացում

Տարեկան վերանայումների միջոցով ամեն տարի անհրաժեշտ ձևափոխություններ պետք է կատարվեն սույն, ինչպես նաև մանրամասն պլաններում:

Կիրականացվի կրթական/ուսումնական գործունեություն, ներառյալ՝ կազմակերպությունների անդամներին իրենց դերերի մասին տեղեկացնելը, սույն պլանի հետ նրանց ծանոթացնելու և սողանքային աղետի կառավարմանն առնչվող իրենց հմտությունները բարելավելու համար:

(3) Ռիսկի կառավարման մարմինների հիմնական պատասխանատվությունը

Սողանքի հասցրած վնասի մեղմացումը հիմնված է հետևյալ հիմնական գաղափարների վրա.

- ա) Անհատ բնակիչները կներգրավվեն ինքնաօգնության գործողություններում “Դու պետք է պատասխանատու լինես սեփական ապահովությունն ու ունեցվածքը պաշտպանելու համար” գաղափարի ներքո:
- բ) Սողանքային աղետի ռիսկ ունեցող համայնքները (հիմնականում գյուղապետարանը) կներգրավվեն ինքնաօգնության գործողություններում “Դու պետք է պատասխանատու լինես քո համայնքի կյանքն ու միասնականությունը պաշտպանելու համար” գաղափարի ներքո:
- գ) Ռիսկի կառավարմամբ զբաղվող կազմակերպությունները կներգրավվեն ինքնաօգնության/ փոխօգնության գործողություններին նպաստող հասարակության օգնության գործողություններում “սողանքակայուն ավելի ուժեղ հասարակություն ձևավորելու համար”:

Ելնելով վերոնշյալ հիմնական գաղափարներից՝ սողանքային աղետի կառավարման կազմակերպությունները/ համայնքները/ բնակիչները կիրականացնեն համապատասխան պատասխանատվություններ:

### 1.5 Պլանի կառուցվածքը և բովանդակությունը

Սույն պլանը բաղկացած է յոթ մասից, որոնք միասին ունեն 37 գլուխ (տես Աղյուսակ 1.4):

Մաս 1: Հիմնական դրույթները (Գլուխ 1-ից Գլուխ 3) բացատրում են սողանքային աղետի կառավարման գաղափարը, ինչպես նաև սողանքների բաշխվածությունն ու իրավիճակը (գրանցամատյաններ)

Մաս 2: Մեղմացման պլանը (Գլուխ 4-ից Գլուխ 9) բացատրում է ռիսկի նվազեցման գործողությունները, ներառյալ՝ սողանքակայուն հասարակության և համայնքների զարգացումը, ինչպես նաև մեղմացման միջոցառումների ակնարկը:

Մաս 3: Պատրաստվածության պլանը (Գլուխ 10-ից Գլուխ 20) բացատրում է նախնական միջոցառումները, ինչպիսիք են մոնիթորինգը, տեղեկատվության կառավարումը և փրկարարական/տարահանման/այլ անհապաղ արձագանքման նախապատրաստումը:

Մաս 4: Անհապաղ արձագանքման պլանը (Գլուխ 21-ից Գլուխ 31) բացատրում է սողանքի ժամանակ փաստացի արձագանքման գործողությունները՝ հաշվի առնելով սողանքի ակտիվության աստիճանը:

---

Մաս 5: Վերականգնման/վերակառուցման պլանը (Գլուխ 32-ից Գլուխ 35) բացատրում է անհապաղ արձագանքումից հետո էլ ավելի հարմարավետ համայնքի ստեղծման համար մշակված վերականգնման/վերակառուցման պլանները:

Մաս 6: Օժանդակության պլանը (Գլուխ 36) բացատրում է այլ տարածքներում սողանքային աղետների համար իրականացվող օժանդակության գործողություններին ուղղված պլանը:

Մաս 7: Գործողությունների պլանը բացատրում է կարևոր հարցերի իրականացման պլանների ընդհանուր ակնարկը:

Աղյուսակ 1.5.1 Պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Կառուցվածք	Բովանդակություն
<p>Մաս 1 Հիմնական դրույթներ</p>	<p>Գլուխ 1 Հիմնական դրույթներ (Թիրախ, քաղաքականություն և կարևոր հարցեր)</p> <p>Գլուխ 2 Սողանքային աղետները և վնասների ընդհանուր նկարագիրը (Սողանքների բաշխվածության քարտեզ և գրանցամատյան)</p> <p>Գլուխ 3 Ռիսկի կառավարման մարմինների (Կառավարություն, առնչվող կազմակերպություն, բնակիչներ և համայնքներ) հիմնական պատասխանատվությունները</p>
<p>Մաս 2 Մեղմացման պլան</p>	<p>Գլուխ 4 Ակտիվ միջոցառումների խթանման ընթացքը և խթանմանը նպաստող համակարգը</p> <p>Գլուխ 5 Սողանքակայուն հասարակության զարգացում (բնակիչների պատասխանատվություն, աղետների վերաբերյալ կրթության և ինքնուրույն գործողությունների խթանում)</p> <p>Գլուխ 6 Սողանքակայուն համայնքի զարգացում (համայնքի պատասխանատվություն, համայնքի կողմից իրականացվելիք ակտիվ միջոցառումներ)</p> <p>Գլուխ 7 Սողանքակայուն մարզի զարգացում (Հողօգտագործման և ենթակառուցվածքների զարգացում՝ հաշվի առնելով սողանքի ռիսկը</p> <p>Գլուխ 8 Հակասողանքային միջոցառումներ և մոնիթորինգ (ընտրություն, նախագծում և իրականացում)</p> <p>Գլուխ 9 Ուսումնասիրություն և հետազոտություն սողանքային երևույթի և սողանքային աղետների վերաբերյալ</p>
<p>Մաս 3 Պատրաստվածության պլան</p>	<p>Գլուխ 10 Պատրաստվածության և օժանդակության խթանման գործընթաց և խթանմանը նպաստող համակարգ</p> <p>Գլուխ 11 Բնակիչների և համայնքների կողմից պատրաստվածության խթանում և նպաստող համակարգ</p> <p>Գլուխ 12 Մոնիթորինգի տվյալների մշակում և մոնիթորինգի համակարգի ամրապնդում</p> <p>Գլուխ 13 Պատրաստվածություն կապված տեղեկատվության հավաքման և փոխանցման հետ</p> <p>Գլուխ 14 Պատրաստվածություն հրատապ հակասողանքային միջոցառումների և շրջանցիկ երթուղիների համար</p> <p>Գլուխ 15 Պատրաստվածություն ազդարարման, տարահանման և դրա ուղղորդման համար</p> <p>Գլուխ 16 Պատրաստվածություն անվտանգության, երթևեկության վերահսկման և հրատապ փոխադրման համար</p> <p>Գլուխ 17 Պատրաստվածություն որոնողափրկարարության համար</p> <p>Գլուխ 18 Պատրաստվածություն հրատապ բուժօգնության, առողջապահության, խմելու ջրի և սննդի համար</p> <p>Գլուխ 19 Պատրաստվածություն կենսապահովման գծերի և ենթակառուցվածքների ժամանակավոր վերանորոգման համար</p> <p>Գլուխ 20 Պատրաստվածություն ժամանակավոր տեղակայման, վերաբնակեցման և կենսամիջոցների համար</p>
<p>Մաս 4 Անհապաղ արձագանքման պլան</p>	<p>Գլուխ 21 ԱԻ արձագանքման հիմունքները (ռիսկի մեծանալու փուլ, մասնակի փլուզման և վնասների փուլ, լայնամասշտաբ փլուզման և վնասների փուլ)</p> <p>Գլուխ 22 Հրատապ միջոցառումների համակարգն ու գործունեությունը ըստ փուլի և առնչվող կազմակերպությունների միջև համագործակցությունը</p>

		<p>Գլուխ 23 Մոնիթորինգի ուժեղացում</p> <p>Գլուխ 24 Մոնիթորինգի և վնասների վերաբերյալ տեղեկատվության հավաքում և փոխանցում</p> <p>Գլուխ 25 Հրատապ հակատղանքային միջոցառումների իրականացում և շրջանցիկ երթուղիների կազմակերպում</p> <p>Գլուխ 26 Ազդարարում, տարահանում և դրա ուղղորդում</p> <p>Գլուխ 27 Անվտանգություն, երթուղիության վերահսկում և հրատապ փոխադրում</p> <p>Գլուխ 28 Որոնողափրկարարություն</p> <p>Գլուխ 29 Հրատապ բուժօգնություն, առողջապահություն, խմելու ջուր և սնունդ</p> <p>Գլուխ 30 Կենսապահովման գծերի և ենթակառուցվածքների անհասպաղ վերանորոգում</p> <p>Գլուխ 31 Ժամանակավոր տեղակայում, վերաբնակեցում և կենսամիջոցներ</p>
Մաս 5	Վերականգնման/ վերակառուցման պլան	<p>Գլուխ 32 Վերականգնման և վերակառուցման հիմնական գաղափարները</p> <p>Գլուխ 33 Վերականգնման և վերակառուցման պլանի և դրա իրականացման համակարգի մշակում</p> <p>Գլուխ 34 Բնակիչների կյանքի կայունացում</p> <p>Գլուխ 35 Մարզային վերակառուցում</p>
Մաս 6	Օժանդակության պլան	Գլուխ 36 Աղետի գոտուց դուրս գտնվող տարածքներից ստացվող օժանդակության պլան
Մաս 7	Գործողությունների պլան	

## Գլուխ 2 Ընդհանուր ակնարկ և վնասի գնահատում

### 2.1 Սողանքների ընդհանուր նկարագիր

Սողանքային աղետի ոլորտում իրականացված ՃՄՀ հետազոտության շրջանակներում պատրաստվել է ԱՏՀ տվյալների բազա 2,504 սողանքների համար, որոնց ձևախախտված զանգվածի տարածքը 20 հա է կամ ավել՝ ըստ տեղագրական քարտեզների և օդային լուսանկարների վերծանման, ինչպես նաև տեղանքի հետախուզության: Ըստ արդյունքների՝ 1 հա կամ ավել մակերեսով սողանքների քանակը կազմել է 53,000՝ էլնելով 20 հա կամ ավել մակերեսով սողանքների տարածքի և քանակի միջև հարաբերությունից, ինչպես ցույց է տրված Աղյուսակ 2.1-ում:

Աղյուսակ 2.1 Սողանքների քանակն ու մակերեսը Հայաստանում

Սողանքի մակերեսը	Քանակը	Ընդհանուր մակերեսը (հա)	Հայաստանի ամբողջ տարածքում սողանքային տարածքի տոկոսային արտահայտությունը (%)
Սողանքների գույքագրման հետազոտության միջոցով հաստատված քանակն ու մակերեսը			
1000 հա և ավել	7	42,428	1.4
100 հա և ավել	276	68,442	2.3
50 հա և ավել	582	89,678	3.0
20 հա և ավել	1,296	111,780	3.8
1 հա կամ ավել մակերեսով սողանքների քանակն ու տարածքը, որը հաշվարկվել է գույքագրման հետազոտության ժամանակ հստակեցված 2,504 սողանքների քանակի և տարածքի միջև հարաբերության միջոցով			
10 հա և ավել	3,500	140,000	4.8
5 հա և ավել	8,000	170,000	5.8
2 հա և ավել	23,000	210,000	7.1
1 հա և ավել	53,000	250,000	8.2

(Աղբյուր՝ ՃՄՀ հետազոտության վերջնական հաշվետվություն)


### 2.2 Սողանքի հիմնական գործոններ

#### 2.2.1 Լանջի թեքություն

Ընդհանուր առմամբ, գեոմորֆոլոգիայի տեսանկյունից, քիչ սողանքներ են բաշխված հարթ տարածքներում: Կտրուկ թեքությամբ գեոմորֆոլոգիայի տարածքներում սողանքները նույնպես հաճախակի չեն հանդիպում, քանի որ փափուկ նյութերը քայքայվել են և չեն մնացել լանջերի վրա: Սողանքային տարածքների բաշխվածության այսպիսի ընդհանուր միտումը կարող է հայտնաբերվել նաև Հայաստանում: Փաստորեն շատ սողանքներ բաշխված են 5° - 30° թեքությամբ լանջերի վրա:

Աղյուսակ 2.2 Սողանքների թեքությունն ըստ լանջի թեքության (աղբյուր՝ ՃՄՀԳ հետազոտության վերջնական հաշվետվություն)

Լանջի թեքություն (աստիճան; D)	Ընդհանուր տարածք		Սողանքային տարածք				100 հա մակերեսով սողանքների քանակը *	Սողանքների տոկոսային հարաբերակցությունը մաքուր տարածքում (%) *
	Մակերես (հա)	Հարաբերակցություն (%)	Քանակ	Հարաբերակցություն (%)	Մակերես (հա)	Հարաբերակցություն (%)		
0=<D<5	1,038,753	35.0	163	6.5	12,189	10.0	1.6	1.2
5=<D<10	599,896	20.2	584	23.3	39,573	32.6	<b>9.7</b>	<b>6.6</b>
10=<D<20	816,286	27.5	1,264	50.5	54,820	45.1	<b>15.5</b>	<b>6.7</b>
20=<D<30	439,804	14.8	451	18.0	13,672	11.2	<b>10.3</b>	<b>3.1</b>
30=<D<40	72,550	2.4	41	1.6	1,274	1.0	5.7	1.8
D>=40	2,369	0.1	1	0.0	47	0.0	4.2	2.0
<b>Ընդամենը</b>	<b>2,969,658</b>	<b>100.0</b>	<b>2,504</b>	<b>100.0</b>	<b>121,575</b>	<b>100.0</b>		



Նկար 2.1 Լանջերի թեքության քարտեզ սողանքների բաշխվածությամբ (աղբյուր՝ ՃՄՀԳ հետազոտության վերջնական հաշվետվություն)

### 2.2.2 Գրունտային ջրի հավաքման գեոմորֆոլոգիա

Ընդհանուր առմամբ, գրունտային ջրի մակարդակի բարձրացում հանդիսանում է սողանքի ակտիվացման գործոններից մեկը:

- Գրունտային ջրի մակարդակի բարձրացման պատճառով հողի զանգվածի տեսակարար կշիռը մեծանում է՝ լցնելով գրունտի մասնիկներին շրջապատող



տարածքը ջրով. արդյունքում հողի զանգվածը դառնում է ծանր և անկայուն:

- Գրունտային ջրի մակարդակի բարձրացման պատճառով սահքի մակերևույթի շուրջը ծակոտկենային ճնշումը բարձրանում է, իսկ սահքի մակերևույթի սահքի դիմադրությունը՝ նվազում, որից հետո հողի զանգվածը դառնում է անկայուն:
- Եթե սահքի մակերևույթում պարունակվում են ուռչող բնույթի կավի միներալներ, վերջիններս կուռչեն գրունտային ջրի կլանման արդյունքում, որը կհանգեցնի սահքի դիմադրության անկման և հողի զանգվածի անկայունության:

Չնայած գրունտային ջրի մակարդակի կտրուկ աճը հանդիսանում է սողանքի ակտիվացման հարուցիչ, գրունտային ջրի բարձր մակարդակի սկզբնական վիճակը համարվում է սողանքի առաջացման հիմնական գործոնը: Հետևաբար, այն տարածքներում, որտեղ գրունտային ջուրը կարող է կուտակվել, կարող է առաջանալ սողանք:


### 2.2.3 Երկրաբանություն

Երկրաբանական գործոնը կարող է բաժանվել մի քանի ենթագործոնների, և հիմնական ենթագործոններն են հանդիսանում երկրաբանության փափկությունը և փխրունության աստիճանը ըստ ճաքճքվածության, որպիսին առաջանում է խզվածքի ակտիվացումից: Փափկության պատճառներից են նախ սկզբնական փափուկ վիճակը՝ պայմանավորված երիտասարդ երկրաբանության պակաս դիագենեզի գործընթացով, և եկրորդային փափկացումը՝ պայմանավորված ճաքճքվածությամբ և/կամ հիդրոզերմային փոփոխությամբ և այլն: Փխրունության պատճառ հանդիսանում են թերթաքարային հարթությունները կամ մետամորֆիզմից և ապարների դեֆորմացիայից առաջացած միակցված հարթությունները, ինչպես նաև նստվածքային գործընթացները, ինչպիսիք են՝ շերտավորման հարթությունները և շերտավորումը: Փափկության և փխրունության պատճառով հողի կամ ապարի զանգվածը դառնում է թույլ, և, հետևաբար, ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ հեշտությամբ առաջանում է սողանք:

Գոյություն ունեցող տվյալներով դժվար է հստակ դասակարգել երկրաբանական գործոնը, որը արագացնում է սողանքները: Երկրաբանական գործոններում դիտվում է հետևյալ միտումը.

- Հայաստանում լայնորեն տարածված է Մեզոզոյան և Կայնոզոյան դարաշրջանի համեմատաբար փափուկ (երիտասարդ) երկրաբանությունը (տես Նկար 2.2) և, ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ երկրաբանությունն է հանդիսանում սողանքների հեշտ առաջացման հիմնական գործոնը:
- Երկրաբանական գործոնների շրջանում “շերտերի անկմանը զուգահեռ թեք լանջի” տարածքները, երբ լանջն ու շերտավորման հարթությունները թեքվում են նույն ուղղությամբ, այնպիսի վիճակում են, որ սողանքը կարող է առաջանալ համեմատաբար հեշտորեն:
- Կան դեպքեր, երբ փոփոխությունը տեղի է ունենում անցյալում հրաբխի ակտիվացման պատճառով, և տարածքները, որտեղ բաշխված են փափկացած ապարներ և ստեղծված են կավային միներալներ, նույնպես այնպիսի վիճակում են, որ սողանքը կարող է հեշտորեն առաջանալ:


- Հայաստանում կան շատ ակտիվ խզվածքներ, և խզվածքի գոտիների շատ մասեր ծածկված են երիտասարդ երկրաբանությամբ, և, հետևաբար, թվում է, թե խորը և խիստ ներպարփակված վիճակում խզվածքի ակտիվության պատճառով ճեղքավորված ապարները լայնորեն բաշխված չեն մակերևույթին: Հետևաբար, համարվում է, որ խզվածքից առաջացած ճաքճքվածության գոտիների պատճառով տեղի ունեցող սողանքը այնքան էլ ակնհայտ չէ:



Նկար 2.2 Հայաստանի երկրաբանական քարտեզ (Աղբյուր՝ ՃՄՀԳ հետազոտության վերջնական հաշվետվություն)

### 2.2.4 Սողանքի լեզվակի հատվածի էրոզիա

Սողանքը դառնում է անկայուն, երբ սողանքի լեզվակի հատվածը ենթարկվում է էրոզիայի գետի հոսքի և այլնի օգնությամբ: Սողանքների բաշխվածության քարտեզի վրա ցույց տրված սողանքներից շատերը, որոնց լեզվակի հատվածում գոյություն ունեն գետի հոսքեր, համարվում են անկայուն, քանի որ լեզվակի հատվածում տեղի ունեցող էրոզիան հանդիսանում է սողանքի անկայունության հավանական հարուցիչ (տես Նկար 2.4): Ավելին, կան տարածքներ, որտեղ գետի ընթացքի ուղղությունը, կարծես, փոխվել է սողանքի պատճառով, իսկ անկայուն սողանքային իրավիճակն ավելի է լրջանում լեզվակի հատվածում տեղի ունեցող էրոզիայի պատճառով:



Նկար 2.4 Սողանքի բաշխվածության քարտեզ Դիլիջանի շուրջը (Աղբյուր՝ ՃԱՀԳ հետազոտության վերջնական հաշվետվություն)


### 2.3 Մարդկային գործունեության հետևանքով առաջացած հարուցող գործոններ

Եղել են դեպքեր, երբ մարդկային գործունեության հետևանքով առաջացած հարուցող գործոնները հանգեցրել են սողանքների ակտիվացման: Ինչպես լեզվակի հատվածում գետի հոսքի էրոզիան, սողանքի լեզվակի մոտ արհեստական փորումը նույնպես հանգեցնում է սողանքի ակտիվացման: Ինչպես տեղումները, այնպես էլ ջրի խողովակներից արտահոսքը և ոռոգման ջուրը հանգեցնում են գրունտային ջրի մակարդակի բարձրացման և, հետևաբար, սողանքի անկայունացման:

Հաղարծնի սողանքային տարածքում սողանքի լեզվակի հատվածում կատարված փորումը կարող է լինել սողանքի ակտիվման հնարավոր պատճառը: Այրումի սողանքի դեպքում ջրի խողովակաշարից ջրի դիտավորյալ բացթողումը անասունի համար համարվում է ամենահավանական պատճառը:

### 2.4 Սողանքների բաշխվածությունն ու առաջնահերթությունը

Օդալուսանկարների վերծանումը կատարվել է Հայաստանի տարածքում սողանքների տեղագրությունը հայտնաբերելու համար: Արդյունքում հայտնաբերվել է 2,504 սողանք, որոնց տարածքները նշված են 34 թերթից բաղկացած սողանքների բաշխվածության քարտեզի վրա, որը ծածկում է Հայաստանի ամբողջ տարածքը (տես Նկար 2.5): Որոշվել է յուրաքանչյուր սողանքի առաջնահերթությունը՝ ելնելով պահպանման ենթակա օբյեկտներին հասցրաց վնասի աստիճանից և դրանց կարևորությունից (տես Աղյուսակ 2.3): Կարևոր 132 սողանքների համար իրականացվել է տեղանքի հետախուզություն և պատրաստվել են սողանքի գրանցամատյանները:



Նկար 2.5 Սողանքների բաշխվածության քարտեզ

Աղյուսակ 2.3 2,504 սողանքների առաջնահերթությունը (Աղբյուր՝ ՃԱՀԳ հետազոտության վերջնական հաշվետվություն)

		Վնասի իրավիճակ			Ընդամենը
		Արձանագրված վնաս (145)		Ոչ մի արձանագրություն վնասի մասին	
		Մակարդակ I	Մակարդակ II	Մակարդակ III	
Պահպանման ենթակա օբյեկտների կարևորությունը	H	12	45	0	57
	M	56	32	918	1,006
	S	0	0	1,441	1,441
Ընդամենը		68	77	2,359	2,504
Տոկոս		3%	3%	94%	100%

	Առաջնահերթություն A
	Առաջնահերթություն B
	Առաջնահերթություն C

## 2.5 Սողանքային աղետ

Հայաստանում սողանքային աղետը խոշոր տարերային աղետներից մեկն է, և մարդկանց կյանքին հասցվող վնասը և տնտեսական կորուստները հաշվարկվել են 21,060 մլն. հայկական դրամ՝ որպես փաստացի գումար և 26,415 մլն. հայկական դրամ՝ որպես գնահատված գումար, որը հավասար է 2012թ. պետական բյուջեի 2.3% և 2.9%-ի: Սողանքային աղետի բարձր ռիսկով տարածքները ընդգրկում են 233 համայնք (24%) տան, 240կմ երկարությամբ ճանապարհի (32%) և 4.8կմ երկարությամբ երկաթուղու (0.5%) տեսանկյունից: Ստորև նշվում են Հայաստանում տեղի ունեցած սողանքային աղետները:

### 2.5.1 Այրումի սողանք

2011թ. հոկտեմբերի 2-ին մեծամասշտաբ սողանքային աղետ տեղի ունեցավ Հայաստանի հյուսիսային հատվածում՝ Այրում տարածքում՝ անմիջապես Մ6 միջպետական



Ճանապարհի մոտ (մոտ 12կմ Վրաստանի հետ սահմանից հեռու), որի արդյունքում ճանապարհի վրա վնասվել է 35 մեքենա և մահացել է 5 մարդ (տես Նկար 2.6): ԵԳԻ կատարած հետազոտության արդյունքը ցույց է տալիս, որ հնարավոր հարուցող գործոն է հանդիսանում խողովակաշարից անասունների համար ջրի բացթողումը, ոռոգումը և ջրի ֆիլտրացիան գրունտի մեջ: Ճանապարհի վերականգնման համար պահանջվել է ավելի քան կես տարի, և կառույցների, օրինակ՝ ճանապարհի և ջրամատակարարման վերականգնման արժեքը՝ առանց տնտեսական կորստի, կազմել է մոտ 600 մլն. հայկական դրամ:



Նկար 2.6 Այրումի սողանք, ընդհանուր պատկերը մինչև (ձախ) և հետո (աջ), աղբյուր՝ ԵԳԻ հաշվետվություն

### 2.5.2 Հաղարծինի սողանք

Դեպի Ադրբեջան գնացող երկաթուղու շինարարության նպատակով կատարված փորման պատճառով 1993թ. Հաղարծինում տեղի ունեցավ սողանք: Ավելին, 1996թ., կայարանի կառուցման նպատակով սողանքի ստորին հատվածում կատարված փորումը հանգեցրեց սողանքի ակտիվացման՝ պատճառելով լուրջ վնասներ բնակելի տներին, փակելով գետի հոսքը, միջպետական ճանապարհը և այլն: Կատարվել է բնակելի տների վերաբնակեցում (արժեքը՝ 114 մլն. հայկական դրամ), ճանապարհի տեղափոխում աջ ափից դեպի ձախ և գետի հոսքի բացում, բայց երկաթուղու շինարարությունը մինչ այժմ կանգնեցված է (տես Նկար 2.7):



Նկար 2.7 Հաղարծինի սողանք

### 2.5.3 Դիլիջանի սողանք

Դիլիջանի տարածքում կա չորս սողանք, ներառյալ՝ Դիլիջան քաղաքը, և քաղաքի կառույցներն ու շենքերը կրել են վնասներ, ինչպես ցույց է տրված Նկար 2.8-ում: Սովետական ժամանակաշրջանում կառուցված դրենաժային թունելը, որը չի գործել թունելի փլուզման պատճառով, վերանորոգվել է (1-ին փուլի աշխատանքների արժեքը կազմում է 1.7 մլրդ. Հայկական դրամ): Վերանորոգման աշխատանքներից հետո վնասները, կարծես, նվազել են:




Նկար 2.8 Դիլիջանի սողանքի ընդհանուր պատկերը

### 2.5.4 Կապանի Հարությունյան սողանք

Կապան քաղաքի արևելյան մասում 1995թ. փետրվարին և 1997թ. օգոստոսին ակտիվացել է սողանք՝ պատճառելով լուրջ վնասներ, ինչպես ցույց է տրված Նկար 2.9-ում: 1995թ. 9 տուն քանդվել է սահող հողի զանգվածի պատճառով և 9 մարդ մահացել է: Սողանքի ստորին հատվածով անցնող տեղական ճանապարհը ծածկվել էր զանգվածով և երթևեկությունը փակվել էր: 1997թ. փլուզված հողը հասել է մինչև գետ:


Քանդված տների բնակիչները (վթարայնության ստիճան 5)՝ հարակից 4-րդ աստիճանի վթարայնության 25 տների բնակիչների հետ միասին, կառավարությունից ստացել են փոխհատուցում և տեղափոխվել Կապան քաղաք: Փոխհատուցման գումարը կազմել է 580 մլն. հայկական դրամ: Այնուամենայնիվ, 15 տուն (վթարայնության աստիճան 3 և 4) շարունակում են մնալ տեղում:



Նկար 2.9 Կապանի Հարությունյան սողանքի ընդհանուր պատկերը

### 2.5.5 Հովքի սողանք

Հովքի սողանքը, որը գտնվում է Դիլիջան և Իջևան քաղաքների միջնամասում, պատճառում է վնասներ շատ տների և միջպետական ճանապարհին (տես Նկար 2.10): 2004թ. ճանապարհի կողը գտնվող փոքր բլուկ ակտիվացել է և պատճառել վնաս ճանապարհին ու փակել երթևեկությունը: Չնայած սողանքը բավականին երկար է՝ ավելի քան 2կմ, և հաճախակի է վնաս հասցրել ճանապարհին, դժվար է ձեռնարկել միջոցառումներ շարժի կանխարգելման կամ վերահսկման ուղղությամբ, և, հետևաբար, որպես միջոցում, կառուցվել է նոր ճանապարհը, որի շինարարությունը արժեցել է մոտ 100 մլն. հայկական դրամ:



Նկար 2.10 Հովք սողանքի տեղադրությունը

### Գլուխ 3 Միջոցառումներ իրականացնող մարմինների հիմնական պատասխանատվությունները

#### 3.1 Հիմնարար սկզբունքներ

Աղետների ռիսկի կառավարումն իրականացվում է երեք մակարդակում՝ անհատական, համայնքային և կենտրոնական/տեղական կառավարության (նախարարություններ, մարզեր և այլն): Մարմինների երեք մակարդակները պետք է կատարեն սույն պլանում նշված գործողությունները, որի շրջանակներում նրանք բոլորը կատարում են գլխավոր դեր Գլուխ 1-ում նշված նպատակին հասնելու համար:

Հայաստանում սողանքային աղետի կառավարման հայեցակարգում (այսուհետ «Հայեցակարգ») առնչվող նախարարություններին և կազմակերպություններին վերապահված են խնդիրներ, ինչպես ցույց է տրված Աղյուսակ 3.1-ում:

#### Աղյուսակ 3.1 Հայեցակարգի շրջանակներում նշանակված խնդիրներ

<p>1) ՀՀ կառավարություն</p> <ul style="list-style-type: none"><li>- Սողանքային աղետի կառավարման ծրագրերի հաստատում</li><li>- Ֆինանսական միջոցների հատկացում պետական մակարդակում կարևոր հակասողանքային միջոցառումների համար</li><li>- Մարզային մակարդակում կարևոր սողանքային աղետի կառավարման միջոցառումների ծախսի հաշվարկ և դրա կիսում</li><li>- Սողանքային տարածքներից վերաբնակեցման միջոցառումներ և այդ միջոցառումների համար ֆինանսական միջոցների հատկացում</li></ul> <p>2) ՀՀ ՏԿԱԲՆ</p> <ul style="list-style-type: none"><li>- Հստակեցում, դասակարգում և կարգավորում միջոցառումների իրականացման նպատակով՝ որպես լիազոր մարմին</li><li>- Սողանքների տվյալների բազայի մշակում և խորհրդատվություն</li><li>- Առնչվող կազմակերպություններից և տեղական կառավարությունից տրամադրված մոնիթորինգի տվյալների վերլուծություն և սողանքի վերահսկում</li><li>- Վերլուծություն սողանքային տարածքներում և կառույցների վնասի գնահատում</li><li>- Հակասողանքային միջոցառումների համար միջնաժամկետ բյուջեի ամփոփում և դրա ներկայացում ՀՀ Ֆինանսների նախարարություն</li><li>- Հակասողանքային միջոցառումների իրականացում՝ կիրառելով վերոնշյալ աշխատանքի արդյունքները</li><li>- Տեղական կառավարության՝ սողանքային աղետի կառավարման գործողությունների համակարգում</li><li>- Հակասողանքային միջոցառումների համար իրավական համակարգի ստեղծում</li></ul> <p>3) ՀՀ ՏԿՆ, ՔՆ, ԷԼԲՊՆ, ԳՆ, ԲՆ և ՄՆ</p> <ul style="list-style-type: none"><li>- Ենթակայության տակ գտնվող կառույցների և տարածքների մոնիթորինգ այն դեպքում, երբ օբյեկտները տուժում են սողանքներից</li><li>- Վերոնշյալ կառույցներին սպառնացող սողանքի գրանցամատյանի պատրաստում</li><li>- Հետազոտություն, նախագծում և նախահաշվի կազմում ամենավտանգավոր տեղանքի համար, և միջոցառումների իրականացում՝ համագործակցելով կենտրոնական և տեղական կառավարությունների հետ</li><li>- Հետազոտություն, վերլուծություն և ծրագրի ուսումնասիրություն և հաշվետվության ներկայացում ՀՀ ՏԿԱԲՆ մարզերից և տեղական իշխանություններից զեկուցված սողանքների վերաբերյալ</li><li>- Վերոնշյալ հարցերի համար անհրաժեշտ օրենսդրության ուսումնասիրություն</li></ul>
--



Մարզ

- Տեղեկատվության հաղորդում համայնքներից պատասխանատու նախարարություններին
- Դատողություն հակասողանքային միջոցառումների ազդեցության և անհրաժեշտության վերաբերյալ
- Հետազոտության և գործողությունների պլանների համակարգում
- Ազգային բյուջեի միջոցավ իրականացված ծրագրերի համակարգում
- Իրականացված միջոցառումների և դրանց արդյունքների մասին զեկուցում պատասխանատու նախարարություններին
- Հակասողանքային միջոցառումների համար ազգային բյուջեից բացի ֆինանսական այլ աղբյուրների հայթայթում

Համայնք և քաղաք

- Սողանքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում մարզին և պատասխանատու նախարարություններին
- Դատողություն հակասողանքային միջոցառումների ազդեցության և անհրաժեշտության վերաբերյալ
- Առաջարկ անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ և դրա տրամադրում մարզին
- Ազգային բյուջեի միջոցավ իրականացված ծրագրերի համակարգում
- Իրականացված միջոցառումների և դրանց արդյունքների մասին զեկուցում պատասխանատու նախարարություններին
- Հակասողանքային միջոցառումների համար ազգային բյուջեից բացի ֆինանսական այլ աղբյուրների հայթայթում

### 3.2 Առնչվող նախարարությունների և մարզերի պատասխանատվությունը

“Սողանքակայուն ավելի ուժեղ համայնք ստեղծելու” համար առնչվող նախարարությունները և մարզպետարանները պետք է բնակիչների և համայնքների շրջանում տարածեն սույն պլանում նշված միջոցառումների բովանդակությունը, իսկ հետո իրականացնեն/խթանեն մեղմացմանն ու պատրաստվածությանն ուղղված գործողությունները՝ ապահովելով անհրաժեշտ բյուջե: Սողանքային աղետի առաջացման դեպքում առնչվող նախարարություններն ու մարզպետարանները պետք է իրականացնեն հրատապ արձագանքում, ինչպիսիք են փրկարարությունը, տարահանումը, բուժօգնությունը, որպեսզի վնասը հասցվի նվազագույնի:

Սողանքի պատճառած վնասները կրելուց հետո, առնչվող նախարարություններն ու մարզպետարանները պետք է մշակեն վերականգնման և վերակառուցման մանրամասն պլաններ՝ ըստ վնասի փաստացի իրավիճակի՝ ելնելով սույն պլանում նշված պլանավորման ընդհանուր նկարագրից: Համաձայն մանրամասն պլանների՝ վերականգնման գործողությունները կիրականացվեն մինչաղետային վիճակին արագ վերականգնվելու նպատակով, իսկ հետո կիրականացվեն վերակառուցման գործողություններ “սողանքակայուն ավելի ուժեղ համայնք ստեղծելու” համար:

### 3.3 Համայնքների պատասխանատվությունը

Համայնքը պետք է իրականացնի սողանքային աղետի կառավարմանն ուղղված ինքնուրույն փոխգործողություն “սողանքակայուն ավելի ուժեղ համայնք ստեղծելու” համար՝ համաձայն համայնքի աղետի կառավարման պլանի՝ ստանալով ուղղորդում և օժանդակություն կենտրոնական և տեղական կառավարություններից:

---

Առօրյա պայմաններում և արտակարգ իրավիճակում աղետի կառավարման գործողությունների սահուն իրականացման համար համայնքը պետք է գործի դնի իր արագ արձագանքման խումբը ընդհանուր համակարգման, տեղեկատվության հավաքման և փոխանցման համար, ինչպես օրինակ՝ շենքերի/կառույցների դեֆորմացիան, աղետների վերաբերյալ կրթությունը/ուսուցումը, տարահանման/փրկարարության նախապատրաստումը, կառույցների վերականգնումը/վերակառուցումը, անհապաղ բուժօգնությունը:

Համայնքը պետք է համակարգի և օժանդակի բնակիչներին՝ խթանելով աղետի կառավարման նրանց ինքնուրույն գործողությունները՝ համաձայն ՀՀ ՏԿԱԻՆ կողմից հաստատված համայնքի աղետի կառավարման պլանի:

Սողանքային աղետի ակտիվացման դեպքում համայնքները պետք է ձեռնարկեն գործողություններ բնակիչների կյանքն ու ունեցվածքը, ինչպես նաև համայնքները պաշտպանելու համար, որպեսզի համայնքներին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի: Սողանքի հասցրած վնասից տուժելուց հետո համայնքները պետք է ինքնուրույն նպաստեն վերականգնման/ վերակառուցման պլանների մշակմանը, և հետո իրականացնեն վերականգնման/ վերակառուցման ինքնուրույն գործողություններ “սողանքակայուն ավելի ուժեղ համայնք ստեղծելու” համար՝ պահպանելով համայնքների միասնականությունը:

#### 3.4 Բնակիչների պատասխանատվությունը

Սողանքային աղետի ակտիվացման դեպքում, նախ և առաջ, անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր բնակիչ պաշտպանի իր կյանքն ու ունեցվածքը իր սեփական ջանքերով: Սողանքի վնասի առաջացումից անմիջապես հետո հնարավոր է ակնկալել պաշտոնական աջակցություն, ինչպես օրինակ՝ փրկում վնասված շենքերից, անհապաղ բուժօգնություն և այլն: Հետևաբար, անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր բնակիչ, նախ և առաջ, ապահովի իր անվտանգությունը “Դու պետք է պաշտպանես քո կյանքն ու ունեցվածքը” գիտակցության ներքո:

Սողանքի հասցրած վնասից տուժելուց հետո բնակիչները պետք է գիտակցեն իրենց պատասխանատվությունը՝ որպես համայնքի անդամներ և համագործակցեն միմյանց հետ՝ մտածելով ավելի շատ փոխօգնության մասին, ինչպիսին է՝ տարեցների և խոցելի խմբի մասին հոգ տանելը, իրենց առօրյա ցիկլը վերականգնելու/կայունացնելու, ինչպես նաև համայնքի ցիկլը վերականգնելու նպատակով:

Բնակիչները պետք է համագործակցեն կենտրոնական և տեղական կառավարությունների և առնչվող կազմակերպությունների կողմից իրականացվող աղետի կառավարման միջոցառումներ մշակելու ուղղությամբ “սողանքակայուն ավելի ուժեղ համայնք ստեղծելու” համար և նպաստեն դրանց իրականացմանը, օրինակ՝ ինքնուրույն մասնակցելով իրականացման գործողություններում:

Մաս 2 Մեղմացման պլան

#### Գլուխ 4 Մեղմացման միջոցառումների խթանում

##### 4.1 ՀՀ ՏԿԱԻՆ և այլ նախարարությունների դերը մեղմացման միջոցառումների իրականացման գործում

Ընդհանուր առմամբ սողանքի շարժը համեմատաբար դանդաղ է: Նույնիսկ սողանքի լայնամասշտաբ ակտիվացման դեպքերում հաճախ տեղի է ունենում փոքր շարժ: Հետևաբար, անհրաժեշտ է պատշաճ ձևով հստակեցնել սողանքային շարժը մոնիթորինգի միջոցով սողանքային աղետի ռիսկերը նվազեցնելու համար: Մոնիթորինգին զուգահեռ կամ դրանից հետո անհրաժեշտ է մշակել պլան, իրականացնել կրթություն/ուսուցում և մեղմացման միջոցառումներ: Մեղմացման միջոցառումների խթանման նպատակով ՀՀ ՏԿԱԻՆ և այլ նախարարությունների դերերը հետևյալն են.

- ա) ՀՀ ՏԿԱԻՆ և այլ նախարարությունները ղեկավարում են սույն պլանում նշված գործողությունները և աջակցում պլանների իրագործմանը: Նախարարությունները նշանակում են պատասխանատու վարչություններ և կազմակերպություններ պլանի իրականացման համար: Ապա, նշանակված վարչություններն ու կազմակերպությունները մշակում են մանրամասն տարեկան պլաններ, ապահովում բյուջե և նշանակում պատասխանատու անձնակազմ:
- բ) Պլանի իրականացման ժամանակ ՀՀ ՏԿԱԻՆ և այլ նախարարությունները կատարում են իրականացման ընթացքի մոնիթորինգ և տրամադրում ցուցումներ և աջակցություն սահուն իրականացման համար:
- գ) Մանրամասն պլանների իրականացման վերաբերյալ հաշվետվությունները ստանալիս՝ ՀՀ ՏԿԱԻՆ և այլ նախարարությունները գնահատում են արդյունքները և ներառում դրանք պլանավորման և հաջորդ ֆինանսական տարվա թիրախի մեջ:

##### 4.2 ՀՀ ՏԿԱԻՆ և այլ նախարարությունների գործողությունները

Սույն պլանը գործողության մեջ է դրվում ՀՀ ՏԿԱԻՆ նախարարի կողմից հաստատվելուց հետո: Հաստատումից հետո ՀՀ ՏԿԱԻՆ և այլ նախարարություններն իրականացնում են ստորև բերված գործողությունները: Բացի այդ, ՀՀ ՏԿԱԻՆ՝ որպես լիազոր մարմին, ամփոփում է արդյունքները: Միջոցառումների կայուն իրականացման համար մանրամասն պլաններում պետք է հստակ նշվեն պատասխանատու կազմակերպությունները:

- ա) Տարեկան մանրամասն պլանների, բյուջեի առաջարկի և անձնակազմի նշանակման պլանների վերանայում և համակարգում, ինչպես նաև անհրաժեշտ վերանայման և հաստատման ուղղությունը
- բ) Մանրամասն պլանների իրականացման միջանկյալ արդյունքների դիտարկում համապատասխան ցուցումների պատրաստման համար:
- գ) Մանրամասն պլանների իրականացման արդյունքների դիտարկում հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո, ամփոփում արդյունքների գնահատման համար և ներառում հաջորդ տարվա պլաններում՝ նպատակ ունենալով

տրամադրել աջակցություն նոր միջոցառումների որոշման գործում:

**Գլուխ 5 Սողանքակայուն մարդկային ռեսուրսների ձևավորում**

ՀՀ ՏԿԱԻՆ խնդիրներից է տարերային աղետներին արձագանքման ունակ մարդկային ռեսուրսների ձևավորումը: Անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված վարչական ապարատի ծառայողների և բնակչության կարողությունների բարձրացմանը, որպեսզի վերջիններս կարողանան խթանել մեղմացման գործողությունները և արձագանքեն արտակարգ իրավիճակներին՝ հանգեցնելով ռիսկի նվազեցման և հետևանքների վերացման:

**5.1 Բնակիչների դերը**

Անհրաժեշտ է ապահովել բնակչության համապատասխան պատրաստվածությունը աղետի աղետալի հետևանքներից խուսափելու համար՝ ելնելով սողանքի ակտիվացման դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ հստակ գիտելի տրամադրումից՝ հիմնվելով “Դու պետք է պաշտպանես քո կյանքն ու ունեցվածքը” գաղափարի վրա:

Հետևաբար, անհրաժեշտ է, որպեսզի բնակչությունը նախապես իրականացնի սողանքային աղետի ռիսկի մեղմացման և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության գործողություններ սեփական նախաձեռնությամբ, ինչպես ցույց է տրված Աղյուսակ 5.1-ում:

**Աղյուսակ 5.1 Մեղմացման/ պատրաստվածության գործողություններ բնակիչների կողմից**

Մեղմացման գործողություններ	<ol style="list-style-type: none"> <li>1. Միասնական աշխատանք բնակիչների ասոցիացիան ուժեղացնելու և դրա աշխատանքներին մասնակցելու համար</li> <li>2. Բնակելի շենքերի վերանորոգում և ուժեղացում</li> <li>3. Ջրի անտեղի օգտագործման վերահսկում և պատշաճ դրենաժավորում</li> <li>4. Լանդշաֆտի ձևափոխման և բնական պայմանների, օրինակ՝ լայնածավալ փորման և ծառահատման վերահսկում</li> <li>5. Սողանքի հետևանքով առաջացած ձևափոխության հստակեցում (ճաքեր և ջրի աննորմալ հոսք) և նման իրավիճակի գեկուցում համայնքապետարանին և այլն</li> <li>6. Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման միջոցառումների վերաբերյալ գիտելիքի և տեղեկատվության հասանելիության ընդլայնում</li> </ol>
Պատրաստվածության գործողություններ	<ol style="list-style-type: none"> <li>7. ԱԻ դեպքում կոնտակտային համարների հաստատում և գրանցում</li> <li>8. Արժեքի, շարժական ռադիոյի, գրպանի լապտերի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության պարագաների վերաբերյալ հողվածների ապահովում</li> <li>9. Ընտանիքի անդամների՝ աղետի ժամանակ պարտականությունների նախապես հստակեցում. որոշման կայացում հավաքի վայրի վերաբերյալ, հաղորդակցության միջոցներ, տարահանման հրաման և երթուղիներ</li> <li>10. Ակտիվ մասնակցություն ՀՀ ՏԿԱԻՆ և տեղական համայնքների կողմից կազմակերպված ուսուցման մեջ և այլ միջոցառումներում</li> <li>11. Տեղեկատվության տրամադրում համատիրություններին և տեղական այլ մարմիններին ընտանիքի՝ հատուկ խնամքի կարիք ունեցող անդամների մասին</li> </ol>

Մեղմացման միջոցառումների մանրամասն նկարագիրը բերված է 5.2 կետում, իսկ արտակարգ իրավիճակներին պատրաստվածության միջոցառումները՝ Գլուխ 11-ում:

**5.2 Բնակիչների՝ աղետների կառավարման ինքնուրույն գործողությունների**

## խթանում

### 5.2.1 Միասնական աշխատանք բնակիչների ասոցիացիան ուժեղացնելու և դրա աշխատանքներին մասնակցելու համար

Աղետների ինքնուրույն կառավարման նպատակով բնակիչների գործողությունների հետագա բարելավման համար ՀՀ ՏԿԱԻՆ տրամադրում է օժանդակություն աղետների վերաբերյալ կրթության և ուսուցման, ինչպես նաև ԱԻ արձագանքման նպատակով սարքավորումների կամ գործիքների տրամադրման համար: Բնակիչները պետք է հասկանան աղետների կառավարման համայնքային խմբի կարգավիճակը և ակտիվորեն ներգրավվել խմբի գործողություններում:

### 5.2.2 Բնակելի տների վերանորոգումը և ուժեղացումը

Սողանքային տարածքներում տան պատերի և սյուների վրա առաջանում են ճաքեր: Քանի որ սողանքները շարժվում են համեմատաբար դանդաղ, բնակիչները շարունակվում են բնակվել տներում՝ պարզապես կատարելով կոսմետիկ վերանորոգում (փակելով ճաքերը շաղախով): Այնուամենայնիվ, ճաքերը կարող են հանգեցնել տների կառուցվածքի անկայունության և, հետևաբար, հնարավոր է, որ տներ հանկարծակի փլուզվեն փոքր տեղաշարժերից: Հետևաբար, անհրաժեշտ է, որպեսզի փորձագետը ստուգի կառուցվածքային կայունությունը՝ արդյոք տունը կառուցվածքային առումով թուլացած է, թե ոչ:

### 5.2.3 Ջրի անտեղի օգտագործման վերահսկում և պատշաճ դրենաժավորում

Ինչպես նշված է 2.2.2 կետում, գրունտային ջրի մակարդակի բարձրացումը հանգեցնում է սողանքի ակտիվացման: Գրունտային ջրի մակարդակի բարձրացման հնարավոր պատճառը բնական պայմաններն են, ինչպես օրինակ՝ անձրևներն ու ձնհալը: Մյուս պատճառը տեխնածին բնույթի է, ինչպես օրինակ՝ ջրագծերից ջրի ոչ դիտավորյալ արտահոսքը, ինչպես նաև անասունների, ռոռզման և ջրագծերի սառչելը կանխելու նպատակով ջրի մտածված բացթողումը, որոնց հետևանքով գրանցվել են սողանքի անկայունացման դեպքեր: Հետևաբար, անհրաժեշտ է վերահսկել սողանքային տարածքներում անտեղի շատ ջրօգտագործումը և տեղադրել մակերևութային դրենաժային պատշաճ համակարգ՝ օգտագործված ջրի՝ գրունտի մեջ ներթափանցման պատճառով գրունտային ջրի մակարդակի բարձրացումը կանխելու համար:

### 5.3 Աղետների կառավարման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում և աղետների մասին տեղեկատվության տարածում

#### 5.3.1 Ուսումնական ծրագրեր վարչական ապարատի անձնակազմի համար

ՀՀ ՏԿԱԻՆ ամենակարևոր խնդիրը արտակարգ իրավիճակներում բնակչության կյանքի, առողջության և ունեցվածքի պաշտպանությունն է, որը պահանջում է վարչական անձնակազմի համապատասխան կրթության ապահովում՝ ուղղված արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման միջոցառումների վերաբերյալ իրազեկվածության և արտակարգ իրավիճակներում վստահ

գործողություններ ձեռնարկելու ու հիմնավորված որոշումների կայացման կարողությունների բարձրացմանը:

Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ներգրավված վարչական ապարատի անձնակազմը պետք է անցնի տեսական և գործնական դասընթացներ 15-ժամյա կրթական ծրագրով ՀՀ ՏԿԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում, ներառյալ 9 ընդհանուր և 6 մասնագիտական դասաժամեր: Վարչական ապարատի այլ բաժինների անձնակազմերը կմասնակցեն վարչական ապարատում պարբերաբար կազմակերպվող կոլեկտիվ կրթական ծրագրերին՝ ուղղված ոչ միայն արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման միջոցառումների հիմնական նյութերի ուսումնասիրմանը, այլև արտակարգ իրավիճակներում յուրաքանչյուր բաժնի աշխատանքների կազմակերպման կարգի, անձնակազմի յուրաքանչյուր անդամի պարտականությունների և աննորմալ իրավիճակներում վարքականոնների հնարավոր մոդելների հետ անձնակազմի ծանոթացումը:

Աղյուսակ 5.2-ում նշված բովանդակության վերաբերյալ կրթական ուղեցույցներն իրականացվում են ՀՀ ՏԿԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կողմից:

**Աղյուսակ 5.2 Պաշտոնյաների համար աղետների վերաբերյալ կրթության բովանդակությունը**

1. Հիմնական գիտելիք սողանքների առաջացման մեխանիզմների և շարժի վերաբերյալ
2. Գիտելիք ներկայումս իրականացվող հակասողանքային միջոցառումների վերաբերյալ
3. Օրական նախապատրաստություններ սողանքային աղետին դիմակայելու համար
4. Սողանքի ժամանակ տարահանման ապաստարանների և մեթոդների ծանուցում
5. Փրկարարության / առաջին օգնության մեթոդներ

5.3.2 Արտակարգ իրավիճակներում պատրաստվածության ապահովման միջոցառումների վերաբերյալ բնակչության շրջանում տեղեկատվության տարածքում

Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բաժինը, ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի աջակցությամբ, պետք է կազմակերպի հնարավոր աղետներին պատրաստվածության ապահովման վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացման և կշռադատված մոտեցման ձևավորման աշխատանքները՝ քարոզչական թերթիկների բաժանման, սեմինարների, թեմատիկ ցուցահանդես-վաճառքների կազմակերպման միջոցով՝ լրատվամիջոցների ներուժի ակտիվ կիրառման հետ միասին: Միաժամանակ, անհրաժեշտ է հասուկ ուշադրություն դարձնել խոցելի խմբերին, ովքեր ունեն տեղեկատվության հասանելիության հետ կապված խնդիրներ:

(1) Տեղեկատվության տարածման մեթոդներ

Առաջարկվում է կազմակերպել տեղեկատվության տարածում՝ ըստ Աղյուսակ 5.3.2-ում նշված մեթոդի:



Աղյուսակ 5.3.2 Բնակչության շրջանում արտակարգ իրավիճակներին պատրաստվածքության ապահովման միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության տարածման մեթոդներ

- |   |
|---|
| <ol style="list-style-type: none"><li>1. Հանդիպումներ վարչական տարածքներում</li><li>2. Ցուցումների և մեթոդական օժանդակության տրամադրում անձանց և կազմակերպություններին, համատիրություններին և այլ մարմիններին</li><li>3. Բնակչության ծանոթացում հվանգի և ռիսկի քարտեզների հետ</li><li>4. Կրթական թերթիկների, վավերագրական ֆիլմերի և քարոզչական այլ նյութերի պատրաստում և տրամադրում</li><li>5. Բոլոր տեսակի լրատվամիջոցների ներուժի օգտագործում</li><li>6. Սեմինարների, ցուցահանդես-վաճառքների կազմակերպում, քարոզչական վահանակների տեղադրում</li></ol> |
|---|

(2) Տեղեկատվության բովանդակություն

Առաջարկվում է բնակչության շրջանում տարածել հետևյալ բովանդակությամբ տեղեկատվություն:

ա) Տեղեկատվություն սողանքի բնույթի վերաբերյալ

Սողանքի առաջացման մեխանիզմների, սողանքի հետևանքով առաջացած ձևախախտման բնույթի վերաբերյալ հասարակ և հասանելի բացատրություն, ինչպես նաև սողանքի բաշխվածության քարտեզների և սողանքի գրանցամատյանների ընկալում

բ) ԱԻ մարմինների ընթացիկ աշխատանքներ սողանքային աղետին պատրաստվածության ապահովման համար

Բնակչության ծանոթացում ՀՀ ՏԿԱԻՆ և այլ մարմինների կողմից իրականացվող միջոցառումների և յուրաքանչյուր համայնքի աղետների կառավարման պլանի հետ

գ) Անձնական անվտանգության ապահովման կանխարգելիչ միջոցառումներ

Ծանոթացում հնարավոր աղետի վնասների նվազեցման և սողանքին անձնական պատրաստվածության ապահովման միջոցառումների հետ (տես Կետ 5.1., 5.2., և Գլուխ 11):

դ) Բնակչության հավաքակետերի և ապաստարանների տեղադրում. Տարահանման հրաման

Բնակչության ծանոթացում բնակչության հավաքակետերի և ապաստարանների, ըստ բնակավայրերի կազմված տարահանման քարտեզների կիրառմամբ տարահանման հրամանի և ապահով երթուղիների հետ:

ե) Երթևեկության վերահսկման կարգը սողանքային աղետի դեպքում

ՀՀ ՏԿԱԻՆ և հասարակական կարգի պահպանման ծառայության կողմից իրականացվող աշխատանքներ տարերային աղետի դեպքում բնակչությանը (վարորդներ, ուղևորներ) վարքականոնների հետ ծանոթացնելու նպատակով:

զ) Փրկարարական և առաջին բուժօգնության գործընթաց

ՀՀ ՏԿԱԻՆ և առողջապահության նախարարության կողմից ուղղորդում և կրթություն՝ ապահովելով բնակչության ինքնուրույն անհապաղ բուժօգնությունը մինչև պաշտոնական օգնության տեղ հասնելը:

## Գլուխ 6 Սողանքակայուն համայնքի ձևավորում

### 6.1 Համայնքի դերը

Սույն պլանի թիրախային համայնքների մեծ մասը, որոնք տուժել են սողանքային աղետից, տեղակայված են գյուղական վայրերում: Ընդհանուր առմամբ, ի տարբերություն քաղաքային վայրերի, գյուղական վայրերում բնակիչներն ունեն համեմատաբար խորը կապեր միմյանց հետ և համայնքներում միասնականությունը բավականին բարձր մակարդակի է: Բացի այդ, որոշ համայնքներում՝ ՀՀ ՏԿԱԻՆ և այլ մարմինների օժանդակությամբ, ստեղծվել են աղետի արձագանքման բնակիչների խմբեր:

Համայնքները, միմյանց հետ համագործակցելով, պետք է հիմնեն կազմակերպչական շրջանակ աղետներին նախապատրաստվելու համար “սողանքակայուն ավելի ուժեղ համայնք ստեղծելու” գաղափարի ներքո: Համայնքի, ինչպես նաև համայնքի առանձին անդամների աղետի կառավարման վերաբերյալ իրազեկվածությունն ու կարողությունները բարձրացնելու նպատակով բոլոր անդամները պետք է իրականացնեն սողանքային աղետի մեղմաման և դրան պատրաստվածության գործողություններ, ինչպես նշված է Աղյուսակ 6.1-ում: Գործողությունների մանրամասն նկարագիրը/բացատրությունը բերված է 6.2 – 6.7 Կետերում մեղմացման և Գլուխ 11-ում պատրաստվածության համար:

Աղյուսակ 6.1 Մողմացման / պատրաստվածության գործողություններ համայնքների կողմից

Մեղմացման աշխատանքներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Աղետների կառավարման ինքնուրույն խմբերի ստեղծում և զարգացում</li> <li>2. Աղետի կառավարման պլանի մշակում յուրաքանչյուր համայնքի համար</li> <li>3. Սողանքի շարժի վերաբերյալ տեղեկատվության հավաքում, փոխանցում և զեկուցում</li> <li>4. Համայնքային սեփականությունը հանդիսացող շենքերի և կառույցների անվտանգության ապահովում, վերանորոգում և օգտագործման վերահսկում</li> <li>5. Աղետների վերաբերյալ կրթության և ուսուցման խթանում</li> <li>6. Օգնության հայտ և տեղեկատվության ու նյութերի կիսում</li> </ol>
Պատրաստվածության աշխատանքներ	<ol style="list-style-type: none"> <li>7. Ջրի, սննդի և առաջին անհրաժեշտության պարագաների պահեստավորում, և աղետի կառավարման սարքավորումների պահեստավորում/սպասարկում/ պարբերաբար ստուգում</li> <li>8. Համայնքի անդամների, օգնության կարիք ունեցող մարդկանց ցուցակների և աղետի կառավարման կազմակերպությունների կոնտակտային ցուցակի ստուգում</li> <li>9. Աղետի կառավարման քարտեզի ստեղծում, օգնության կառույցների, օրինակ՝ տարահանման ապաստարանների նախապատրաստում և ծանուցում</li> <li>10. Համայնքի անդամների և բնակիչների, հատկապես՝ խոցելի մարդկանց պաշտպանության/աջակցման նախապատրաստում</li> <li>11. Արձագանքման կարողությունների բարելավում և ուսումնավարժությունների ու սեմինարների միջոցով սողանքային աղետի ժամանակ կատարվելիք գործողությունների վերաբերյալ խորհուրդի տրամադրում</li> </ol>

### 6.2 Աղետների կառավարման ինքնուրույն խմբերի ստեղծում և զարգացում

Հայաստանի գյուղերում աղետների արձագանքման խմբի ստեղծման և զարգացման գործընթացը ընթացքի մեջ է: Սողանքային աղետից տուժած գյուղերում նման խմբերի ստեղծման և զարգացման գործընթացը պետք է շարունակվի և խթանվի՝ միաժամանակ

զարգացնելով խմբի մեղմացման և պատրաստվածության ինքնուրույն ու օգնության ստացմամբ կատարվող գործողությունները:

### 6.3 Համայնքի աղետի կառավարման պլանի մշակում

Սողանքավտանգ համայնքը պետք է մշակի աղետի կառավարման սեփական պլան՝ նպատակ ունենալով ամրապնդել աղետի կառավարման (ներառյալ՝ մեղմացման) իրենց կարողությունները՝ հաշվի առնելով յուրաքանչյուր համայնքի կոնկրետ իրավիճակը: Պլանում պետք է հստակեցվեն կազմակերպչական կառուցվածքն ու ֆինանսական աղբյուրները պլանում նշված միջոցառումների շարունակական իրականացումն ապահովելու համար: Պլանը պետք է պարբերաբար վերանայվի և թարմացվի: Պլանում նշվելիք բովանդակությունը ցույց է տրված Աղյուսակ 6.2-ում:

Աղյուսակ 6.2 Համայնքի աղետի կառավարման պլանում ներառվելիք բովանդակությունը

- |   |
|---|
| <ol style="list-style-type: none"><li>1. Հիմնական քաղաքականությունն ու պլանի նպատակը</li><li>2. Համայնքի ընդհանուր նկարագիր (բնակչություն, շենքերի քանակ, հողօգտագործում և այլն)</li><li>3. Սողանքի և վնասների ընդհանուր նկարագիրը</li><li>4. Կազմակերպչական ներքին կառուցվածքը և աղետի արձագանքման խմբի խնդիրները</li><li>5. Աղետի կառավարման համար անհրաժեշտ սարքավորումների/ նյութերի ցուցակը և պահեստի վայրը</li><li>6. Աղետի կառավարման քարտեզ, ներառյալ՝ տարահանման կետերի ցանկը, համայնքի կոնկրետ ռիսկերը, աղետի կառավարման ռեսուրսները</li><li>7. Կարևոր հարցեր և լուծումներ աղետի կառավարման տեսանկյունից</li><li>8. Աղետի կառավարման նախապատրաստություն համայնքի անդամների կողմից</li><li>9. Գործողությունների և ֆինանսական պլաններ</li><li>10. Աղետի կառավարմանն առնչվող տեղական կազմակերպությունների կոնտակտային հասցեներ</li></ol> |
|---|

### 6.4 Սողանքի շարժի վերաբերյալ տեղեկատվության հավաքում, փոխանցում և զեկուցում

Սողանքային շարժը կարող է հայտնաբերվել գրունտի, շենքերի, կառուցվածքների, անտառների և այլնի ձևախախտմամբ և/կամ ճաքով, ինչպես նաև առնչվող աննորմալ ձայնով, ջրի կտրուկ արտահոսքով և այլն: Նման տեղեկատվության հավաքումը հանդիսանում է սողանքային աղետի պատշաճ արձագանքման առաջին անբաժանելի քայլը: Քանի որ բնակիչներն ամենաառաջինն են տեղեկանում աննորմալ երևույթների մասին, համայնքը պետք է հիմնի տեղեկատվության հավաքման, մնացած բնակիչներին տեղեկատվության տարածման, աղետի արձագանքման խմբին զեկուցման համակարգ, ինչպես նաև կայուն իրականացնի գործողություններ:

Եթե տեղադրված են մոնիթորինգի սարքեր, համայնքը պետք է հավաքի մոնիթորինգի տվյալներ՝ համագործակցելով մարզային փրկարարական վարչության հետ:

6.5 Համայնքային սեփականությունը հանդիսացող շենքերի և կառույցների անվտանգության ապահովում, վերանորոգում և օգտագործման վերահսկում

Եթե համայնքը ղեկավարում է համայնքային ճանապարհը, ջրամատակարարման համակարգը և այլն, շենքերի և կառույցների սողանքակայունությունը պետք է հաստատվի: Մասնավորապես ջրային կառույցների համար պետք է հստակեցվի գրունտի վիճակը և կառույցների ամրությունը, որպեսզի տեղի չունենա արտահոսք, քանի որ վերջինս հանգեցնում է սողանքի ակտիվացման:

Եթե սողանքից առաջացած վնասը ազդում է կառույցների վրա, պետք է իրականացվի արագ վերանորոգում՝ զեկուցման հետ միասին, ինչպես նշված է նախկին կետում: Մասնավորապես, ջրային կառույցներից ջրի արտահոսքը պետք է արագ կանգնեցվի սողանքի ակտիվացումից խուսափելու համար:

Վնասված ճանապարհով իրականացվող երթևեկությունը և վնասված շենքերի օգտագործումը վերահսկելուց բացի, ջրային կառույցների օգտագործումը պետք է վերահսկվի մինչև արտահոսքի դադարեցումը:

6.6 Աղետների վերաբերյալ կրթության և ուսուցման խթանում

Համայնքները պետք է խթանեն բնակիչներին տրամադրվող աղետների վերաբերյալ կրթությունը համակազմակերպման կամ դրա նպատակով համագործակցության միջոցով, որը իրականացնում է Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան: Աղետների վերաբերյալ կրթության նպատակը նշված է Աղյուսակ 6.3-ում:

**Աղյուսակ 6.3 Համայնքներում աղետների երաբերյալ կրթության նպատակը**

- |  |
|--|
| <ol style="list-style-type: none"><li>1. Սողանքային աղետի և դրա կառավարման վերաբերյալ հիմնական կետերի ընկալում</li><li>2. Աղետի կառավարման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</li><li>3. Կարողության զարգացում պատշաճ դատողության և հակասողանքային գործողությունների ձեռնարկման համար</li><li>4. Տուժած մյուս տարածքներին օգնության խթանման կարողության զարգացում</li></ol> |
|--|

(1) Համայնքներում աղետների վերաբերյալ կրթության խթանում

Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան տրամադրում է աղետի կառավարման ոլորտի կրթություն գյուղապետերին և աղետի արձագանքման խմբերին: Ապա կրթություն ստացած գյուղատերերը իրականացրել են աղետի կրթություն համայնքի անդամների շրջանում աղետի կառավարման վերաբերյալ կրթությունը տարածելու նպատակով: Համայնքներում աղետի վերաբերյալ կրթության իրականացման շրջանակներում ղեկավարները տրամադրում են անդամներին կրթություն իրազեկվածությունը բարձրացնելու և հիմնական գիտելիքը սովորեցնելու նպատակով: Բացի այդ, մասնագիտացված գիտելիք պետք է տրամադրվի հրավիրված մասնագետների կողմից:

(2) Աղետների կրթության խթանումը դպրոցներում

Դպրոցներում պետք է ստեղծվի աղետների կրթության խթանման կազմակերպչական կառուցվածք՝ հիմնականում բացկացած աղետների կառավարման համար պատասխանատու անձնակազմից: Այդ անձնակազմը, համագործակցելով առնչվող կազմակերպությունների հետ, պետք է մշակի աղետների կրթության տարեկան պլան, որում պետք է ներառվի կրթության ամբողջ բովանդակությունը՝ հաշվի առնելով աշակերտների տարիքն ու տեղական առանձնահատկությունները: Գոյություն ունի աղետների կրթության պարտադիր ուսումնական ծրագիր. շաբաթը մեկ դասաժամ դպրոցի բարձր դասարանների աշակերտների համար, որի ընթացքում պետք է բարելավվի սողանքային աղետի կառավարման բովանդակությունը:

6.7 Օգնության հայտ և տեղեկատվության ու նյութերի կիսում

Անհրաժեշտության դեպքում, վերոնշյալ գործողություններն իրականացնելու համար համայնքը պետք է դիմի մարզային փրկարարական վարչությանը, Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիային, ՀՀ ՏԿԱԻՆ և այլնին օգնության խնդրանքով: Աջակցության միջոցով տրամադրված կետերն ու բովանդակությունը, ինչպես նաև նյութերն ու ապրանքները պետք է պատշաճ ձևով պահվեն համայնքում և կիսվեն բոլոր բնակիչների միջև:

6.8 Օժանդակություն և համագործակցություն համայնքների աղետների կառավարման գործողությունները խթանելու համար

6.8.1 Պաշտոնական օժանդակություն

Համայնքների աղետների կառավարման գործողությունները խթանելու համար կարևոր է քաղաքից և հանրապետական կառավարություններից օգնությունը, ինչպես նշված է Աղյուսակ 6.4-ում:

Աղյուսակ 6.4 Կառավարության կողմից համայնքներին ցուցաբերվող օժանդակություն

	Գործողության կետ	Հիմնական օժանդակող կազմակերպություն
Մեղմացման աշխատանքներ	1 Աղետների կառավարման գծով ինքնուրույն ծմբերի ստեղծում և զարգացում	ՀՀ ՏԿԱԻՆ (ՓԾ) և մարզ
	2 Աղետի կառավարման պլանի մշակում յուրաքանչյուր համայնքի համար	ՀՀ ՏԿԱԻՆ (ՓԾ) և մարզ
	3 Սողանքի շարժի վերաբերյալ տեղեկատվության հավաքում, փոխանցում և զեկուցում	ՀՀ ՏԿԱԻՆ (ՓԾ) և մարզ
	4 Համայնքային սեփականությունը հանդիսացող շենքերի և կառույցների անվտանգության ապահովում, վերանորոգում և օգտագործման վերահսկում	ՀՀ ՏԿԱԻՆ (ՓԾ), մարզ և առնչվող նախարարություններ
	5 Աղետների կրթության և ուսուցման խթանում	ՀՀ ՏԿԱԻՆ (ՃԿՊԱ) և մարզ
	6 Օգնության հայտ և տեղեկատվության ու նյութերի կիսում	ՀՀ ՏԿԱԻՆ (ՓԾ) և մարզ

6.8.2 Ավելի ապահով գյուղերի ստեղծում առնչվող մարմինների հետ համագործակցության միջոցով

Համայնքը պետք է հստակեցնի խնդիրների կիսումն ու համագործակցությունը սողանքակայուն ավելի ուժեղ գյուղի ստեղծումը խթանելու համար՝ առնչվող պաշտոնական կազմակերպությունների, ՀԿ-երի և այլնի միջև իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով: Անհրաժեշտ իրազեկվածությունը բարձրացնելու և համագործակցությունը խթանելու համար ՀՀ ՏԿԱԻՆ ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.

- ա) Հնարավորության ստեղծում պաշտոնական կազմակերպությունների, համայնքի, ՀԿ-երի և այլնի համար փոխօգնության հարցեր քննարկելու և համաձայնեցնելու համար
- բ) Հիմնական քաղաքականության և համագործակցության պլանի մշակում և պաշտոնական կազմակերպությունների, համայնքի, ՀԿ-երի և այլնի միջև դրանց տարածում
- գ) Միմյուրյալների և դասախոսությունների կազմակերպում սողանքակայուն համայնքի ստեղծման վերաբերյալ
- դ) Աղետների կառավարման ոլորտում միասնական ուսուցման կազմակերպում՝ բնակիչների ինքնակամ մասնակցությամբ, կամավորների խմբերի և բնակիչների միջև համագործակցությունը խթանելու նպատակով
- ե) Համագործակցության գործողությունների խթանում՝ համայնքների միջև համագործակցային գործողությունների լավ օրինակների տարածման, ինչպես նաև աղետի կառավարման գործողությունների հարցում տեղական հասարակությանը նպաստող ձեռնարկությունների ներդրման միջոցով

6.9 Տնտեսության և արդյունաբերության վերակառուցման նախապատրաստում

6.9.1 Ընկերության ստեղծում և կազմակերպում արդյունաբերության յուրաքանչյուր տեսակում աղետների կառավարման նպատակով տեղեկատվության փոխանակման համար

ՀՀ ՏԿԱԻՆ պետք է խթանի արդյունաբերության յուրաքանչյուր տեսակում ընկերության ստեղծումը և կազմակերպումը աղետների կառավարման նպատակով տեղեկատվության փոխանակման, արդյունաբերության ոլորտում աղետներին պատրաստվածության արագացման, ինչպես նաև աղետներից հետո արագ վերականգնման/ կենսապահովման/ աշխատանքի հնարավորության ապահովման համար:

6.9.2 Արդյունաբերական աղետների կառավարման վերաբերյալ ձեռնարկների պատրաստում միջին և փոքր ձեռնարկությունների համար

ՀՀ ՏԿԱԻՆ պետք է պատրաստի ձեռնարկներ արդյունաբերության յուրաքանչյուր տեսակում արդյունաբերական աղետների կառավարման վերաբերյալ, մասնավորապես՝ միջին և փոքր ձեռնարկությունների համար:

### 6.9.3 Արդյունաբերության՝ “մեկ պատուհանի” սկզբունքով ծառայությունների կենտրոնի ստեղծում

Գործունեության սահուն վերականգնմանը օժանդակելու համար ՀՀ ՏԿԱԻՆՆ պետք է պատրաստի արդյունաբերության՝ “մեկ պատուհանի” սկզբունքով ծառայությունների կենտրոնի ստեղծումը, որը կտրամադրի տարբեր ծառայություններ մեկ վայրում, ինչպիսիք են՝ առնչվող տեղեկատվության, խորհրդատվության տրամադրումը, վարչական ընթացակարգերը և այլն:



Մաս 3 Պատրաստվածության պլան

## Գլուխ 10 Պատրաստվածության և օժանդակության խթանման գործընթաց և խթանմանը նպաստող համակարգ

Սողանքային աղետի պատրաստվածություն տակ սույն պլանում ենթադրվում համակարգի հիմնում, որի գործողությունները ուղված կլինեն սողանքային երևույթների կանխատեսման, կանխարգելման, ռիսկի նվազեցման, իսկ առաջացման դեպքում արագ արձագանքման ու հետևանքների վերացմանը:

Այս համակարգերը կարող են ստեղծվել տարբեր մակարդակներում պետական գործադիր մարմինների (այսուհետ՝ նախարարություններ) մակարդակում, պետական կառավարման տարածքային մարմինների (այսուհետ՝ մարզպետարաններ) մակարդակում, և համայնքների մակարդակում:

Համակարգը իրենից պետք է ներկայացնի համայնքի ղեկավարության, բնակչության, կազմակերպությունների միավորում, որոնց պետք է աջակցեն պետական գործադիր և պետական կառավարման մարմինները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սողանքները, որպես երկրաբանական բնույթի վտանգավոր երևույթ հազվադեպ կարող են տարածվել 2 և ավելի համայնքների տարածքներից դուրս, հետևաբար սողանքային աղետի կառավարման խնդիրը առաջնայինը համայնքի խնդիրն է: Ելնելով նշվածից սողանքային աղետի ռիսկի նվազեցման ու առաջնային արձագանքման խնդիրները պետք է կարգավորվեն համայնքային մակարդակում, համայնքի ուժերով և հնարավորություններով: Սակայն առանձին դեպքերում (բացառությամբ բնակչության պաշտպանության գերակայությունից) սողանքները կարող են սպառնալ մարզայի կամ հանրապետական նշանակություն ունեցող ենթակառուցվածքներին, մշակութային և այլ կարևոր օբյեկտներին: Այս դեպքում համայնքի տարածքում սողանքների կանխարգելման միջոցառումները կարող են իրականացվել նախարարությունների, մարզպետարանների կամ հանրապետական նշանակության կազմակերպությունների (Հայրուսգագարդ, Հայկական Էլեկտրական Ցանցեր, Առմենթել և այլն) կողմից և միջոցներով, առաջնայությունը տալով բնակչության պաշտպանության հարցերին, այնուհետ անրադառնալով սպառնալիքի թիրախին:

Սողանքային աղետի պատրաստվածության գործընթացը պայմանավորված է վերը նշված համակարգի գործունակությունից, կանխարգելիչ, նախապատրաստական ու արձագանքման միջոցառումների ժամանակին պլանավորումից և իրականացումից: Անկախ հակասողանքային միջոցառումների պատասխանատուից, սողանքների ռիսկերի նվազեցման ու կանխարգելման միջոցառումների պլանավորման գերակշռող մասը վերաբերվում է համայնքին և համայնքի անմիջական պարտականությունն է:

Համայնքը ինքնուրույն պետք է պլանավորի և իրականացնի իր տարածքի սողանքի կանխարգելման ու հետևանքների նվազեցման միջոցառումները, ինչպես նաև պլանավորի սողանքի հետևանքների վերացման ու արագ վերականգնման միջոցառումները:

Եթե հակասողանքային միջոցառումները նախարարությունների կամ մարզպետարանների իրավասությունների շրջանակներում են և հակասողանքային միջոցառումները իրականացվում են վերջիններիս կողմից ու միջոցներով, այնուհետ դրանց պլանավորման գործընթացում պետք է ապահովվի համայնքի առավելագույն

ներգրավվածությունը:

Հակասողանքային միջոցառումների պալանավորման մեջ առանձին բաժնով պետք է ներկայացվի առաջացած սողանքի արձագանքման, այնուհետ պատճառած վթարների արագ վերականգնման միջոցառումներ: Հմայնքի պլանի արձագանքման մասը պետք է մշակված և համաձայնեցված լինի ՀՀ ՏԿԱԻՆ (այսուհետ՝ լիազոր մարմին) տարածքային ստորաբաժանման հետ, իսկ վթարավերականգնողական մասը մարզպետարանի և/կամ նախարարությունների ու կազմակերպությունների հետ:

Գլուխ 11 Բնակիչների և համայնքների կողմից պատրաստվածության  
խթանում և նպաստող համակարգ

Հակասողանքային միջոցառումները սկիզբ են առնում համայնքներում, դրանց հիմքում են ընկած համայնքի յուրաքանչյուր բնակչի կողմից իրականացվող գործողություններ ու միջոցառումներ ուղղված

1. սողանքների առաջացնող գործոնների վերացման,
2. սողանքների առաջացման նպաստող հանգամանքների ու գործոնների վերացմանը
3. սողանքների առաջացման դեպքում հնարավոր հետևանքների մեղմմանը:

Համայնքների ղեկավարները և համայնքների բնակչությունը գիտակցելով սողանքների անբարենպաստ ազդեցությունը իրենց տնտեսության, առողջություն և գույքի պահպանման պետք է առաջին հերթին ինքնուրույն հոտևանեն ու պահպանեն սողանքային աղետի կանխարգելման ու հետևանքների նվազեցման տարրական նորմերը:

Համայնքներում պետք է ձևավորել սողանքային աղետի կառավարման համակարգի առաջնային օղակը՝ համայնաքնային մակարդակի սողանքային աղետի կառավարման օղակը:

Այս օղակը պետք է մծակի ու իրականացնի իր համայնքի սողանքային աղետի կառավարման ծրագիրը, որը պետք է բաղկացած լինի երկու հիմնական մասերից՝

1. Միջոցառումներ, որոնք պետք է իրականացնեն համայնքի յուրաքանչյուր բնակիչ սողանքների կանխարգելման ու պատրաստվածության բարձրացման ուղղությամբ.
2. Միջոցառումներ, որոնք պետք է իրականացնի համայնքը սողանքների կանխարգելման ու պատրաստվածության բարձրացման ուղղությամբ.

Առանձին դեպքերում համայնքի այս ծրագիրը/պլանը կարող է ներառել միջոցառումներ, որոնց իրականացումը մարզպետարանների կամ պետական գործադիր մարմինների կամ հանրապետական նշանակության կազմակերպությունների պատասխանատվության շրջանակներում է: Այնուամենայնիվ, եթե անգամ տվյալ սողանքի կանխարգելման կամ հակասողանքային միջոցառումները մարզպետարանների կամ պետական գործադիր մարմինների կամ հանրապետական նշանակության կազմակերպությունների պատասխանատվության շրջանակներում են համայնքապետարանները և առանձին վերցված բնակիչները ունեն իրենց կողմից իրականացվող գործողությունների շրջանակ:

Հակասողանքային միջոցառումները թելադրում է մի շարք վարչական հնարավորությունների զարգացում, մասնավորապես բնակչության, համայնքների, դպրոցների հնարավորությունների զարգացում, գործառույթների հստակ բաժանում, ինչը կնպաստի գործողությունների ներդաշնակությունը:

Պատրաստվածության ամենօրյա աշխատանքները նպաստում են բնակչության համախմբությանը և էական դեր են խաղում հակասողանքային միջոցառումների իրականացմանը գիտակցված մոտեցման բարձրացմանը:

Համայնքների ղեկավարները ՀՀ ԱԻՆ տարածքային ստորաբաժանման հետ/միջոցով պետք է կազմակերպեն բնակչության իրազեկվածության բարձրացման միջոցառումներ՝ ուսուցման, սեմինարների, ձեռնարկների տարածման միջոցով:

Յուրաքանչյուր Համայնք պետք է մշակի սողանքային աղետի կառավարման իր սեփական պլանը՝ ենթադրելով կոնկրետ իրավիճակ և նպատակ ունենալով ամրապնդել

աղետների կառավարման վերաբերյալ իրենց հմտությունները: Պլանում պետք է հստակեցվեն կազմակերպչական կառուցվածքը և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները՝ պլանում նշված միջոցառումների շարունակական իրականացումը ապահովելու համար:

Համայնքները և իրենց բնակիչները կազմելով/մշակելով իրենց կողմից հակաստղանքնային միջոցառումների ծրագրի/պլանի դրույթները պետք է կազմելիս որպես հիմք պետք է ընդունեն իրենց բնակավայրի ռիսկերի քարտեզը:

Այս պլանները պետք է պարբերաբար վերանայվեն և թարմացվեն՝ ելնելով նոր տեղեկատվությունից, փոփոխված ելակետային իրավիճակից և իրենց գործողությունների շնորհիվ քաղված դասերից:

Պլանը պետք է կազմված լինի երկու հիմնական բաժիններից՝

1. Սողանքանյին աղետի կանխարգելման/ազդեցության նվազեցման միջոցառումներ
2. Սողանքանյին աղետի հետևանքների մեղմացման ու արագ վերականգնման միջոցառումներ:

Սողանքանյին աղետի կանխարգելման/ազդեցության նվազեցման միջոցառումների բաժինը իր մեջ պետք ներառի միջոցառումներ ուղղված արդեն իսկ առաջացած սողանքանյին երևույթի հնարավոր զարգացման, ակտիվության նվազեցման, սողանքի ակտիվությանը նպաստող գործոնների վերացմանը: Այս բաժնում նաև Առանձին ու մեծ ուշադրություն է պետք հատկացնել համայնքի հողերի օգտագործման հարցերին, ինչպես նաև Համայնքի կենսապահովման համակարգերի, նախադպրոցական և ուսումնական հաստությունների ու կազմակերպությունների ռացիոնալ տեղաբաշխման հարցերին:

Սողանքանյին աղետի հետևանքների մեղմացման ու արագ վերականգնման միջոցառումներ բաժինը պետք է ներառի միջոցառումներ՝ ակտիվացած/տեղի ունեցած սողանքի պայմաններում հնարավոր հետևանքների ու կորուստների նվազեցման ուղղությամբ, որը առաջին հերթին ենթադրում է համայնքի ռացիոնալ կառուցապատում և հողոգտագործում:

Արագ վերականգնման հնարավորությունների բարձրացման միջոցառումները ենթադրում են կազմակերպչական և ֆինանսական միջոցառումների համադրում ուղղված համայնքի կենսապահովման համակարգի կայունության բարձրացմանը, արագ վերականգնման համար անհրաժեշտ նյութական միջոցների կուտակմանը, ինչպես նաև Միջոցառումներ անօդևան մնացած բնակիչների տարահանմանը և ժամանակավոր տեղաբաշխմանը:

Գլուխ 12 Մոնիթորինգի տվյալների մշակում և մոնիթորինգի համակարգի ամրապնդում:

Մոնիթորինգի տվյալների մշակումը և մոնիթորինգի համակարգի ամրապնդումը բնակչության և կառավարման մարմինների բոլոր մակարդակներում համապատասխան մասնագետների իրազեկվածությամբ, գիտելիքների որոշակի պաշարի ձևավորմամբ պայմանավորված սողանքի տեղաշարժի գործիքային ուսումնասիրություն և արդյունքների ամփոփում է: Այն հանդիսանում է սողանքների կանխատեսման միջոցառումների անբաժանելի բախկացուցիչ մաս և ենթադրում է երկարատև և մանրակրկիտ ուսուցողական, հետազոտական, ինժեներական և ֆինանսական նախապատրաստում:

- բնակչության ուսուցման ծրագրերի մշակում և ներդնում՝ սկսած նախադպրոցական հասատություններից մինչև ԲՈՒՀ-ական մակարդակ:
- բնակչության իրազեկում տպագիր նյութերի, ռադիո և հեռուստատեսային հաղորդումների միջոցով,
- բոլոր մակարդակներում կառավարման մարմինների համապատասխան մասնագետների ուսուցում և վերապատրաստում,
  - տեղանքի իմացություն, ուսումնասիրություն,
  - սարքերի տեղադրման վայրերի որոշում,
  - սարքերի ճիշտ շահագործում և խնամք,
  - ֆինանսական միջոցների հատկացում:

Այս ամենը թույլ կտա հասկանալ ի՞նչ են սողանքները, ինչն՞վ են դրանք պայմանավորված, ինչպես են արտահայտվում տարածքում և ինչպես և ինչ եղանակներով կարելի է չափել դրանց ակտիվությունը՝ սկսած պարզագույն ձեռնահաս միջոցներից պատրաստված չափիչ սարքերից մինչև նորագույն թվային սարքեր, որոնց միջոցով տեղեկատվությունը հնարավոր է ավտոմատացված կարգով իրական ժամանակում ստանալ կառավարման կետերում:

### Գլուխ 13 Պատրաստվածություն կապված տեղեկատվության հավաքման և փոխանցման հետ

Արտակարգ իրավիճակներում՝ մասնավորապես սողանքների արձագանքման կարևորագույն պայման է հանդիսանում վնասի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության օպերատիվ հավաքումը, վերլուծումն ու փոխանցումը:

Տեղամասում գտնվող ՀՀ ԱԻՆ օպերատիվ խմբերից, համայնքի ղեկավարությունից, ԱԻ ծառայություններից, բնակչությունից և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը համակարգվում է, վնասի չափերը պարբերաբար ճշտվում են, ինչը պայմաններ է ստեղծում օպերատիվ արձագանքման անհրաժեշտ միջոցառումների իրականացման համար:

Անհրաժեշտության դեպքում կատարվում են լուսանկարահանումներ և տեսաձայնագրություններ, որոնք անհրաժեշտ են օպերատիվ արձագանքման իրականացման, ինչպես նաև աղետի վերաբերյալ լուսանկարահանման և տեսաձայնագրման տեսանյութերի ապահովման համար:

Վնասների գնահատմամբ զբաղվող ԱԻ ծառայությունների աշխատակիցները, արդյունավետորեն օգտագործելով կապի բազմաթիվ միջոցներ, հավաքագրված տեղեկատվությունը, պարբերաբար ներկայացնում ՀՀ ԱԻՆ, որտեղ այն վերլուծելուց հետո իրականացվում են.

1. ուժերի և միջոցների հաշվարկ,
2. տեղամասերում աշխատանքների դասակարգում ըստ առաջնահերթության,
3. տեղեկատվության տրամադրում շահագրգիռ մարմիններին, իրենց աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Աղետների ժամանակ բնակչությանը անհրաժեշտ է պարբերաբար տրամադրել տեղեկատվություն իրադարձությունների զարգացման, նրանց վարքականոնների մասին:

ԱԻ վերաբերյալ բնակչության իրազեկումն իրականացվում է հետևյալ նպատակներով.

1. Կանխարգելել բնակչության շրջանում խուճապի առաջացումը,
2. Արդյունավետ կազմակերպել որոնողական աշխատանքները, բնակչության, նյութական արժեքների և անասնազվի տարահանումը,

Տուժած բնակչության կենսապահովման խնդիրների լուծումը:

Գլուխ 14 Պատրաստվածություն հրատապ հակասողանքային միջոցառումների և շրջանցիկ երթուղիների համար

Հակասողանքային միջոցառումները կարելի է բաժանել 3 խմբի, որոնք իրականացվում են՝

1. Նախապես,
2. սողանքի ակտիվացման ընթացքում,
3. հետևանքների վերացման փուլում:

Առաջին խմբի միջոցառումները ենթադրում են.

- մոնիթորինգի համակարգի ներդրում,
- լանջերի վրա բնակվող մարդկանց որոշակի վարքականոններ ձևավորում՝ կենցաղավարության նոր մշակույթի ներդրում,
- տեղանքին սպառնացող վտանգների իմացություն և քարտեզագրում,
- սողանքային կառավարման պլանների նախապես մշակում,
- համայնքներում սողանքային աղետի հակազդման առաջնային օղակների ձևավորում և ուսուցում:

Այս օղակի կողմից իրականացվող գործողությունները պետք է բաղկացած լինեն երկու հիմնական մասերից՝

- միջոցառումներ, որոնք պետք է իրականացնի համայնքի յուրաքանչյուր բնակիչ սողանքների կանխարգելման ու պատրաստվածության բարձրացման ուղղությամբ,
- միջոցառումներ, որոնք պետք է իրականացնի համայնքը սողանքների կանխարգելման ու պատրաստվածության բարձրացման ուղղությամբ:

Առաջին խմբի միջոցառումների արդյունավետ կազմակերպումն ու իրականացումը կգսպի սողանքային երևույթների հետագա ակտիվացումները, իսկ առաջնալու դեքում հետևանքները կլինեն հնարավորինս մեղմ:

Համայնքների սողանքային կառավարման պլանների մշակումը կնպաստի վարչական հնարավորությունների զարգացմանը, մասնավորապես՝ բնակչության, համայնքների, դպրոցների հնարավորությունների զարգացմանը, գործառույթների հստակեցմանը և գործողությունների ներդաշնակությանը: Պլաններում

անհրաժեշտ է արտացոլել նաև սողանքի ակտիվացման և հետևանքների վերացման փուլերում իրականացվող միջոցառումները: Այս բաժինը պետք է ներառի սողանքի ակտիվացման պայմաններում հնարավոր հետևանքների ու կորուստների նվազեցմանն ուղղված միջոցառումներ, որոնք առաջին հերթին ենթադրում են համայնքի ռացիոնալ կառուցապատում և հողոգտագործում: Այս փուլի համար պլաններում անհրաժեշտ է նախատեսել նաև բնակչության և նյութական արժեքների տարահանման հիմնական և շրջանցիկ երթուղիները, տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերն ու առաջնային կենսապահովման խնդիրների լուծումը:

Սողանքային կառավարման համայնքային պլանները պետք է մշակել հնարավորինս իրատեսական՝ հաշվի առնելով համայնքի ուժերն ու միջոցները, պարբերաբար գործարկել և լրամշակել կախված տեղանքում իրավիճակի փոփոխությունից:



**Գլուխ 15 Պատրաստավածություն ազդարարաման, տարահանման և դրա ուղղորդման համար**

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում պետության կարևորագույն գործառնություններից է կառավարման մարմինների և բնակչության ազդարարումը:

Ազդարարումը արագ և արդյունավետ կազմակերպելու նպատակով օգտագործվում են կապի առկա բոլոր միջոցները, ինչպիսիք են ստացիոնար, բջջային, ուղիղ կապի գծերը, հատուկ ռադիոկապի միջոցները և էլեկտրական շչակները:

Որպեսզի սողանքի ակտիվացման դեպքում ազդարարումն իրականացվի արագ և հստակ անհրաժեշտ է իրականացնել Կապի և տեղեկատվության համակարգերի հզորացման, ինչպես նաև իրական ժամանակում մոնիտորինգի ու ազդարարման համակարգերի ներդրման, զարգացման ու կազմակերպչական միջոցառումներ:

Այս նպատակով անհրաժեշտ է ընդլայնել մոնիտորինգի համակարգերը, պարբերաբար ստուգել և թարմացնել ազդարարման միջոցները, ցուցակները, իրականացնել կոնտակտային հեռախոսահամարների ստուգումներ և այլն, ինչպես նաև՝

- 1) «911» ծառայության զարգացում
- 2) Մոնիտորինգի ու դրա իրական ժամանակում ազդարարման համակարգերի ներդրում
- 2) Տվյալների բազաների կատարելագործում, ներառյալ քարտեզների վրա արտացոլված տեղեկատվությունը
- 3) Ճգնաժամային արձագանքման կանոնակարգերի մշակում
- 4) իրական ժամանակում իրավիճակի ավտոմատ գնահատման համակարգչային համակարգերի ներդրում:

Բնակչությունը պետք է իրազեկված լինի ԱԻ արձագանքման և հետևանքների մեղմացմանն ուղղված ՀՀ կառավարության և մարզպետարանների մոտեցումներին և ամենօրյա գործունեության ժամանակ իրականացվող միջոցառումներին:

Բնակչության ազդարարումն պատրաստավածության բարձրացման համար անհրաժեշտ է նախապես իրականացնել՝

- 1) Հասարակության և բնակչության գիտակցության բարձրացումը և Աղետներից պաշտպանվելու ինքնուրույն գործողությունների խթանումը:
- 2) «Մարզի/համայնքի աղետների ռիսկերի նվազեցման ու ԱԻ գործելու պլան»-ի հրապարակումը, ինչպես նաև այդ պլանով նախատեսված միջոցառումների ընթացքի և արդյունքների մասին բնակչության իրազեկմամբ:

Հասարակայնության հետ աշխատանքները պետք է իրականացնել ինտերնետի, ՁԼՄ, թերթերի և փակցվող հայտարարությունների միջոցով:

Գլուխ 16 Պատրաստվածությունն անվտանգության, երթևեկության վերահսկման ու հրատապ փոխադրման համար

Համայնաքային պլաններում պետք է արատացուցված լինեն անվտանգությունն ապահովող միջոցառումները՝ տների միջև ընկած ճանապարհի անվտանգության ապահովումը, տարահանման երթուղիների անվտանգության ապահովում, առաջնային փրկարարական և հակահրդեհային միջոցառումներ, բժշկական օգնություն մոտեցման ճանապարհների անվտանգությունը և այլն:

Այս ամենը կանխելու, ինչպես նաև տարահանման, փրկարարական, օգնության ցուցաբերման, այդ թվում նաև բժշկական, հրդեհաշիջման և այլ անհետաձգելի միջոցառումների սահուն և անխափան իրականացման նպատակով անհրաժեշտ է նախապես որոշել նշված միջոցառումների տրանսպորտային ապահովման երթուղիները:

Այս նպատակով, նախապես որոշված երթուղիներով սահմանափակվում կամ լիովին արգելվում է այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունը, բացառությամբ նախապես սահմանված տրանսպորտային միջոցների, որոնց երթևեկությունը թույլատրվում է արտակարգ իրավիճակների ժամանակ:

Տալով առաջնահերթություն բնակչության անվտանգությանը՝ մարզի տրանսպորտի համար պատասխանատու ստորաբաժանումը պետք է նախապես պլանավորեն հրատապ տեղափոխումների համակարգերի ներդրման գործընթաց, որով կսահմանվի՝

- ճանապարհատրանսպորտային երթևեկության սահմանափակում մտցնելու կարգը,
- վարորդների վարքագծի կանոնները,
- ծանր տեխնիկա ունեցող Կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակները,
- անցանելի և անանցանելի ճանապարհների վերաբերյալ տեղեկատվության հավաքման և այլ մարմիններին հաղորդման կարգը,
- Փրկարարական, վթարավերականգնողական, բժշկական , ոստիկանության ուժերի մոտեցման կարգը,

Ճանապարհներին՝ ըստ իրենց նշանակության տարբեր աստիճանի ռազմավարական նշանակության սահմանման կարգը:

Գլուխ 17 Պատրաստավածություն  
աշխատանքներին

որոնողափրկարարական

Սողանքի ակտիվացման հետևանքով ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է անհապաղ սկսել որոնողափրկարարական աշխատանքներ, ինչի համար կարևոր է այդ աշխատանքների նախապես պլանավորումը, որոնողափրկարարական աշխատանքներում ընգրկված ուժերի մշտական պատրաստ վիճակում պահպանումը:

Սողանքի հետևանքով առաջացած աղետի ժամանակ որոնողափրկարարական աշխատանքներ նման են երկրաշարժի դեպքում որոնողափրկարարական աշխատանքներին, այսինքն բաղկացած են երկու փուլից՝ որոնում և փրկարարական աշխատանքներ, տուժածների որոնում և դուրս բերում փլատակներից (սողանքից փլված շինություններ), խողիու քարակույտի շերտի տակից, վնասված ավտոտեխնիկայից:

Սողանքի հետևանքով հնարավոր են նույնպես երկրորդային խոցման գործոնների առաջացում՝ հրդեհ, կենցաղային գազի արտահոսք, հոսանքից ու ջրից խոցվելու վտանգ և այլն:

Կախված սողանքի վայրից և ծավալներից անհրաժեշտ է պլանավորել նաև խոշոր վթարների առաջացում, քանի որ սողանքները կարող են վնասել հիդրոտեխնիկակակն կառույցներ, վտանգավոր արտադրություններ, պոչամբարներ և այլն:

Հաաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում գրանցված սողանքների մեծ մասը սպառնում է ավտճչանապարհներին՝ որոնողափրկարարական աշխատանքների պլանավորման ու պատրաստավածության մեջ պետք է առանձին ուշադրություն դարձնել հրդեհաշիջման ու փրկարարական ուժերի մոտեցման ճանպարհների մասին. ժամանակի սղության պայամններում ու տարահանման առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից որոնողափրկարարական աշխատանքների պատրաստավածության բարձրացման միջոցառումներում պետք է առանձին ուշադրություն դարձնել խոշոր վերամբարձ կունկներ, էքսկավատորներ և այլ հողագործական ու շինարարական տեխնիկայի ներգրավումը:

Որոնողափրկարարական աշխատանքների թիրախային օբյեկտներ են հանդիսանում բնակչությունը, մանավանդ եթե բացակայում է նրանց կենդանի լինելու կամ չլինելու մասին տեղեկատվությունը, չնայած որ սողանքի դեպքում հնարավոր է նաև ընտանի կենդանիների խոցման դեպքեր, ինչպես նաև մշակույթային արժեքների փրման անհրաժեշտություն:

Որոնողափրկարարական աշխատանքների պատրաստավածությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է գուգահեռ պլանավորել հրդեհաշիջման ու վթարավերականգնողական աշխատանքները, երկրորդային խոցման գործոնները վերացնելու նպատակով, քանի որ դրանք լուրջ վտանգ կներկայացնեն տուժածների համար, ինչպես նաև կարող են վտանգել փրկարարների առողջությանը կամ էականորեն կանգարեն ու դանդաղեցնեն փրկարարների գործողությունները:

**Գլուխ 18 Պատրաստվածություն հրատապ բուժօնության, առողջապահության, իսմելու ջրի և սննդի**

Սողանքի սպառնալիքի պայմաններում մարզի բժշկական ծառայությունը իր համակարգում ստեղծում է տեղեկատվության կառավարման համակարգ, որի խնդիրն է իրականացնել հստակ տեղեկատվության հավաք և փոխադարձ փոխանակում հիվանդանոցների, շտապ օգնության մեքենաների, ուրիշ բժշկական հաստատությունների հետ: Այս համակարգը մարզի/համայնքի ավետների ռիսկի նվազեցման և ԱԻ գործելու պլանի կարևոր բաժիններից է:

Հիվանդանոցները ու դաշտային բուժկետերը նախապես հազեցվում են անհրաժեշտ բուժ.գույքով և դեղամիջոցներով, ամրագրվում է անձնակազմ:

Հիվանդանոցները ու դաշտային բուժկետերի տեղադրման վայրերի ընտրությունը իրականացվում է նախօրոք և դրա մասին տեղյակ են պահում բնակչությանը:

ԱԻ ժամանակ օպերատիվ և հրատապ առաջին բուժ օգնության ցուցաբերելու համար շտապ բժշկական օգնության պլանավորումը ներառում է՝

- Դաշտային բուժկետերի նախապատրաստում,
- Պարտականությունների բաշխում և փոխգործողության կազմակերպում, շարժական բժշկական ստորաբաժանումների ամրապնդում,
- բժշկական օգնության սարքավորումների և նյութերի ստեղծում և պաշարների հավաք,
- բժիշկներին, բժշկական անձնակազմին ներգարվում և ուսուցում:

Բժշկական օգնության օբյեկտներ՝ հիվանդանոցներն ու դաշտային բուժկետերն են: Հիվանդանոցները լայն պրոֆիլի հիվանդանոցներ են, սովորական պայմաններում բժշկական ծառայություն մատուցող, որոնք ունակ են ԱԻ ժամանակ ծավալել լայն բժշկական գործունեություն:

Դաշտային բուժկետերը բժշկական հատուկ վրաններում, ազատ գոտիներում կառուցվող օբյեկտներ են, որոնք տրամադրում են ժամանակավոր բուժօգնություն, որոնք պետք է պլանավորվեն նախապես:

Որպեսզի շարժական բժշկական միավորումները և մյուս բժշկական անձնակազմերը հոսպիտալներում և դաշտային բուժկետերում կարողանան հստակ իրականացնել իրենց գործունեությունը, նախապես իրականացվում է գործողությունների բաժանում և հստակ ձևակերպում են պարտականությունները:

Դաշտայի բուժկետերը կազմակերպվում են մարզի Շտապ օգնության ծառայության բազայի վրա, որոնցում կարող են ընգրկվել Հիվանդանոցների կողմից տրամադրված մասնագետներ:

Մարզի /համայնքի աղետների ռիսկի նվազեցման և ԱԻ գործելու պլանում (**ԱՌՆ և ԱԻ պլան**) պետք է կազմակերպի Խմելու ջրի, սննդամթերքի առաջին անհրաժեշտության պարագաների հատկացման գործնթաց առնվազն 3 օրվա հաշվարկով՝ բնակչությանը տրամադրելու համար, անհատական պաշարներից զրկված բնակչության համար:

Մարզպետարաններում ու համայքներում պետք է նախապես հստակ նախանշվի պատասխանատու անձնակազմ, ինչպես նաև պլանավորվի Խմելու ջրի, սննդամթերքի օպերատիվ ձեռք բերման, մատակարարման ու բաշխման համակարգ /մեխանիզմ/:

Բացի այդ պետք է կազմակերպվի ԱԻ հետևանքների վերացման համար անհրաժեշտ նյութական միջոցների, շինանյութի և գործիքների արագ ձեռք բերման ու մատակարարման համակարգ:

Գլուխ 19 Պատրաստվածություն կենսապահովման գծերի և ենթակառուցվածքների ժամանակավոր վերանորոգման համար

Սողանքային աղետի պատճառած ավերածությունների արդյունքում հաճախ շարքից դուրս են գալիս կոմունալ-էներգետիկ, տրանսպորտային և հեռահաղորդակցության ցանցերը, ինչպես նաև հակասելավային համակարգը, ինչը բերում է բնակչության կենսագործունեության և տնտեսության օբյեկտների գործունեության խափանմանը:

Բնակչության կենսագործունեության և տնտեսության օբյեկտների գործունեության համար կարևոր նշանակություն ունեցող օբյեկտներ են համարվում հիդրոտեխնիկական օբյեկտները, ջրամաքրման շինությունները, էլեկտրակայանները և ենթակայանները, գազապահեստարանները և գազակարգավորիչ կայանները, կապի վերահաղորդման ու կոմունալ տնտեսության կայանները:

Նշված օբյեկտներին հասցվող վնասը մեղմելու նպատակով սողանքային աղետի կառավարման համայնքային պլաններում (պլան) պետք է մշակվի համապատասխան բաժին: Համաձայն պլանների՝ յուրաքանչյուր նման օբյեկտի գործունեության վերականգնումը պետք է հանձնվի ոլորտի համապատասխան մասնագիտացված ծառայությանը:

Յուրաքանչյուր ուղղությամբ վթարավերականգնողական աշխատանքների ժամանակին և համապատասխան ապահովումը, պահանջում է տեղում վերանորոգման աշխատանքներ իրականացնող խմբերին, փլուզումների և աղետի հետևանքների վերացման աշխատանքների ընթացքի վերաբերյալ ճշգրիտ օպերատիվ տեղեկատվության հիման մշակված հստակ ցուցումների տրամադրում:

Վթարա-վերականգնողական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև բոլոր գործող մարմինների և կազմակերպություններ գործողությունների համակարգման համար կարևոր է տեղեկատվության փոխանակման արդյունավետ համակարգի ստեղծումը: Անխափան և հստակ տեղեկատվության փոխանակման համակարգը պետք է մշակվի նախօրոք:

Գլուխ 20 Պատրաստվածություն ժամանակավոր տեղակայման, վերաբնակեցման և կենսամիջոցների համար

ԱՌՆ և ԱԻ պլանում պետք է ունենա ռիսկերի քարտեզ, Որտեղ նշվում է վտանգավոր տարածքները, ինքնաապահովման միջոցների տեղակայման վայրերը, պատսպարման և հավաքի վայրերը:

1. Տարահանումը կազմակերպված անցկացնելու, համապատասխան պայմաններ ստեղծելու նպատակով պլանավորվում են և իրականացվում են հետևյալ նախապատրաստական միջոցառումներ՝

2. տարահանման պլանի և նրան կցվող փաստաթղթերի մշակում.

3. Տարահանման իրականացման կարգը, հրդեհային ահազանգման օգտագործման կարգը, տարածքների, որպես ապաստարաններ օգտագործման կարգը

4. ԱԻ ծագման դեպքում վտանգավոր գոտու սահմաններում գտնվող բնակչության հաշվառում և տարահանման երթուղիների որոշում,

5. ԱԻ ծագման դեպքում բնակչության համակողմանի կենսաապահովման հարցերի պլանավորում և ճշտգրտում,

6. գործնական ուսումնավարժանքների անցկացում, որպեսզի պարզվեն և վերացվեն ի հայտ եկած թերությունները:

Նախապես սահմանվում են Ավտոտրանսպորտային ընկերությունների, ՀՀ ԱԻՆ և ՀՀ Ոստիկանության տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի այլ շահագրգիռ ստորաբաժանումների հետ փոխհամագործակցության շրջանակները ու կարգը:

Առանձին պետք է հաշվի առնել և նախատեսվող սողանքից տուժած բնակչության վերաբնակեցման հնարավորությունը, որը պետք պլանավորել նախապես: Վերաբնակեցումը նույնպես պետք է պլանավորվի երկու դեպքի համար՝ սողանքի սպառնալիք, այսինքն նախապես և սողանքի առաջացման և համայնքի լիովին բերականգնման հնարավորության դեպքում: Առանձին դեպքերում, որպես սողանքների կառավարման գործառնություն կարող են նախատեսվել գյուղական համայնքի քամ քաղաքի առանձին հատվածների վերաբնակեցում, այս միջոցառումները ներառվում են մարզի կամ հանրապետական միջնաժամկետ զարգացման ծրագրերով:

Պլանավորվում և նախապատրաստվում է Կենսաապահովման /կենսաապահովման գծեր, ներառյալ՝ էլեկտրականության/տաք ջրի/կոյուղու և հասարակական այլ հարմարությունների/ հարցերը, ինչպես վերականգնումը այնպես էլ տարահանման վայրերում կենսաապահովման կազմակերպումը:

Վերականգնողական աշխատանքների արդյունավետությունն ապահովվում է կենսաապահովման առաջնայնության կարգի որոշմամբ: Արտակարգ իրավիճակների դեպքում վնասի իրական չափի մասին օպերատիվ տվյալների հիման վրա ճշտվում է կոնկրետ միջոցառումների իրականացման հերթականությունը՝

- ջրամատակարարման, ջրահեռացման, ջրաբաշխման հիմնական օբյեկտներ,
- Մագիստրալային գծեր,
- Ջրահեռացման գծեր,
- էլեկտրաէներգիայի արտադրման, հաղորդման և բաշխման հիմնական օբյեկտներ,

- Էլեկտրահաղորդման մագիստրալային մալուխներ,
- Էլեկտրամատակարարման այլ մալուխներ և կից օբյեկտներ,
- Գազամատակարարման կարգավորող կայաններ, մագիստրալային խողովակաշարեր,
- Գազամատակարարման տեղային ցանցի ճյուղեր,
- Գազաապահովման այլ ցանցեր և կից տեխնիկական օբյեկտներ,
- Կապի հիմնական օբյեկտներ
- Հեռահաղորդակցության ցանցի հատվածներ
- Տեղական ցանցի հատվածներ



Մաս 4 ԱԻ Արձագանքման պլան

Գլուխ 21 ԱԻ արձագանքման հիմունքները (ռիսկի մեծանալու փուլ, մասնակի փլուզման և վնասների փուլ, լայնամաշտաբ փլուզման և վնասների փուլ)

Սողանքային աղետի արձագանքումը բաժանվում է երեք հիմնական փուլերի՝ սողանքի ակտիվանալու ռիսկի առկայություն, սողանքի ակտիվացման հետևանքով մասնակի փլուզմաների առաջացում և լայնամաժտաբ փլուզումներ:

Մարզի/համայնքի ԱՌՆ և ԱԻ պլանում պտք է նախատեսվեն միջոցառումների համալիր այս երեք փուլերի համար: Ակնհայտ է որ միջոցառումների մեծ մասը կկրկնվեն բոլոր երեք փուլերի համար, սակայն այդ միջոցառումների բովանդակությունը, կատարման կարգը և տարածման ոլորտները արմատորեն կտարբերվեն:

Այսպիսով բոլոր երեք փուլերն էլ սկիզբ են առնում ազդարարումից և տեղեկատվության փոխանակումից: Առաջին դեպքում տեղեկատվության առաջման աղբյուր կհանդիսանան մոնիթորինգային սարքերի տվյալները կամ բնակիչների դիտարկումները: Այս դեպքում տեղեկատվությունը փոխանցվում է համայնքի ղեկավարին և ԱԻ տարածքային ստորաբաժանմանը, որից հետո կսկսվեն կանխարգելիչ և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ համաձայն մարզի/համայնքի պլանի:

Երկրորդ և երրորդ դեպքերում համայնքի ղեկավարության ու ԱԻ տարածքային ստորաբաժանման տեղեկատվության փոխանցումը կկրի արդեն իսկ տեղի ունեցախ աղետի ահագանգման տեսքով, որից հետո պատասխանատու մարմինների կողմից կձեռնարկվեն որոնողափրկարարական ու վթարավերականգնողական աշխատանքներ:

Բոլոր երեք դեպքերի համար կարելի է դիտարկել նաև տարահանման և վերաբնակեցման տարբերակները, ընդ որում առաջին դեպքում, երբ աղետը տեղի չի ունեցել սակայն մեծացել է դրա առաջացման հավանականությունը /ռիսկը/ հնարավոր են մի շարք միջոցառումներ, որոնք կիրականացվեն պետության կողմից: Դրանք են՝

- Սողանքի մանրակրկիտ երկրաբանական ուսումնասիրություն
- Կայունացման միջոցառումների համալիրի մշակում և իրականացում պետական ծրագրերով
- Բնակչության վերաբնակեցման հարցերի քննարկում և վերաբնակեցման եղանակների ու ֆինանսավորման աղբյուրների հայթայթում:

Մասնակի փլուզման դեպքում առդեն առաջ է գալիս համայնքի տուժած բնակչության տարահանման հարցը, առնվազն երեք օրվա հաշվարկով, այնուհետ սողանքի հետևանքների վերացումից հետո հնարավոր կլինի իրականացնել փլուզված վնասված հատվածի մանրակրկիտ հետազոտություն՝ հետագա օգտագործման հնարավորության հարցում: Այնուհետ կապված վնասվածքների ու փլվածքների ծավալներից առաջ են գալիս վերաբնակեցման կամ փոխհատուցման հարցերը:

Նման մոտեցում պետք է իրականացվի լայնամաժտաբ փլուզման դեպքում, սակայն այս դեպքում առաջ կգան մի շարք լուրջ խնդիրներ՝

- Մարդկանց որոնում և փրկում,
- Ֆիզիկապես չտուժած բնակչության տարահանում,
- Ընտանի կենդանիների տարահանում,
- Նյութական և մշակութային արժեքների տարահանում
- Անհապաղ վթարավերականգնողական աշխատանքների իրականացում

- Վերականգնման աշխատանքներ
- Բնակչության երկարատև տարահանու կամ վերաբնակեցում, ինչպես նաև այդ վայրերում զբաղվաչության հարցերի կարգավորում
- Հողի, քարակույտերի ու շինարարական աղբի կառավարում:

Վերը նշված միջոցառումները պետք է արտացոլվեն ԱՌՆ և ԱԻ պլաններում, իսկ երոորդ դեպքի համար հնարավոր է միայն մարզի սողանքային աղետի կառավարման պլանում, քանի որ միջամտության մակարդակից սկսած լայնամաշտաբ փլուզման դեպքում ԱԻ կդասակարգվի որպես խոշոո, որի արձագանքման պատասխանատվությունը վերապահված է մարզպետարաններին կամ հանրապետական գործադիր մարմիններին/կառավարությանը:

**Գլուխ 22 Հրատապ միջոցառումների համակարգն ու գործունեությունը ըստ փուլի և առնչվող կազմակերպությունների միջև փոխհամագործակցությունը**

Սողանքային աղետի արձագանքման համակարգը ներառում է՝ մարզպետարանները իրենց ստորաբաժանումներով /տրասպորտային, առևտևի և սննդի, բժշկական, կոմունալ էներգետիկ, սոցապահովման, ճանապահաշինարարական և այլն, / համայքապետարանները, պետական գործադիր մարմինները իրենց տարածքային ստորաբաժանումներով /ԱԻՆ, Ոստիկանություն/, հանրապտական նշանակության կազմակերպությունների /Հայաստանագազար, Հայկական էլեկտրական ցանցեր, կապի օպերատորներ, խմելու և ոռոքման ջրի կազմակերպություններ/:

Ինչպես ԱՌՆ և ԱԻ պլանում, այնպես էլ սողանքային աղետի կառավարման պլանում պետք է հստակ արտացոլված լինեն համակարգում ընգկված մարմինների գործառույթները, պարտականությունների ու պատասխանատվության շրջանակները և փոխհամագործակցությունը միմյանց միջև: Ակնհայտ է որ աղետի ժամանակ բնակչության պաշտպանության ցանկացած միջոցառում ընկնում է մի քանի մարմնի պատասխանատվության շրջանակներում և իրականացվում է **իրար հետ** համատեղ:

Ազդարարման համար պատասխանատու են ԱԻ տարածքային ստորաբաժանումները և համայնքի ղեկավարությունը, սկայն պետք է չմոռանալ բնակչության դերը ազդարարման գործնթացում: Կարող են լինել դեպքեր երբ աղետի առաջնային ազդարարումը իրականացվի բնակչության կողմից, այս դեպքերի համար շատ կարեվոր է բնակչության ուսուցման կազմակերպումը, ինչպես նաև վարվելակերպի կանոնների իմացությունը, ազդարարման ազդանշաններով ճիշտ գործելու համար:

Որոնողափրկարարական աշխատանքների հիմնական պատասխանատուն ԱԻՆ ստորաբաժանումներն են, սակայն այստեղել անհրաժեշտ են համագործակցության էլեմենտների առկայությունը, օրինակ գուգահեռ վթարավերականգնողական աշխատանքների իրականացման, հայտնաբերված տուժածների բժշկական օգնության ցուցաբերման, մոտեցման ճանապարհների մաքրման, որոնողափրկարարական աշխատանքների նյութատեխնիկական միջոցներով ժամանակին մատակարարման, որոնողափրկարարական ածախատանքների անվտանգության ապահովման հարցերում:

Տարահանման և բնակչության վերաբնակեցման միջոցառումները արդեն իկ իրենց բովանդակությամբ և ծավալներով մի քանի մարմնի համատեղ գործունեության առարկա են: Չնայած որ տարահանման համար համաձայն Հայաստանի օրենսդրության պատասխանատու են տարածքային մարմինները /մարզպետարանները/ և տեղական ինքնակառավարման մարմինները, **սակայն** ԱԻՆ-ը այստեղ ունի համակարգողի դերակատարություն : Տարահանման միջոցառումները ըստ դերակատարության իրականացվում են մի շարք մարմինների կողմից,՝ այսպիսով բում տարահանումը իրականացնում են մարզպետարանները ու համայքապետարանները, ոստիկանության կողմից իրականացվում են տարահանման երթուղիներում ուղորդման, տուժած տարածքների պահպանման, տարանման վայրերի անվտանգության ապահովման հարցեր, բուժ, վարչության կողմից տարահանվածների բժշկական ապահովման ու տարածքների սանիտարահիգիենիկ իրավիճակի վերահսկման հարցերը, տրասպորտային վարչության կողմից ավտոտրասպորտով ապահովման հարցերը,

Ճանապարհաշինաչրարական կազմակերպությունների կողմից ճանապարհների անցողունակության, կամուրջների վեկանգնամն հարցերը, կոմունալ-էներգետիկ ստորաբաժանումների կողմից համակարգի վերականգնամն հարցերը, առևտրի վարչության և կոմունալ-էներգետիկ ստորաբաժանումների կողմից տարահանվածների կենսաապահովման հարցերը:



Առանձնացված հավելված 3 Ուղեցույց





## 1 Սողանքի տեղագրության վերծանում



## **Օդալուսանկարների վերձանման միջոցով սողանքների հայտնաբերման ցուցումներ**

### **1. Ընդհանուր դրույթներ**

Սույն ցուցումները կիրառվում են օդալուսանկարների վերձանման (ՕԼՎ) միջոցով հավանական սողանքների հայտնաբերման համար:

ՕԼՎ համարվում է որպես գրասենյակային պայմաններում իրականացվող հետազննություն:

Սողանքի նախանշան հայտնաբերելուց հետո անհրաժեշտ է սողանքային տեղամասի գույքագրման դաշտային հետազննությունների միջոցով հստակեցնել սողանքային մարմնի կառուցվածքային տարրերը, տեղագրական առանձնահատկությունները և սահմանները՝ էռոզիայի հետքերից, երկրաբանական կամ վեգետացիոն սահմաններից առանձնացնելու համար:

ՕԼՎ արդյունքը նույնպես կարող է օգտագործվել սողանքի ակտիվության վերաբերյալ ենթադրությունների համար՝ տեղագրական առանձնահատկությունների տեսանկյունից:

ՕԼՎ կատարվում է սողանքային մարմնի տեսանելի կառուցվածքային տարրերը ճանաչելու և քարտեզագրելու համար: Այն համարվում է սողանքային տեղամասերի գույքագրման հետազննությունների մի մասը և կարևոր է սողանքային տեղամասերի գույքագրման Ձև 1-ի լրացման համար:

ՕԼՎ առավելությունը կայանում է նրանում, որ դրա արդյունքում կարելի է մեծ տարածքի վրա հայտնաբերել 1հա և ավել մակերեսով սողանքային տարածք, որը շատ կարևոր է հատկապես սողանքային աղետի կառավարման սկզբնական փուլում:

### **2. Սողանքային տեղամասի վերձանելու համար անհրաժեշտ նյութեր և սարքեր**

- տեղագրական քարտեզներ (1:100 000, 50 000 կամ 25 000 մասշտաբի)
- օդային/արբանյակային ստերեո գույգ լուսանկարներ՝ խոշոր մասշտաբի
- բուսականության քարտեզ (1:100 000 մասշտաբի)
- երկրաբանական քարտեզ (1:100 000 մասշտաբի)
- լանջերի թեքությունների քարտեզ (1:100 000 մասշտաբի)

- 2004-2006թթ. Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) հետազոտական խմբի կողմից պատրաստված Հայաստանի Հանրապետության 2504 սողանքների տեղաբաշխվածության 1:100 000 մասշտաբի քարտեզը և գույքագրման Ձև 1-ը
- ստերեոգրաֆ,
- գունավոր մատիտներ/գրիչներ,

### **3. Օդալուսանկարների վերծանում և հավանական սողանքային տեղամասերի սահմանագծում**


ՕԼՎ միջոցով հավանական սողանքային տեղամասերի սահմանագծումը հանդիսանում է առաջին քայլը հայտնաբերելու սողանքային մարմինները, դրանց բնորոշիչ տարրերը և տեղադիրքը:

ՕԼՎ աշխատանքն իրականացվում է համապատասխան տվյալների հիման վրա անհրաժեշտ սարքերի միջոցով:


- Օդալուսանկարներով վերծանվում են՝
- հավանական սողանքային տեղամասի հիմնական սկարպը
- սողանքային մարմնի առանձին տարրերը
- տեղաշարժված զանգվածը
- սողանքային տեղամասի առանձին բլոկները
- յուրաքանչյուր բլոկի շարժի ուղղությունը:

### **4. Սողանքային մարմնի կառուցվածքային տարրերը**

Սողանքային մարմնի սխեմատիկ պատկերը և կառուցվածքային տարրերը՝ համաձայն սողանքների գծով ինժեներային երկրաբանության միջազգային ասոցիացիա (ԻԵՄԱ) հանձնաժողովի 1990թ. սողանքների համար առաջարկված անվանացանկի (տեղեկագիր ԻԵՄԱ, No. 41, 13-16էջ), բերված են նկար 1-ում, իսկ տարրերի անունը և սահմանումը՝ աղյուսակ 1-ում:



Նկար 1



Նկար 2

h/h	Սողանքային մարմնի տարրերի անունը	Սահմանումը
1	Կատար (թագ) Crown	Հիմնական սկարպի բարձրադիր մասերին հարող գործնականում չտեղաշարժված գրունտ
2	Հիմնական սկարպ (պոկման պատ) Main scarp	Զառիվայր մակերևույթ առաջացած տեղաշարժված զանգվածի շարժի հետևանքով սողանքային մարմնի վերին եզրի չտեղաշարժված գրունտի վրա, դա սահքի մակերևույթի տեսանելի մասն է
3	Գագաթ Top	Տեղաշարժված զանգվածի և հիմնական սկարպի միջև շփման ամենա բարձր կետ
4	Գլխավոր արավանդ Head	Սողանքային մարմնի տեղաշարժված զանգվածի և հիմնական սկարպի միջև շփման երկայնքով սողանքային մարմնի առամենաբարձր մասեր
5	Ենթասկարպ Minor scarp	Զառիվայր մակերևույթ տեղաշարժված զանգվածի վրա առաջացած տարբեր շարժերից
6	Հիմնական մարմին Main body	Սողանքային մարմնի տեղաշարժված զանգվածի մաս, որը ծածկում է հիմնական սկարպի և սահքի մակերևույթի լեզվակի միջև ընկած մակերևույթը
7	Ստորոտ Foot	Սողանքային մարմնի տեղաշարժված զանգվածի այն մասը, որը ծածկել է սահքի մակերևույթի լեզվակից դուրս գտնվող բնական մակերևույթը
8	Ծայր Tip	Լեզվակի վրա գտնվող կետ, որը ամենահեռուն է գագաթից
9	Լեզվակ Toe	Սողանքի տեղաշարժված զանգվածի ծայրամասային, (սովորաբար կորացված) սահմանը, որը ամենահեռուն է հիմնական սկարպից
10	Սահքի մակերևույթ Surface of rupture	Մակերևույթ, որը ձևավորվում է (կամ ձևավորվել է) հողային ծածկույթի սկզբնական մակերևույթից ներքև տեղաշարժված զանգվածի ստորին սահմանում
11	Սահքի մակերևույթի լեզվակ Tow of surface of rupture	Փոխհատում (սովորաբար թաղված, չերևացող) սահքի մակերևույթի ստորին մասի և հողային ծածկույթի սկզբնական մակերևույթի միջև
12	Տարանջատման մակերևույթ Surface of separation	Հողային ծածկույթի սկզբնական մակերևույթի մաս, որն ծածկված է սողանքային մարմնի ստորոտով
13	Տեղաշարժված	Սողանքային մարմնում շարժի հետևանքով

	զանգված Displaced material	սկզբնական դիրքից տեղաշարժված զանգված: Այն ձևավորում է և սպառված զանգված և կուտակում
14	Տեղափոխման գոտի Zone of depletion	Սողանքային մարմնի մաս, , որի սահմաններում սողանքային զանգվածը տեղաշարժվելով ծածկում է հողային ծածկույթի սկզբնական մակերևույթը
15	Կուտակման գոտի Zone of accumulation	Սողանքային մարմնի մաս, որի սահմաններում տեղաշարժված զանգվածը կուտակվում է հողային ծածկույթի սկզբնական մակերևույթին
16	Տեղափոխում Depletion	Հիմնական սկարպով, տեղափոխված զանգվածով և հողային ծածկույթի սկզբնական մակերևույթով սահմանազատված ծավալով զանգված
17	Տեղափոխված զանգված Depleted mass	Տեղաշարժված զանգվածի ծավալ, որը տեղադրված է հողային ծածկույթի սկզբնական մակերևույթի հիմքում և ծածկում է սահքի մակերևույթը
18	Կուտակում Accumulation	Տեղաշարժված զանգվածի ծավալ, որը ծածկում է հողային ծածկույթի սկզբնական մակերևույթը
19	Կողմեր Flank	Սահքի մակերևույթի կողմերին հարակից չտեղաշարժված զանգվածներ, թագից նայելուց աջ կամ ձախ կողմը, կողմերը որոշվում է նաև կողմնացույցով
20	Սկզբնական մակերևույթ Original ground surface	Լանջի հողային ծածկույթի մակերևույթը, որը գոյություն ուներ մինչև սողանքի տեղի ունենալը

## 5. Հավանական սողանքային տեղամասեր

Սողանքը, որպես կանոն կամ հաճախ, տեղի է ունենում հետևյալ տեղանքներում՝

- նստվածքային շերտերի մեջ ընկղմված տարածությունում
- փլուզված նստվածքներով ծածկված տարածքում
- ջրհավաք ավազանի տարածքում
- լանջերի ստորոտներում
- լանջերում, որոնց մոտիկ հոսում են գետեր
- լանջերում, որոնց հարվածում են ջրի ալիքները
- փուխր կամ ճաքած ապարներից կազմված լանջերում, որոնք զգայուն են էրոզիայի նկատմամբ:

## 6. Սողանքային տեղամասի առանձնահատկությունները


Հետևյալ բոլոր տեղագրական առանձնահատկությունները կամ դրանց մի մասը համարվում են սողանքի մասեր.

- կորած կամ ուղղանկյունաձև սկարպ (պոկման պատ) լանջի վերին հատվածում, մեղմ լանջով հարթ հատված լանջի մեջտեղում և առանձին փոքր գագաթներ

- իջվածքներ, նստումներ, ճեղքեր և այլն
- ջրավազաններ, ճահիճներ իրենց հաստատուն կառուցվածքով
- սողանքային մարմնի կողմեր, որոնք ունեն նեղ ճեղքեր
- զառիթափ լանջի ստորոտի տարածք, որտեղ կան բարձրացումներ կամ արտամղումներ

- ճանապարհի կամ երկաթգծի կտրուկ ծովածություն կամ կառույցի տեղաշարժ
- հարթավայրոտվ հոսող գետի այն մասին, որտեղ գետի հունը նեղանում է, ծովում է:


Սողանքային տարածքի տեղագրության սխեմատիկ պատկերը բերված է նկար 3-ում:



Նկար 3

Եթե հավանական սողանքային տեղամասի տարածքում առաջացել են մի քանի բլոկներ, ապա դրանք պետք է սահմանագծվեն ինչպես ցույց է տրված նկար 4-ում:





Նկար 4


### **7. Սողանքների տեղաբաշխվածության քարտեզի թարմացման պատրաստում**

Հայտնաբերված հիմնական սկարպը և տեղաշարժված զանգվածը (սողանքի առանձնահատկությունների ուրվագիծը) սահմանագծվում են 1:100 000 մասշտաբի տեղագրական քարտեզի վրա: Եթե սողանքի առանձնահատկությունները ցույց չեն տրվում սողանքների տեղաբաշխվածության առկա քարտեզի վրա, սողանքի վերաբերյալ տվյալները պետք է նկարագրվեն սողանքային տեղամասերի գույքագրման Ձև 1-ում՝ ըստ «Սողանքային տեղամասերի գույքագրման ձևի լրացման ցուցումների», որը բերված է հավելված 1-ում:

### **8. Սողանքի ակտիվության գնահատումը օդալուսանկարների վերծանման միջոցով**

ՕԼՎ-ի միջոցով կարելի է նաև գնահատել սողանքի ակտիվությունը:

Սողանքային երևույթները հետազոտող գիտնականների կողմից սողանքի զարգացման ընթացքը բաժանվել է չորս փուլերի՝ սկզբնական, ակտիվ, փլուզում և մարում: Կախված սողանքի զարգացման փուլից՝ սողանքային մարմնի տեղագրական հատկանիշները և բնորոշ տարրերը փոփոխվում են ինչպես ցույց է տրված նկար 5-ում:



Նկար 5

Սողանքի ակտիվության մասին կարելի է ենթադրություններ անել՝ ելնելով զարգացման փուլերից և սողանքային մարմնին բնորոշ տեղագրական հատկանիշներից, որոնք բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ակտիվությունը	Փուլերը	Տեղագրական հատկանիշները
Միջին	Սկզբնական փուլ	<ul style="list-style-type: none"> <li>- Կարելի է հստակ տեսնել հիմնական սկարպը և տեղաշարժված զանգվածը,</li> <li>- Փոքր բլուկները դեռ չեն երևում</li> </ul>
Բարձր	Ակտիվ փուլ	<ul style="list-style-type: none"> <li>- Օղալուսանկարների վրա կարելի է հստակ տեսնել շատ ճաքեր, աստիճանավորումներ, երկրորդային սկարպեր, փոքր բլուկներ և այլ միկրո տեղագրություն,</li> <li>- Կարելի է տեսնել լանջի փլուզում սողանքի ստորոտի հատվածում</li> </ul>
Ցածր	Փլուզման փուլ	<ul style="list-style-type: none"> <li>- Հիմնական սկարպը կամ միկրո տեղագրությունը հստակ տեսանելի չէ;</li> <li>- Կարելի է տեսնել տեղաշարժված զանգվածի հատվածը, հաճախ կարելի է տեսնել լեռնագոգի էոզիա, ջրի հոսանքներ կամ ճահիճներ տեղաշարժված զանգվածի ներսում կամ շուրջը,</li> </ul>

		<ul style="list-style-type: none"> <li>- Հիմնական սկարայի քարափը փլուզվել է և բեկորների նստվածքները ծածկում են հիմնական սկարայը,</li> <li>- Երբեմն կարելի է տեսնել լանջի փլուզում սողանքի ստորոտին</li> </ul>
Օ-ական	Մարման փուլ	<ul style="list-style-type: none"> <li>- Սողանքի տեղագրությունը հստակ չի երևում,</li> <li>- Սողանքային մարմնի ամբողջ տարածքը հարթեցված է</li> </ul>



## 2 Մոդանքի գրանցամատյանների լրացում



## **Սողանքային տեղամասերի գույքագրման մեթոդական ցուցումներ**

### **1. Ընդհանուր դրույթներ**

Սույն մեթոդական ցուցումները կիրառվում են սողանքային տեղամասերի գույքագրման հետազննությունների իրականացման համար:

Սողանքային տեղամասերի գույքագրման հետազննությունները (այսուհետ՝ Հետազննություն) իրականացվում են նախնական տեղեկատվության թերթիկների միջոցով և տեղանքի օդալուսանկարների վերծանման արդյունքում հայտնաբերված ավելի բարձր առաջնահերթության մակարդակ ունեցող սողանքների վերաբերյալ տեղեկատվության հավաքման և մշակման համար: Հետազննությունն իրականացվում է փորձագիտական խմբի կողմից, որի կազմում պետք է լինեն տեղագրագետ-քարտեզագիր, գեոտեխնիկայի գծով մասնագետներ և ինժեներներ, և այն կարող է լինել նաև պայմանագրային հիմունքներով:

Հետազննությունը պայմանականորեն բաժանվում է գրասենյակային և դաշտային հետազննությունների:

### **2. Հետազննությունների մեթոդաբանությունը**

1) Գրասենյակային հետազննության կազմում ներառվում են հետևյալ աշխատանքները.

վնասի վերաբերյալ տվյալների և տեղեկատվության հավաքում

օդալուսանկարների վերծանում և սողանքային տեղամասերի սահմանագծում 1:25 000, 1:50 000 կամ 1:100 000 մասշտաբի տեղագրական քարտեզների վրա:

Օդալուսանկարների վերծանման արդյունքում կարելի է հայտնաբերել հավանական ակտիվ և/կամ ոչ ակտիվ սողանքային տարածքները:

Օդալուսանկարների վերծանման մեթոդաբանությունը տրված է օդալուսանկարների վերծանման միջոցով սողանքների հայտնաբերման ցուցումներում (Հավելված N 2):

Վնասի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և նախնական տեղեկատվության թերթիկի հետ միասին կրնտրվեն նաև առաջնահերթ սողանքները դաշտային հետազննության համար:

Գրասենյակային հետազննության արդյունքում պատրաստվում են սողանքների ցուցակի (Ձև 1) և սողանքների բաշխվածության քարտեզի նախագիծը:

2) Դաշտային հետազննությունները կատարվում են այն սողանքային տեղամասերում, որոնք գրասենյակային հետազննության արդյունքում համարվել են սողանքային բարձր ռիսկայնություն ունեցող հավանական տեղամասեր: Հավանական սողանքային տեղամասերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հավաքվում է դաշտային հետազննության միջոցով:

Սողանքային տեղամասերի վերաբերյալ գրասենյակային և դաշտային հետազննությունների միջոցով հավաքված տվյալները լրացվում են սողանքային տեղամասերի գույքագրման համապատասխան ձևերում (Ձև 2- Ձև 7): Սողանքների ցուցակը և սողանքների բաշխվածության քարտեզը պետք է ավարտուն տեսքի բերվի՝ ելնելով դաշտային հետազննության միջոցով հավաքված մանրամասն տեղեկատվությունից:

### **3. Սողանքային տեղամասերի առաջնահերթության սահմանում դաշտային հետազննության համար**

Դաշտային հետազննության համար առաջնահերթությունը սահմանվում է հաշվի առնելով գրասենյակային հետազննության արդյունքում հստակեցված սողանքի վտանգի և վնասի մակարդակները:

#### **Վտանգ**

Ելնելով օդային լուսանկարների վերծանումից՝ հավանական սողանքների ակտիվությունը դասակարգվում է ըստ սողանքային տեղամասի տեղագրական հատկանիշների: Օդալուսանկարների վերծանման միջոցով սողանքների հայտնաբերման ցուցումներում (հավելված 1) նշված է սողանքի ակտիվության չորս մակարդակ (տես՝ ցուցումների աղյուսակ 2-ը): Ակտիվության այդ չորս մակարդակները համապատասխանում են վտանգի մակարդակներին, ինչպես ցույց է տրված աղյուսակ 1-ում: Վտանգի մակարդակներին առնչվող վտանգի պայմանները (ցուցիչները) ցույց են տրված աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 1

ՀՀ	Սողանքի ակտիվությունը	Վտանգի մակարդակը
1	Բարձր	I
2	Միջին	II
3	Ցածր	III
4	0	



## **Վնասներ**

Սողանքների պատճառած վնասները գնահատվում են հարցաթերթիկների միջոցով իրականացվող հարցումների արդյունքում:

Հարցաթերթիկների միջոցով ստուգվում են հետևյալ օբյեկտներին հասցված վնասները.

1. բնակելի, հասարակական և արդյունաբերական շենքեր,
2. ճանապարհներ և տրանսպորտային այլ ենթակառուցվածքներ, օրինակ՝ կամուրջներ և երկաթգծեր,
3. կենսապահովման գծեր, ինչպիսիք են՝ զագամատակարարման, էլեկտրամատակարարումը, ջրամատակարարումը,
4. այլ կառույցներ կամ ունեցվածքներ, ինչպիսիք են՝ գյուղատնտեսական նշանակության հողերը, արոտավայրերը, անտառները,
5. այլ կարևոր օբյեկտներ, ինչպես օրինակ՝ մշակութային և պատմական նշանակության վայրերը:

Յուրաքանչյուր օբյեկտի համար վնասի մակարդակը պետք է նկարագրվի նախնական տեղեկատվության թերթիկում (այսուհետ՝ Թերթիկ), ինչպես ցույց է տրված հավելված 1-ում: Ելնելով Թերթիկում նշված տեղեկատվությունից՝ սողանքի տարածքը պետք է հաստատվի օդայուսանկարների վերծանման միջոցով՝ համաձայն հավելված 1-ում նշված ցուցումների: Բացի Թերթիկում նշված վնասված շենքերից և շինություններից, սողանքի տարածքում գտնվող չվնասված շենքերն ու շինությունները նույնպես պետք է գնահատվեն ռիսկային: Ելնելով վերոնշյալ տեղեկատվությունից՝ պետք է թարմացվեն սողանքների ցանկը (Հավելված 2-ի Ձև 1) և սողանքի բաշխվածության քարտեզը (Հավելված 3):

### **3) Առաջնահերթ սողանքային տեղամասերի դասակարգում**

Սողանքի հավանականություն ունեցող տեղամասերի առաջնահերթությունը որոշվում է՝ ելնելով վտանգի և ռիսկի մակարդակներից և դասակարգվում է «A», «B» և «C» մակարդակների: Մակարդակ «A»-ն նշանակում է բարձր առաջնահերթություն, մակարդակ «B»-ն՝ միջին առաջնահերթություն և մակարդակ «C»-ն՝ ցածր առաջնահերթություն: Դաշտային հետազննությունների համար սողանքային տեղամասերի առաջնահերթ մակարդակները նշված են աղյուսակ 3-ում:

Որպես կանոն, «A» մակարդակի սողանքային տեղամասերի դաշտային հետազննությունը պետք է իրականացվի առաջնահերթ:

«B» մակարդակի առաջնահերթության սողանքային տեղամասերը պետք է հետազննվեն «A» մակարդակի սողանքներից հետո:

«C» մակարդակի առաջնահերթության սողանքային տեղամասերում հետազննությունը պետք է իրականացվի՝ ելնելով իրավիճակից:

Աղյուսակ 3

Վտանգի մակարդակ \ Ռիսկի մակարդակ	I	II	III
H	A	A	B
M	A	B	C
L	B	C	C

Հավանական սողանքային տեղամասերում պետք է կատարվի գույքագրման դաշտային հետազննություն հետևյալ առաջնայնությամբ՝

- 1) A: I-H, I-M ~ II-H,
- 2) B: I-L, II-M ~ II-L,
- 3) C: II-L, III-M ~ III-L

**Վտանգի մակարդակը**

Վտանգը դասակարգվում է երեք մակարդակների՝

- Բարձր՝ I մակարդակ
- Միջին՝ II մակարդակ
- Ցածր՝ III մակարդակ

Աղյուսակ 4-ում բերված են վտանգի մակարդակների ցուցիչները:

Աղյուսակ 4

Վտանգի մակարդակ	Վտանգի իրավիճակը (ցուցիչներ)
I	Վնասները շարունակում են ավելանալ
II	Նախկինում վնասները գրանցվել/հայտնաբերվել են, բայց չեն ձեռնարկվել արդյունավետ կանխարգելիչ միջոցառումներ
III	Հայտնաբերվել են որոշակի սողանքային երևույթներ, բայց վնասները չեն գրանցվել/հայտնաբերվել

**Ռիսկի մակարդակը**

Ռիսկը դասակարգվում է երեք մակարդակների՝ H; M և L:

Աղյուսակ 5-ում բերված են ռիսկի մակարդակների ցուցիչները:

Ռիսկի մակարդակ	Ռիսկի մակարդակի ցուցիչներ (Ռիսկի ազդեցությունը օբյեկտների և շրջակա միջավայրի վրա)
H	Շատ տներ, հասարակական օբյեկտներ կամ կարևոր ենթակառուցվածքներ վնասվել են կամ սողանքն ունի բնապահպանական լուրջ ազդեցություն
M	Որոշ տներ, հասարակական օբյեկտներ կամ կարևոր ենթակառուցվածքներ վնասվել են, կամ սողանքն ունի բնապահպանական լուրջ ազդեցություն
C	Մարդկային գործունեությանը կամ շրջակա միջավայրին պատճառվել է քիչ վնաս

**4) Գույքագրման հետազննության արդյունքների գրառման ձևերի լրացում**


Գույքագրման դաշտային հետազննությունների տվյալները լրացվում են աղյուսակ 2-ում բերված՝ սողանքային տեղամասի գույքագրման վեց (6) ձևերում (Ձև 2 – Ձև 7): Դատարկ ձևերը և դրանց լրացման օրինակները ցույց են տրված հավելված 2-ում և 4-ում, համապատասխանաբար:

h/h	Համար	Վերնագիր
1	Ձև 1	Սողանքների ցանկը
2	Ձև 2	Պլան Հատակագիծ
3	Ձև 3	Պրոֆիլ
4	Ձև 4	Լուսանկար
5	Ձև 5	Սողանքի վիճակը
6	Ձև 6	Վնասի գնահատում
7	Ձև 7	Այլ տեղեկատվություն


**5) Ինչպես հաշվել սողանքները**

Սողանքային մարմինը հաճախ բաժանված է լինում մի քանի առանձին տեղաշարժող մարմինների (սողանքային բլոկների), որոնք ունենում են սահքի տարբեր ուղղություններ (Նկար 1): Նույն ուղղությամբ շարժող բլոկներից բաղկացած սողանքը պետք է հաշվվի որպես մեկ սողանք: Եթե բլոկներից յուրաքանչյուրը ունի

սահքի տարբեր ուղղություն, ապա այդ բլոկներից յուրաքանչյուրը պետք է հաշվվի որպես առանձին սողանք :



Միևնույն ուղղությամբ սահող բլոկները դիտարկվում են որպես մեկ սողանք



Երկու տարբեր ուղղություններով սահող բլոկները դիտարկվում են որպես առանձին սողանքներ

Նկար 1

### 6) Գույքագրման արդյունքների գրառման ձևերը

Գույքագրման ձևերը (Ձև 2 - Ձև 7) լրացվում են փորձագիտական խմբի կողմից: Ձև 1-ը լրացվում կամ թարմացվում է օդալուսանկարների վերծանման, իսկ Ձև 2 – Ձև 6-ը՝ դաշտային հետազննության արդյունքում: Ձև 7-ը լրացվում է մոնիթորինգի տվյալների և այլ տեղեկատվությունների հիման վրա:

Սողանքային տեղամասերի գույքագրման յուրաքանչյուր ձևի լրացման համար պահանջվող տվյալները բերված են աղյուսակ 6-ում:

**Աղյուսակ 6**

Ձևերը	Ձևերում լրացվող տվյալները	Կատարողները
1	Ընդհանուր 1) Սոդանքի ճանաչման ինքնության կոդը (ID) 2) Սոդանքային տեղամասի անվանումը 2) Տեղադրությունը (մարզ, համայնք, քաղաք, գյուղ, քարտեզի անվանահամարը (նումենկլատուրա)) 4) Սոդանքի կենտրոնի կոորդինատները և բարձրությունը 5) Մասշտաբը 6) Վտանգի մակարդակը 7) Ռիսկի մակարդակը 8) Առաջնահերթության մակարդակը դաշտային հետազննության համար 9) Նշումներ 10) Առաջնահերթության գոյություն ունեցող ցուցակ	Փորձագիտական խմբեր
2	Պլան. տարածքի պլանի էսքիզը	
3	Պրոֆիլ. սոդանքի երկայնական պրոֆիլը	
4	Լուսանկար. լանջի ընդհանուր պատկերը և յուրահատկությունները	
5	Սոդանքի վիճակը Սոդանքի տեսակը Իրադարձությունների (ակտիվացումների) պատմությունը Տեղագրական և դեֆորմացիոն հատկությունները Արմատական ապարի և տեղաշարժված զանգվածի վիճակը Հիդրոլոգիական պայմանները Բուսականության վիճակը Կանխարգելիչ միջոցառումների կարգավիճակը	
6	Վնասի գնահատում Ուղղակի վնասներ (տուժածներ, շենքեր, ճանապարհներ և այլն) Անուղղակի վնասներ (օրինակ՝ հիմնական ճանապարհի վրա երթևեկության հետևանքով առաջացած վնասներ) Տարածաշրջանային տնտեսական ազդեցությունը	
7	Այլ տեղեկատվություն Գրանցվում են մոնիթորինգի հասանելի տվյալները և այլն	

**7) Դաշտային հետազննության արդյունքների թվայնացում**

Սոդանքային տեղամասերի վերաբերյալ հավաքված տեղեկատվությունը պետք է համակարգչով մուտքագրվի գույքագրման ձևերի էլեկտրոնային աղյուսակներում (Excel ֆայլեր):

Մուտքագրման ենթակա տվյալների բացակայության դեպքում մուտքագրվում է աստղանիշ (\*):

Էսքիզները (Ձև 2), պրոֆիլը (Ձև 3) և լուսանկարները (Ձև 4) պետք է սկանավորել և մուտքագրել էլեկտրոնային աղյուսակներում:

### **8) Գործիքներ և սարքեր դաշտային հետազննությունների համար**

Դաշտային հետազննություններ իրականացնելու համար անհրաժեշտ են հետևյալ գործիքները և սարքերը՝

Չափաժապավեն

Բարձրաչափ

Թեքաչափ

Նկարչական ապարատ (խորհուրդ է տրվում թվային)

Դյուրակիր գլոբալ դիրքորոշման համակարգի (G.P.S) սարքեր

Հեռադիտակ և այլն:

### **4. Սողանքային տեղամասի գույքագրման ձևերի լրացման ցուցումներ**

#### **1) Ձև 1. Ընդհանուր**

#### **Սողանքային տեղամասի ճանաչման ինքնության կողը (ID)**

Սողանքային տողամասերը ճանաչելու նպատակով յուրաքանչյուր տեղամասին տրվում է առանձին ինքնության կող, որը բաղկացած է հետևյալ տարրերից.



- Մարզի անվանման հապավումը (հռոմեական այբուբենի չորս տառ)
- 1:100 000 մասշտաբի տեղագրական քարտեզի անվանակարգը (երեք թիվ)
- Հերթական համարը (հինգ թիվ)

Տարրերը իրար միացվում են գծիկով:

Աղյուսակ 7-ում տրված են մարզերի և Երևան քաղաքի անվանումները՝ հապավումներով:

Նկար 2-ում տրված է 1:100 000 մասշտաբի տեղագրական քարտեզի անվանահամարը (նումենկլատուրա): 1:100 000 մասշտաբի տեղագրական քարտեզը անվանակարգվում է եռանիշ թվով, որը նշվում է քարտեզի K 38 կամ J 38 համարակալումներից հետո:

Մարզի անունը և Երևան քաղաքը	Հապավման կոդը	Մարզկենտրոն
ԵՐԵՎԱՆ	YERE	Երևան
ԱՐՄԳԱԾՈՏՆ	ARAG	Աշտարակ
ԱՐԱՐԱՏ	ARAR	Արտաշատ
ԱՐՄԱՎԻՐ	ARAM	Արմավիր
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	GEGH	Գավառ
ԿՈՏԱՅՔ	KOTA	Հրազդան
ԼՈՌԻ	LORI	Վանաձոր
ՇԻՐԱԿ	SHIR	Գյումրի
ՍՅՈՒՆԻՔ	SYUN	Կապան
ՏԱՎՈՒՇ	TAVU	Իջևան
ՎԱՅՈՑ ՁՈՐ	VAYO	Եղեգնաձոր



Նկար 2

## Սողանքային տեղեմասի անունը

Նախընտրելի է, որպեսզի սողանքային տեղամասի անունը ծագի այն համայնքի կամ կարևոր ռիսկային օբյեկտի անունից, որի տարածքում տեղի է ունեցել սողանքը:

## Տեղադրությունը


Պետք է մուտքագրվի մարզի անունը կամ Երևան քաղաք, որտեղ գտնվում է սողանքային տեղամասը: Եթե նույն սողանքային տեղամասը ձգվում է երկու մարզերի սահմաններով, գրառման դաշտում մուտքագրվում է այն մարզի անունը, որի տարածքում գտնվում է սողանքային տեղամասի ավելի մեծ մասը:

## Համայնքը

Մուտքագրվում է համայնքի անունը:

## Բնակավայրը

Մուտքագրվում է բնակավայրի/քաղաք կամ գյուղ/ անունը:



Սկար 3

## Քարտեզի անվանահամարը

Սկար 2 տրված են 1: 100 000 մասշտաբի տեղագրական քարտեզների անվանահամարները: Քարտեզի անվանահամարը պետք է մուտքագրվի հետևյալ տեսքով՝ K-38-007:



Եթե միննույն սողանքային տեղամասն ընդարձակվում է տեղագրական քարտեզի երկու կամ ավել թերթերի վրա, պետք է մուտքագրվի այն քարտեզի անվանահամարը, որի վրա սողանքային տեղամասն ավելի ընդարձակ տարածք է զբաղեցնում:

### Սողանքային տեղամասի կենտրոնի բարձրությունը և կոորդինատները


Սողանքային տեղամասի կենտրոնի կոորդինատները գրառվում են վաթսուներորդական համակարգով: Վայրկյանները գրվում են հարյուրերորդական մասով: Կենտրոնի բարձրությունը կարող է որոշվել դյուրակիր գլոբալ դիրքորոշման համակարգի (GPS) միջոցով:

Սողանքային մարմնի կենտրոնի բարձրությունը արտահայտվում է ամբողջական թվով: Կենտրոնի բարձրությունը ընկալվում է տեղագրական քարտեզի հորիզոնականների վերձանման միջոցով: Քանի որ է դյուրակիր գլոբալ դիրքորոշման համակարգի (GPS) միջոցով ցույց տրված բարձրությունը այնքան էլ ճշգրիտ չէ, կարող է օգտագործվել դյուրակիր գլոբալ դիրքորոշման համակարգի (GPS) միջոցով արտահայտված արժեքը, եթե հասանելի չեն տեղագրական քարտեզներ՝ հորիզոնականներով:

### Սողանքային մարմնի տարրերը և չափերը


Սողանքների գծով ինժեներային երկրաբանության միջազգային սանցիացիա (ԻԵՄԱ) հանձնաժողովի 1990թ. սողանքների համար առաջարկված անվանացանկի (տեղեկագիր ԻԵՄԱ, No. 41, 13-16էջ) համաձայն՝ սողանքային մարմնի տարրերի անվանումները՝ նկար 3-ի և նկար 4-ի համապատասխան բերված են աղյուսակ 8-ում, իսկ չափերի անվանումները նկար 5-ի համապատասխան աղյուսակ 9-ում:

Չափերը լրացվում են ամբողջական թվով:



h/h	Տարրերի անունը	Սահմանումը
1	Կատար (թագ) Crown	Հիմնական սկարպի բարձրադիր մասերին հարող գործնականում չտեղաշարժված գրունտ
2	Հիմնական սկարպ (պոկման պատ) Main scarp	Զառիվայր մակերևույթ՝ առաջացած տեղաշարժված զանգվածի շարժի հետևանքով սողանքային մարմնի վերին եզրի չտեղաշարժված գրունտի վրա, դա սահքի մակերևույթի տեսանելի մասն է
3	Գագաթ Top	Տեղաշարժված զանգվածի և հիմնական սկարպի միջև շփման ամենա բարձր կետ
4	Գլխավոր արավանդ Head	Սողանքային մարմնի տեղաշարժված զանգվածի և հիմնական սկարպի միջև շփման երկայնքով սողանքային մարմնի ամենաբարձր մասեր
5	Ենթասկարպ Minor scarp	Զառիվայր մակերևույթ տեղաշարժված զանգվածի վրա՝ առաջացած տարբեր շարժերից
6	Հիմնական մարմին Main body	Սողանքային մարմնի տեղաշարժված զանգվածի մաս, որը ծածկում է հիմնական սկարպի և սահքի մակերևույթի լեզվակի միջև ընկած մակերևույթը
7	Ստորոտ Foot	Սողանքային մարմնի տեղաշարժված զանգվածի այն մասը, որը ծածկել է սահքի մակերևույթի լեզվակից դուրս գտնվող բնական մակերևույթը
8	Ծայր Tip	Լեզվակի վրա գտնվող կետ, որը ամենահեռուն է գագաթից
9	Լեզվակ Toe	Սողանքի տեղաշարժված զանգվածի ծայրամասային, (սովորաբար կորացված) սահմանը, որը ամենահեռուն է հիմնական սկարպից
10	Սահքի մակերևույթ Surface of rupture	Մակերևույթ, որը ձևավորվում է (կամ ձևավորվել է) հողային ծածկույթի սկզբնական մակերևույթից ներքև՝ տեղաշարժված զանգվածի ստորին սահմանում
11	Սահքի մակերևույթի լեզվակ	Փոխհատում (սովորաբար թաղված, չերևացող) սահքի մակերևույթի ստորին մասի

	Tow of surface of rupture	և հողային ծածկույթի սկզբնական մակերևույթի միջև
12	Տարանջատման մակերևույթ Surface of separation	Հողային ծածկույթի սկզբնական մակերևույթի մաս, որն ծածկված է սողանքային մարմնի ստորոտով
13	Տեղաշարժված զանգված Displaced material	Սողանքային մարմնում շարժի հետևանքով սկզբնական դիրքից տեղաշարժված զանգված: Այն ձևավորում է և սպառված զանգված և կուտակում
14	Տեղափոխման գոտի Zone of depletion	Սողանքային մարմնի մաս, որի սահմաններում սողանքային զանգվածը տեղաշարժվելով ծածկում է հողային ծածկույթի սկզբնական մակերևույթը
15	Կուտակման գոտի Zone of accumulation	Սողանքային մարմնի մաս, որի սահմաններում տեղաշարժված զանգվածը կուտակվում է հողային ծածկույթի սկզբնական մակերևույթին
16	Տեղափոխում Depletion	Հիմնական սկարպով, տեղափոխված զանգվածով և հողային ծածկույթի սկզբնական մակերևույթով սահմանազատված ծավալով զանգված
17	Տեղափոխված զանգված Depleted mass	Տեղաշարժված զանգվածի ծավալ, որը տեղադրված է հողային ծածկույթի սկզբնական մակերևույթի հիմքում և ծածկում է սահքի մակերևույթը
18	Կուտակում Accumulation	Տեղաշարժված զանգվածի ծավալ, որը ծածկում է հողային ծածկույթի սկզբնական մակերևույթը
19	Կողմեր Flank	Սահքի մակերևույթի կողմերին հարակից չտեղաշարժված զանգվածներ, թագից նայելուց՝ աջ կամ ձախ կողմը, կողմերը որոշվում է նաև կողմնացույցով
20	Սկզբնական մակերևույթ Original ground surface	Լանջի հողային ծածկույթի մակերևույթը, որը գոյություն ունի մինչև սողանքի տեղի ունենալը



Նկար 5

Աղյուսակ 9

	Անունը	Սահմանումը
1	Տեղաշարժված զանգվածի լայնությունը, $Wd$	Տեղաշարժված զանգվածի առավելագույն լայնությունն ուղղահայաց երկարությանը
2	Սահքի մակերևույթի լայնությունը, $Wr$	Առավելագույն լայնությունն սողանքային մարմնի կողմերի միջև՝ ուղղահայաց երկարությանը, $Lr$
3	Տեղաշարժված զանգվածի երկարությունը, $Ld$	Ծայրից մինչև գագաթ նվազագույն հեռավորություն
4	Սահքի մակերևույթի երկարությունը, $Lr$	Սահքի մակերևույթի լեզվակից մինչև կատար նվազագույն հեռավորություն
5	Տեղաշարժված զանգվածի խորությունը, $Dd$	Տեղաշարժված զանգվածի առավելագույն խորություն, որը չափվում է $Wd$ և $Ld$ պարունակող հարթությանը ուղղահայաց ուղղությամբ
6	Սահքի մակերևույթի խորությունը, $Dr$	Սկզբնական մակերևույթից ներքև սահքի մակերևույթի առավելագույն խորությունը, որը չափվում է $Wr$ և $Lr$ պարունակող հարթությանը ուղղահայաց ուղղությամբ
7	Ընդհանուր երկարությունը, $L$	Սողանքային մարմնի կատարից մինչև ծայր սկզբնական մակերևույթով նվազագույն հեռավորություն
8	Կենտրոնական գծի երկարությունը, $Lcl$	Սողանքային մարմնի կատարից մինչև ծայր հեռավորությունը սկզբնական մակերևույթի այն կետերով, որոնք հավասարաչափ հեռու են սահքի

		մակերևույթի և տեղաշարժված զանգվածի կողային սահմաններից
--	--	--

**Սողանքի վտանգի մակարդակը, ռիսկի մակարդակը, առաջնահերթության աստիճանը**

Գրառման այս դաշտերը լրացվում են վտանգի, ռիսկի, առաջնահերթության վերաբերյալ հակիրճ մեկնաբանություններով:

**2) Ձև 2. Պլան**

Պետք է գրառվեն դաշտային հետազննության տվյալները:

Սողանքային տեղամասի ուրվագիծը պետք է գծագրվի մատիտով կամ թանաքով և սկանավորվի ու որպես թվային պատկեր՝ A-4 թղթի չափին համապատասխան մասշտաբով տեղադրվի Ձև 2-ի էլեկտրոնային աղյուսակի մեջ:

Սողանքային տեղամասի պլանի ուրվագիծը պետք է՝ համաձայն հավելված N 4-ի պայմանական նշանների ներառի հետևյալ հիմնական տեղեկատվությունը.

Ռիսկագծի մասշտաբը,

Մագնիսական սլաքի ուղղությունը

Սողանքի առանձնահատկությունը, գլխավոր սկարպը, տեղաշարժված զանգվածը, գագաթը, լեզվակը, սահքի մակերևույթները, ենթադրվող հետագա կուտակման գոտիները և այլն,

Ռիսկային օբյեկտներ, օրինակ՝ տներ և ճանապարհներ,

Մակերևութային ցամաքուրդների և աղբյուրների ջրերի հոսքերի ուղղությունը,

Գոյություն ունեցող կանխարգելիչ միջոցառումները,

Այլ օգտակար տեղեկատվություն:

**3) Ձև 3. Պրոֆիլ**

Սողանքային տեղամասի երկրաբանական պրոֆիլը պետք է պատկերված լինի մատիտով կամ թանաքով և սկանավորվի ու որպես թվային պատկեր՝ A-4 թղթի չափի համար փոքրացված մասշտաբով տեղադրվի Ձև 2-ի էլեկտրոնային աղյուսակի մեջ:

Պրոֆիլի գիծը անցնում է տեղաշարժված զանգվածի կենտրոնով նրա շարժի ուղղությամբ՝ սողանքի կատարից մինչև ենթադրվող հետագա կուտակման գոտին:

Պրոֆիլը պետք է համաձայն հավելված N 4-ի պայմանական նշանների պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

Մակերևույթի գոյություն ունեցող երկայնական գիծը և սկզբնական մակերևույթի գիծը,

Ենթադրվող սահքի մակերևույթը,

Պրոֆիլի գծի վրա առկա տներն ու կարևոր ենթակառուցվածքները,

Արմատական ապարի և տեղաշարժված զանգվածի նյութի տեսակները,

Երկրաբանական կառուցվածքը (տվյալների առկայության դեպքում),

Այլ օգտակար տեղեկատվություն:

#### **4) Ձև 4. Լուսանկար**

Ձև 4-ի էլեկտրոնային աղյուսակին պետք է կցվեն սկանավորված հետևյալ լուսանկարները.

Սողանքային տեղամասի ընդհանուր պատկերը,

Սողանքային մարմնի տարրերը՝ գլխավոր սկարպ (պոկման պատ), լեզվակ և այլն,

Առկա օդալուսանկարները:

Յուրաքանչյուր լուսանկարի համար տրվում է նկարագիր:

#### **5) Ձև 5. Սողանքի վիճակը**

Պետք է գրառվեն հետևյալ տվյալները՝

**Սողանքային մարմնի շարժի տեսակը**

**Սողանքային մարմինների** շարժը դասակարգվում է երեք հիմնական տեսակի՝ ՄԱՀՔ, ՀՈՍՔ և ԱՅԼՆ: Գոյություն ունեն ԱՅԼՆ-ի ենթակատեգորիաներ, որոնք են՝ ՓԼՈՒԶՈՒՄԸ, ՇՐԶՈՒՄՆԵՐ և ԲԱՐԴ ՍՈՂԱՆՔՆԵՐ:

**Սողանքային մարմնի** շարժի տեսակների նկարագրությունը բերված է նկարներ 6-8-ում:

**Սողանքային մարմինների նյութերը** դասակարգվում են՝ ապարի և հողի: Ամբողջության հողմնահարված ապարները դասակարգվում են ՀՈՂԻ, ինչպես ցույց է տրված Աղյուսակ 10-ում:

Ապարների շարժի տեսակը կամ այլ կետ պետք է լրացվի՝ համաձայն հավելված N 4-ի կոդերի աղյուսակի:

**Աղյուսակ 10**

Տեղաշարժված զանգված	Ապարների հողմնահարման աստիճանը	Նկարագրություն (ցուցիչներ)
Ապար	0-ական	Ապարի հողմնահարման/փոփոխման ոչ մի տեսանելի նշան
	Թեթև	Գույնի փոփոխություն զգալի կտրտված մակերևույթի վրա, կարող է լինել գույնը կորցրած և չվնասված ապարից որոշակիորեն թույլ
	Միջին	<i>Կեսից պակասը գոյություն ունի կամ որպես շարունակական կառուցվածք կամ որպես հիմնական քարեր</i>
	Խիստ	Մեծ մասը քայքայված է, կազմալուծված հողի կամ երկուսն էլ, սկզբնական զանգվածի կառուցվածքը հիմնականում վնասված չէ
Հող	Ամբողջությամբ	Ապարը վերածվել է հողի; զանգվածի կառուցվածքը և կազմությունը քանդված է, ծավալի մեջ տեղի է ունեցել մեծ փոփոխություն, բայց հողը դեռ զգալիորեն չի տեղափոխվել

**Իրադարձության պատմություն**

Լրացվում է՝ ելնելով տեղական ինքնակառավարման մարմինների կամ բնակիչների կողմից ներկայացված տեղեկատվությունից:

**Տեղագրական և դեֆորմացիոն հատկություններ**

Պետք է լրացվի տեղեկատվություն սողանքային տեղամասի երկարության, բարձրության, թեքության վերաբերյալ, տեղաշարժված զանգվածի հզորությունը, սկարպի (պոկման պատ) ձգվածություն, տեղաշարժված զանգվածի ճաքերի նկարագրիչը և այլն:

Եթե սողանքային մարմնի մակերեսը 100 ս<sup>2</sup> է կամ ավել, այն կարող է չափվել տեղագրական քարտեզի վրա:

### **Արմատական ապարի և տեղաշարժված զանգվածի տեղադրության պայմանները**

Լրացվում են հետևյալ տվյալները.  
Արմատական ապարի երկրաբանական տարիքը,  
Լիթոլոգիական ֆացիաները,  
Երկրաբանական կառուցվածքը,  
Շերտերի անկումը (թեքությունը),  
Հողմնահարման աստիճանը,  
Ապարների կազմի փոփոխության աստիճանը:

Երբ միասին առկա են երկու կամ ավել լիթոլոգիական ֆացիաներ, ապա մեծ հզորության լիթոլոգիական ֆացիայի կողքը կօգտագործվի ձախ կողմից՝ կիրառելով “ / “: (օրինակ՝ m/k/b)

### **Ջրաբանական պայմանները**

Լրացվեն հետևյալ տվյալները.  
Աղբյուրների ելքերի թիվը ,  
Աղբյուրների ելքերի ջրերի ընդհանուր գումարը,  
Մակերևութային հոսքի ջրերի ընդհանուր քանակը:

### **Բուսականության վիճակը**

Բուսականության վիճակի մասին տեղեկատվությունը պետք է լրացվի նախընտրելի ձևով:




### **Կանխարգելիչ միջոցառումների վիճակը**

Գոյություն ունեցող կանխարգելիչ միջոցառումների տեսակների մասին տեղեկատվությունը պետք է լրացվի՝ համաձայն կողերի աղյուսակի: Կանխարգելիչ միջոցառումների իրականացումը պետք է ստուգվի գնահատման համապատասխան կետերով:





### **Նշում**


Հատուկ նշումը պետք է լրացվի “նշումներ” վանդակում:




Շարժի տեսակը	Նյութի տեսակը	
	Ապար	Հող
Փլուզում	Քարաթափ	Հողի փլուզում
		
	<p>Տեղի է ունենում կտրուկ լանջի և քարաթափի վրա Թափումները տեղի են ունենում ծանրության ուժի պատճառով և վերահսկվում միացման կետերի բաշխվածության միջոցով Չափը, որպես կանոն, 2մ<sup>3</sup>-ից փոքր է Բլոկների շրջվելով վայր ընկնելը ներառված է այս տեսակի մեջ</p>	<p>Հակված է տեղի ունենալու կտրուկ լանջերի վրա Հիմնականում դրդապատճառ է հանդիսանում անձրևը Չափը, որպես կանոն, 1,000մ<sup>3</sup>-ից փոքր է</p>
Հոսք	Ապարի հոսք	Հողի հոսք (բեկորների հոսք, սելավ)
		
<p>Արագ հոսքը առաջանում է նպաստավոր տարածքներում, որտեղ կան փլուզման հակված լանջեր: Շարժի արագությունը մեծ է (ավելի արագ քան 0.5մ/վրկ, 1.8մ/ժամ): Այն հիմնականում պարունակում է ջրի մեծ քանակության հետ խառնված գլաքար, կոպիճ, ավազ, տիղմ և կավ: Չոր բեկորների փլուզումը հրաբխի փլուզում է, որի դրդապատճառ են հանդիսանում հիմնականում ժայթքումն ու երկրաշարժը:</p> <p>Ընդհանուր առմամբ, չի առաջանում ապարի արագ հոսք:</p> <p>Արագ հոսքի տրոհում տեղի է ունենում, երբ տվյալ վիճակում ակնկալվում է արագ հոսքի ընդհատում: Հոսքասահքի տրոհումն օգտագործվում է, երբ նախկին արագ հոսքի նստվածքը կարող է դանդաղ շարժվել հիմա կամ ապագայում:</p>		

Նկար 6

Շարժ տեսակը	Նյութի տեսակը	
	Ապար	Հող
Ռոտացիոն սահք	<p>Ապարի ռոտացիոն սահք</p> 	<p>Հողի ռոտացիոն սահք</p> 
	<p>Ընդհանուր առմամբ, ռոտացիոն սահքը առաջանում է բեկորներում և հողում և չի առաջանում ապարում: Ռոտացիոն սահքերը շարժվում են սահքի մակերևույթով, որը կոր է և գոգավոր: Ռոտացիոն սահքի պսակից ներքև սկարպը կարող է լինել գրեթե ուղղաձիգ և առանց հենարանի: Ընդհանուր առմամբ, հողում ռոտացիոն սահքերը արտահայտում են սահքի մակերևույթի խորության մակարդակը (խորություն/երկարություն)՝ 0.15 և 0.33 միջև (Սկեմպտոմ և Հաթչինսոն, 1969թ.):</p>	
Առաջընթաց սահք	<p>Ապարի առաջընթաց սահք</p> 	<p>Հողի առաջընթաց սահք</p> 
	<p>Առաջընթաց սահքերում զանգվածը տեղաշարժվում է տափակ կամ ալիքաձև սահքի մակերևույթով՝ սահելով դուրս սկզբնական մակերեսի վրա: Միակ գրաբեներ կարող է տեղի ունենալ գլխավոր դարավանդում, նախնական փուլում սկարպը հստակ չի արտահայտվում: Հողում առաջընթաց սահքերը արտահայտում են սահքի մակերևույթի խորության մակարդակը (խորություն/երկարություն)՝ որպես կանոն, 0.1-ից փոքր (Սկեմպտոմ և Հաթչինսոն, 1969թ.): Առաջընթաց սահքը հաճախ խոսում է թույլ շերտի առկայության կամ հողմնահարված ու չհողմնահարված նյութերի միջև սահմանի մասին:</p>	
Միջանկյալ	<p>Ապարի միջանկյալ սահք</p>	<p>Հողի միջանկյալ սահք</p>

<p>սահք (Ռոտացիոն և առաջընթաց սահքերի միջև միջանկյալ սահք)</p>	
	<p>Միջանկյալ սահքը տեղի է ունենում ռոտացիոն և առաջընթաց սահքերի միջև: Սահքի մակերևույթն ունի կտրուկ գլխավոր սկարպեր: Սահքի մակերևույթի լեզվակները կարող են թեքվել լանջի վեր:</p>

Նկար 7

<p>Շարժի տեսակը</p>	<p>Նյութի տեսակը</p>	
	<p>Ապար</p>	<p>Հող</p>
<p>Շրջում</p>	<p>Ապարի շրջում</p> <p>Հողի շրջում</p>  <p>Շրջումը հողի կամ ժայռի զանգվածից բաղկացած լանջի առաջընթաց ռոտացիան է տեղաշարժված զանգվածի ծանրության կենտրոնից ներքև գտնվող կետի կամ առանցքի շուրջը: Երբեմն շրջման խթան կարող է հանդիսանալ տեղաշարժված զանգվածի լանջի վերին հատվածի նյութից առաջացած ծանրությունը, իսկ երբեմն էլ զանգվածի ճաքերում գտնվող ջուրը կամ սառույցը (Վարնես, 1996թ.)</p>	

Նկար 8

## 6) Ձև 6: Վնասի գնահատում

Վնասի գնահատումը կատարվում է հետևյալ հինգ նպատակային նշանակությամբ ռիսկային օբյեկտների համար.

Շենքեր և շինություններ (բնակելի, հասարակական, արտադրական);  
Տրանսպորտային կառույցներ (ճանապարհներ, կամուրջներ, երկաթգծեր);  
Ենթակառուցվածքներ (գազ, խմելու ջուր և կոյուղի, ոռոգում և դրենաժ, գետեր, էներգետիկայի և կապի օբյեկտներ);  
Գյուղատնտեսություն (մշակվող հող, արոտավայր, անտառ);  
Այլ (հնարավոր ծախսեր, հուշարձաններ, հետևանքների վերացում, տուժած բնակչություն և այլն):

Վնասները բաժանվում է երկու խմբի՝

**Առկա վնասներ** – սողանքային մարմնի տեղաշարժված զանգվածի տարածքում (A) առաջացած և տվյալ պահին գնահատվող վնասներ:

**Հավանական վնասներ** – վնասներ, որոնք կարող են առաջանալ հետագա 50 տարիների ընթացքում, եթե սողանքային տեղամասում կանխարգելիչ միջոցառումներ չիրականացվեն սողանքային մարմնի տեղաշարժված զանգվածի տարածքում (A), ենթադրվող հետագա կուտակման տարածքում (B), սողանքով պատվարի ջրամբարի գոտում (C) և “Սողանքով պատվարի փլուզման հեղեղման տարածքում (D):

Յուրաքանչյուր խմբում պետք է հստակեցվեն հետևյալ միավորները՝

Ուղղակի վնաս – ազդեցությունը ունեցվածքի, անշարժ գույքի վրա (լրացնելով Ձև 6-ում նշված միավորները)

Անուղղակի վնաս – ազդեցությունը ապրանքների և ծառայությունների արտադրության հոսքի, ուղղակի վնասից առաջացած այլ ծախսերի վրա (լրացնելով միավորները կամ տալով կարճ նկարագիրը):

Շինարարության ոլորտում ուղղակի վնասները բաժանվում են վեց մակարդակների՝

Մակարդակ 0 – ընդհանրապես ոչ մի վնաս

Մակարդակ I – շենքերը լավ տեխնիկական վիճակում են, չնչին վնասներ, որոնք կարող են վերացվել ընթացիկ վերանորոգման աշխատանքների միջոցով

Մակարդակ II – բավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքեր, վնասները կարող են վերացվել ընթացիկ վերանորոգման-վերակառուցման աշխատանքների միջոցով

Մակարդակ III – անբավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքեր, վնասները կարող են վերացվել ամրացման և վերակառուցման աշխատանքների միջոցով

Մակարդակ IV – վթարային վիճակում գտնվող շենքեր; վտանգավոր են հետագա շահագործման համար, բնակիչները պետք է վերաբնակեցվեն

Մակարդակ V – մասամբ կամ ամբողջությամբ քանդված շենքեր, բնակիչները վերաբնակեցված են:

Սողանքային տեղամասերի հույքագրման 1-7 ձևերի լրացման օրինակները ցույց են տրված հավելված 5-ում:

Սույն մեթոդական ցուցումները կիրառելիս խորհուրդ է տրվում օգտվել Դ. Ջ. Վարնեսի և Կրուդենի լանջային գրավիտացոն պրոցեսների դասակարգման աղյուսակներից:



3 Սողանքի գրանցամատյանի ձև








### Ձև-2 Պլան

Սողանքի ինքնության ճանաչում	a	<b>Ձև2-1</b>	
Սողանքի անվանումը	b		
Հետազոտության ամս	c		

Ա»սáðÃÕáðŸÁ



**Ձև-3 Պրոֆիլ**

*Landslide Inventory Survey*

Սողանքի ինքնության ճանաչում (ID)	a	<b>Ձև3-1</b>
Սողանքի անվանումը	b	
Հետազոտության ամսաթիվը	c	

**Պրոֆիլ**

**Ձև3-2**

### ՉԼ-4 Լուսանկար

Սողանքի ինքնության ճանա	a	ՉԼ4-1
Սողանքի անվանումը	b	
Հետազոտության ամսաթիվ	c	

ՉԼ4-2

**Ձև-5 Սողանքի Վիճակը**

Սողանքի ինքնության ճանաչում (ID)	<b>Ձև5-1</b>
Սողանքի անվանումը	
Հետազոտության ամսաթիվը	

Լանջի շարժման տեսակը	<b>Ձև5-2</b>
----------------------	--------------

Պատմության Իրադարձությունը	<b>Ձև5-3</b>	
Իրադարձության Տարին/Օրը	Շարժման իրավիճակը	Վնասվածության իրավիճակը

**Քարտեզագրային և Դեֆորմացիոն Հատկանիշները** **Ձև5-4**

	Սողանքի ընդամենը	Գագաթնամաս	Հիմնական կտրվածքը	Տեղաշարժված զանգված
Լանջի երկարությունը (մ)				
Լանջի բարձրությունը (մ)				
Լանջի թեքությունը (աստիճան)				
Տեղաշարժված զանգվածի խորությունը (մ)				
Տեղաշարժված զանգվածի շարժման ուղղությունը (աստիճան. ցույց է տալիս հյուսիսից ժամանաորակ առաջի ուղղությամբ)				
Չզվածություն / լայնություն (մ)				
Ենթակտրվածք		Կա/Չկա		Կա/ Չկա
ճարեր		Կա/Չկա	Կա/Չկա	Կա/Չկա
Իջվածք		Կա/Չկա	Կա/Չկա	Կա/Չկա
Լեռնաշղթաներ		Կա/Չկա	Կա/Չկա	Կա/Չկա
Հողի սեփականություն	Հասարակական/Մասնավոր/Երկուսն էլ			
Կապը տեղաշարժված զանգվածի և գետի միջև	Լանջի կտրվածք/Տեղաշարժված զանգվածի կողմից ջրագծի փոփոխում/Ուղղակի մոտեցում /Ոչ մի կապ			
Սողանքի քարտեզագրման հնագույն Նշում	Նորր/Սողանքի ստորոտում դարավանդի կտրվածքի ձևավորում/Սողանքում նոր հո			

**Լեռնային Ապարի և Տեղաշարժված Չանգվածի Պայմանը** **Ձև5**

	Գագաթնամաս	Հիմնական Կտրվածքը	Տեղաշարժված Չանգված
Լեռնային Ապարի Տարիքը			
Լեռնային Ապարի Մերտախումբը			
Մերտախումբ հյուսիսային Չանգվածի			
Երկրաբանական կառուցվածքը			
Շերտի անկում			
Լեռնային Ապարի Հողմնա-հարման Աստիճանը			
Լեռնային Ապարի Գասա-վորության և Բաղադրության Փոփոխման Աստիճանը			
Նշում			

**Հիրոյոգիական Պայմանը** **Ձև5-6**

	Ամբողջը	Գագաթնամաս	Հիմնական Կտրվածք	Տեղաշարժված Չանգված
Արբյուրների Կետերի Քանակը				
Արբյուրների Ընդհանուր Քանակը ( լիտեր/վատկան)				
Մակերևութային Ջրերի Ընդ-հանուր Քանակը (լիտեր/վատկան)				
Նշում				

**Քուսակն Պայմանը** **Ձև5-7**

	Գագաթնամաս	Հիմնական Կտրվածքը	Տեղաշարժված Չանգված
Պայման	լերկ հողեր/խտածածկույթ / ծառապատ	լերկ հողեր/խտածածկույթ / ծառապատ	լերկ հողեր/խտածածկույթ / ծառապատ
Նշում			

**Հակազդեցության Միջոցառման Պայմանը** **Ձև5-8**

	Ամբողջը
Հակազդեցության միջոցառման տեսակը	
Արդյունքը	Արդյունավետ/Ոչ արդյունավետ
Նշում	

**Նշում** **Ձև5-9**

**Ձև-6-1 Շինարարական Հատվածի Վնասի Գնահատում**


Սողանքի ինքնության ճանաչում (ID)	
Սողանքի անվանումը	<b>Ձև-6-1</b>
Հետազոտության ամսաթիվը	

		Բնակելի տարածք		Հիվանդանոցներ		Դպրոցներ		Հասարակական Կառույցներ		Արդյունաբերական Կառույցներ		Ծառայությունների Կառույցներ	
		Քանակը քանակը	Սիջին հողատարածքի չափմ2	Քանակը քանակը	Սիջին հողատարածքի չափմ2	Քանակը քանակը	Սիջին հողատարածքի չափմ2	Քանակը քանակը	Սիջին հողատարածքի չափմ2	Քանակը քանակը	Սիջին հողատարածքի չափմ2	Քանակը քանակը	Սիջին հողատարածքի չափմ2
Մտույթի անբերքություններ	Սողանքի վնասումներ "Արևիկոն" ընկերության կողմից (A) գոտում ունեցված վնասումները հաշվարկվում են հիմնարարական հատվածի վնասումների 9 կիսաբաժնի վնասումների և մտույթի վնասումների ընդամենը	Վնասվածության Կարգ 0											
		Վնասվածության Կարգ I											
		Վնասվածության Կարգ II											
		Վնասվածության Կարգ III											
		Վնասվածության Կարգ IV											
		Վնասվածության Կարգ V											
Սողանքի վնասումներ	Բնութագիր (Պահանջված արժեքը բացի կառույցի սեփականատիրոջ երաշխավորման ծախսերը : Օր. ավանի ենթակառուցվածքի կարիքի, ոչ ժամանակին գործունեության ավարտ, արտադրանքի կորուստ )												
		Բնակելի տարածք	Հիվանդանոցներ	Դպրոցներ	Հասարակական Կ	Արդյունաբերական	Ծառայությունների Կ						
		Սիջին հողատարածքի չափմ2	Սիջին հողատարածքի չափմ2	Սիջին հողատարածքի չափմ2	Սիջին հողատարածքի չափմ2	Սիջին հողատարածքի չափմ2	Սիջին հողատարածքի չափմ2						
Մտույթի անբերքություններ	Սողանքի վնասումներ ( A+B+C+D գոտում բոլոր ռիսկի օբյեկտների հաշվարկը բացի շինարարական հատվածի գոյություն ունեցող Կարգ V )												
Սողանքի վնասումներ	Բնութագիր (Պահանջված արժեքը բացի կառույցի սեփականատիրոջ երաշխավորման ծախսերը : Օր. ավանի ենթակառուցվածքի կարիքի, ոչ ժամանակին գործունեության ավարտ, արտադրանքի կորուստ )												
Ընդամենը	*												

**Ձև-2**

**Ձև-3**


Կառույցի Վնասվածքի Կարգի Կոդ	
<b>0</b>	Ընդհանրապես վնասվածք չկա
<b>I</b>	Կառույցները լավ տեխնիկական վիճակում են; ոչ նյութական վնասվածքներ, որը կարող է հեռացվել ընթացիկ վերականգնողական աշխատանքներով
<b>II</b>	Կառույցները բավարար տեխնիկական վիճակում են; որը կարող է հեռացվել ընթացիկ վերականգնողական-վերակառուցման աշխատանքներով
<b>III</b>	Կառույցները ոչ բավարար տեխնիկական վիճակում են; որը կարող է հեռացվել ընթացիկ վերականգնողական աշխատանքներով
<b>IV</b>	Կառույցները արտակարգ վիճակում են; հետագա օգտագործման համար վտանգավոր է; բնակիչներին պետք է տեղափոխվել
<b>V</b>	Կառույցները որոշ չափով կամ ամբողջովին ավերվել են; բնակիչները տեղափոխված են



**Ձև-6-2 Տրանսպորտի Սեկտորում Վնասի Գնահատում**

Սողանքի ինքնության ճանաչում (ID)	<b>Ձև-6-1</b>
Սողանքի անվանումը	
Հետազոտության ամսաթիվը	


		Ճանապարհներ			Կամուրջներ մ2	Երկաթ մ
		Գրավելից ճանապարհ մ2	Ասֆալտե ճանապարհ մ2	Երկկողմանի ասֆալտե մայրուղի մ2		
Մտորի կանգրյա ունեցում	Մտոր Վ	Հաշվված առարկաները մասամբ կամ ամբողջովին ավերված են և չեն գործում		<b>Ձև-2</b>		
	Մտոր Դ	Նկարագրություն (Տեղանք/ այլընտրանքային ճանապարհային գործառույթը ժամանակից դուրս է/ մարդկանց քանակի նվազման)				
Փոստենցիալ վնասվածք	Մտոր Վ	( A+B+C+D գոտում բոլոր ուղիների օբյեկտների հաշվարկը բացի գոյություն ունեցող վնասված օբյեկտները )		<b>Ձև-3</b>		
	Մտոր Դ	Նկարագրություն (Տեղանք/ այլընտրանքային ճանապարհային գործառույթը ժամանակից դուրս է/ մարդկանց քանակի նվազման)				
Եզում	*					



**Ձև-6-3 Ենթակառուցվածքի Սեկտորի Վնասի Գնահատում**

Սողանքի ինքնության ճանաչում (ID)	
Սողանքի անվանումը	<b>Ձև-6-1</b>
Հետազոտության ամսաթիվը	

			Գագի Համակարգ m	Խմելու ջրի և կոյուղու համակարգ m	Ոռոգման և ջրահեռացման համակարգ m	Գետեր m	Էլեկտրաէներգիա m	Հեռախոսագծեր m
Սողանքի ինքնության ճանաչում	Վնասված օբյեկտներ	Հաշվված առարկաները մասամբ կամ ամբողջովին ավերված են և չեն գործում						
	Վնասված օբյեկտներ	Նկարագրություն (Տեղանք/ այլընտրանքային ճանապարհային գործառույթը ժամանակից դուրս է/ մարդկանց քանակի նվազման)		<b>Ձև-6-2</b>				
			Գագի Համակարգ m	Խմելու ջրի և կոյուղու համակարգ m	Ոռոգման և ջրահեռացման համակարգ m	Գետեր m	Էլեկտրաէներգիա m	Հեռախոսագծեր m
Փոստենցիայի վնասվածք	Օբյեկտների Վնասվածք	( A+B+C+D գոտում բոլոր ռիսկի օբյեկտների հաշվարկը բացի գոյություն ունեցող վնասված օբյեկտները )		<b>Ձև-6-3</b>				
	Վնասված օբյեկտներ	Նկարագրություն (Տեղանք/ այլընտրանքային ճանապարհային գործառույթը ժամանակից դուրս է/ մարդկանց քանակի նվազման)						
Նշում	*							






**Ձև-6-4 Գյուղատնտեսության սեկտորում վնասի գնահատում**


Սողանքի ինքնության ճանաչում (ID)	<b>Ձև-6-1</b>
Սողանքի անվանումը	
Հետազոտության ամսաթիվը	

		Մշակվող հող հա	Արտադրար հա	Անտառանյութ (փայտի արտադրություն) հա
վնասը	Գոյություն ունեցող վնաս	Հաշվված առարկաները մասամբ կամ ամբողջովին ավերված են և չեն գործու		
	Անորակ վնաս	Նկարագրություն (Կորած արտադրություն)	<b>Ձև-6-2</b>	
		Մշակվող հող հա	Արտադրար հա	Անտառանյութ (փայտի արտադրություն) հա
ծք	Գոյություն ունեցող վնաս	( A+B+C+D գոտում բոլոր ռիսկի օբյեկտների հաշվարկը բացի գոյություն ունեցող վնասված օբյեկտները	<b>Ձև-6-3</b>	
	Անորակ վնաս	Նկարագրություն (Կորած արտադրություն)		
Նշում	*			



**Ձև-6-5 Այլ Սեկտորների Վնասի Գնահատում**

Սողանքի ինքնության ճանաչում (ID)						
Սողանքի անվանումը						Ձև-6-1
Հետազոտության ամսաթիվը						
		Արտակարգ իրավիճակների ծախսե Հալ. դրամ/տարի	Փլվածքի տեղափոխում մ3	Հուշարձաններ/Կոթողներ անվանում	Բնակչության տեղեկություն անվանում	Այլն
Գոյություն ունեցող վնաս	Ուղղակի վնաս	Հաշվված առարկաները մասամբ կամ ամբողջովին ավերված են և չեն գործում				
	Անուղղակի վնաս	Նկարագրություն (Տեղանք/ այլընտրանքային ճանապարհային գործառնություն ժամանակից դուրս է/ մարդկանց քանակի նվազման տեղեկություն)		Ձև-6-2		
		Արտակարգ իրավիճակների ծախսե Հալ. դրամ/տարի	Փլվածքի տեղափոխում մ3	Հուշարձաններ/Կոթողներ անվանում	Բնակչության տեղեկություն անվանում	Այլն
Գոյություն ունեցող վնաս	Ուղղակի վնաս	( A+B+C+D գոտում բոլոր ռիսկի օբյեկտների հաշվարկը բացի գոյություն ունեցող վնասված օբյեկտները )		Ձև-6-3		
	Անուղղակի վնաս	Նկարագրություն (Կորած արտադրություն)				
Նշում	*					



**Չև-7**

Սողանքի ինքնության ճա	<i>Landslide Inventory Survey</i>
Սողանքի անվանումը	
Հետազոտության ամսաթ	



4 Մոդանքի գրանցամատյանի կոդ



**Ձև 1-ի կող**

Վտանգի մակարդակի կող	
	Հավանական սողանքային տարածքի ակտիվությունը օդալուսանկարների վերծանման (ՕԼՎ) միջոցով
I	Բարձր
II	Միջին
III	Ցածր, 0-ական

Վնասի մակարդակի կող	
H	Վնասներն ավելանում են; Գոյություն ունեն շատ տներ, հասարակական կառույցներ կամ կարևոր ենթակառուցվածքներ
M	Նախկինում գրանցվել կամ հայտնաբերվել են վնասներ; Որոշ տներ, հասարակական կառույցներ կամ կարևոր ենթակառուցվածքներ հանդիսանում են ռիսկային օբյեկտներ: Սողանքն ունի լուրջ բնասահասանական ազդեցություն
L	Վնասներ չեն արձանագրվել/հայտնաբերվել Սողանքը քիչ կապ ունի մարդկային գործունեության հետ

Example of Environmental Economical Impact

Առաջնահերթ մակարդակ դաշտային գույքագրման հետազննության կողի համար			
Վտանգի մակարդակ / Ռիսկի մակարդակ	I	II	III
H	A	A	B
M	A	B	C
L	B	C	C

**Ձև 2,3-ի պայմանական նշաններ (1/2)**

**Երկրաբանական և աշխարհագրական առանձնահատկություններ**

- |   |  |                         |    |  |                                       |
|---|--|-------------------------|----|--|---------------------------------------|
| 1 |  | Բեկման գիծ              | 10 |  | Դարավանդ                              |
| 2 |  | Սկարալեր                | 11 |  | Մերկացում                             |
| 3 |  | Իջվածք                  | 12 |  | Աղբյուր                               |
| 4 |  | Նեղ երկար բաձրացված հան | 13 |  | Մակերևութային ջուր                    |
| 5 |  | Ճաքեր                   | 14 |  | Շերտերի անկումը և տարածումը           |
| 6 |  | Խզվածք                  | 15 |  | Տարածումը                             |
| 7 |  | Սկարայի ռեգրեսիա        | 16 |  | Անկում                                |
| 8 |  | Երկայնական բարձրացված   |    |  | Ճաքերի/միացումների անկում և տարածումը |
| 9 |  | Բլոկ                    |    |  | Խզվածքի անկում և տարածումը            |

**Վտանգի գոտի**

- Տեղաշարժված գանգվածի շարժի ուղղությունը
- Տեղաշարժված գանգվածի առկա գոտի ( A )
- Ենթադրվող հետագա կուտակման գոտի ( B )
- Սողանքով պատվարի ենթադրվող ջրամբարի գոտի ( C )
- Սողանքով պատվարի փլուզումից առաջացած հեղեղման գոտի ( D )


**Ռիսկային օբյեկտներ**

- Բնակելի տուն Մանրախճով ծածկված ճանապարհ
- Հասարակական կառույց Ասֆալտապատ ճանապարհներ
- Արդյունաբերություն կամ արհեստագործություն Ասֆալտապատ մայրուղիներ, 2 արահետներ

Ռիսկային մնացած օբյեկտները կգրառվեն տառերով:



**Ձև 2,3-ի պայմանական նշաններ (2/2)**



**Ֆացիայի կոդ. Տես Ձև 5-ի կոդը**

Facies Code								
Surficial Deposit: s		Bedrock Materials: R					Primary code	
Soils (s)		Sedimentary rocks (SR)		Igneous rocks (IR)		Metamorphic rocks (MR)		Secondary code
c	Cohesive soils	SRS	Sandy rocks	IRP	Plutonic rocks	MRS	Psamitic rocks	Tertiary code
sg	Incohesive soils	SRM	Clayey rocks	IRI	Intermediate rocks	MRP	Pelitic rocks	
		SRC	Chemical rocks					
o	Peat	SR	Others			MRC	Chemical rocks	
	Organic material		Unknown					
Note:				ITF	Tuffaceous			(Secondary code)
One of codes (primary, secondary, or tertiary) shall be used.				IR	Others	MO	Others	
					Unknown		Unknown	

Մյուսի համար ապարի անվանումը ցույց է տրված ( ).  
Լրացուցիչ նկարագիրը ցույց է տրված ( ).

**Ձև 5-ի կողմ (1/2)**

Լանջի շարժի տեսակի կոդ			
Լյուքի տեսակը		Ժայռ	Հող
Շարժի տեսակը	Ենթատեսակը		
Ընդգրկող տեսակը	Ենթատեսակը		
ՍԱՀՔԵՐ (ՍՈՂԱՆՔՆԵՐ) (SL)		R-SL	S-SL
ՀՈՍՔԵՐ (FL)		R-FL	S-FL
ԱՅԼ (O)	ՓԼՈՒԶՈՒՄ (F)	R-O	S-O
	ՇՐՋՈՒՄՆԵՐ (T)		
	ԿՈՂԱՅԻՆ ՇԱՐՇ (L)		
	ՀԱՄԱԿՑՎԱԾ (C)		
<p>Նշում. Երբ մնացածների ենթատեսակը հստակեցված է, նշեք ենթակողերից մեկը (F, T, L, or C); օր.՝ ՓԼՈՒԶՈՒՄՆԵՐԻ դեպքում լանջի շարժի տեսակի կոդն է R-OF կամ S-OF:</p>			

Ֆազային կոդ								
Մակերևութային		Արմատական ապարի նյութեր. R					Առաջնային կոդ	
Գրունտներ (s)		Նստվածքային ապարներ		Հրաբխային		Մետամորֆիկ ապարներ	Երկրորդային	
c	Կապակցված	SRS	Ավազային	IRP	Պլուտոնիկ	MRS	Ավազախառն ապարներ	Երրորդային կոդ
sg	Չկապակցված գրունտներ	SRM	Կավային	IRI	Միջանկյալ ապարներ	MRP	Պելիտային ապարներ	
		SRC	Քիմիական					
o	Տոռֆ	SR	Այլ			MRC	Քիմիական ապարներ	
	Օրգանական		Անհայտ					
Նշում. Պետք է օգտագործվի կոդերից մեկը (առաջնային, երկրորդային կամ երրորդային):				ITF	Տուֆային			
				IR	Այլ Անհայտ	MO	Այլ Անհայտ	(Երկրորդային)

**Ձև 5-ի կողմ (2/2)**

Հողմնահարման/ապարների կազմի փոփոխության աստիճանը	
Մահմանում	Նկարագրություն
<b>0-ակնան</b>	Ապարի հողմնահարման/փոփոխության ոչ մի տեսանելի նշան
<b>Թույլ</b>	Գույնի փոփոխություն զգալի կտրտված մակերևույթի վրա; ապարը կարող է լինել գույնը կորցրած և չվնասված ապարից որոշակիորեն թույլ
<b>Միջին</b>	Կեսից քիչ գոյություն ունի կամ որպես շարունակական կառուցվածք կամ որպես
<b>Բարձր</b>	Մեծ մասը քայքայված է, կազմալուծված հողի կամ երկուսն էլ; սկզբնական զանգվածի կառուցվածքը հիմնականում վնասված չէ
<b>Ամբողջությամբ</b>	Ապարը վերածվել է հողի; զանգվածի կառուցվածքը և կազմությունը քանդված է; ծավալի մեջ տեղի է ունեցել մեծ փոփոխություն, բայց հողը դեռ զգալիորեն չի տեղափոխվել

Կանխարգելիչ միջոցառումների կողմ	
Հակասողանքային միջոցառումներ	
<b>SDC</b>	Մակերևութային դրենաժավորման վերահսկում
<b>SG</b>	Փոքր խորության վրա գտնվող գրունտային ջրերի վերահսկում
<b>DG</b>	Խորը գրունտային ջրերի վերահսկում
<b>OTH</b>	Այլ
Սողանքի զսպման միջոցառումներ	
<b>PIL</b>	Ցցեր
<b>SHA</b>	Մեծ տրամագծով մոնոլիտ հորեր
<b>ANC</b>	Խարիսխ
<b>WAL</b>	Հենապատեր
	Այլ
<b>OTH</b>	Այլ
<b>NOT</b>	Ոչինչ



5 Սողանքի գրանցամատյանի նմուշ






### Form2 Plan

Landslide ID	SHIR-112-0020
Landslide Name	Arapi
Survey date	09/Jul/2004, 10/Dec/2014

#### Plan






### Form3 Profile

Landslide ID	SHIR-112-0020
Landslide Name	Arapi
Survey date	09/Jul/2004, 10/Dec/2014

Profile



### Form4 Photograph

Landslide ID	SHIR-112-0020
Landslide Name	Arapi
Survey date	09/Jul/2004, 10/Dec/2014



General view of Arapi village  
Taking the picture from east side river opposite bank



Sub scarp; 1.5m height, in the upper part of the displaced mass



Situation of damaged house



Deformation of retaining wall



Sub scarp; 1.5m height, in the upper part of the displaced mass

### Form5 Landslide Condition

Landslide ID	SHIR-112-0020
Landslide Name	Arapi
Survey Date	09/Jul/2004, 10/Dec/2014

<b>Slope Movement Type</b>	S-SL	Remark	
----------------------------	------	--------	--

Event History		
Event Year/Date	Situation of Movement	Situation of Damage
1985-2004		Dowelling houses have damaged
2004-2014	New cracks appear on the ground	Cracks of houses have been increased and

Topographic & Deformation Features				
	Total of Landslide	Crown	Main Scarp	Displaced Mass
Slope Length (m)	1000 (blocks of		600	1000
Slope Height (m)	60		25	35
Slope Gradient (degree)		3	20	5
Depth of Displaced Mass (m)				10
Direction of Displaced Mass Movement (degree: shows from the north clockwise)				
Extension / Width (m)			220	220
Sub Scarp		Exist/Not	Exist/Not	Exist/Not
Cracks		Exist/Not	Exist/Not	Exist/Not
Depression		Exist/Not	Exist/Not	Exist/Not
Ridges		Exist/Not	Exist/Not	Exist/Not
Ownership of Land	Public/Private/Both			
Relation between Displaced Mass and River	Undercut slope/Channel shifting by displaced mass/Just approaching /No relation			
Ageing of Landslide Topography	Fresh/Forming of a terrace scarp in a landslide foot/Forming new stream in a landslide/ Landslide topography has subdued			
Remark	Main scarp has subduned. But fresh sub scarps are disteubted in the displaced mass.			

Base Rock & Displaced Mass Condition				
	Crown	Main Scarp	Displaced Mass	
Age of Base Rock	NEO	NEO	NEO	
Facies of Base Rock	SRM	SRM	SRM	
Facies of Displaced Mass			m/g/k	
Geological Structure	Unknown	Unknown	Unknown	
Bedding Dip	Unknown	Unknown	Unknown	
Weathering Grade of Base	Slight	Slight	Slight	
Alteration Grade of Base	Slight?	Slight?	Slight?	
Remark				

Hydrological Condition				
	Whole	Crown	Main Scarp	Displaced Mass
Number of Spring Point	about 10	0	0	0
Total Amount of Spring (liter/minute)	>10	0	0	0
Total Amount of Surface Water	>10	0	0	0
Remark				


Vegetation Condition				
	Crown	Main Scarp	Displaced Mass	
Condition	Bare land/Grass/Tree	Bare land/Grass/Tree	Bare land/Grass/Tree	
Remark				

Countermeasures	
	Whole
Kind of Countermeasures	NOT
Effect	Effective/Not effective
Remark	
<b>Remark</b>	

**Form6-1 Damage Evaluation of Construction Sector**

Landslide ID			SHIR-112-0020											
Landslide Name			Arapi											
Survey Date			09/Jul/2004, 10/Dec/2014											
			Dwelling		Hospitals		Schools		Public Building		Industry Build		Services Buildi	
			Nos.	Average lot size m <sup>2</sup>	Nos.	Average lot size m <sup>2</sup>	Nos.	Average lot size m <sup>2</sup>	Nos.	Average lot size m <sup>2</sup>	Nos.	Average lot size m <sup>2</sup>	Nos.	Average lot size m <sup>2</sup>
Existing Damage	Direct Damage	Number of damaged buildings in each category in Zone (A), defined in "Building Damage Category Code"												
		Damage Category 0	395	100			1	250	3	580				
		Damage Category I	100	100					1	300				
		Damage Category II	41	100										
		Damage Category III	20	100										
		Damage Category IV	20	100										
	Damage Category V	10	100											
Indirect Damage	Description (Needed cost besides guarantee expense to building owner. ex. need for infrastructure of settlement, time out of operation, production lost )													
			Dwelling		Hospitals		Schools		Public Building		Industry Build		Services Buildi	
			Nos.	Average lot size m <sup>2</sup>	Nos.	Average lot size m <sup>2</sup>	Nos.	Average lot size m <sup>2</sup>	Nos.	Average lot size m <sup>2</sup>	Nos.	Average lot size m <sup>2</sup>	Nos.	Average lot size m <sup>2</sup>
Potential Damage	Direct Damage	Number of all risky objects in Zone A+B+C+D excluding existing category V	240	100										
	Indirect Damage	Description (Needed cost besides guarantee expense to building owner. Ex. need for infrastructure of settlement, time out of operation, production lost )												
Remark														


Building Damage Category Code	
0	No damage at all
I	Buildings in good technical condition; inessential damages, which can be <u>eliminated by current restoration works</u>
II	Buildings in satisfactory technical condition; damages can be eliminated by <u>restoration-reconstruction works</u>
III	Buildings in unsatisfactory technical condition; damages can be eliminated by <u>strengthening and reconstruction works</u>
IV	Buildings in emergency condition; dangerous for further use – the habitants must be resettled
V	Buildings partially or completely ruined; habitants resettled



**Form6-2 Damage Evaluation of Transportation Sector**

Landslide ID	SHIR-112-0020
Landslide Name	Arapi
Survey Date	09/Jul/2004, 10/Dec/2014


			Roads			Bridges m2	Railways m
			Gravel road m2	Asphalt road m2	Asphalt highways 2 lanes m2		
Existing Damage	Direct Damage	Area(length and width) of partially or completely destroyed objects which do not function.	10000	1500		200	
	Indirect Damage	Description (Location/ alternative road time out of operation/ numbers of people affected )					
Potential Damage	Direct Damage	Area (length and width) of all risky objects in Zone A+B+C+D excluding existing damaged objects )	10000				
	Indirect Damage	Description (Location/ alternative road time out of operation/ numbers of people affected )					
Remark							



**Form6-5 Damage Evaluation of Others Sector**

Landslide ID	SHIR-112-0020
Landslide Name	Arapi
Survey Date	09/Jul/2004, 10/Dec/2014

		Emergency Expenditure AMD/year	Demolition Removal m3	Monuments/ Remains name	Population Affected name	Others
Existing Damage	Direct Damage	Number of partially or completely destroyed objects which do not function.			10	
	Indirect Damage	Description (Location/assumed time out of operation/ numbers of people affected)				
		Emergency Expenditure AMD/year	Demolition Removal m3	Monuments/ Remains name	Population Affected name	Others
Potential Damage	Direct Damage				250	
	Indirect Damage					
Remark						



**Form7**

Landslide ID	
Landslide Name	
Survey Date	

--





## 6 Մոդանքների հետազոտություն



## Սողանքների հետազոտության ձեռնարկ

### 1. Ընդհանուր դրույթներ

Սողանքների հետազոտությունը իրականացվում է սողանքային տարածքներում հողի պայմանները հստակեցնելու և հակասողանքային միջոցառումները պլանավորելու/նախագծելու նպատակով: Այս ձեռնարկը նկարագրում է հետազոտության ընդհանուր ակնարկը և մեթոդաբանությունը:

Սողանքների հետազոտությունն իրականացվում է երեք փուլով, ինչպես նշված է ստորև:

- 1) Նախնական հետազոտություն
  - Գրականության ուսումնասիրություն
  - Ռելիեֆի վերծանում
- 2) Հիմնական հետազոտություն
  - Տեղանքի հետախուզություն
  - Պլանավորում մանրամասն հետազոտության համար
- 3) Մանրամասն հետազոտություն
  - Տեղագրական քարտեզների պատրաստում
  - Երկրաբանական հետազոտություն
  - Սողանքի մակերևույթի հետազոտություն
  - Գրունտի տեղաշարժի հետազոտություն
  - Գրունտային ջրի հետազոտություն
  - Գեոֆիզիկական հետախուզություն և այլն

Եթե անհրաժեշտ է հրատապ միջոցառումների արագ իրականացում, կարող է իրականացվել նվազագույն հետազոտություն, օրինակ՝ սողանքի մակերևույթի հետազոտություն և գրունտային ջրի հետազոտություն՝ ելնելով տեղանքի հետախուզության ժամանակ հստակեցված տարաքից և սողանքի ակտիվությունից:

Եթե հակասողանքային միջոցառումներն իրականացվում են անհապաղ, կարելի է ձեռք բերել տեղեկատվություն տեղում առկա կառուցվածքներից, որոնք են՝ պատի դեֆորմացիան, դրենաժային կառույցների բացթողման չափը և այլն, որոնք կտրամադրեն լրացուցիչ տվյալներ սողանքի և դրա շարժի մեխանիզմը հստակեցնելու համար: Հետևաբար, հրատապ հակասողանքային միջոցառումները կարող են համարվել որպես մշտական հակասողանքային միջոցառումների համար անհրաժեշտ հետազոտության աշխատանքների մի մասը:

## 2. Հետազոտություն

### 2.1 Նախնական հետազոտություն

#### 2.2.1 Նախնական հետազոտության ընդհանուր ակնարկն ու նպատակը

Նախնական հետազոտությունն իրականացվում է՝ նպատակ ունենալով հստակեցնել ընդհանուր հատկությունները ընդարձակ տարածներում, իչպիսիք են՝ սողանքի բաշխվածությունը, երկրաբանական պայմանները, գրունտային ջրի պայմանները և այլն: Հետազոտությունը բաղկացած է գրականության ուսումնասիրությունից և օդալուսանկարների միջոցով սողանքի հատկությունների հստակեցումից:

#### 2.2.2 Գրականության ուսումնասիրություն

Գրականության ուսումնասիրության նպատակն է հստակեցնել սողանքի բնորոշ հատկությունները՝ հավաքելով տեղեկատվություն աշխարհագրության, երկրաբանության, կլիմայի, սողանքների գրառումների վերաբերյալ:

Քանի որ սողանքը տեղի է ունենում որոշակի աշխարհագրական և երկրաբանական պայմաններում, գրականության ուսումնասիրության միջոցով ձեռք բերված վերանշյալ տեղեկատվությունը կարևոր է հստակեցնելու համար թիրախային գոտում սողանքի առաջացման և շարժի յուրահատկությունները: Գրականության ուսումնասիրության փուլում անհրաժեշտ է հավաքել հետևյալ տվյալները.

- (1) Հողի պայմանները, ինչպիսիք են՝ աշխարհագրությունը և երկրաբանությունը
  - ա) Տեղագրական քարտեզներ
  - բ) Օդալուսանկարներ
  - գ) Երկրաբանական քարտեզներ
  - դ) Ռելիեֆի դասակարգման քարտեզներ և հողօգտագործման քարտեզներ
  - ե) Այլ, օրինակ՝ գրունտի քարտեզներ և գոյություն ունեցող երկրաբանական հաշվետվություններ
- (2) Սողանքային աղետների գրառումներ և գրականություն սողանքի հարակից տարածքների վերաբերյալ
  - ա) Իրականացված միջոցառումների գրառումներ, աղետների վերաբերյալ հաշվետվություններ և երկրաբանական հետազոտության վերաբերյալ հաշվետվություն
  - բ) Ակադեմիական հետազոտությունների վերաբերյալ հաշվետվություններ
  - գ) Տվյալներ բնակավայրի բաշխվածության և հողօգտագործման վերաբերյալ
  - դ) Տեղական պատմություն և թերթեր
- (3) Կլիմայի վերաբերյալ գրառումներ
  - ա) Կլիմայի վերաբերյալ հաշվետվություններ
  - բ) Օդերևութաբանական կայանների դիտարկման գրառումներ


#### 2.2.3 Ռելիեֆի վերծանում

Ռելիեֆի վերծանման նպատակն է հստակեցնել գեոմորֆոլոգիական և

երկրաբանական հատկությունները ընդարձակ տարածքներում՝ օգտագործելով օդալուսանկարներ և տեղագրական քարտեզներ:

Սողանքի հատկությունները և երկրաբանական թույլ գոտիները հստակեցվում են տեղագրական քարտեզների և օդալուսանկարների միջոցով: Ռելիեֆի վերծանումը արդյունավետ է ընդարձակ տարածքներում սողանքի բաշխվածությունը հստակեցնելու համար: Քանի որ սողանքի հատկությունները հիմնականում ստեղծվել են անցյալում սողանքի կրկնվող շարժի միջոցով, սողանքի հատկությունները հեշտ են հայտնաբերվում, ինչպես ցույց է տրված նկար 1-ում: Քանի որ սողանքի որոշ հատկություններ նման են այլ գեոմորֆոլոգիական հատկությունների, օրինակ՝ հրաբխաբեկորային նստվածքները լվացված բարձրավանդակի և գետի դարավանդի սահմանին, անհրաժեշտ է տեղանքի հետախուզության միջոցով հաստատել՝ արդյոք հատկություններն իրական սողանքի հատկություններ են, թե ոչ: Բավականին դժվար է հայտնաբերել ապարի սահքը ռելիեֆի վերծանմամբ, քանի որ ապարի սահքի շարժը հիմնականում փոքր է որոշակի ռելիեֆ ստեղծելու համար: Որոշ դեպքերում հնարավոր է հայտնաբերել ապարի սահքը՝ ելնելով երկրաբանական թույլ գոտու բաշխվածությունից:

Եթե եզրագծերով (կոնտուրային գծերով) տեղագրական քարտեզները և ստերեոդիտարկման օդալուսանկարները հասանելի չեն, ցանկացած արբանյակային պատկեր կարող է օգտագործվել որպես մոտավոր, բայց ոչ ճշգրիտ այլընտրանք:



Նկար 1 Սողանքի հատկությունների տիպիկ պլան

Երկրաբանությունը և երկրաբանական կառուցվածքները կարևոր գործոններ են սողանքի հատկությունները հայտնաբերելու համար: Նշվում է, որ սողանքի հավանականությունը բարձր է հետևյալ պայմաններում.

1) Երկրաբանություն

- ա) Արգիլիթ և Նեոգեն հասակի տուֆ (Վաղ Երրորդային)
- բ) Բյուրեղային թերթաքար (կանաչ թերթաքար և սև թերթաքար) և շերտաքար
- գ) Կանաչ ապարներ

- դ) Օձաքար
  - ե) Հիդրոջերմային փոփոխված ապարներ
- 2) Երկրաբանական կառուցվածքներ
- ա) Ճաքճքված գոտիներ խզվածքների և տեկտոնական գծերի երկայնքով
  - բ) Լանջի ուղղության հետ համընկնող երկրաբանական կառուցվածքներ
  - գ) Ծալքերի անտիկլինալի և սինկլինալի առանցքներ
  - դ) Հրաբխային ապարների և ինտրուզիվ ապարների սահման
  - ե) Վրադիր (ծածկող) ապարներ (ինչպես օրինակ՝ բազալտ, անդեզիտ և հրաբխաբեկորային ապարներ)

Ստորև բերված են որոշակի գեոմորֆոլոգիական հատկություններ ունեցող վերծանման համար:

- 3) Գեոմորֆոլոգիա
- ա) V-աձև խորը կտրվածքով դաշտավայր էրոզիոն հարթության մեջ
  - բ) Կոլյուվիալ լանջեր հաստ նստվածքներով և թաղված դաշտավայրով
  - գ) Լանջեր, որոնք ներսում ունեն փոքր անհարթություններ և բարձրացված հատված ստորոտին, ոլորապտույտ գետի հոսքեր, որոնց սեղմում են գետի երկայնքով գտնվող լանջերը և գետի հոսքի հանկարծակի անհայտացում
  - դ) Գետի հոսքի հետևանքով ստորին հատվածում կտրված լանջեր
  - ե) Լանջեր ոլորապտույտ գետի հոսքերի շուրջը, որտեղ տեղի է ունենում էրոզիա
- 4) Միկրո-գեոմորֆոլոգիա
- ա) Եզրագծերի (կոնտուրային գծերի) անհավասար ինտերվալ (ավելի նեղ ինտերվալ սողանքի վերին հատվածում, լայն ինտերվալ՝ մեջտեղում և կրկին ավելի նեղ ինտերվալ ստորին հատվածում)
  - բ) Պայտաձև ակարա մեղմ լանջերով կամ մեկուսացված փոքր գագաթներով ստորին հատվածում
  - գ) Իջվածքի գոտիներ, ճաքեր ունեցող տարածքներ, ինչպես նաև իջվածքի գոտիներ գագաթների կամ բլուրների վրա
  - դ) Ջրավազանների, լճերի, խոնավ հողատարածքների եզրագծերի շտկում
  - ե) Փոքր դաշտավայր կամ թրծազանգվածներ սողանքի երկու կողմերին
  - զ) Իջվածք սողանքի հետևի գագաթի վրա
  - է) Ճանապարհների և երկաթգծի ծովածություն, ինչպես նաև կառուցվածքների տեղաշարժ
  - ը) Գետի հունի աննորմալ թեքվածություն

## 2.3 Հիմնական հետազոտություն

### 2.3.1 Ուրվագիծն ու նպատակը

Հիմնական հետազոտությունն իրականացվում է հասկանալու համար հրատապությունը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստելու համար աղետների

արձագանքման պլանը: Դրա նպատակն է նաև պատրաստել մանրամասն հետազոտության պլան՝ սողանքի տարածքի և շարժի իրավիճակի հաստատման միջոցով: Հետազոտությունը հիմնականում կատարվում է տեղանքի հետախուզության միջոցով:

### **3.2 Տեղանքի հետախուզություն**

Տեղանքի հետախուզության նպատակն է պատրաստել հետազոտության պլան և աղետի արձագանքման պլան՝ սողանքի առաջացման և մեխանիզմի ու տուժած տարածքների հստակեցման միջոցով: Տեղանքի հետախուզության հիմնական կետերն են՝ (1) սողանքի գոտու և վտանգավոր տարածքի գնահատումը, (2) Երկրաբանական պայմաններն ու երկրաբանական կառուցվածքները, (3) երկրաբանական կառուցվածքների գնահատումը՝ ելնելով միկրո-մորֆոլոգիայից և տարածաշրջանի մորֆոլոգիայից, (4) գրունտային ջրի մակարդակի գնահատումը, (5) շարժի տեսակի գնահատումը, (6) հարուցիչ գործոնի գնահատումը, (7) հետագա ակտիվացման կանխատեսումը, և (8) հետագա վնասների կանխատեսումը:

Յուրաքանչյուր կարևոր կետի ներքո տեղի հետախուզության ենթակետերը հետևյալն են.

#### **3.2.1 Սողանքի գոտու և վտանգավոր տարածքի գնահատումը**

Տեղանքի հետախուզության համար պետք է ձեռք բերվեն տեղագրական քարտեզներ. նախընտրելի է ձեռք բերել կունտուրային գծերով տեղագրական քարտեզներ: Տեղանքում պետք է իրականացվի սողանքի ընդարձակ տեսքի դիտարկում՝ օդալուսանկարի վերձանման միջոցով հայտնաբերված սողանքային գոտու ընդհանուր հատկություններն ու գեոմորֆոլոգիան հստակեցնելու համար: Ելնելով վերոնշյալ դիտարկումից և այլ երևույթներից, ինչպես օրինակ՝ ճաքերը կամ սողանքային գոտու դեֆորմացիան, կգնահատվեն ակտիվ սողանքի տարածքը, ռիսկային տարածքը և պաշտպանության ենթակա օբյեկտները:

#### **3.2.2 Երկրաբանական հետազոտություն**

Սողանքի ակտիվության և յուրահատկությունների գնահատման համար իրականացվում է երկրաբանական հետազոտություն, հստակեցվում է հատիկի չափսը, լիթոլոգիան/ կոպիճի ձևը, գույնը/ կավի վիճակը և այլն: Սողանքի զանգվածի տարածքը նույնպես պետք է գնահատվի՝ ելնելով հետազոտության արդյունքներից:

Ելնելով արմատական ապարի մերկացման, շերտագրության, շերտերի հերթագայության դիտարկման արդյունքից՝ կարելի է գնահատել թեքվածությունը/հորիզոնական ուղղությունը, իսկ հետո հնարավոր է գնահատել սողանքի յուրահատկությունները գեոտեկտոնիկայի տեսանկյունից: Եթե դիտարկվում են խզվածներ կամ ճաքճքված գոտիներ, կարևոր է հստակեցնել դրանց ազդեցությունը՝ կատարելով ենթադրություններ դիտարկված խզվածքի կամ ճաքճքված գոտիների ընդլայնման վերաբերյալ:

### **3.2.3 Գեոմորֆոլոգիական հետազոտություն**

Գեոմորֆոլոգիական հետազոտության մեջ երկրաբանական կառուցվածքները և սողանքի հատկությունները գնահատվում են միկրո-մորֆոլոգիայի և լայնամասշտաբ մորֆոլոգիայի միջոցով:

### **3.2.4 Գրունտային ջրի վիճակի գնահատում**

Հետազոտության մեջ ջրի մակարդակը չափվում է ջրավազանների համար, իսկ գրունտային ջրի արտահոսքը չափվում է աղբյուրի համար: Ջրի մակարդակի/արտահոսքի և անձրևի միջև հարաբերությունը հստակեցնելու միջոցով կարելի է գնահատել գրունտային ջրի աղբյուրը՝ արդյոք այն խորը, թե ծանծաղ հատվածից է դուրս գալիս:

### **3.2.5 Շարժի ձևի գնահատում**

Սողանքի ձևն ու ուղղությունը գնահատվում է միկրո-մորֆոլոգիայի, հիմնական ճաքերի, կողային ճաքերի, լեզվակի ճաքերի, ինչպես նաև ճանապարհների, տների, այլ օբյեկտների ձևախախտման և փայտերի թեքվածության հետազոտության միջոցով:

### **3.2.6 Հարուցիչ գործոնի գնահատում**

Հարուցիչ գործոնը գնահատվում է՝ ելնելով կլիմայի պայմաններից, շարժի յուրահատկություններից և այլն: Ստորև բերված են հնարավոր հարուցիչ գործոնները: Անհրաժեշտ է ուշադիր ստուգում, քանի որ մի քանի գործոնների կոմբինացիան կարող է հանգեցնել ակտիվացման:

- 1) Սողանքի լեզվակի գետի էրոզիա
- 2) Տեղական անձրև կամ ձնհալ
- 3) Ուժեղ անձրև
- 4) Հողի հեռացում սողանքի լեզվակային մասից և սողանքի լեզվակային հատվածի հողապատնեշում
- 5) Գրունտային ջրի հետ ոչ ճիշտ վարվեցողություն
- 6) Ջրամբարի լիճկապ
  - ա) Սկզբնական լիճկապ
  - բ) ջրամբարի ջրի մակարդակի արագ նվազեցում
- 7) Երկրաշարժ և հրաբխային ակտիվություն

### **3.2.7 Հետագա ակտիվության կանխատեսում**


Միայն տեղանքի հետախուզությամբ իրականում դժվար է գնահատել հետագա ակտիվությունը: Ընդհանուր առմամբ, սահքի մակերևույթի միաձև գրադիենտով ապարի սահքը կամ հողմնահարված ապարի սահքը ցույց է տալիս սահքի մեծ հավանականություն:

### **3.2.8 Սողանքի ակտիվացման հետևանքով առաջացած վնասի տարածքի կամ աստիճանի կանխատեսում**

Եթե վերոնշյալ հետազոտության արդյունքները ցույց են տալիս սողանքի



ակտիվացման մեծ հավանականություն, անհրաժեշտ է ձեռնարկել անհապաղ արձագանքում (օրինակ՝ ազդարարման և տարահանման համակարգի ստեղծում)՝ գնահատելով հնարավոր վնասների տարածքը: Հնարավոր վնասի տարածքը պետք է որոշվի՝ ուշադրություն դարձնելով սողանքային գոտու ընդարձակմանը դեպի վերին լանջ: Անհրաժեշտ է նաև սահմանել հնարավոր վնասի տարածքը՝ հաշվի առնելով փլուզված նյութերից սելավի առաջացման հնարավորությունը, սողանքի պատվարների ստեղծումը և սողանքի պատվարների փլուզման հետևանքով վարարումը, ինչպես ցույց է տրված նկար 2-ում:



Նկար 2 Սողանքի հնարավոր վնասի տարածք

### 3.2.9 Արտակարգ միջոցառումների ուսումնասիրություն

Եթե տեղանքի հետախուզության արդյունքում հստակեցվում է սողանքի առաջացման և շարժի մեխանիզմն ու կանխատեսվում է ակտիվությունը, անհրաժեշտ է ստեղծել մոնիթորինգի, տարահանման և արտակարգ միջոցառումների համակարգ: Հրատապ հետազոտության պլանը, ներառյալ՝ իրական ժամանակում մոնիթորինգի համակարգը կպատրաստվի ըստ անհրաժեշտության:

## 4. Մանրամասն հետազոտություն

### 4.1 Ուրվագիծն ու նպատակը

Մանրամասն հետազոտությունն իրականացվում է նախնական և հիմնական հետազոտության արդյունքները հաստատելու, ինչպես նաև սողանքի առաջացման և շարժի մեխանիզմը հստակեցնելու համար: Մանրամասն հետազոտության ժամանակ, ըստ անհրաժեշտության, իրականացվում են՝ (1) տեղագրական հանույթ, (2) երկրաբանական հետազոտություն, (3) սահքի մակերևույթի հետազոտություն, (4) գրունտի մակերևույթի շարժի հետազոտություն, (5) գրունտային ջրի հետազոտություն և (6) գրունտի թեստեր:

Քանի որ սողանքի վերլուծություն իրականացվում է սողանքի յուրաքանչյուր բլոկի համար, անհրաժեշտ է բաժանել սողանքային տարածքը մի քանի շարժվող բլոկների մանրամասն հետազոտության պլան պատրաստելու համար:

Հարցերը, որոնք պետք է հստակեցվեն մանրամասն հետազոտության ժամանակ, և հետազոտության կետերը բերված են Աղյուսակ 1-ում: Աղյուսակ 1-ում նշված բովանդակությունը պետք է գնահատվի նախնական և հիմնական հետազոտության փուլերում, և յուրաքանչյուր հետազոտությունը պետք է կատարվի դրա անհրաժեշտությունը ուսումնասիրելուց հետո: Քանի որ մանրամասն հետազոտության արդյունքները հանդիսանում են տվյալներ սողանքի մեխանիզմի վերլուծության համար, անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչ տեսակի վերլուծություն պետք է արվի մանրամասն հետազոտության պլանի պատրաստման ժամանակ:

Աղյուսակ 2-ը ցույց է տալիս հետազոտության կետերի ստանդարտները և բովանդակությունը: Անհրաժեշտ է ընտրել հետազոտության ճիշտ կետեր, քանի որ կետերը տարբերվում են՝ կախված իրավիճակից, ինչպես օրինակ՝ որոշ հետազոտություններ իրականացվել են կամ պահանջվում են արտակարգ միջոցառումներ:

Աղյուսակ 2.1 Մանրամասն հետազոտության ժամանակ հստակեցման ենթակա կետեր և բովանդակություն

Մանրամասն հետազոտության կետեր	Տեղագրական համայնք	Երկրաբանական հետազոտություն	Սահքի մակերևույթի հետազոտություն	Գրունտի շարժի հետազոտություն	Գրունտային ջրի հետազոտություն	Գրունտի թեստեր	Շրջակա միջավայրի հետազոտություն
1	Սողանքի տեսակը՝ էլնելով գեոմորֆոլոգիայից, երկրաբանությունից և այլն	○	○				
2	Թույլ գոտիները երկրաբանական կառուցվածքների տեսանկյունից	○	○				
3	Շարժվող բլոկների բաժանում և ընդարձակման հավանական տարածք	○			○		
4	Յուրաքանչյուր շարժվող բլոկի վիճակը			○	○		
5	Սողանքի զանգվածի տարածքն ու ծավալը	○		○			
6	Սահքի մակերևույթի ձևն ու տեղադրությունը		○	○			
7	Գրունտային ջրի բաշխվածությունն ու հոսքի իրավիճակը				○		
8	Մեխանիկական հատկությունների պարամետրերը և այլն		○			○	
9	Սողանքային տարածքի էկոլոգիական վիճակը	○					○


#### **4.1.1 Շարժվող բլոկների բաժանում**

Սողանքի զապման պլանը պատրաստված է յուրաքանչյուր շարժվող բլոկի համար՝ որպես մեկ զանգվածի, իսկ վերլուծությունն արվում է յուրաքանչյուր բլոկի համար ընդհանուր առմամբ: Մանրամասն պլանի պատրաստման համար անհրաժեշտ է բաժանել սողանքային տարածքը մի քանի շարժվող բլոկների՝ էլնելով նախնական և հիմնական հետազոտությունների արդյունքներից:

Շարժվող բլոկների տարածքը պետք է որոշվի՝ հաշվի առնելով գեոմորֆոլոգիան, երկրաբանությունը և կանխատեսվող վնասները: Շարժվող բլոկները հայտնաբերվում են՝ ելնելով միկրո-գեոմորֆոլոգիայից և շարժի վիճակից, իսկ բլոկի միավորը սկարպով և ձգվածությունից առաջացած ճաքերով շրջապատված տարածքն է:

#### 4.1.2 Հետազոտության գծի սահմանում

Հետազոտության գիծը սահմանվում է յուրաքանչյուր բլոկի համար, որը հիմք է հանդիսանում երկրաբանական և գրունտային ջրի հետազոտությունների կետերը սահմանելու համար: Ընդարձակ սողանքի դեպքում, սահմանվում են հետազոտության մի քանի գծեր:



Նկար 3 Հետազոտության գծերի սահմանում

Հիմնական գիծը սահմանվում է հարմար վայրում երկրաբանության, երկրաբանական կառուցվածքների, գրունտային ջրի բաշխվածության և սահքի մակերևույթի հստակեցման համար: Քանի որ հիմնական գծի երկայնքով կտրվածքը օգտագործվում է կայունության երկչափ վերլուծության համար, հիմնական գիծը պետք է սահմանվի սողանքի շարժի ուղղությունը զուգահեռ: Եթե շարժի ուղղությունը տարբեր է լանջի վերին և ստորին հատվածների միջև, հիմնական գիծը կարտահայտվի կետագծերով (երկու ուղիղ գծերի կոմբինացիա):

Եթե պահանջվում է հստակեցնել երկրաբանության կողային ընդլայնումը և գրունտային ջրի վիճակը, հիմնական գծին զուգահեռ կսահմանվի ենթագիծ: Եթե սողանքի լայնությունը 100մ է կամ ավել, պետք է հաշվի առնել հիմնական գծի երկու կողմերում ենթագծերի սահմանումը՝ մոտ 50մ ինտերվալով:

#### 4.2 Տեղագրական հանույթ

Տեղագրական հանույթն իրականացվում է տեղագրական քարտեզների պատրաստման համար: Սողանքի բլոկը հայտնաբերելու համար տեղագրական քարտեզների մասշտաբները պետք է լինեն 200մ երկարությամբ սողանքի համար՝ 1/500, 200մ-ից ավել սողանքների համար՝ 1/1,000 – 1/3,000: Շատ մեծ սողանքի համար կպատրաստվեն ավելի փոքր մասշտաբով տեղագրական քարտեզներ, իսկ մանրամասն քարտեզները կպատրաստվեն կարևոր մասերի համար: Օբյեկտները, որոնք պետք է ցույց տրվեն տեղագրական քարտեզների վրա հետևյալ են.

- տներ, ճանապարհներ, այլ կառուցվածքներ, գետ, ներառյալ՝ փոքր լեռնագոգերը, փլուզված տարածքները, աղբյուրի կետերը, խոնավ հողատարածությունների ճաքերը, սկարպերը, գյուղատնտեսական դաշտերը և այլն:

Խորհուրդ է տրվում, որպեսզի քարտեզները ընդգրկեն ընդարձակ տարածք, ներառյալ՝ անցած սողանքները, որպեսզի հնարավոր լինի հստակեցնել շրջակա տարածքի և վերին լանջերի պայմանները:

Քանի որ տեղագրական քարտեզները հանդես կգան որպես հիմնական քարտեզ, որը կօգտագործվի երկար ժամանակ հետազոտության և կանխարգելիչ միջոցառումների պլանավորման համար, քարտեզների տարածքը և մասշտաբը պետք է մանրագնիս որոշվի: Պետք է նշել, որ մանրամասն գեոմորֆոլոգիական հատկությունները ցույց չեն տրվում օդալուսանկարներից պատրաստված տեղագրական քարտեզների վրա: Վերջերս, տեղագրական քարտեզները պատրաստվում են լազերային պրոֆիլով, և կա դեպք, երբ հնարավոր է եղել հայտնաբերել մանրամասն գեոմորֆոլոգիական հատկությունները քարտեզների վրա:

### **4.3 Երկրաբանական հետազոտություն**

Երկրաբանական հետազոտությունն իրականացվում է հստակեցնելու համար երկրաբանությունը, գրունտի հատկությունները և սահքի մակերևույթի պայմանները: Երկրաբանական հետազոտության հիմնական բաղադրիչը հորատման հետազոտությունն է, իսկ սեյսմիկ հետախուզությունը, էլեկտրահետախուզությունը և բնական ռադիոակտիվության հետախուզությունը կիրականացվեն ըստ անհրաժեշտության: Տեղանքի հետախուզությունը կրկին կկատարվի սողանքային տարածքում երկրաբանության և երկրաբանական կառուցվածքների հետագա հստակեցման, ինչպես նաև սահքի մակերևույթի խորության և ձևի գնահատման համար:

Երկրաբանական հետազոտության մեջ պետք է հստակեցվեն հետևյալ հարցերը.

- Թույլ շերտերի բաշխվածությունը, որոնք, կարծես, ունեն կապ սողանքի շարժի և սահքի մակերևույթի հետ
- Երկրաբանական շերտերը, որոնք, կարծես, ունեն դիմադրության ուժ կամ կրողունակություն, և վերահսկում են սողանքի շարժի տարածքը

#### **4.3.1 Հորատման հետազոտություն**

Հորատման հետազոտությունն իրականացվում է անմիջապես գրունտից նմուշներ վերցնելու համար՝ սահքի մակերևույթը, երկրաբանությունը և երկրաբանական կառուցվածքները հստակեցնելու նպատակով: Հիմնականում վերցվում են հորատհանուկի նմուշները, և որոշվում է հորատանցքերի տրամագիծը՝ հաշվի առնելով հորատանցքում կատարվելիք հետևյալ հետազոտությունները.

- ա) Սահքի մակերևույթի հետազոտություն (Հետազոտություն խողովակային տենզոմետրի, հորատանցքի թեքաչափի և հորատանցքի էքստենզոմետրի

միջոցով, ինչպես նաև հորատանցքի պատի դիտարկում հորատանցքի տեսախցիկի/վիդեոյի միջոցով)


- բ) Գրունտային ջրի հետազոտություն (Գրունտային ջրի մակարդակի չափում, գրունտային ջրի գրառում, ծակոտկենային ճնշման չափում, գրունտի ջերմաստիճանի չափում, պոմպով արտամղման թեստ, էլեկտրահետախուզություն, հետախուզության այլ տեսակներ)

#### **(1) Հորատման հետազոտության գծերի կարգավորումը և երկարությունը**

Հորատման հետազոտությունը հիմնականում պլանավորված է սողանքի տարածքում՝ երեք հորատանցքերում, և սողանքի տարածքից դուրս՝ մեկ հորատանցքում հիմնական հետազոտության գծի վրա: Փոքրամասշտաբ սողանքի համար հորատանցքերի քանակը կարող է նվազեցվել երկուսի: Հորատումը նույնպես իրականացվում է ենթագծերի վրա, որտեղ հորատանցքերի ինտերվալը 50մ – 100մ է: Լրացուցիչ հորատում պլանավորվում է, եթե գոյություն ունեն ճաքճքվածության գոտիներ, բարդ երկրաբանական կառուցվածքներ կամ սահքի մակերևույթի անհարթ ձև: Հորատանցքերից մեկը կլինի երկար՝ մինչև կայուն արմատական ապարը, խորությունը հաստատելու համար:

Եթե սողանքի բլոկի հաստությունը չի կարող գնահատվել նախքան հորատման հետազոտությունը, հորատանցքերի երկարությունը կլինի սողանքի բլոկի լայնության մոտ 1/3-ը, իսկ հետո հաջորդող հորատանցքերի երկարությունը կհամապատասխանեցվի՝ ելնելով նախորդ հորատման արդյունքներից:

Նկար 4-ը ցույց է տալիս մի քանի բլոկներից բաղկացած սողանքի վրա հորատանցքերի դասավորվածության օրինակը: Փոքր սողանքի շատ դեպքերում հորատումը իրականացվում է միայն հետազոտության հիմնական գծի վրա: Մեծ սողանքի դեպքում հորատման հետազոտությունը մի քանի փուլերով տևում է ավելի քան մեկ տարի: Սողանքի մեխանիզմի վերլուծությունը իրականացվում է առաջին փուլի հորատումից հետո, և հետազոտության պլանը հարմարեցվում է համապատասխանաբար: Հետևաբար, հորատման հետազոտությունը միշտ չի ընթանում այնպես, ինչպես նախապես պլանավորվել է: Պետք է որոշվեն հորատանցքերի տեղադրությունները՝ վստահելի պրոֆիլներ, կտրվածքներ, սահքի մակերևույթի կոնտուրային քարտեզ, գրունտային ջրի կոնտուրային քարտեզ և այլն պատրաստելու համար:



## (2) Հետազոտության տվյալների մշակում

Հորտուման հետազոտության տվյալների մշակման մեջ երկրաբանության, գրունտի պայմանների, սահքի մակերևույթի հստակեցման համար անհրաժեշտ դիտարկման արդյունքները ցույց են տրվում հորատման գրանցամատյաններում: Հորատման գրանցամատյաններում նկարագրվող հիմնական կետերն են երկրաբանության և գրունտի պայմանների դիտարկման արդյունքները, հորատումների, հորատման օրական աշխատանքներից առաջ և հետո հորատանցքում գրունտային ջրի մակարդակի և հորատհանուկի հանման վերաբերյալ գրառումները: Հորատհանուկի ժայռային հատվածների համար պետք է դիտարկվեն և գրառվեն հողմահարման պայմանները, ճաքերի անկյունը, շերտավորման/թերթաքարության անկյունը և ճաքերի խտությունը: Հորատհանուկի դիտարկումը պետք է իրականացվի փորձառու ինժեներների համար: Հորատհանուկի նմուշները հորատհանուկի արկղերում դասավորելուց հետո, հորատհանուկի լուսանկարները պետք է արվեն ստանդարտ գունավոր դիագրամայով: Հորատման գրանցամատյանի օրինակը ցույց է տրված **Նկար 4**-ում:

**Նկար 4** Հորատման գրանցամատյանի օրինակ

## (3) Հորատանցքերի հետազոտությունները

Հորատման ընթացքում հորատանցքում անցկացվում են մի քանի թեստեր այն հատվածներում, որտեղ շրջապահ խողովակներ չեն տեղադրվել: Թեստերի ցանկը ցույց է տրված **Աղյուսակ 1**-ում: Թեստի արդյունքներն օգտագործվում են գրունտի հատկությունների քանակական գնահատման համար՝ կանխարգելիչ միջոցառումների նախագծման, ներթափանցման վերլուծության, լարվածության/դեֆորմացիայի վերլուծության (FEM) և այլնի նպատակով:

**Աղյուսակ 1** Հորատանցքում իրականացվող թեստերի ցանկը

Հորատանցքի ստորոտի՝ տեղում կատարվող թեստ	Դինամիկ թեստ	Ստանդարտ թափանցելիության թեստ, Լայնամասշտաբ թափանցելիության թեստ
	Ստատիկ թեստ	Ծանրաբեռնելով թեստ, Սահքի ուժի որոշման թեստ, Օղակաձև սահքի թեստ
Հորատանցքի պատի՝ տեղում կատարվող թեստ	Ստատիկ թեստ	Կողային բեռնվածությամբ թեստ, Սահքի ուժի որոշման թեստ
	Սահքի մակերևույթի հետազոտություն	Խողովակի տենզոմետր, Թեքաչափ, Էքստենզոմետր, Բազմաշերտ էքստենզոմետր, Սողքի հորի դիտարկում
Տեղում կատարվող այլ թեստեր		Լարվածության չափում, Էլեկտրահաղորդականության չափում
Հորատանցքերի պատերի դիտարում		Հորատանցքային տեսախցիկ կամ վիդեո
Ֆիզիկական թեստեր	Արագության հետախուզություն	P-ալիքի հետախուզություն, PS հետախուզություն
	Էլեկտրահետախուզություն	Էլեկտրահաղորդականության հետախուզություն, Ինքնաբոլս պոտենցիալի հետախուզություն
	Ռադիոակտիվության հետախուզություն	Բնական ռադիոկտիվության հետախուզություն, Խտության հետախուզություն, նեյտրոնի հետախուզություն
	Այլ	Հորատանցքի տրամագծի չափում, Ջերմաստիճանի չափում, Հորատանցքի թեքման չափում
Գրունտային ջրի չափում	Գրունտային ջրի մակարդակ/ ճնշման չափում	Հորատանցքերում ջրի մակարդակի չափում, Ծակոտկենային ճնշման չափում
	Տեղում թափանցելիության թեստ	Հորատման մեթոդ, Խողովակի մեթոդ, պիեզոչափի մեթոդ
	Պոմպով արտամղման թեստ	Եզակի հորատանցքի մեթոդ, Դիտահորի մեթոդ
	Գրունտային ջրի թեստ ապարներում	Աղբյուրի ջրի ճնշման թեստ, Լուգեոնի թեստ
	Այլ	Գրունտային ջրի հետախուզություն, Ջրի որակի թեստ, Հոսքի արագության և ուղղության չափում

**4.3.2 Սեյսմիկ հետախուզություն**

Սեյսմիկ հետախուզության նպատակն է հստակեցնել երկրաբանական շերտերի բաշխվածությունը՝ շերտերում սեյսմիկ ալիքի արագության չափման միջոցով: Սողանքի հետազոտության համար այս հետախուզությունը հատկապես օգտակար է լայնամասշտաբ սողանքում երկրաբանական շերտերի բաշխվածությունը գնահատելու համար: Այնուամենայնիվ, այլ շերտերի մեջ ներառված թույլ շերտերը կարող են հայտնաբերվել սեյսմիկ հետախուզության միջոցով, քանի որ հետախուզության պայմանն այն է, որ երկրաբանական շերտերը ավելի մեծ խորությունների վրա դառնում են ավելի պինդ:

Սեյսմիկ հետախուզության մեթոդները հետևյալն են.

- Անդրադարձվող ալիքների մեթոդ
- Բեկված ալիքների մեթոդը ծանծաղ գրունտում
- Միկրոցնցման մեթոդ

Հայտնի է, որ սեյսմիկ արագության և երկրաբանության միջև գոյությունի ունի հետևյալ կապը.

- i) Ընդհանուր առմամբ, բարձր արագությամբ երկրաբանությունն ունի բարձր սեղմման դիմադրություն, և այս միտումը երևում է նաև նույն տեսակի ապարների շրջանում:

- ii) Հողմնահարված ապարները ցույց են տալիս ցածր արագություն, և ինտենսիվ հողմնահարումը հանգեցնում է ավելի ցածր արագության:
- iii) Ինտենսիվ ճեղքավորումը հանգեցնում է ավելի ցածր արագության:
- iv) Ավելի ցածր կոնսոլիդացումը հանգեցնում է ավելի ցածր արագության:

### **4.3.3 Բնական ռադիոակտիվության հետախուզություն**

Ռադիոակտիվ տարրը, ինչպես օրինակ ուրանը, և տրիտիումի շարքի տարրերը պարունակվում են գրունտում ապարների մեջ, իսկ իներտ գազերը, օրինակ՝ ռադոնն ու տորոնը, առաջանում են ռադիոակտիվ տարրերի մշտական տրոհման գործընթացում: Իներտ գազերը, որոնք նույնպես ռադիոակտիվ տարրեր են, ցրվում են գրունտի մեջ՝ անցնելով խզվածքների և ճաքճքված գոտիների միջով: Այն տարածքները, որտեղ այս ցրված գազերն ավելի շատ են, կարող են համարվել խզվածքների և ճաքճքված գոտիների հնարավոր տարածքներ:

### **4.3.4 Էլեկտրահետախուզություն**

Գույություն ունի էլեկտրահետախուզության երկու մեթոդ: Դրանցից մեկը էլեկտրահաղորդականության մեթոդն է, որը չափում է գրունտի էլեկտրական յուրահատկությունների փոփոխությունը՝ առաջացնելով արհեստական էլեկտրական հոսանք, իսկ մյուսը ինքնաբուխ պոտենցիալի մեթոդն է, որը չափում է բնականորեն առաջացած էլեկտրական պոտենցիալը գրունտի մեջ:

Չնայած էլեկտրահաղորդականության մեթոդն օգտագործվում է ընդհանրապես սողանքի հետազոտության համար, չափված էլեկտրական յուրահատկությունները տարբերվում են նույնիսկ նույն շերտում՝ կախված ջրի պարունակությունից: Հետևաբար, դժվար է դատողություններ անել շերտերի վիճակների վերաբերյալ՝ ելնելով միայն հետախուզության արդյունքներից. անհրաժեշտ է գնահատել վիճակը հետազոտության այլ արդյունքների, օրինակ՝ հորատման հետազոտության արդյունքի հետ միասին:

## **4.4 Սահքի մակերևույթի հետազոտություն**

Սահքի մակերևույթի հետազոտությունն իրականացվում է մակերևույթը հայտնաբերելու համար՝ հորատման արդյունքների բազմակողմանի ստուգման և խողովակի տենզոմետրով, հորատանցքի թեքաչափով, հորատանցքի էքստենզոմետրով, բազմաշերտ տեղաշարժը չափող սարքի և սողքի հորի չափումների միջոցով:

### **4.4.1 Հստակեցումներ հորատման հետազոտության ժամանակ**

#### **(1) Հստակեցում հորատման ժամանակ**


Ակտիվ սողանքի տարածքում սահքի մակերևույթի խորությունը հայտնաբերվում է այնպիսի իրավիճակում, երբ հորատանցքը թեքվում է հորատման ժամանակ, շփում է տեղի ունենում նույն խորության վրա հորատահանուկի խողովակը մտցնելիս և հանելիս և վերցվում է կիսալուսնաձև հորատահանուկի նմուշ:



**(2) Հստակեցումներ հորատհանուկի դիտարկմամբ**

Սահքի մակերևույթը հստակեցվում է՝ ելնելով հորատհանուկի նմուշների դիտարկումից: Պետք է դիտարկել հորատհանուկի գույնը, ձևը, ճաքերի ինտերվալը, հողմնահարվածությունը և կավային լցանյութերը և այլն: Հայտնի է, որ ինտենսիվ ճաքճքվածություն է առաջանում սահքի մակերևույթի վրա և շուրջը: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի հատուկ պայմաններին, ինչպիսիք են՝ հայելային մակերևույթը, շերտավորությունը և փայտե կտորների ներառվածությունը:

Նկար 5-ում պատկերված են գրունտի յուրահատկությունները: Սահքի մակերևույթը դարձել է կավային, քիչ թափանցելի և մզեցված, մինչդեռ շարժվող զանգվածը բաղկացած է մեծ թափանցելիություն ունեցող թխավուն նյութերից: Նշվում է, որ վերոնշյալ յուրահատկություններն ընդհանուր են և տարբերվում են որոշակի վայրում (կախված նրանից, արդյոք վերին, թե ստորին հատվածում է):

Գրունտի մակերևույթ	Ճաքեր	Գրունտային ջրի մակարդակ	Շարժի արագություն	Շարժի ձև	Գույն	Թափանցելիություն	Փոփոխություն
Շարժվող զանգված	Խիտ		Բարձր	Անդյուրաթեք	Թխավուն	Բարձր	Թթվայնացված
Սահքի մակերևույթ	Խիտ		Միջին	Հեղուկային	Մուգ	Ցածր	Նվազեցված
Հիմք	Նոսր		Չկա	Կայուն	Օրիգինալ	0-ից մինչև ցածր	Չփոփոխված

Նկար 6 Սողանքի նյութերի յուրահատկությունները

Հորատհանուկի նմուշի դիտարկման միջոցով սահքի մակերևույթի հստակեցման նպատակով ստուգման ենթակա կետերը հետևյալն են.

- 1) Թույլ կավային շերտի առկայությունը
- 2) Բեկորային նստվածքների ստորին սահմանը
- 3) Հողմնահարված ապարների կամ արմատական ապարի վերին սահմանը
- 4) Տարբեր տեսակի ապարների սահմանը
- 5) Թույլ միջնաշերտ կամ ճաքճքված գոտի ապարներում
- 6) Նստվածքային կառուցվածքների խախտում նստվածքային ապարներում
- 7) Կապը սողանքի մասշտաբի և ձևի միջև


**4.4.2 Հստակեցում սահքի մակերևույթը հայտնաբերող խողովակի միջոցով**

Սահքի մակերևույթի խորությունը կարող է հստակեցվել հետևյալ ձևով (տես նկար 6):

- Անմիջապես հորատանցքը պատրաստելուց հետո, հորատանցքի մեջ տեղադրվում է կարճ խողովակ: Որոշ ժամանակ անց խողովակը վեր է ձգվում և

խրվում սահքի մակերևույթի խորության մեջ:

- Բացի դրանից, կարճ խողովակ է տեղադրվում հորատանցքի մեջ և սեղմվում ներքև, որը, հետո, խրվում է սահքի մակերևույթի խորության մեջ:



Նկար 7 Սահքի մակերևույթի հայտնաբերում կարճ խողովակներում

#### 4.4.3 Հստակեցում խողովակի տենզոմետրի միջոցով

Խողովակի տենզոմետրի օգնությամբ կարող ենք հայտնաբերել հորատանցքի ամբողջ երկարության ձևախախտումը, չնայած տենզոմետրի կյանքի տևողությունը մոտ 1-2 տարի է: Խողովակի տենզոմետրը բաղկացած է 1 մետրանոց ՊՎՔ (պոլիվինիլ քլորիդ) խողովակներից, և յուրաքանչյուր 1մ խողովակի հակառակ կողմի վրա տեղադրված է երկու տենզոմետրից կազմված մեկ կամ երկու հավաքածու: Մի տենզոմետրը տեղադրված է ՊՎՔ խողովակի վրա սահքի ուղղության կողմում, իսկ մյուսը՝ ՊՎՔ խողովակի հակառակ կողմի վրա, ինչպես ցույց է տրված **նկար 8**-ում: Եթե սահքի ուղղությունը հայտնի չէ, ՊՎՔ խողովակի վրա տեղադրվում է 4 տենզոմետր՝ 90 աստիճան հատվող անկյուններով:




**Նկար 8** Տենզոմետրի փակ տեսքը

Տենզոմետրը հորատանցքի մեջ տեղադրելուց հետո, հորատանցքի պատի և տենզոմետրի միջև տարածությունը պետք է լցվի ավազով կամ ցեմենտաշաղախով: Ընդհանուր առմամբ, չափումն իրականացվում է շաբաթը մեկ անգամ, իսկ չափման

ինտերվալը կարող է համապատասխանեցվել, այսինքն՝ կարճացվել կամ երկարացվել՝ կախված շարժի աստիճանից:

Տենզոմետրի տեղադրումից հետո անհրաժեշտ է ժամանակ, որպեսզի տենզոմետրը գրունտի մեջ հարմարեցվի: Ընդհանուր առմամբ, չափման գրառումները օգտագործվում են վերլուծության համար տեղադրման օրվանից սկսած մեկ կամ ավել շաբաթ հետո: Գրառումները մշակվում են, և արդյունքը ցույց է տրվում ընդհանուր (գումարային) լարվածության գրաֆի վրա, ինչպես ցույց է տրված նկար 9-ում: Սահքի մակերևույթի հստակեցման համար չափանիշները ցույց են տրված աղյուսակ 4-ում: Եթե արդյունքը ցույց է տալիս լարվածության բավականին մեծ արժեք առանց լարվածության կուտակման, դա չի համարվում սահքի մակերևույթ: Մյուս կողմից, լարվածության կուտակմամբ լարվածության փոքր արժեքի արդյունքը համարվում է հնարավոր սահքի մակերևույթ, որը պահանջում է մոնիթորինգի հետագա շարունակություն:



Նկար 9 Ընդհանուր (գումարային) լարվածության գրաֆ


Աղյուսակ 4 Սահքի մակերևույթի հստակեցման համար չափանիշներ խողովակի լարվածության չափման միջոցով

Ընդհանուր (գումարային) լարվածություն (μ լարվածություն /ամիս)	Կուտակման աստիճանը	Սահքի մակերևույթի առկայության հնարավորություն գեոմորֆոլոգիական և երկրաբանական տեսանկյուններից	Դատողություն	Սահքի հնարավոր ձև
5,000 կամ ավել	Հստակ	Գոյություն ունի	Հաստատ	Ակտիվ
1,000 - 5,000	Բավականին հստակ	Գոյություն ունի	Գրեթե հաստատ	Դանդաղ կամ սողք
100 – 1,000	Որ հստակ	Գոյություն ունի	Հնարավոր	Պահանջում է հետագա մոնիթորինգ
1,000 կամ ավել	Չկա	Չկա	Չկա	Ցածր հնարավորություն


#### 4.4.4 Հստակեցում հորատանցքի թեքաչափի միջոցով

Հորատանցքի թեքաչափով չափման համար հորատանցքի մեջ տեղադրվում են չորս ակոսային գծերով պաշտպանիչ խողովակներ, ապա հորատանցքի թեքաչափը տեղադրվում է պաշտպանիչ խողովակների հետ և շարժվում ներքև ու վերև

պաշտպանիչ խողովակների թեքությունը չափելու համար, ինչպես ցույց է տրված **նկար 10**-ում: Չնայած չափումը դառնում է անհնարին, երբ խողովակների թեքվածությունը մեծանում է, այնուամենայնիվ հնարավոր է շարունակաբար չափել խողովակների թեքվածությունը հորատանցքում: Ընդհանուր (գումարային) թեքվածության գրաֆի օրինակը ցույց է տրված **նկար 11**-ում:



**Նկար 10** Թեքաչափի մանրամասներ




**Նկար 11** Ընդհանուր (գումարային) թեքվածության գրաֆ

Գրաֆի վրա արդյունքը ցույց է տրվում հորատանցքի ստորոտից սկսած ամբողջի արժեքը: Սահքի մակերևույթի հստակեցումն արվում է չափման այլ արդյունքների հետ միասին: Ճշտության տեսանկյունից ջերմաստիճանը կարող է ազդել թեքաչափի տվիչի վրա: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է, որպեսզի չափումը սկսվի տվիչը՝ որոշ ժամանակ հորատանցքում պահելուց հետո, մինչև որ տվիչի ջերմաստիճանը և հորատանցքի ներսի ջերմաստիճանը լինեն նույնը:

**4.4.5 Հստակեցում հորատանցքի էքստենզոմետրով**

Հորատանցքի էքստենզոմետրերը չափում են գրունտի տեղաշարժը՝ տեղադրելով լարը սահքի մակերևույթի վերին և ստորին մասերում: Ընդհանուր առմամբ, լարի մի ծայրը ամրացվում է հորատանցքի ստորոտին, իսկ մյուսը՝ միանում է գետնի վրա տեղադրված տվիչին, ինչպես ցույց է տրված **նկար 12**-ում: Սողանքի գլխամասի շուրջը տեղադրված հորատանցքի էքստենզոմետրը կարող է հայտնաբերել գրունտի նստեցման հետևանքով առաջացող սեղմվող շարժը:




**Նկար 12** Հորատանցքի էքստենզոմետրի ընդհանուր հատկությունները


**4.4.6 Բազմաշերտ էքստենզոմետրի հստակեցում**

Բազմաշերտ էքստենզոմետրը օգտագործվում է այնպիսի դեպքերի համար, երբ սահքի մակերևույթի խորությունը հստակ չէ, երբ կարող են գոյություն ունենալ մի քանի սահքերի մակերեսներ և այլն: Հորատանցքի մեջ տեղադրվում է մի քանի լար, որոնք ամրացվում են մի քանի խորությունների վրա չափման համար՝ միացնելով լարերը գետնի վրա տեղադրված տվիչին, ինչպես ցույց է տրված **նկար 13**-ում: Չափող արկղը

բաղկացած է հենակի վրա տեղադրված մի գույգ ճախարակից և սանդղակից յուրաքանչյուր լարի համար՝ յուրաքանչյուր լարի ձգվածությունը չափելու համար, ինչպես ցույց է տրված նկար 14-ում:



Նկար 13 Բազմաշերտ էքստենզոմետրի ընդհանուր հատկությունները




Նկար 14 Բազմաշերտ էքստենզոմետրի չափման մաս

#### 4.4.7 Հստակեցում սողքի հորով

Սողանքի տարածքում փորվում է հոր՝ երեսպատելով մետաղյա թիթեղներով մինչև կայուն հիմքը: Հորն ավարտելուց հետո երեսպատման թիթեղները վերին և ստորին թիթեղների հետ միացնող գնդերիթները հեռացվում են, որպեսզի 10սմ – 50սմ բարձրությամբ գլանաձև երեսպատման թիթեղները մեկուսացվեն միմյանցից: Սահքի մակերևույթի երկայնքով տեղաշարժը կարող է հայտնաբերվել որպես բացակ գլանաձև երեսպատման երկու թիթեղների միջև, ինչպես ցույց է տրված նկար 15-ում: Սահքի

մակերևույթի ուղղակի դիտարկումը և սահքի մակերևույթի նյութերի նմուշառումը հնարավոր են սողքի հորում:



Սկար 15 Սողքի հորով չափման պատկերը

#### 4.4.8 Չափող սարքերի յուրահատկությունները

Չափող սարքերի յուրահատկությունները ցույց են տրված Աղյուսակ 7-ում, չնայած արժեքները ստանդարտ են և կախված են կոնկրետ արտադրանքից: Բարձր ճշտությամբ և մեծ դիապազոնով սարքը կարող է չլինել լավագույն սարքը, քանի որ համապատասխան ընտրության համար կարևոր գործոններ են չափման տևողությունը, տեղադրման հեշտությունը, ամրությունը, ձյան և ջերմաստիճանի անբարենպաստ ազդեցությունը, արժեքը և այլն:

Աղյուսակ 7 Չափող սարքերի յուրահատկությունները

	Չափման կետեր		Սահքի մակերևույթի տեղաշարժը	
	Սահքի մակերևույթի վայրը (խորությունը)		Ճշտության աստիճանը	Չափման ենթակա առավելագույն տեղաշարժը օ
	Հեռավորությունը չափման կետերի միջև	Չափման շերտի ընդհանուր հաստությունը		
Խողովակի տեղադրմանը	1.0 մ	մոտ 50 մ	(պետք է ենթադրվի անուղղակիորեն)	
Հորատանցքի թեքաչափ	0.5 մ	մոտ 50 մ	1.0 մ	մոտ 10 սմ
Հորատանցքի էքստենզիոմետր	(Չափման ենթակա չէ)		-	մոտ 200 սմ
Բազմաշերտ էքստենզիոմետր	1.0 մ	մոտ 30 մ	-	մոտ 200 սմ
Սողքի հոր	0.1 մ - 0.5 մ	մոտ 20 մ	10.0 մմ	մոտ 100 սմ

#### 4.5 Գրունտի մակերևույթի շարժի հետազոտություն

Գրունտի մակերևույթի շարժի հետազոտության նպատակն է հստակեցնել սողանքի առաջացման և շարժի մեխանիզմը՝ վերգետնյա էքստենզիոմետրի, վերգետնյա թեքաչափի, գրունտի հետազոտության, ԳԴՀ հետազոտության և այլնի օգնությամբ՝ գետնի մակերևույթին ճաքերը, իջվածքը, բարձրացումը և այլն չափելու միջոցով:

Հետազոտության նպատակներն ու մեթոդները բերված են Աղյուսակ 8-ում:


**Աղյուսակ 8** Գրունտի մակերևույթի հետազննության նպատակներն ու մեթոդները

	Հետազննություն	Վերգետնյա թեքաչափ	Վերգետնյա էքստենզոմետր
Հիմնական հետազոտության և մանրամասն հետազոտության փուլեր	- Տարածքի, ուղղության և շարժի հեռավորության հստակեցում	- Շարժի տարածքի հստակեցում	- Շարժի տարածքի հստակեցում - Շարժի իրավիճակի հստակեցում (կապը կլիմայական պայմանների հետ)
Կանխարգելիչ միջոցառումների իրականացման փուլ	- Ապահովության կառավարում - Շինարարության կառավարում - Շարժի իրավիճակի հստակեցում		
Կանխարգելիչ միջոցառումների իրականացումից հետո	- Մոնիթորինգ պահպանման համար		

#### 4.5.1 Հետազոտություն վերգետնյա էքստենզոմետրով

Վերգետնյա էքստենզոմետրը չափում է սողանքի շարժի հետևանքով առաջացած ճաքի կամ աստիճանի երկու կողմերում գտնվող երկու կետերի միջև հեռավորությունը: Նախընտրելի է տեղադրել երկու կետերը հետազոտության գծի վրա՝ շարժի ուղղությանը զուգահեռ: Վերգետնյա էքստենզոմետրը ավտոմատ շարունակաբար գրանցում է հեռավորությունը: Խորհուրդ է տրվում կատարել չափումներ ավելի քան մեկ տարի՝ տեղումների և սողանքի ակտիվացման միջև կապը հստակեցնելու համար:


**Նկար 16**-ում բերված են վերգետնյա էքստենզոմետրի ընդհանուր հատկությունները: Ձողը, որին ամրացվում է ինվարի լարի ստորին ծայրը, պետք է լինի բավականին ամուր և ներթափանցի մինչև ամուր գրունտը: Ինվար լարի երկարությունը, սովորաբար, 15մ – 20մ է: Ինվար լարը փայտի ճյուղերից, ապակիներից կամ այլ բաներից պաշտպանելու համար անհրաժեշտ է անցկացնել այն ՊՎՔ խողովակների միջով: Եթե սողանքի զագաթնային հատվածում սկարպը հստակ չէ, հիմնական հետազոտության գծի երկայնքով տեղադրվում են վերգետնյա էքստենզոմետրի երկու կամ ավել հավաքածուներ:



**Նկար 16** Վերգետնյա էքստենզոմետրի ընդհանուր հատկությունները

Չափման տվյալները մշակվում և ցույց են տրվում գրաֆի վրա, ինչպես օրինակ **Նկար 17**-ում:





Սկար 17 Վերգետնյա էքստենզոմետրի չափման արդյունքի գրաֆը տեղումների տվյալների հետ


Սողանքի հստակեցման չափանիշները ցույց են տրված Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9 Սողանքի հստակեցման չափանիշները

Օրական տեղաշարժ (մմ)	Ընդհանուր (գումարային) տեղաշարժ (մմ)	Կուտակումը մեկ ուղղությամբ	Դատողություն	Սահքի հնարավոր ձև
1 կամ ավել	10 կամ ավել	Հստակ	Հաստատ	Ակտիվ (Մակերևույթային կամ խորը սահք)
0.1 - 1	2 - 10	Բավականին հստակ	Գրեթե հաստատ	Դանդաղ (Հողի կամ բեկորի սահք)
0.02 - 0.1	0.5 - 2	Թեթև	Հնարավոր	Պահանջում է հետագա մոնիթորինգ
0.1 կամ ավել	Չկա	Չկա	Չկա (աննորմալ)	Մասնակի շարժ կամ այլ


#### 4.5.2 Հետազոտություն վերգետնյա թեքաչափով

Վերգետնյա թեքաչափերը տեղադրվում են սողանքի ակտիվության հետևանքով գրունտի թեքության փոփոխությունը չափելու համար: Որպես կանոն, թեքաչափերը տեղադրվում են սողանքային տարածքի և դրանից դուրս մի քանի կետերում, ինչպես օրինակ՝ հիմնական հետազոտության գծի վրա վերին լանջը կամ սողանքային տարածքի երկու կողմերը՝ շարժի տարածքի ընդարձակումը հայտնաբերելու համար: Թեքաչափի հիմքը կազմված է բետոնից՝ ձողերի հետ միասին, և ապակուց, որը տեղադրվում է հիմքի բետոնի մակերևույթի վրա, ինչպես ցույց է տրված նկար 18-ում:



Նկար 18 Թեքաչափի հատկությունը

Չափումների գրառումները մշակվում են, և ընդհանուր (գումարային) թեքությունը ցույց է տրվում գրաֆի վրա՝ օրական տեղումների հետ միասին, ինչպես ցույց է տրված Նկար 19-ում: Ընդհանուր (գումարային) թեքությունը ցույց է տալիս սողանքի ակտիվությունը, իսկ ակտիվությունը գնահատվում է Աղյուսակ 10-ում բերված չափանիշներով:




Նկար 19 Վերգետնյա թեքաչափով չափման արդյունքը

Աղյուսակ 10 Սողանքի հստակեցման չափանիշները

Միջին օրական թեքություն (վրկ.)	Ընդհանուր (գումարային) թեքություն (վրկ./ամիս)	Կուտակման միտումը	Թեքության ուղղության և գեոմորֆոլոգիայի միջև կապը	Դատողություն	Սահքի հնարավոր ձևը
5 կամ ավել	100 կամ ավել	Հստակ	Այո	Հաստատ	Ակտիվ
1 - 5	20 - 100	Բավականին հստակ	Այո	Գրեթե հաստատ	Դանդաղ
1 կամ պակաս	20 կամ պակաս	Թեթև	Այո	Հնարավոր	Պահանջում է հետագա մոնիթորինգ
3 կամ ավել	Չկա (Ընդհատվող)	Չկա	Ոչ	Աննորմալ	Մասնակի շարժ կամ այլ

#### 4.5.3 Հետազոտություն գրունտի հետազննության միջոցով


Գրունտի հետազննությունը հիմնականում իրականացվում է, եթե սողանքի ուղղությունը հաստատ չէ կամ շարժը ինտենսիվ է: Գրունտի հետազննությունը ներառում է թեոդոլիտային հանույթ՝ սահմանելով բազիսային կետերը կայուն գրունտի վրա, շարժի նշանաձողով հանույթ, եռանկյունաձև հանույթ և հետազննություն օդալուսանկարների միջոցով: **Նկար 20**-ում ցույց է տրվում շարժի նշանաձողով հանույթի արդյունքը, որի միջոցով կարելի է հստակեցնել շարժի ուղղությունն ու հեռավորությունը:



**Նկար 20** Շարժի նշանաձողով հանույթի արդյունքը

#### 4.5.4 Հետազոտություն ԳԴՀ (GPS) հանույթի միջոցով

ԳԴՀ հանույթը հիմնականում իրականացվում է, եթե սողանքի ուղղությունը հաստատ չէ կամ սողանքի տարածքը շատ մեծ է: Հանույթի ժամանակ չափվում են եռաչափ կոորդինատները՝ օգտագործելով մի քանի արբանյակային ազդանշաններ (սիգնալներ): Հանույթային համակարգը բաղկացած է տիեզերական մասից, հանույթային մասից և վերահսկման մասից, ինչպես ցույց է տրված **Նկար 21**-ում: ԳԴՀ հանույթի առավելությունը եղանակի ավելի քիչ ազդեցությունն է, գիշերային դիտարկումը, երկարաժամկետ շարունակական դիտարկումը և այլն՝ չնայած ճշտությունը մոտ 5մմ – 10մմ է: Ճշտությունը իջնում է, եթե հասանելի արբանյակների քանակը քիչ է կամ տիեզերքի տեսանելիությունը սահմանափակ է կամ վատ: Անկախ նրանից, որ չափման ճշտությունը կարող է մեկ անգամ ցածր լինել, հնարավոր է ստանալ շարժի ընդհանուր միտումը շարունակական չափումների միջոցով:




Նկար 21 ԳՂՀ հանությի ընդհանուր հատկությունը

#### 4.5.5 Հետազոտություն այլ սարքերի միջոցով

##### (1) Հետազոտություն օպտիկական մանրաթելային տվիչների միջոցով

Քանի որ լուսափնջի յուրահատկությունները, օրինակ՝ լույսի ինտենսիվությունը, հաճախականությունը և ալիքի երկարությունը փոփոխվում են՝ կախված ջերմաստիճանից, լարվածությունից, թեքվածությունից և այլն, օպտիկական մանրաթելը կարող է օգտագործվել որպես տվիչ: Օպտիկական մանրաթելային տվիչները չեն պահանջում հոսանքի աղբյուր, իսկ տվիչների ամրությունը բարձր է կայծակի և էլեկտրամագնիսական ալիքի նկատմամբ, հետևաբար, տվիչները հարմար են դաշտային չափումների համար: Օպտիկական մանրաթելային տվիչների պատրաստումը սողանքի չափման համար, օրինակ՝ վերգետնյա էքստենզոմետրերը, վերգետնյա թեքաչափերը, խողովակի տենզոմետրերը և այլն, ընթացքի մեջ է, ինչպես ցույց է տրված նկար 22-ում:



**Նկար 22** Օպտիկական էքստենզոմետր և գրունտի տեղաշարժը չափող սարքեր


## (2) Հետազոտություն լազերային տեսածրիչի (սկաներ) միջոցով

Եռաչափ լազերային տեսածրիչով կատարվող հանույթը օգտագործվում է տեղագրական քարտեզների պատրաստման և դժվարամատչելի տարածքներում տեղաշարժի դիտարկման համար:

Հետազոտության սկզբունքը նույնն է, ինչ էլեկտրաօպտիկական այլ հեռաչափերի դեպքում, ինչպես օրինակ՝ ընդհանուր կայանը, իսկ տեսածրիչները նախագծված են սկանավորելու համար վայրկյանում մի քանի հազար հանույթային կետեր՝ պտտացնելով հայելին սարքի մեջ: Հնարավոր է պատրաստել տեղագրական քարտեզներ՝ ելնելով հանույթի գրառումներից: Տեղաշարժի հաշվարկը նույնպես հնարավոր է՝ ելնելով հենակետում և հանույթային կետերում հանույթի գրառումներից, ինչպես ցույց է տրված **նկար 23**-ում:

Մոդանքի շարժի մոնիթորինգի համար արդյունավետ է նաև էլեկտրա-հեռաչափումը ոչ պրիզմային ձևով:

Նշվում է, որ հանույթային սխալը 100մ հեռավորության համար մի քանի մմ է:



**Սկար 23** Լազերային տեսածրիչի միջոցով տեղաշարժի չափման արդյունքը

#### 4.6 Գրունտային ջրի հետազոտություն

Գրունտային ջրի հետազոտությունն իրականացվում է հստակեցնելու համար դեպի սողանքային տարածք գրունտային ջրի ներհոսքի ճանապարհը, գրունտային ջրի մակարդակը/ հոսքի ուղղությունը և սահքի մակերևույթի վրա ազդող ծակոտկենային ճնշումը: Արդյունքներն օգտագործվում են կայունության վերլուծության, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների ուսումնասիրության/նախագծման համար:

Գրունտային ջրի հետազոտությունը ներառում է գրունտային ջրի մակարդակի չափում, ծակոտկենային ճնշման չափում, հորատման ժամանակ գրունտային ջրի տատանումների չափում, գրունտային ջրի կարոտած, գրունտային ջրի ջերմաստիճանի չափում, հոսքի ուղղության / արագության չափում հորատանցքերում, գրունտային ջրի ցուցիչների հետևում, էլեկտրահետախուզություն, գրունտի ջերմաստիճանի գրանցում, գրունտային ջրի որակի վերլուծություն, պոմպով արտամղման հասարակ թեստ և այլն: Չափման մեթոդները պետք է որոշվեն՝ էլեկտրական հետազոտության նպատակից, ինչպես ցույց է տրված **Աղյուսակ 10**-ում:

**Աղյուսակ 10** Գրունտային ջրի հետազոտության նպատակն ու մեթոդը

Նպատակ (Հստակեցման ենթակա հարց)	Հետազոտության մեթոդ
Սահքի մակերևույթի վրա ազդող ծակոտկենային ճնշում	Ծակոտկենային ճնշման չափում, գրունտային ջրի մակարդակի չափում
Գրունտային ջրի մակարդակի տատանումների և տեղումների միջև կապ	Ծակոտկենային ճնշման չափում, գրունտային ջրի մակարդակի չափում
Ջրատար հորիզոն գրունտային ջրի հոսքի համար	Գրունտային ջրի կարոտած, պոմպով արտամղման հասարակ թեստ
Գրունտային ջրի հոսքի ճանապարհ	Գրունտային ջրի ցուցիչների հետևում, գրունտային ջրի որակի վերլուծություն
Գրունտային ջրի մակարդակ	Էլեկտրահետախուզություն, գրունտի ջերմաստիճանի






մաշվածությունը:

Քանի որ հնարավոր է հորատման ժամանակ բախվել մի քանի ջրատար հորիզոնների հետ, անհրաժեշտ է դիտարկել և գրանցել գրունտային ջրի պայմանները, ինչպես օրինակ՝ աղբյուրը, ջրի կորուստը, վերադարձված ջրի գույնը և այլն:

Չափման արդյունքը մշակվում և դասակարգվում է՝ օրական տեղումների և գրունտի շարժի գրառումների հետ միասին, որպեսզի հնարավոր լինի հստակեցնել գրունտային ջրի մակարդակի և այլ երևույթների միջև կապը:


## (2) Ծակոտկենային ճնշման չափում

Գոյություն ունի ծակոտկենային ճնշման չափման երկու տեսակ: Դրանցից մեկը ուղղակի չափումն է թիրախային ջրատար հորիզոնի խորության վրա տեղադրված ծակոտկենային ճնշման չափիչ սարքերի միջոցով՝ զմուսելով մնացած հատվածները անջրաթափանց նյութերով, ինչպես օրինակ՝ շաղախը բենտոնիտով: Մյուսը հորատանցքում ջրի մակարդակի չափումն է, որի դեպքում թիրախային ջրատար հորիզոնի խորության վրա տեղադրվում են ֆիլտրի հատվածներով շրջապահ խողովակներ: Չափման երկու տեսակների համար կարևոր է հստակեցնել սահքի մակերևույթը և ջրատար հորիզոնները նախքան սարքերը տեղադրելը: Եթե գրունտային ջրի վիճակը բարդ է կամ հայտնաբերվել են շատ ջրատար հորիզոններ, անհրաժեշտ է տեղադրել ծակոտկենային ճնշման չափիչ սարքի բազմաշերտ տեսակը, ինչպես ցույց է տրված նկար 25-ում: **Նկար 26**-ում բերված է չափման արդյունքների գրաֆը՝ անձրևների տվյալների հետ միասին:



**Նկար 25** Թաղված տեսակի ծակոտկենային ճնշման չափիչ սարք (բազմաշերտ տեսակի)







Սկար 26 Ծակոտկենային ճնշման չափման արդյունքները ցույց տվող գրաֆ

#### 4.6.2 Գրունտային ջրի բաշխվածության հետազոտություն

Հետևյալ (ա) - (ե) ենթակետերը իրենցից ներկայացնում են հետազոտություններ՝ հորատանցքերի միջոցով, իսկ (զ) - (թ) ենթակետերում նշված են հատուկ հետազոտություններ:

##### (1) Գրունտային ջրի մակարդակի չափում հորատման ժամանակ

Սողանքային տարածքներում հորատման ժամանակ շրջապահ խողովակները տեղադրվում են հորատանցքի մեջ հորատանցքի պատի փլուզումը կանխելու համար: Հորատանցքում, հատվածների մեծ մասը պատված են շրջապահ խողովակներով, բացառությամբ ստորոտից: Գրունտային ջրի և ջրատար հորիզոնների հատուկ պայմանը (օրինակ՝ սահմանափակ ջրատար հորիզոնները, ջրանցիկ շերտերը և արտահոսքի շերտերը)



Սկար 27 Հորատման աշխատանքների ժամանակ գրունտային ջրի տատանումը ցույց տվող գրաֆ

հորատանցքի ստորոտում կարող է հստակեցվել՝ հորատանցքում ջրի մակարդակի չափման և վերլուծման միջոցով: Չափումը, որպես կանոն, կատարվում է օրական հորատման աշխատանքներից առաջ և հետո: **Նկար 27**-ում բերված է գրունտային ջրի տատանման գրաֆը՝ հորատման առաջընթացի հետ միասին: Այս գրաֆը ցույց է տալիս, որ հոկտեմբերի 5-ին ամենօրյա աշխատանքներից առաջ չափված գրունտային ջրի մակարդակը ավելի բարձր է, քան աշխատանքներից հետո չափվածը, և նշում է 4մ – 7մ խորության վրա ջրատար հորիզոնի բաշխվածությունը:

## (2) **Գրունտային ջրի կարոտած**

Գրունտային ջրի կարոտածն իրականացվում է հստակեցնելու համար գրունտային ջրի հոսքի շերտերի խորությունը և հոսքի պայմանները հորատանցքերում:


Կարոտածի գործընթացը հետևյալն է.

- 1) Հորատանցքում 25մ ինտերվալով գրունտային ջրի նախնական էլեկտրահաղորդականության չափում:
- 2) Աղաջրի ներարկում հորատանցքի մեջ և աղաջրի խառնումը գրունտային ջրի հետ, որպեսզի էլեկտրահաղորդականությունը դառնա նախնական արժեքի մոտավորապես 1/10-ը:
- 3) Խառնած գրունտային ջրի էլեկտրահաղորդականության չափում՝ անմիջապես խառնելուց հետո:
- 4) Խառնած գրունտային ջրի էլեկտրահաղորդականության չափում՝ 10 րոպե, 20 րոպե, 30 րոպե, 60 րոպե հետո և ավել, ըստ անհրաժեշտության:

Գոյություն ունի չափող սարքերի երկու տեսակ՝ բազմաէլեկտրոդային տեսակ և եզակի էլեկտրոդով տեսակը:

Եթե սահքի մակերևույթը խիստ ջրաթափանց է, գրունտային ջրի մակարդակն իջնում է, երբ հորատանցքը ներթափանցում է սահքի մակերևույթի մեջ: Նման դեպքում հորատման ժամանակ գրունտային ջրի կարոտածն իրականացվում է մի քանի անգամ, որպեսզի հնարավոր լինի իրականացնել կարոտածը նախքան սահքի մակերևույթը ներթափանցելը:

**Նկար 28**-ում բերված են կարոտածի արդյունքները: Էլեկտրահաղորդականության չափված արժեքները ցույց են տրվում գրաֆի վրա յուրաանջուր չափման ժամանակ:




Սկար 28 Գրունտային ջրի կարոտաժի արդյունքի գրաֆ

Կարոտաժի արդյունքի գրաֆի օգնությամբ կատարվում է դատողություն գրունտային ջրի վիճակի վերաբերյալ՝ հղում կատարելով Աղյուսակ 11-ում նշված չափանիշներին և Սկար 29-ում բերված յուրաքանչյուր վիճակի տիպիկ գրաֆին:

Աղյուսակ 11 Դատողություն գրունտային ջրի վիճակի վերաբերյալ

Դատողություն	Միմվոլ	Նշում
Ներհոսք	→	Գրաֆը արտահայտում է Սկար 29-ի (ա) պատկերում բերված ձևը
Վերև հոսք	↑	Գրաֆը արտահայտում է Սկար 29-ի (բ) պատկերում բերված ձևը
Ներքև հոսք	↓	Գրաֆը արտահայտում է Սկար 29-ի (գ) պատկերում բերված ձևը
Չկա		Ոչ մի տատանում էլեկտրահաղորդականության մեջ
Չկա		Գրաֆ, որը ցույց է տալիս վերոնշյալից տարբերվող ձևեր



Սկար 29 Գրունտային ջրի ներհոսքի, վերև հոսքի և ներքև հոսքի գրաֆերի տիպիկ ձևը

### (3) Պոմպով արտամղման հասարակ թեստ


Պոմպով արտամղման հասարակ թեստն իրականացվում է հստակեցնելու համար ջրատար հորիզոնները, որտեղ հոսում է գրունտային ջուրը, և գրունտի թափանցելիության գործակիցը:

Որպես կանոն, թեստն իրականացվում է 3մ – 5մ երկարությամբ հատվածում, որտեղ տեղադրված չեն շրջապահ խողովակներ: Գրունտային ջուրը վերև է մղվում պոմպով կամ հորատադույլով (ջրի հասարկ նմուշառման հարմարություն), մինչև որ ջրի մակարդակը դառնա հաստատուն: Արտամղումը ավարտելուց հետո, գրունտային ջրի մակարդակը չափվում է իր վերականգնման ժամանակահատվածում: Ելնելով վերականգնման ժամանակից և դրա ընթացքում գրունտային ջրի մակարդակից՝ հաշվարկվում է թափանցելիության գործակիցը:

Թափանցելիության գործակիցը կարևոր պարամետր է գրունտային ջրի վերլուծության համար, իսկ վերլուծության համար օգտակար արդյունք կարելի է ձեռք բերել՝ պոմպով արտամղման հասարակ թեստի միջոցով, նույնիսկ եթե ոչ մի օգտակար արդյունք չի կարող ձեռք բերվել գրունտային ջրի կարոտաժի միջոցով:

### (4) Գրունտային ջրի ջերմաստիճանի գրանցում

Գրունտային ջրի ջերմաստիճանի գրանցումն իրականացվում է հստակեցնելու համար ջրատար հորիզոնները, որտեղ հոսում է գրունտային ջուրը, և հոսքի վիճակը: Թեստի համար հորատանցքի մեջ ներարկվում է տաքացված ջուր, և գրունտային ջրի ջերմաստիճանի ցածրացումը չափվում է ջերմաստիճանը չափող սարքերով և ջերմաստիճանի բազմաշերտ տվիչներով, ինչպես ցույց է տրված **Նկար 30**-ում:



**Նկար 30** Ջերմաստիճանի բազմաշերտ չափիչ սարք ջերմաստիճանի բազմաշերտ տվիչներով, ինչպես ցույց է տրված **Նկար 30**-ում:

### (5) Հոսքի ուղղության և հոսքի արագության չափում

Հոսքի ուղղության և հոսքի արագության հետազոտությունները հետևյալն են.

- 1) Հոսքի արագության ուղղակի չափում պրոպելլեր տեսակի արագության չափող սարքի միջոցով
  - 2) Գրունտային ջրի արագության և ուղղության դիտարկում հետևող սարքի և հորատանցքի տեսախցիկի միջոցով
  - 3) Ցուցիչային նյութերի չափում մեխանիկական տվիչների օգնությամբ
- Գրունտային ջրի հոսքի ցածր արագության դեպքում վերոնշյալ 1) և 2) կետերը


կիրառելի չեն, քանի որ հոսքի խախտումը հանգեցնում է դանդաղ հոսքի անկարողունակության:

**(6) Գրունտային ջրի ցուցիչները հետևելու հետազոտություն**

Գրունտային ջրի ցուցիչները հետևելու համար հորատանցքի մեջ ներարկվում են ցուցիչներ, օրինակ՝ գույն տված ջուր կամ աղի ջուր (կամ անօրգանական այլ քիմիկատներ պարունակող ջրի լուծույթ), իսկ ցուցիչը հայտնաբերվում է չափման կետերում, ինչպես օրինակ՝ այլ հորատանցքերը, ջրհորները, աղբյուրի կետերը կամ փոքր գետերը: Ցուցիչի հայտնաբերման համար ցուցիչի նյութի ֆոնային արժեքը չափման կետերում պետք է չափվի նախքան հետևելու ենթակա նյութի ներարկումը, որպեսզի չափված արժեքի հետ համեմատությունը հասանելի լինի ներարկումից հետո:

Հետևելու ենթակա նյութի ներարկման կետը պետք է գտնվի մեծ բարձրության վրա: Նյութի ներարկումից հետո ներարկվում է շատ ջուր, որպեսզի հնարավոր լինի արագացնել ֆիլտրացիան ջրի ճնշման պատճառով:

Խորհուրդ է տրվում ներարկման կետերի շուրջը սահմանել հնարավորինս շատ չափման կետեր: Եթե հորատանցքերում ջրատար հորիզոնները խախտված են գրունտային ջրի մակարդակից ներքև, հետևելու ենթակա նյութը կարող է չհայտնաբերվել, որովհետև վերջինս տարածվում է դանդաղ և հեղուկանում է: Նման դեպքում, անհրաժեշտ է չափել՝ հետևելու ենթակա նյութը ջրատար հորիզոնների խորության վրա հայտնաբերելու համար՝ հղում կատարելով գրունտային ջրի կարոտաժի արդյունքին: Խորհուրդ է տրվում կատարել գրունտային ջրի նմուշառում ջրատար հորիզոնների խորության վրա: Առաջին օրը նմուշառումն իրականացվում է հետևելու ենթակա նյութի ներարկումից 0.5 ժամ, 1 ժամ, 2 ժամ և 8 ժամ հետո, իսկ 2-րդ օրվանից սկսած առնվազն 20 օր՝ օրական մեկ անգամ: Ֆոնային տվյալները պետք է վերցվեն մոտ մեկ շաբաթ կամ ավել՝ օրական մեկ անգամ, նախքան հետևելու ենթակա նյութը ներարկելը: Եթե ներարկումից հետո չափված արժեքը գերազանցում է ֆոնային արժեքների առավելագույն արժեքը, կարելի է ենթադրել, որ հետևելու ենթակա նյութը հասել է չափման կետ, ինչպես ցույց է տրված **նկար 31**-ում:



**Նկար 31** Հետևելու ենթակա նյութի հայտնաբերման գրաֆ

Թափանցելիության գործակիցը կարող է կոպիտ ձևով գնահատվել՝ ելնելով

ներարկման անցքից մինչև չափման կետը հեռավորությունից և ստացման ժամանակից, իսկ գնահատված թափանցելիության գործակիցը կարող է օգտագործվել կանխարգելիչ միջոցառումների նախագծման համար, ինչպես օրինակ՝ գրունտային ջրի հեռացման աշխատանքները:

#### **(7) Էլեկտրահետախուզություն**

Էլեկտրահետախուզությունն իրականացվում է հստակեցնելու համար տարածքի գրունտային ջրի բաշխվածությունը էլեկտրահաղորդականության միջոցով դեպքերի մեծամասնության համար:

Էլեկտրահաղորդականությունը վերահսկվում է հողմնահարման և փոփոխության ու այլնի հետևանքով գրունտի և ապարի բաղադրությունով, ճաքճքված գոտիների և ճաքերի հետ կապված ծակոտկեն ջրով, ջրհագեցվածության աստիճանով, գրունտային ջրի հաղորդականությամբ, կավի միներալներով: Հետևաբար, սողանքային տարածքում գրունտի յուրահատկությունները կարող են հստակեցվել էլեկտրահետախուզության միջոցով:

#### **(8) Գրունտի ջերմաստիճանի հետախուզություն**

Գրունտի ջերմաստիճանի երկարատև չափման արդյունքը ցույց է տալիս, որ գրունտային ջրի տարեկան ջերմաստիճանը կայուն է և տարեկան տատանումը կազմում է մոտ 2 աստիճան, մինչդեռ գրունտի ջերմաստիճանը տատանվում է 10 կամ ավել աստիճանով 1մ խորության վրա: Գրունտի մակերևույթի և հոսող գրունտային ջրի միջև կա ջերմաստիճանի տարբերություն: Հետևաբար, հնարավոր է գնահատել գրունտային ջրի հոսքի շերտերը՝ չափելով ջերմաստիճանը հորատանցքում:

Չափումն իրականացվում է թերմոեզիստոր տեսակի ջերմաստիճանի տվիչների միջոցով: Տվիչը ներթափանցում է գրունտի մեջ հորատանցքի ստորոտում, և չափումն իրականացվում է ներթափանցած տվիչը 5 – 10 րոպե թողնելուց հետո:

#### **(9) Ջրի որակի հետազոտություն**

Ջրի որակի հետազոտության նպատակն է գնահատել գրունտային ջրի հոսքի ուղղությունը և գրունտային ջրի ու մակերևութային ջրի միջև կապը յուրահատկությունների համեմատության միջոցով: Գրունտային ջուրը կարելի է կոպիտ ձևով բաժանել ծանձաղ գրունտային ջրի և խորքային գրունտային ջրի: Ծանձաղ գրունտային ջուրը դուրս է գալիս անձրևի ջրի՝ գրունտի մեջ ներթափանցելուց կարճ ժամանակ հետո, մինչդեռ խորքային գրունտային ջուրը պահվում է գրունտի մեջ երկար ժամանակ:

Ծանձաղ գրունտային ջրի բաղադրությունը նման է անձրևաջրի բաղադրությանը, քանի որ գրունտի մեջ պահվելու ժամանակահատվածը կարճ է: Ծանձաղ գրունտային ջուր կարելի է տեսնել նեղ սողանքային տարածքում և մեծ սողանքների լեզվակային հատվածներում: Խորքային գրունտային ջուրը պարունակում է մի քանի միներալներ՝ գրունտի մեջ տեղաշարժվելու ժամանակ միներալների լուծման հետևանքով, և դրա

յուրահատկություններ կարելի է տեսնել արմատական ապարում ճեղքվածքից, խզվածքից և ճաքճքված գոտիներից դուրս եկող ջրից: Արմատական ապարի և գրունտային ծածկույթի միջև սահմանային գոտով անցնող գրունտային ջուրը կարող է ցույց տալ միջանկյալ հատկություններ:

Ջրի որակի թեստի համար մոտ 1լ ջրի նմուշներ են վերցվում աղբյուրներից, հորերից, հորատանցքերից, ջրավազաններից, ջրի հոսանքներից և այլն: Թեստի կետերը ներառում են տեղանքում չափված ջերմաստիճանը, pH, EC, Cl, SO<sub>4</sub>, SiO<sub>2</sub>, Ca, Mg, Na և K:

#### **4.7 Գրունտի թեստեր**

Գրունտի թեստերը իրականացվում են հստակեցնելու համար սահքի մակերևույթի ուժգնությունը և գրունտի ֆիզիկա-մեխանիկական հատկությունները, որոնք անհրաժեշտ են կայունության վերլուծության և կանխարգելիչ միջոցառումների նախագծման համար: Սահքի մակերևույթի ուժգնության հստակեցման համար իրականացվում է մեկ հարթությունում սահքի թեստ (արկղային սահքի թեստ), եռառանցքային սեղմման թեստ, օղակաձև սահքի թեստ և այլն: Գրունտի ուժգնության համար իրականացվում են հորիզոնական բեռնվածության թեստ հորատանցքում և ստանդարտ թափանցելիության թեստ:

Սահքի դիմադրությունը ներառում է սահքի առավելագույն դիմադրությունը, վերաձևավորված գրունտի սահքի դիմադրությունը և մնացորդային սահքի դիմադրությունը: Չնայած իրականացվել են շատ հետազոտություններ, չկա հստակ եզրահանգում, թե ինչ տեսակի սահքի դիմադրություն պետք է կիրառվի կայունության վերլուծության մեջ: Բացի այդ, սահքի իրական դիմադրությունը նույնը չէ մեկ սահքի մակերևույթի յուրաքանչյուր մասում, հետևաբար, սահքի դիմադրությունը ձեռք է բերվում դեպքերի մեծամասնության համար հակադարձ հաշվարկի միջոցով: Գրունտի թեստերի արդյունքը կիրառվում է որպես բազային արժեք:

##### **4.7.1 Ֆիզիկական հատկությունների թեստեր**

Սողանքների հետազոտության մեջ իրականացվում են ջրապարունակության թեստ, հատիկի չափի վերլուծություն, Աթերբերգի սահմանի թեստ (պլաստիկության և հոսունության սահմանների թեստ), խոնավ գրունտի տեսակարար կշռի թեստ և այլն՝ հիմնականում սահքի մակերևույթից վերցված նյութերի համար:

Քանի որ ֆիզիկական հատկությունների թեստերը կարող են իրականացվել ավելի կարճ ժամանակում, քան մեխանիկական հատկությունների թեստերը, արդյունքները կարելի է օգտագործել սահքի մակերևույթի խորությունը ենթադրելու համար:

##### **4.7.2 Մեկ հարթությունում սահքի թեստ**

Մեկ հարթությունում սահքի թեստը ուղիղ սահքի թեստերից մեկն է, երբ թեստի նմուշը դրվում է արկղի մեջ, որը կիսված է վերին և ստորին հատվածների: Նորմալ բեռ տեղադրելուց հետո, տեղաշարժող բեռը դրվում է արկղի վերին կեսում, որպեսզի վերին արկղը շարժվի հորիզոնական: Թեստն իրականացվում է մի քանի անգամ տարբեր


նորմալ բեռերի դեպքում՝ սահքի դիմադրությունը ձեռք բերելու համար (կաշտությունը՝  $C$  և ներքին շփման անկյունը՝  $\phi$ ):

#### 4.7.3 Եռառանցք սեղմման թեստ

Եռառանցք սեղմման թեստն իրականացվում է՝ սեղմելով զլանաձև նմուշը (3.5 սմ - 5.0 սմ տրամագծով և 8.0 սմ - 12 սմ բարձրությամբ) սահմանափակ ճնշմամբ: Նմուշի նյութի սահքի դիմադրությունը ստացվում է տարբեր սահմանափակ ճնշումներով մի քանի անգամ կատարված թեստի արդյունքների հիման վրա:

#### 4.7.4 Օղակաձև սահքի թեստ

Օղակաձև սահքի թեստի սարքը ունի 6.0 սմ - 10.0 սմ ներքին տրամագծով և 10.0 սմ - 12.0 սմ արտաքին տրամագծով ու 1.0 սմ - 2.0 սմ բարձրությամբ օղակի ձև, և օղակի ներսում դրվում է թեստի նմուշը, ինչպես ցույց է տրվալի **Նկար 32**-ում: Քանի որ սահքի ուղղությունը շրջանի մեջ է, թեստը կարելի է անել սահքի ուղղությամբ անսահմանափակ տեղաշարժերով: Օգտակար է այս թեստի միջոցով ստանալ մնացորդային սահքի դիմադրությունը, և այս արդյունքի հիման վրա կարելի է ենթադրություններ անել ինտենսիվ շարժվող սողանքի սահքի մակերևույթում կավային նյութի սահքի դիմադրության վերաբերյալ:



**Նկար 32** Օղակաձև սահքի տեսքի սարք

#### 4.7.5 Նմուշները և թեստի մեթոդները

**Աղյուսակ 12**-ում բերված են նմուշների ձևերը և թեստի մեթոդները, որոնք անհրաժեշտ են սահքի դիմադրությունը ստանալու համար:

Առավելագույն դիմադրությունը, սովորաբար, ստացվում է չխախտված նմուշներով եռառանցք սեղմման թեստի միջոցով: Մեկ հարթությունում սահքի կրկնվող թեստը և օղակաձև սահքի թեստը նույնպես հասանելի են առավելագույն դիմադրության համար:

Վերաձևավորված գրունտի դիմադրությունը, որպես կանոն, ստացվում է շլամի նմուշներով եռառանցք թեստի միջոցով: Մեկ հարթությունում սահքի կրկնվող թեստը և օղակաձև սահքի թեստը շլամի կամ չխախտված նմուշներով նույնպես հասանելի են վերաձևավորված գրունտի դիմադրության համար:

Մնացորդային դիմադրությունը ստացվում է մեկ հարթությունում սահքի կրկնվող թեստի և օղակաձև սահքի թեստի միջոցով, բայց ոչ եռառանցք թեստի միջոցով:

Չնայած ավելի իրատեսական արդյունքներ կարելի է ստանալ սահքի մակերևույթից վերցված նմուշներից, սակայն սարքի մեջ նմուշների տեղադրումը դժվար է:



**Աղյուսակ 12** Նմուշների ձևը և թեստերի մեթոդը

Դիմադրություն Նմուշ	Առավելագույն դիմադրություն	Վերաձևավորված գրունտի դիմադրություն	Մնացորդային դիմադրություն	Թեստի մեթոդ
Չխախտված	O, [CU]	—	—	Եռառանցք սեղման թեստ
	Δ, CD, III	Δ, CD, II	Δ, CD, I	Մեկ հարթությունում սահքի կրկնվող թեստ
	Δ, CD, III	Δ, CD, II	Δ, CD, I	Օղակաձև սահքի թեստ
Շլամ	—	O, [CU]	—	Եռառանցք սեղման թեստ
	—	Δ, CD, III	Δ, CD, I	Մեկ հարթությունում սահքի կրկնվող թեստ
	—	Δ, CD, III	Δ, CD, I	Օղակաձև սահքի թեստ
Նախապես կտրված	—	—	—	Եռառանցք սեղման թեստ
	—	—	O, CD, II	Մեկ հարթությունում սահքի կրկնվող թեստ
	—	—	O, CD, II	Օղակաձև սահքի թեստ
Սահքի մակերևույթից վերցված նմուշներ	Δ, CD or [CU]			Եռառանցք սեղման թեստ
	O, CD, II			Մեկ հարթությունում սահքի կրկնվող թեստ
	O, CD, II			Օղակաձև սահքի թեստ

Ձեռքբերման ենթակա  
դիմադրություն

- O: Հնարավոր է ձեռք բերել
- Δ: Հնարավոր է ձեռք բերել  
որոշ դեպքերում
- : Հնարավոր չէ ձեռք բերել

Թեստի պայման

- [CU]: Սեղմված և չշորացված  
(ծակոտկենային ճնշման  
չափում)
- CD: Սեղմված և ջրազրկված

Սահքի տեղաշարժ

- I: Մեծ
- II: Բավականին  
մեծ
- III: Փոքր

## 5. Վերլուծություն

Ելնելով նախնական, հիմնական և մանրամասն հետազոտությունների արդյունքներից՝ իրականացվում է սողանքի առաջացման և շարժի մեխանիզմի վերլուծություն, և արդյունքում պատրաստվում են սողանքի բլոկի քարտեզը և կտրվածքները:

Վերլուծության և պատրաստման ենթակա կետերը նշված են **Աղյուսակ 13**-ում:

**Աղյուսակ 13** Վերլուծության և պատրաստման ենթակա կետեր

Հետազոտություն և թեստեր վերլուծության համար		Նախնական հետազոտություն	Տեղանքի հետախուզություն	Տեղագրական քարտեզագրում	Երկրաբանական հետազոտություն	Սահքի մակերևույթի հետազոտություն	Սակերևույթի տեղաշարժի հետազոտություն	Գրունտային ջրի հետազոտություն	Գրունտի թեստեր
Սողանքի բլուրի քարտեզ	Սողանքի բլուրի քարտեզ	0	0	0			0		
	Հողոգտագործում, օբյեկտներ և այլն	0	0						
	Սողանքի հատկությունները		0	0					
	Հետազոտությունների վայրերը և արդյունքները				0	0	0	0	
	Սահքի մակերևույթի կոնտուրային քարտեզը		0	0	0	0	0	0	
Սողանքի կտրվածքներ	Երկրաբանական կտրվածքներ	0	0		0				
	Գրունտային ջրի բաշխվածության քարտեզ		0						
	Հողոգտագործում, օբյեկտներ և այլն	0	0						
	Կտրվածքի վրա սողանքի յուրահատկությունները		0	0	0	0			
	Հետազոտությունների վայրերը և արդյունքները				0	0	0	0	
Սողանքի մեխանիզմի վերլուծություն		0	0	0	0	0	0	0	0

### 5.1 Սողանքի մեխանիզմի վերլուծություն

Սողանքի մեխանիզմի վերլուծությունն իրականացվում է կանխարգելիչ միջոցառումների պլանը պատրաստելու նպատակով: Վերլուծությունը ներառում է սողանքի ակտիվացման հիմնական գործոնի և հարուցիչ գործոնի հստակեցում, սողանքի տարածքն ու մասշտաբը, սահքի մակերևույթի ձևն ու տեղը, գրունտային ջրի վիճակը և այլն: Սողանքի բլուրի քարտեզները և սողանքի կտրվածքները պատրաստվում են վերլուծության արդյունքում:

#### 5.1.1 Սողանքի ակտիվացման հիմնական գործոն

Սողանքային տարածքն ի սկզբանե գտնվում է այնպիսի վիճակում, որ, ընդհանուր առմամբ, կարող է հանգեցնել սողանքի: Մեծ մասամբ այդ վիճակը բնական պայմանն է, օրինակ՝ գեոմորֆոլոգիան, երկրաբանությունը (գրունտ), երկրաբանական կառուցվածքները, գրունտային ջուրը և այլն:

#### 5.1.2 Սողանքի ակտիվացման հարուցիչ գործոն

Այն տարածքում, որտեղ կա վերոնշյալ հիմնական գործոնը, սողանքն ակտիվանում է հարուցիչ գործոնների պատճառով: Բնական հարուցիչ գործոններն են ուժեղ անձրևը, ձնհալը, երկրաշարժը, գետի էրոզիան, գրունտային ջրի ուղղության կամ մակարդակի փոփոխությունը, գետի հոսքի արգելափակումը և այլն: Մարդու կողմից հրահրված հարուցիչ գործոններն են սողանքի գլխամասի հողապատնեշումը, սողանքի լեզվակի վրա փորումը, սողանքային տարածքի հեղեղումը:

#### 5.1.3 Սողանքի տարածքն ու մասշտաբը

Ելնելով գրունտի մակերևույթի տեղաշարժի հետազոտության և այլ

հետազոտությունների արդյունքներից՝ սողանքի տարածքը որոշվում և սողանքի բլոկները հստակեցվում են համաձայն շարժի իրավիճակի: Յուրաքանչյուր բլոկի շարժի ուղղությունն ու իրավիճակը հստակեցվում է՝ հաշվի առնելով կապը անձրևի հետ: Հստակեցվում է նաև յուրաքանչյուր բլոկի տարածքն ու գրունտի ծավալը:

#### **5.1.4 Սահքի մակերևույթի ձևն ու տեղը**

Ելնելով սահքի մակերևույթի հետազոտության և այլ հետազոտությունների արդյունքներից՝ հստակեցվում են սահքի մակերևույթի ձևն ու տեղը (խորությունը)՝ հաշվի առնելով կապը երկրաբանության և երկրաբանական կառուցվածքների հետ:

#### **5.1.5 Գրունտային ջուր**


Ելնելով գրունտային ջրի հետազոտության և այլ հետազոտությունների արդյունքներից՝ հստակեցվում են գրունտային ջրի բաշխվածությունը, ջրի որակի պայմանների դասակարգումը՝ հաշվի առնելով կապը սողանքի ակտիվության հետ:

### **5.2 Սողանքի բլոկի քարտեզ**


Սողանքի բլոկի քարտեզը պատրաստվում է որպես բազային քարտեզ վերլուծության համար՝ ելնելով նախնական, հիմնական և մանրամասն հետազոտությունների արդյունքներից, ինչպես ցույց է տրված Նկար 33-ում: Անհրաժեշտության դեպքում, պատրաստվում է նաև սահքի մակերևույթի կոնտուրային քարտեզը: Կանխարգելիչ միջոցառումների պլանի ուսումնասիրությունից հետո, սողանքի բլոկի քարտեզի վրա ցույց կտրվեն կանխարգելիչ միջոցառումների ուրվագիծն ու հիմնական բնութագրիչները:

### **5.3 Սողանքի կտրվածք**

Սողանքի կտրվածքը պատրաստվում է երկրաբանական կտրվածքի վրա՝ հիմնական հետազոտության գծի երկայնքով, 1/200 - 1/500 մասշտաբով՝ նկարագրելով գնահատված սահքի մակերևույթը, գրունտային ջրի մակարդակը, ճաքերը: Երկրաբանական կտրվածքը պատրաստվում է՝ ելնելով երկրաբանական հետազոտության արդյունքներից՝ նկարագրելով հորատանցքի կտրվածքները, երկրաբանական սահմանները և այլն: Անհրաժեշտության դեպքում պատրաստվում են նաև սողանքի կտրվածքները հետազոտության ենթագծերի երկայնքով:



Սկար 33 Սողանքի բլուրի քարտեզ



Սկար 34 Երկրաբանական կտրվածք հետազոտության հիմնական գծի երկայնքով

**Բովանդակություն**

1.	Ընդհանուր դրույթներ .....	1
2.	Հետազոտություն .....	2
2.1	Նախնական հետազոտություն .....	2
2.2.1	Նախնական հետազոտության ընդհանուր ակնարկն ու նպատակը .....	2
2.2.2	Գրականության ուսումնասիրություն .....	2
2.2.3	Ռեզիլիենտ վերծանում .....	2
2.3	Հիմնական հետազոտություն .....	4
2.3.1	Ուրվագիծն ու նպատակը .....	4
3.2	Տեղանքի հետախուզություն .....	5
3.2.1	Սողանքի գոտու և վտանգավոր տարածքի գնահատումը .....	5
3.2.2	Երկրաբանական հետազոտություն .....	5
3.2.3	Գեոմորֆոլոգիական հետազոտություն .....	6
3.2.4	Գրունտային ջրի վիճակի գնահատում .....	6
3.2.5	Շարժի ձևի գնահատում .....	6
3.2.6	Հարուցիչ գործոնի գնահատում .....	6
3.2.7	Հետագա ակտիվության կանխատեսում .....	6
3.2.8	Սողանքի ակտիվացման հետևանքով առաջացած վնասի տարածքի կամ աստիճանի կանխատեսում .....	6
3.2.9	Արտակարգ միջոցառումների ուսումնասիրություն .....	7
4.	Մանրամասն հետազոտություն .....	7
4.1	Ուրվագիծն ու նպատակը .....	7
4.1.1	Շարժվող բլոկների բաժանում .....	8
4.1.2	Հետազոտության գծի սահմանում .....	9
4.2	Տեղագրական հանույթ .....	9
4.3	Երկրաբանական հետազոտություն .....	10
4.3.1	Հորատման հետազոտություն .....	10
(1)	Հորատման հետազոտության գծերի կարգավորումը և երկարությունը .....	11
(2)	Հետազոտության տվյալների մշակում .....	12
(3)	Հորատանցքերի հետազոտությունները .....	12
4.3.2	Սեյսմիկ հետախուզություն .....	13
4.3.3	Բնական ռադիոակտիվության հետախուզություն .....	14
4.3.4	Էլեկտրահետախուզություն .....	14
4.4	Սահքի մակերևույթի հետազոտություն .....	14
4.4.1	Հստակեցումներ հորատման հետազոտության ժամանակ .....	14
(1)	Հստակեցում հորատման ժամանակ .....	14
(2)	Հստակեցումներ հորատահանուկի դիտարկմամբ .....	15
4.4.2	Հստակեցում սահքի մակերևույթը հայտնաբերող խողովակի միջոցով .....	15
4.4.3	Հստակեցում խողովակի տենզոմետրի միջոցով .....	16
4.4.4	Հստակեցում հորատանցքի թեքաչափի միջոցով .....	17
4.4.5	Հստակեցում հորատանցքի էքստենզիոմետրով .....	19
4.4.6	Բազմաշերտ էքստենզիոմետրի հստակեցում .....	19
4.4.7	Հստակեցում սողքի հորով .....	20
4.4.8	Չափող սարքերի յուրահատկությունները .....	21

4.5	Գրունտի մակերևույթի շարժի հետազննություն .....	21
4.5.1	Հետազոտություն վերգետնյա էքստենզոմետրով .....	22
4.5.2	Հետազոտություն վերգետնյա թեքաչափով .....	23
4.5.3	Հետազոտություն գրունտի հետազննության միջոցով .....	25
4.5.4	Հետազոտություն ԳԴՀ (GPS) հանույթի միջոցով .....	25
4.5.5	Հետազոտություն այլ սարքերի միջոցով .....	26
	(1) Հետազոտություն օպտիկական մանրաթելային տվիչների միջոցով .....	26
	(2) Հետազոտություն լազերային տեսածրիչի (սկաներ) միջոցով .....	27
4.6	Գրունտային ջրի հետազոտություն .....	28
4.6.1	Ծակոտկենային ճնշման հետազոտություն .....	29
	(1) Գրունտային ջրի մակարդակի չափում .....	29
	(2) Ծակոտկենային ճնշման չափում .....	30
4.6.2	Գրունտային ջրի բաշխվածության հետազոտություն .....	31
	(1) Գրունտային ջրի մակարդակի չափում հորատման ժամանակ .....	31
	(2) Գրունտային ջրի կարոտաժ .....	32
	(3) Պոմպով արտամղման հասարակ թեստ .....	34
	(4) Գրունտային ջրի ջերմաստիճանի գրանցում .....	34
	(5) Հոսքի ուղղության և հոսքի արագության չափում .....	34
	(6) Գրունտային ջրի ցուցիչները հետևելու հետազոտություն .....	35
	(7) Էլեկտրահետախուզություն .....	36
	(8) Գրունտի ջերմաստիճանի հետախուզություն .....	36
	(9) Ջրի որակի հետազոտություն .....	36
4.7	Գրունտի թեստեր .....	37
4.7.1	Ֆիզիկական հատկությունների թեստեր .....	37
4.7.2	Մեկ հարթությունում սահքի թեստ .....	37
4.7.3	Եռառանցք սեղմման թեստ .....	38
4.7.4	Օղակաձև սահքի թեստ .....	38
4.7.5	Նմուշները և թեստի մեթոդները .....	38
5.	Վերլուծություն .....	39
5.1	Սողանքի մեխանիզմի վերլուծություն .....	40
5.1.1	Սողանքի ակտիվացման հիմնական գործոն .....	40
5.1.2	Սողանքի ակտիվացման հարուցիչ գործոն .....	40
5.1.3	Սողանքի տարածքն ու մասշտաբը .....	40
5.1.4	Սահքի մակերևույթի ձևն ու տեղը .....	41
5.1.5	Գրունտային ջուր .....	41
5.2	Սողանքի բլոկի քարտեզ .....	41
5.3	Սողանքի կտրվածք .....	41

7 Սողանքային աղետի կառավարման պլան





## Հակասողանքային միջոցառումների պլանավորման ձեռնարկ

### 1. Սողանքային աղետի կառավարման պլանավորում

#### 1.1 Ընդհանուր դրույթ

Սողանքային աղետի կառավարման պլանը պետք է լինի արդյունավետ և համապարփակ՝ համակցելով կառուցվածքային և ոչ կառուցվածքային միջոցառումները՝ ելնելով հետազոտության արդյունքներից: Մշակման ենթակա պլանը պետք է լինի համահունչ շրջակա միջավայրի և այլ կանոնակարգերին, օրինակ՝ զարգացման պլանին:


Սողանքային գոտիները, որտեղ պլանավորվում են հակասողանքային միջոցառումները, բավականին ընդարձակ են՝ կազմված մի քանի ակտիվ բլոկներից, և, հետևաբար, ժամանակ է պահանջվում հակասողանքային միջոցառումներն ավարտելու համար: Հետևաբար, անհրաժեշտ է մշակել աղետների կառավարման պլան՝ հաշվի առնելով ոչ կառուցվածքային միջոցառումների, ինչպես օրինակ՝ ազդարարման և տարահանման համակարգի ստեղծման արագ իրականացումը:

Պլանի ծավալն ու բովանդակությունը որոշվում է՝ ելնելով սողանքի վիճակից (գեոմորֆոլոգիա, երկրաբանություն, ծավալ, ակտիվություն և այլն), կարևորությունից, կանխարգելիչ միջոցառումների հրատապությունից, ծախս-արդյունավետություն համեմատությունից և այլնից:

#### 1.2 Պահպանման ենթակա օբյեկտների հստակեցում

Պահպանման ենթակա օբյեկտներն են մարդկային կյանքը, բնակելի տները, ճանապարհները, գյուղատնտեսական դաշտերը, հասարակական շինությունները և այլն: Տարածքները, որտեղ տեղակայված են վերոնշյալ օբյեկտները, բաժանվում են հետևյալ կատեգորիաների (տես Նկար 1)՝ հաշվի առնելով սողանքի կտրուկ շարժի հետևանքով առաջացող հնարավոր վնասները:

- 1) Սողանքի տարածքում
- 2) Սողանքի ստորին տարածքում, որտեղ սողանքային նյութերը կարող են շարժվել ներքև
- 3) Հոսանքն ի վեր տարածքը, որտեղ կանխատեսվում է վարարում սողանքի պատվարի պատճառով
- 4) Հոսանքն ի վար տարածքը, որտեղ կանխատեսվում է ջրհեղեղ սողանքի պատվարի փլուզման պատճառով



Նկար 1 Սողանքի հնարավոր վնասի տարածք

Պահպանման ենթակա օբյեկտների կարևորությունը տարբեր է՝ կախված իրավիճակից, ինչպես օրինակ՝ այլընտրանքային օբյեկտների կիրառման ու հասանելիության վերաբերյալ իրավիճակը:

### 1.3 Ապահովության նախագծային գործակցի սահմանում

Ապահովության նախագծային գործակցից սահմանվում է հակասողանքային միջոցառումների պլանավորման և նախագծման համար: Սողանքի ապահովության գործակցից սկզբնական վիճակում՝ նախքան հակասողանքային միջոցառումների իրականացումը, սահմանված է 0.95 - 1.0՝ ըստ սկտիվության վիճակի: Կառուցվածքի ապահովության գործակցից սահմանված է 1.10 - 1.20՝ ելնելով սողանքի առաջացման և շարժի մեխանիզմից, պահպանման ենթակա օբյեկտների կարևորությունից, կանխատեսելի զգալի վնասներից և այլն: Ապահովության նախագծային գործակցից պետք է լինի 1.05 կամ ավել՝ նույնիսկ ժամանակավոր միջոցառումների համար: Նշվում է, որ այստեղ ապահովության նախագծային գործակցից ծառայում է կանխարգելիչ միջոցառումների քանակը որոշելու, այլ ոչ թե լանջերի կայունությունն ապահովելու համար: Ապահովության նախագծային գործակցից հաշվարկված արժեք է՝ ելնելով փորձից, կիրառելով հակադարձ հաշվարկի միջոցով ստացված սահքի դիմադրությունը (C և  $\phi$ ):

### 1.4 Ազդարարման և տարահանման միջոցառումներ

Սողանքային աղետի վնասները նվազեցնելու համար անհրաժեշտ է խթանել ազդարարման և տարահանման միջոցառումները՝ կանխարգելիչ միջոցառումների հետ միասին, մարդկային վնասները նվազեցնելու համար: Քանի որ սողանքի շարժը բավականին դանդաղ է, կարելի է կիրառել ազդարարման և տարահանման համակարգ՝ օգտվելով մոնիթորինգի արդյունքից, ինչպիսին է գրունտի ձևախախտման դիտարկումը

և էքստենզիվությունը ու թեքաչափերով տեղաշարժի չափումը:

Հետևյալ կետերը կարևոր են ազդարարման և տարահանման համակարգի իրականացման համար:

- 1) Թիրախային տարածքը, որը պետք է այդ համակարգը ընդգրկի, հստակեցված է:
  - Մոնիթորինգի համակարգ
  - Սողանքի և տուժած տարածքները
- 2) Ազդարարման և տարահանման ժամանակը հստակեցված է:
- 3) Ազդարարման և տարահանման համար հաղորդակցության համակարգը հստակեցված է:

## 1.5 Էկոլոգիական նկատառումներ

Սողանքի ակտիվացումը, ընդհանուր առմամբ, ունենում է անբարենպաստ ազդեցություն լանջերի շրջակա միջավայրի վրա, և անհրաժեշտ է նվազեցնել ակտիվությունը էկոլոգիական տեսանկյունից: Չնայած հակասողանքային միջոցառումները կանխում են սողանքային տարածքում բնական միջավայրի վատթարացումը, շրջակա միջավայրի վրա վատ ազդեցությունները կանխատեսվում են, ինչպես օրինակ բուսականության վերացումը շինարարական աշխատանքների հետևանքով և ջրավազանների կամ լճերի ցամաքեցումը դրենաժային աշխատանքների պատճառով: Պլանավորման և կանխարգելիչ միջոցառումների նախագծման գործում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանը և վերջինիս վերականգնմանը:

Ստորև բերված են կետեր, որոնք պետք է հաշվի առնվեն հետազոտության, շինարարության և պահպանման աշխատանքներում էկոլոգիական տեսանկյունից:

### 1.5.1 Բնական միջավայրը և լանդշաֆտը

- Մեծ ծավալով գրունտի հեռացումը և հակակշիռ հողապատնեշումը հանգեցնում են մեծ փոփոխության լանջերի վրա գտնվող միջավայրում: Կանխարգելիչ միջոցառումների տեսակի ընտրության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բնական միջավայրի վերականգնմանը, ինչպես օրինակ՝ բուսականության տնկմանը:
- Սողանքի հետ առնչվող լանջային աշխատանքների դեպքում կանխարգելիչ աշխատանքները պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով լանդշաֆտը և բուսականության վաղ վերականգնումը:
- Անհրաժեշտ է նվազեցնել ազդեցությունը բնական միջավայրի վրա, ինչպես օրինակ՝ կրճատել ծառահատումները և ցեխաջրի տարածումը շինարարական աշխատանքների ժամանակ:

### 1.5.2 Կենսամիջավայր

- Սողանքային տարածքները, ընդհանուր առմամբ, ձևավորում են մեղմ լանջեր՝ հանդիսանալով շատ լավ վայր ապրելու և մշակելու համար՝ հատկապես

լեռնային տարածքներում, և անհրաժեշտ է հաշվի առնել ազդեցությունը կենսամիջավայրի վրա:

- Սողանքային տարածքները, ընդհանուր առմամբ, հարուստ են ջրով, և բնակիչներն օգտագործում են ջուրը ապրելու և մշակման համար: Հատկապես դրենաժային աշխատանքների դեպքում անհրաժեշտ է հստակեցնել այդ աշխատանքների անբարենպաստ հետևանքները:
- Դրենաժավորված ջուրը կարող է օգտագործվել մի քանի նպատակներով, օրինակ՝ ոռոգման, ձնհալի, խմելու և այլն: Անհրաժեշտ է օգտագործել դրենաժավորված ջուրը՝ ելնելով բնակիչների պահանջից:

## 2. Հակասողանքային կառույցների տեղաբաշխման պլանավորում

### 2.1 Ընդհանուր դրույթներ

Հակասողանքային կառույցների տեղաբաշխման պլանավորումը (ներառյալ՝ կառույցների տեսակը, վայրը, քանակը, շինարարության գործընթացը) կատարվում է ռիսկը նվազեցնելու համար՝ ելնելով սողանքային աղետի կառավարման պլանից (տես Գլուխ 1) և հաշվի առնելով սողանքի ծավալն ու մեխանիզմը, պահպանման ենթակա օբյեկտների կարևորությունը, կանխատեսվող վնասները և այլն:

Ընդհանուր առմամբ, սողանքային տարածքում գոյություն ունեն մի քանի ակտիվ բլոկներ, որոնք ազդում են միմյանց վրա շարժի տեսանկյունից: Տարածքի ընդհանուր պլանը մշակվում է սողանքի ամբողջ տարածքը կայունացնելու համար՝ բարձրացնելով յուրաքանչյուր ակտիվ բլոկի կայունությունը, հաշվի առնելով յուրաքանչյուր բլոկի համար միջոցառումների առաջնահերթությունը՝ ելնելով բլոկերի տարածքից, բլոկերի միջև կապից, յուրաքանչյուր բլոկի կայունությունից, պահպանման ենթակա օբյեկտների վայրից ու կարևորությունից և այլն: Եթե սողանքի ընդհանուր հատկությունները չեն հստակեցվել հետազոտության միջոցով, տարածքի ընդհանուր պլանը կվերանայվի՝ հետագայում իրականացվելիք հետազոտության արդյունքի հիման վրա:

Կանխարգելիչ միջոցառումների ավարտից հետո անհրաժեշտ է հաստատել միջոցառումների արդյունավետությունը, ինչպես որ այն պլանավորվել է սողանքի շարժի շարունակական մոնիթորինգի արդյունքում: Քանի որ կա սողանքի՝ ընդհատումներով ակտիվացման հավանականություն միայն աննորմալ կլիմայի, օրինակ՝ ուժեղ անձրևի, հանկարծակի ձնհալի և այլնի դեպքում, պահանջվում է արդյունավետության մանրագնի նուսումնասիրություն:

### 2.2 Լանջի կայունության վերլուծություն

Տեղաբաշխման պլանավորման համար իրականացվում է կայունության վերլուծություն կտրվածքի վրա հետազոտության հիմնական գծի երկայնքով: Ելնելով կայունության վերլուծության արդյունքից՝ որոշվում է կանխարգելիչ միջոցառումների

տեսակն ու շինարարության մեթոդը:

Գոյություն ունի կայունության վերլուծության երկու հիմնական մեթոդ. մեկը ծայրահեղ հավասարակշռման մեթոդն է, որն ուսումնասիրում է կայունությունը լարվածության մեջ ծայրահեղ հավասարակշռման մեջ, իսկ մյուսը լարվածության վերլուծության մեթոդն է, որն ուսումնասիրում է գրունտի դեֆորմացիան և լարվածությունը:

Ծայրահեղ հավասարակշռման մեթոդը հայտնի է որպես շերտի մեթոդ, ներառյալ Ֆելլենիուսի մեթոդը (հեշտացված մեթոդ), Բիշոպի մեթոդը, Ջանբուի մեթոդը, Մորգենստերն-Պրայսի մեթոդը: Բացի վերոնշյալ երկչափ մեթոդներից, առաջարկվում են եռաչափ մեթոդներ, ինչպես օրինակ՝ Հովլանդի մեթոդը, Ջանբուի եռաչափ մեթոդը և այլն:

Լարվածության վերլուծության մեթոդը դասակարգվում է վերջավոր տարրերի մեթոդի, առանձին տարրերի մեթոդի, պինդ զսպանակի մոդելի, և այլնի՝ էլնելով ընդհատվող մակերևույթի մոդելավորումից:

Վերլուծության համար օգտագործվում է ամենահարմար մեթոդը՝ հաշվի առնելով սողանքային տարածքի յուրահատկությունները, ինչպես օրինակ՝ սողանքային տարածքի ձևը, սահքի մակերևույթի ձևը, շարժի տեսակը և այլն: Ընդհանուր առմամբ կիրառվում է երկչափ հեշտացված մեթոդը, իսկ ապահովության նախագծային գործակիցը սահմանվում է արված հաշվարկի արդյունքների հիման վրա:

Հեշտացված մեթոդը, որը կոչվում է Ֆելլենիուսի մեթոդ կամ շվեդական մեթոդ, բացատրվում է հետևյալ ձևով:

Մեթոդը, ի սկզբանե, կիրառվել է շրջանաձև սահքի համար, իսկ ապահովության գործակիցը հաշվարկվել է որպես հարաբերակցություն պտտվող մոմենտի և դիմադրության մոմենտի միջև: Ստորև բերված բանաձևը կիրառվում է ոչ շրջանաձև սահքի համար՝ սահքի ուժի և դիմադրության ուժի բալանսի հաշվարկի նպատակով, ինչպես ցույց է տրված Նկար 2-ում:

$$F_s = \frac{\sum(N-U) \cdot \tan \varphi' + c' \cdot \sum l}{\sum T} \quad (\text{Բանաձև 1})$$

$F_s$ : Ապահովության գործակից

$N$ : Շերտի նորմալ ծանրության ուժ (kN/m) =  $W \cos \theta$

$T$ : Շերտի շոշափող ծանրության ուժ (kN/m) =  $W \sin \theta$

$U$ : Շերտի վրա ազդող ծակոտկենային ճնշում (kN/m)


$l$ : Շերտի սահքի մակերևույթի երկարություն (m)

$c'$ : Սահքի մակերևույթի կայունություն (kN/m<sup>2</sup>)

$\varphi'$ : Սահքի մակերևույթի ներքին շփման անկյուն (°)

$W$ : Շերտի կշիռ (kN/m)

$\theta$ : Սահքի մակերևույթի թեքման անկյուն (°)



Նկար 2 Հեշտացված մեթոդի պատկերում

### 2.2.1 Գրունտի դիմադրության պարամետրերը

Կայունության վերլուծության համար գրունտի դիմադրության պարամետրերը (Կպչունություն՝  $C'$  և ներքին շփման անկյուն՝  $\varphi'$ ) սահմանվում են հետևյալ երկու մեթոդներով.

- 1) Կիրառելով սահքի մակերևույթի նյութերի լաբորատոր թեստերի արդյունքները
- 2) Կիրառելով հաշվարկի պարամետրերը հակադարձ հաշվարկով՝ ելնելով ենթադրվող ներկայիս ապահովության գործակիցներից

Հեշտացված մեթոդով կայունության վերլուծության համար սահմանվում են սահքի մակերևույթի խորությունը, միավորի կշիռը և ծակոտկենային ճնշումը, իսկ հետո կպչունությունն ( $C'$ ) ու ներքին շփման անկյունը ( $\varphi'$ ) հաշվարկվում են հետևյալ ձևով.

- 1) Ներկայիս ապահովության գործակիցի սահմանում

Ներկայիս ապահովության գործակիցը սահմանվում է, ինչպես նկարագրված է 1.3 ենթակետում

- 2) Կպչունության ( $C'$ ) գնահատում

Կպչունությունը ( $C'$ ) սահմանվում է ելնելով Աղյուսակ 1-ում նշված սողանքի զանգվածի առավելագույն հաստությունից՝ հղում կատարելով գրունտի թեստերի արդյունքներին: Եթե սողանքի զանգվածի հաստությունը 25մ կամ ավել է,  $C'$ -ն, ընդհանուր առմամբ, սահմանվում է 25 kN/մ<sup>2</sup>: Եթե սողանքի զանգվածի հաստությունը 5մ կամ պակաս է,  $C'$ -ն սահմանվում է հատուկ ուսումնասիրության արդյունքում՝ համաձայն տեղանքի վիճակի:

Աղյուսակ 1 Սողանքի զանգվածի առավելագույն հաստությունը և կպչունությունը վերլուծության համար

Սողանքի զանգվածի առավելագույն հաստությունը	Կպչունությունը ( $C'$ ; kN/մ <sup>2</sup> )
5	5
10	10
15	15
20	20
25	25

- 3) Ներքին շփման անկյան ( $\varphi'$ ) հակադարձ հաշվարկ

Ներքին շփման անկյունը հաշվարկվում է Բանաձև 1-ով (տես ենթակետ 2.2)՝ մուտքագրելով վերոնշյալ 1) և 2) կետերում սահմանված արժեքները:

Սողանքի զանգվածի նյութերի միավորի կշիռը, ընդհանուր առմամբ, սահմանվում է 18 kN/մ<sup>3</sup>՝ հղում կատարելով գրունտի թեստերի արդյունքներին:

Կանխարգելիչ միջոցառումների տեսակը, նախագիծը, քանակը և այլն որոշվում են այնպես, որ հնարավոր լինի ստանալ ապահովության նախագծային գործակիցը՝ ապահովության գործակցի ուսումնասիրության միջոցով՝ կիրառելով C'-ի և  $\phi$ '-ի հաշվարկված արժեքները:

## 2.2.2 Ծակոտկենային ճնշում

Սահքի մակերևույթում ծակոտկենային ճնշումը սահմանվում է կայունության վերլուծության համար: Նախընտրելի է չափել ծակոտկենային ճնշումը անմիջապես սահքի մակերևույթի մակարդակի վրա ծակոտկենային ճնշման չափիչ սարքի միջոցով, քանի որ խառնված գրունտային ջրի մակարդակը չափվում է հորատանցքում, եթե հորատանցքում գոյություն ունեն մի քանի ջրատար հորիզոններ:

Եթե ծակոտկենային ճնշումը չի ստացվում սահքի մակերևույթի մակարդակի վրա, հաշվարկի համար կարող է օգտագործվել գրունտային ջրի մակարդակը: Այս դեպքում խորհուրդ է տրվում հորատանցքում չափել գրունտային ջուրը սահքի մակերևույթի վրա գտնվող ծակոտկեն շրջապահ խողովակների օգնությամբ:

Ընդհանուր առմամբ, գրունտային ջրի չափված մակարդակներից ամենաբարձրն է օգտագործվում կայունության վերլուծության համար: Եթե գրունտային ջուրը չափվում է սողանքի շարժի ժամանակ, չափված մակարդակն օգտագործվում է գրունտի պարամետրի հակադարձ հաշվարկի համար (C' և  $\phi$ ):

Եթե Ֆելլենիուսի մեթոդում  $(N-U) < 0$ , հաշվարկն արվում է՝ սահմանելով  $(N-U) = 0$ :

## 2.3 Կանխարգելիչ միջոցառումների տեսակի ընտրություն

Ելնելով սողանքի կառավարման պլանից՝ հակասողանքային կառույցների տեղաբաշխման պլանը մշակվում է զսպման աշխատանքների, կանխարգելման աշխատանքների կամ երկուսի համակցված աշխատանքների համար՝ հաշվի առնելով սողանքի ծավալն ու մեխանիզմը, պահպանման ենթակա օբյեկտների կարևորությունը, կանխատեսվող զգալի վնասները, միջոցառման տեսակի տնտեսական կիրառելիությունը և այլն:

Հակասողանքային միջոցառումները բաժանվում են հետևյալ երկու հիմնական կատեգորիաների՝ ըստ ֆունկցիայի.


### - Չսպման միջոցառումներ

Չսպման աշխատանքների նպատակն է նվազեցնել կամ կայունացնել սողանքի ակտիվությունը սահքի ուժի և դիմադրության ուժի միջև բալանսի բարելավման միջոցով՝ ձևափոխելով բնական պայմանները, ինչպես օրինակ՝ մորֆոլոգիան և գրունտային ջրի պայմանները:

- Կանխարգելման աշխատանքներ

Կանխարգելման աշխատանքների նպատակն է կայունացնել սողանքի ակտիվության մի մասը կամ այն ամբողջությամբ՝ դիմադրության ուժի ավելացմամբ՝ կանխարգելիչ կառույցների տեղադրման միջոցով:

Լավ կիրառված կանխարգելիչ միջոցառումները նշված են Նկար 3-ում:



Նկար 3 Հակասողանքային միջոցառումների դասակարգում

Կանխարգելիչ միջոցառումների ընտրության համար պետք է ուսումնասիրվեն և ստուգվեն ստորև բերված կետերը: Հիմնականում, կանխարգելիչ միջոցառումների պլանը մշակվում է հետազոտության միջոցով սողանքի յուրահատկությունների հստակեցումից հետո:

- Սողանքի ակտիվացման հիմնական գործոններ և հարուցող գործոններ
- Անձրևի (ձնհալի), գրունտային ջրի և սողանքի շարժի միջև կապը
- Մորֆոլոգիան և երկրաբանությունը
- Սողանքի մասշտաբը
- Սողանքի շարժի ձևն ու արագությունը
- Պահպանման ենթակա օբյեկտները
- Տնտեսական արդյունավետությունը (արժեքը պետք է ներառի պահպանման ծախսը՝ ի լրումն շինարարության ծախսի)

Չնայած սողանքի յուրահատկությունները տարբեր են յուրաքանչյուր տեղանքում, հետևյալ կետի ուսումնասիրությունը կարևոր է կանխարգելիչ միջոցառումների պլանի մշակման համար:

**2.3.1 Սողանքի հարուցող գործոնը (հարուցող գործոնի վերացում)**

Ընդհանուր առմամբ, հարուցիչի վերացումն ամենաարդյունավետ միջոցառումն է:



Բնական սողանքների մեծ մասի դեպքում հարուցող գործոնը գրունտային ջրի ներհոսքի ավելացումն է ուժեղ անձրևի, երկարատև անձրևի, ձնհալի և այլնի հետևանքով: Հետևաբար, առաջին հերթին պետք է ուսումնասիրվեն մակերևութային ջրի և գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքները:

Մյուս կողմից, մարդու գործունեության հետևանքով առաջացած սողանքի կանխարգելիչ միջոցառումն է հետ բերել ձևափոխված վիճակը սկզբնական վիճակի: Եթե սողանքն առաջանում է ստորին լանջերի վրա հողահեռացման և վերին լանջերի վրա հողապատնեշման հետևանքով, ապա կանխարգելիչ միջոցառում կարող է լինել սկզբնական վիճակի հետ բերելը, որը հանդիսանում է հարուցող գործոնը վերացնելու միջոց:

### **2.3.2 Սահքի ուժի նվազեցում/ դիմադրության ուժի մեծացում**

Սահքի ուժի նվազեցման համար կանխարգելիչ տիպիկ միջոցառումներ են սողանքի վերին հատվածից հողի հեռացումը: Այս կանխարգելիչ միջոցառումները, ընդհանուր առմամբ, արդյունավետ են և արագ իրականացման տեսանկյունից: Եթե մեկ ուրիշ անկայուն զանգված կամ սողանքի բլուկ տեղաբաշխված է հողահեռացման տարածքի վերին լանջերի վրա, հողահեռացումը կարող է ակտիվացնել մեկ ուրիշ սողանք վերին լանջի վրա: Այդ իսկ պատճառով պահանջվում է կատարել վերին լանջերի վիճակի ուշադիր ստուգում նախքան հողահեռացման աշխատանքները կիրառելը:

Դիմադրության ուժի մեծացման համար կանխարգելիչ տիպիկ միջոցառումներ են հակակշիռ հողապատնեշման և ցցերի խրման աշխատանքը: Առաջինը սողանքի լեզվակային հատվածներում իրականացվող արդյունավետ միջոցառում է: Խարսխման աշխատանքները նույնպես կիրառվում են դիմադրության ուժը մեծացնելու համար:

### **2.3.3 Սողանքի ակտիվության վիճակը**

Արագ շարժվող սողանքների համար դժվար է կիրառել կանխարգելման աշխատանքներ: Նույնիսկ եթե կիրառվեն կանխարգելման աշխատանքներ, հնարավոր է, որ տեղադրված կառույցները կոտրվեն սողանքի շարժի հետևանքով: Նման դեպքերում նախ և առաջ կիրառվում են զսպման միջոցառումներ ակտիվությունը նվազեցնելու համար, ինչպես օրինակ՝ մարդու գործունեության հետևանքով առաջացած հարուցող գործոնների հեռացումը, գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքները, դրենաժային հորատման աշխատանքները, և, հետո միայն կիրառվում են կանխարգելման աշխատանքները՝ կախված իրավիճակից:

### **2.3.4 Սողանքի մասշտաբը**

Ըստ սողանքի մասշտաբի՝ ընտրվում են կանխարգելիչ միջոցառումների հարմար տեսակներ:

Գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքների շարքից դրենաժային հորատման աշխատանքները կարող են չկիրառվել մեծ սողանքի համար, քանի որ արդյունավետ չէ հորատել երկար հոր մինչև սահքի մակերևույթին հասնելը: Մեծ

սողանքում գրունտային ջրի դրենաժավորման համար, արդյունավետ և տնտեսապես շահավետ կարող են լինել դրենաժային հորի կամ դրենաժային թունելի աշխատանքները:

Ինչ վերաբերում է կանխարգելման աշխատանքներին, ցցերի խրման աշխատանքները կարող են կիրառվել բավականին փոքր սողանքի համար, մինչդեռ խարսխման աշխատանքները և սյունների պատրաստման աշխատանքները կարող են կիրառվել համեմատաբար մեծ սողանքների համար:

### **2.3.5 Կանխարգելիչ միջոցառումների վայրը**

Սողանքային բլոկի վերին հատվածը, ընդհանուր առմամբ, գտնվում է լարվածության տարածքում և տարածքում ձևավորվում են բաց ճաքեր, ու, հետևաբար, գրունտային ջրի և մակերևութային ջրի դրենաժավորման աշխատանքները կլինեն արդյունավետ: Գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքների իրականացումը արդյունավետ է նաև շրջակա տարածքից գրունտային ջրի ներհոսքը նվազեցնելու համար: Գրունտի դրենաժային աշխատանքներն իրականացվում են նաև սողանքի վերին հատվածում:

Մյուս կողմից սողանքային բլոկի ստորին հատվածը, ընդհանուր առմամբ, գտնվում է սեղմվածության տարածքում, և, հետևաբար, այդ տարածքում արդյունավետ են հակակշիռ հողապատնեշման և կանխարգելման աշխատանքները:

## **2.4 Ջսպման աշխատանքների պլանավորում**

### **2.4.1 Մակերևութային ջրի դրենաժավորման աշխատանքներ**

Մակերևութային ջրի դրենաժավորման աշխատանքների նպատակն է նվազեցնել կամ կանխել մակերևութային ջրի ներհոսքը դեպի սողանքային տարածք և նվազեցնել գրունտային ջրի մակարդակը սողանքային տարածքում: Մակերևութային ջրի դրենաժավորման աշխատանքները ներառում են ջրանցքի աշխատանքներ և ջրի ներթափանցման կանխարգելման աշխատանքներ, և այդ աշխատանքներից մեկը կամ երկուսն էլ ընտրվում են՝ կախված կոնկրետ իրավիճակից: Մակերևութային ջրի դրենաժավորման աշխատանքները կիրառվում են որպես հրատապ միջոցառում, քանի որ դրա համար անհրաժեշտ կառույցի շինարարությունը կարող է արվել բավականին կարճ ժամանակում: Եթե ջրանցքը գործում է սողանքի վերին հատվածում, կառույցի համար հողապատնեշումը պետք է նվազեցվի՝ սողանքի կայունության վրա անբարենպաստ ազդեցությունից խուսափելու համար: Անձրևաջրի ներհոսքի կանխարգելմանն ուղղված ջրանցքի աշխատանքները պետք է պլանավորվեն կայուն տարածքներում՝ սողանքային տարածքից դուրս:

Չնայած մակերևութային ջրի դրենաժավորման աշխատանքների արդյունավետության քանակական գնահատումը հասանելի չէ, խորհուրդ է տրվում կիրառել մակերևութային ջրի դրենաժավորման աշխատանքներ՝ այլ միջոցառումների հետ միասին: Եթե գոյություն ունի սերտ կապ անձրևաջրի և սողանքի ակտիվացման միջև, մակերևութային ջրի դրենաժավորման աշխատանքներն արդյունավետ

միջոցառում են:

#### **(1) Ջրանցքի աշխատանքներ**

Ջրանցքի աշխատանքների նպատակն է նվազեցնել կամ կանխել մակերևութային ջրի ներհոսքը՝ հավաքելով և հեռացնելով ջուրը սողանքային տարածքից դուրս: Ջրանցքի աշխատանքները բաժանվում են ջրհավաք ջրանցքի աշխատանքների և ջրահեռացման ջրանցքի աշխատանքների:

##### **(ա) Ջրհավաք ջրանցքի աշխատանքներ**

Ջրհավաք ջրանցքի աշխատանքները, սովորաբար, պլանավորվում են սողանքային տարածքում կողային ուղղությամբ՝ մակերևութային ջուրն արդյունավետ հավաքելու համար: Ջրանցքը սովորաբար լայն է ու ոչ խորը, և այն միացված է ջրահեռացման ջրանցքին:

##### **(բ) Ջրահեռացման ջրանցքի աշխատանքներ**

Ջրահեռացման ջրանցքի նպատակն է տեղափոխել հավաքված ջուրը սողանքային տարածքից դուրս: Ջրանցքի կտրվածքի չափսերը պետք է որոշվեն՝ ելնելով հավաքված ջրի թողունակության հաշվարկից: Ջրահեռացման ջրանցքը, ընդհանուր առմամբ, նախագծվում է սողանքային տարածքում հարթ կամ ուռուցիկ ձև ունեցող հատվածների երկայնքով: Հատակի թմբածն պատնեշները (բետոնից կամ մետաղական) պետք է տեղադրված լինեն 20մ – 30մ ինտերվալով՝ արագ հոսքի հետևանքով առաջացող էրոզիայից և գրունտից նյութերի ներծծումից խուսափելու համար: Ջրահեռացման ջրանցքի վերջնամասերում և երկու ջրանցքների միացման կետում պետք է տեղադրվեն ջրհավաք փոսեր կամ հատակի թմբածն պատնեշներ՝ էրոզիան կանխելու համար:

#### **(2) Ջրի ներթափանցման կանխարգելման աշխատանքներ**

Որպես ջրի ներթափանցման կանխարգելման աշխատանքներ գետնի մակերևութին առաջացած ճաքերը լցվում են կավով/ցեմենտով կամ ծածկվում են պլաստիկ շերտով: Ջրավազանների կամ ջրանցքների վրա եղած ճաքերի միջով ջրի ներթափանցումը կանխելու համար պլանավորվում է ծածկել անջրանցիկ նյութերով, բաժանել ջրանցքները և այլն:

#### **2.4.2 Գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքներ**

Գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքների նպատակն է ցածրացնել սողանքի զանգվածի մեջ նյութերի ծակոտկենային ճնշումը՝ գրունտային ջրի դրենաժավորման միջոցով, որը հոսում կամ ներթափանցում է սողանքային տարածք: Գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքները բաժանվում են ծանծաղ գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքների և խորքային գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքների:

Գրունտային ջրի նվազեցման թիրախային մակարդակը որոշվում է ըստ կանխարգելման միջոցառումների տեսակի և տեղանքի պայմանների, ինչպիսիք են

կոնկրետ սողանքային տարածքի գեոմորֆոլոգիան, երկրաբանությունը, գրունտը, գրունտային ջուրը: Եթե չկա ոչ մի հղում, օրինակ՝ գրունտային ջրի վերլուծության արդյունքը և գրառումներ հարակից տարածքներում գրունտային ջրի նվազեցման վերաբերյալ, հնարավոր է օգտագործել Աղյուսակ 2-ում բերված արժեքները: Նշվում է, որ Աղյուսակ 2-ում բերված արժեքները հիմնված են մի քանի դեպքերի վերաբերյալ գոյություն ունեցող գրառումների վրա, երբ գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքներն իրականացվել են պատշաճ ձևով: Հետևաբար, անհրաժեշտ է վերաուսումնասիրել աշխատանքները կամ ավելացնել աշխատանքների քանակը:

Աղյուսակ 2 Գրունտային ջրի նվազեցման հիմնարժեքներ

Աշխատանքների տեսակը	Հիմնարժեք (մ)
Հորիզոնական հորատում	3
Դրենաժային հոր	5
Դրենաժային թունել	8

**(1) Ծանծաղ գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքներ**

**(ա) Գետնի տակով անցնող արկղաձև ջրթող խողովակի աշխատանքներ**

Գետնի տակով անցնող արկղաձև ջրթող խողովակի աշխատանքների նպատակն է հեռացնել ծանծաղ գրունտային ջուրը և/կամ ներթափանցած անձրևաջուրը անմիջապես: Գետնի տակով անցնող արկղաձև ջրթող խողովակի աշխատանքները հատկապես արդյունավետ են և խորհուրդ են տրվում շատ գրունտային ջուր պարունակող քիչ թափանցելի գրունտի համար: Աշխատանքները կիրառելի են մինչև մոտ 2մ խորության վրա գտնվող գրունտային ջրի դրենաժավորման համար:

**(բ) Բաց ջրանցքի և գետնի տակով անցնող արկղաձև ջրթող խողովակի աշխատանքներ**

Բաց ջրանցքի և գետնի տակով անցնող արկղաձև ջրթող խողովակի աշխատանքները կիրառվում են ինչպես մակերևութային ջրի, այնպես էլ ծանծաղ գրունտային ջրի դրենաժավորման համար: Բաց ջրանցքները (մակերևութային ջրի հավաքման ջրանցք) սովորաբար կոտրվում են սողանքի շարժի պատճառով, իսկ գետնի տակով անցնող արկղաձև ջրթող խողովակը օգտագործվում է կոտրված մասերից ներթափանցած ջուրը դրենաժավորելու համար:

**(գ) Հորիզոնական հորատման աշխատանքներ**

Հորիզոնական հորատումը կիրառվում է դրենաժավորելու համար գրունտային ջուրը, որը չի կարող հեռացվել գետնի տակով անցնող արկղաձև ջրթող խողովակով: Նախընտրելի է որոշել հորատանցքերի տրամագիծը, երկարությունը և անկյունը: Հորիզոնական հորատման աշխատանքները սովորաբար պլանավորվում են այն տարածքներում, որտեղ կուտակվում է գրունտային ջուրը, իսկ հորատանցքերի ծայրերի ինտերվալը պետք է լինի 5մ - 10մ:

## **(2) Խորքային գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքներ**

### **(ա) Հորիզոնական հորատման աշխատանքներ**

Հորիզոնական հորատման աշխատանքներն իրականացվում են սահքի մակերևույթի, խզվածքների և ճաքճքված գոտիների շուրջը խորքային գրունտային ջուրը դրենաժավորելու համար: Աշխատանքների թիրախն են հետազոտության միջոցով հաստատված ջրատար հորիզոնները: Ընդհանուր առմամբ, հորատանքների միջև ինտերվալը նախատեսվում է 5մ – 10մ, իսկ հորատանցքերի երկարությունը որոշվում է այնպես, որպեսզի հորատանցքերը ներթափանցեն սահքի մակերևույթի մեջ՝ ունենալով 5մ – 10մ լրացուցիչ երկարություն կայուն գրունտի մակարդակում:

### **(բ) Դրենաժային հորերի աշխատանքներ**

Դրենաժային հորերի աշխատանքները կիրառվում են խորքային գրունտային ջուրը դրենաժավորելու համար: Աշխատանքներն իրականացվում են ավելի խորը հատվածներից գրունտային ջուրը ինտենսիվ դրենաժավորելու համար: Եթե խորքային գրունտային ջրի դրենաժավորման համար պահանջվում է 50մ կամ ավել երկարությամբ հորիզոնական հորատում, կարող են կիրառվել դրենաժային հորի աշխատանքները՝ հորատման աշխատանքների փոխարեն:

Սովորաբար, հորի միջոցով դրենաժավորումը արդյունավետ չի լինում, և գրունտային ջրի դրենաժավորումը, հիմնականում, պլանավորվում է հորիզոնական հորատման միջոցով՝ հորի փոխարեն:

Ընդհանուր առմամբ, հորի խորությունը նախագծվում է մոտ 2մ սահքի մակերևույթից վերև՝ սողանքի շարժի վնասից խուսափելու համար: Բավականին կայուն սողանքի դեպքում հնարավոր է, որ հորի հատակը հասնի սահքի մակերևույթին:

Հորերի տեղադրությունները և չափսը որոշվում են՝ ելնելով արդյունավետությունից, շինարարության ժամանակ ապահովությունից և հեշտ պահպանումից: Անհրաժեշտ է կազմել հորի հատակագիծը և նախագծել այն, որպեսզի հնարավոր լինի հեռացնել կուտակված ջուրը ազատ հոսքով: Եթե ազատ հոսքով դրենաժավորումը հնարավոր չէ, կնախագծվի մեկ այլ հոր (փոխարինող հոր) ազատ հոսքով դրենաժավորման համար: Փոխարինող հորերը նույնպես պլանավորվում են այնպես, որ չհատվեն սահքի մակերևույթի հետ՝ հորերի կայունությունը ապահովելու համար:

Եթե գոյություն ունի գրունտային ջուր տարբեր շերտերում (ջրատար հորիզոններ), անհրաժեշտ է կատարել հորիզոնական հորատում երկու կամ ավել մակարդակներում՝ թիրախային շերտերից ջուրը հեռացնելու համար:

Եթե գրունտը բաղկացած է փափուկ նյութերից և պարունակում է շատ գրունտային ջուր, դժվար է կառուցել հորեր, և, հետևաբար, պետք է կիրառել այլ կանխարգելիչ միջոցառում: Եթե սողանքի շարժը մեծ է, հնարավոր է, որ կառուցված հորերը վնասվեն կամ կոտրվեն: Խորհուրդ է տրվում չկառուցել հորեր նման տարածքներում՝ հորերի պահպանման, ինչպես նաև շինարարական աշխատանքների ապահով իրականացման

տեսանկյունից: Այս նպատակով, անհրաժեշտ է հաստատել երկրաբանական վիճակը և կայուն գրունտի մակարդակը հորերի տեղադրությունները որոշելիս:

Երկու կամ ավել հորերի կառուցման դեպքում պետք է որոշվեն հորերի տեղադրությունն ու քանակը՝ հաշվի առնելով հորիզոնական դրենաժավորման հորատանցքերի երկարությունը, յուրաքանչյուր հորի՝ գրունտային ջրի նվազեցման արդյունավետ տարածքները, գրունտային ջրի ներկայիս վիճակը և այլն:

#### **(գ) Դրենաժային թունելի աշխատանքներ**

Դրենաժային թունելի աշխատանքները կիրառվում են այն դեպքում, երբ դրենաժային հորերի և հորիզոնական հորատման միջոցով կատարվող գրունտային ջրի դրենաժավորումը արդյունավետ չէ:

Դրենաժային թունելի աշխատանքների նպատակն է հեռացնել գրունտային ջուրը թունելից կառուցված դրենաժային հորատանցքերի միջոցով: Թունելը չի կառուցվում սողանքային զանգվածում: Այն կառուցվում է սողանքի մակերևույթից դուրս՝ թունելի սրամագծի կրկնակի չափով նվազագույն հեռավորության վրա:

Դրենաժային հորատանցքերը կառուցվում են թունելի պատից հորիզոնական ուղղությամբ և դեպի վերև:

#### **(3) Գրունտի հեռացման աշխատանքներ**

Գրունտի հեռացման աշխատանքների նպատակն է նվազեցնել սողանքի զանգվածի կշիռը կամ սահքի ուժը՝ հեռացնելով գրունտը սողանքի վերին մասերից: Եթե թիրախային սողանքից վերև գտնվող լանջերի վրա կա մեկ այլ սողանք կամ անկայուն զանգված, հողահեռացման աշխատանքներ չեն կիրառվում, քանի որ հողի հեռացումը կարող է հանգեցնել վերին զանգվածի ակտիվացման:

Հեռացման ենթակա հողի քանակը որոշվում է կայունության վերլուծության միջոցով՝ հստակեցված սահքի մակերևույթով: Հողահեռացման տարաքում և հեռացված հողի թափման տարածքում կիրականացվի բնական պայմանի վերականգնման միջոցառում, օրինակ՝ բուսականության տնկում:

Եթե սողանքի շարժը բավականին մեծ է և դժվար է իրականացնել ապահով աշխատանքներ, կկիրառվի շինարարական մեխանիզմ, որն աշխատում է առանց աշխատուժի:

Հողահեռացման աշխատանքները պահանջում են բավականին մեծ ֆինանսական միջոցներ հողի փորման, փոխադրման, թափման և փորված լանջերի պահպանման համար, ու երբեմն ժամանակ է խլում հողի ձեռքբերման համար: Մյուս կողմից, ֆունկցիայի նվազեցումը բավականին փոքր, եթե հաշվի առնենք, որ հորիզոնական հորատման դրենաժային անցքերը կարող են խցանվել: Պետք է հաշվի առնել վերոնշյալ առավելությունն ու թերությունը օպտիմալ կանխարգելիչ միջոցառումների ընտրության համար:

#### **(4) Հակակշիռ հողապատնեշման աշխատանքներ**

Հակակշիռ հողապատնեշման աշխատանքների նպատակն է բարձրացնել դիմադրության ուժը սողանքի սահքի ուժի նկատմամբ՝ հողապատնեշելով ջրաթափանց գրունտը սողանքի լեզվակային հատվածում: Հողապատնեշման պլանը պետք է մշակվի՝ հաշվի առնելով հողապատնեշման կայունությունը և հարակից տարածքը: Եթե սողանքային լեզվակային հատվածը գտնվում է գետի հունի վրա, կպահանջվի գետի հունի տեղափոխում և/կամ գետի ափապաշտպան միջոցների կառուցում:

Սովորաբար շատ արդյունավետ է կիրառել հակակշիռ հողապատնեշման աշխատանքներ՝ հողահեռացման աշխատանքների հետ միասին, քանի որ հեռացված հողը կարող է օգտագործվել հողապատնեշման համար: Հակակշիռ հողապատնեշման հետևում գրունտային ջրի բարձրացումից խուսափելու համար խորհուրդ է տրվում իրականացնել գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքներ՝ հակակշիռ հողապատնեշման աշխատանքների հետ միասին:

Հողապատնեշման մեջ օգտագործվող հողի քանակը հստակեցվում է կայունության վերլուծության միջոցով: Հողապատնեշման տարածքում խորհուրդ է տրվում իրականացնել ծառատնկում բնական պայմաններն ու լանդշաֆտը վերականգնելու և էրոզիան կանխելու համար:

#### **(5) Գետի կառույցի աշխատանքներ էրոզիայի վերահսկման համար**

Գետի կառույցի աշխատանքների նպատակն է կայունացնել սողանքի լեզվակային հատվածը՝ պաշտպանելով գետի ափը և գետի հունը գետի հոսքի հետևանքով առաջացող էրոզիայի նկատմամբ կայուն կառույցներով:

Գետի կառույցի աշխատանքները էրոզիայի վերահսկման համար ներառում են պաշտպանիչ պատվարի աշխատանքներ, գետի հունի պաշտպանության աշխատանքներ, գետի հոսքի վերահսկման աշխատանքներ և երեսպատման աշխատանքներ: Գետի հոսքի տեղափոխումը նույնպես համարվում է կանխարգելիչ միջոցառում:

Պաշտպանիչ պատվարի, գետի հունի պաշտպանության և այլնի վայրերը հիմնականում գտնվում են կայուն տարածքում՝ սողանքային տարածքից դուրս, անմիջապես սողանքի տարածքի հոսանքն ի վար ուղղության վրա:

### **2.5 Կանխարգելիչ աշխատանքների պլանավորում**

Կանխարգելիչ աշխատանքները պլանավորվում են սողանքի ակտիվության մի մասը կամ այն անմբողջությամբ նվազեցնելու և կայունացնելու, կառույցների տեղադրման միջոցով դիմադրության ուժը մեծացնելու համար: Պլանը պատրաստվում է՝ ելնելով կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությունից և արժեքից: Պլանում ցույց է տրվում հարմար կառույցի տեղակայման սխեման՝ կանխարգելիչ միջոցառումների մեկ տեսակը կամ դրանց մի քանի տեսակների կոմբինացիան ընտրելուց հետո:

Կանխարգելման աշխատանքները բաժանվում են հետևյալ երկու կատեգորիաների՝ կանխարգելիչ միջոցառումների ֆունկցիայի տեսանկյունից:

- Աշխատանքներ, որոնք ապահովում են նորմալ դիմադրության ուժ սողանքի սահքի ուժի նկատմամբ՝ մետաղական խողովակների կամ երկաթբետոնով լցված սյուների (ցցերի կամ սյուների տեղադրման աշխատանքներ)՝ գրունտի մեջ տեղադրման միջոցով տեղաշարժի ուժի կամ թեքման ուժի նկատմամբ դիմադրության ուժով
- Աշխատանքներ, որոնք կայունացնում են լանջը գրունտի մեջ տեղադրված ջիլի (պողպատե նյութ) ձգման դիմադրությամբ (խարսխման աշխատանքներ)

### **2.5.1 Ցցերի (խողովակների) տեղադրման աշխատանքներ**

Ցցերի (խողովակների) տեղադրման աշխատանքների ժամանակ, սովորաբար, մի քանի մետաղական ցցեր դասավորվում են սահքի ուղղությունը հատող գծի վրա աջ անկյան ուղղությամբ, որպեսզի դիմադրության ուժը մեծացվի՝ որպես ցցերի մեկ մարմին, սահքի ուժի նկատմամբ: Եթե սողանքը ակտիվ է, և շարժը օրական 1մ է կամ ավել, դիմադրության ուժը հանդես չի գալիս որպես մեկ մարմին և հնարավոր չէ ստանալ ակնկալվող դիմադրության ուժը, մինչև որ ժամանակի ընթացքում բոլոր ցցերը չտեղադրվեն: Նման դեպքում ցցերի տեղադրման աշխատանքները պետք է իրականացվեն այլ միջոցառումների միջոցով շարժը դանդաղեցնելուց հետո:

Ցցերի տեղադրման աշխատանքների վայրը պետք է լինի սահող զանգվածի ստորին կետում, իսկ ցիցը պետք է տեղադրված լինի գրունտի բավարար դիմադրությամբ կայուն և ամուր հիմքի մեջ:

### **2.5.2 Սյուների տեղադրման աշխատանքներ**

Սյուների տեղադրման աշխատանքների նպատակն է մեծացնել դիմադրության ուժը՝ տեղադրելով երկաթբետոնով լցված սյուներ գրունտի մեջ՝ մինչև սահքի մակերևույթի խորությունը: Սյուների տեղադրման աշխատանքներն իրականացվում են այն դեպքերում, երբ պահանջվող դիմադրության ուժը չի կարող ստացվել ցցերի տեղադրման աշխատանքների միջոցով, և սահքի մակերևույթից ներքև կայուն գրունտը գտնվում է լավ վիճակում:

Սյուների կառուցման համար գրունտը փորվում է մինչև կայուն հիմքը 2.5մ – 6.5մ տրամագծով: Փորված տարածությունը լցվում է երկաթբետոնով սյուն դառնալու համար: Սյուների կառուցման ժամանակ պահանջվում է հատուկ ուշադրություն ապահովության աշխատանքի համար: Կառուցման ժամանակ պատշաճ ջրահեռացում իրականացնելու համար անհրաժեշտ է երկրաբանական հետազոտության միջոցով հստակեցնել գրունտային ջրի կամ աղբյուրի վիճակը:

### **2.5.3 Խարսխման աշխատանքներ**

Խարսխման աշխատանքների նպատակն է մեծացնել կայունությունը ջիլի ձգման դիմադրությամբ (պողպատե ձող, լար և այլն), որը տեղադրված է գրունտի մակերևույթի



վրա և ամրացված է սահքի մակերևույթից ներք գտնվող կայուն հիմքին: Ակնկալվում է, որ խարսխային աշխատանքները բարձրացնում են նորմալ լարվածությունը մինչև սահքի մակերևույթ, և, հետևաբար, տեղաշարժի ուժի նկատմամբ սզպման ուժը բարձրանում է (ամրացման ազդեցություն): Ակնկալվում է, որ խարսխային աշխատանքները ապահովում են նաև ձգվածության ուժ, երբ սողանքի զանգվածը շարժվում է ներքև (պահման ազդեցություն): Խարսխային աշխատանքների վայրը որոշվում է այնպես, որպեսզի հնարավոր լինի արդյունավետորեն ապահովել ամրացման և պահման ազդեցությունները:

Սողանքի շարժի հետևանքով գրունտի վրա խարսխի գլխամասի վրա ազդող բեռը մեծանում է: Կայուն հիմքին ամրացված խարսխի բարձր ամրությամբ պողպատե ձողերը կամ լարերը տեղափոխում են բեռը դեպի կայուն գրունտ, և, հետևաբար, խարսխային աշխատանքները ապահովում են հակազդեցության ուժ, որպես միավորված մարմին սողանքը կայունացնելու համար: Խարսխային աշխատանքները հարմար կանխարգելիչ միջոցառումներ են, որոնք կարող են կիրառվել կտրուկ լանջերի վրա, որտեղ գրունտի հակազդեցության ուժը չի կարող ստացվել ցցերի և սյուների տեղադրման աշխատանքների միջոցով: Խարսխային աշխատանքները կարող են իրականացվել բավականին կարճ ժամանակում՝ համեմատած ցցերի և սյուների տեղադրման աշխատանքների համար պահանջվող ժամանակի հետ, և, հետևաբար, խարսխային աշխատանքները կիրառվում են այն դեպքերում, երբ պահանջվում են հրատապ միջոցառումներ:

### **3. Ապահովության միջոցառումներ կառուցման ժամանակ**

Գոյություն ունի ռիսկ, որ սողանքը կարող է շարժվել կանխարգելիչ միջոցառումների իրականացման ժամանակ և վտանգի ենթարկել աշխատողների կյանքն ու աշխատանքների իրականացման մեջ ներգրաված մեխանիզմը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է պատրաստել աշխատանքների իրականացման ժամանակ ապահովության միջոցառումների պլան և վերահսկել սողանքի ակտիվությունը: Ռիսկային տարածքներում հողահեռացման և հողապատնեշման աշխատանքների համար կարելի է օգտագործել շինարարական մեխանիզմ, որն աշխատում է առանց աշխատուժի:

1.	Սողանքային աղետի կառավարման պլանավորում .....	1
1.1	Ընդհանուր դրույթ .....	1
1.2	Պահպանման ենթակա օբյեկտների հստակեցում .....	1
1.3	Ապահովության նախագծային գործակցի սահմանում .....	2
1.4	Ազդարարման և տարահանման միջոցառումներ .....	2
1.5	Էկոլոգիական նկատառումներ .....	3
1.5.1	Բնական միջավայրը և լանդշաֆտը .....	3
1.5.2	Կենսամիջավայր .....	3
2.	Հակասողանքային կառույցների տեղաբաշխման պլանավորում .....	4
2.1	Ընդհանուր դրույթներ .....	4
2.2	Լանջի կայունության վերլուծություն .....	4
2.2.1	Գրունտի դիմադրության պարամետրերը .....	6
2.2.2	Ծակոտկենային ճնշում .....	7
2.3	Կանխարգելիչ միջոցառումների տեսակի ընտրություն .....	7
2.3.1	Սողանքի հարուցող գործոնը (հարուցող գործոնի վերացում) .....	8
2.3.2	Սահքի ուժի նվազեցում/ դիմադրության ուժի մեծացում .....	9
2.3.3	Սողանքի ակտիվության վիճակը .....	9
2.3.4	Սողանքի մասշտաբը .....	9
2.3.5	Կանխարգելիչ միջոցառումների վայրը .....	10
2.4	Զսպման աշխատանքների պլանավորում .....	10
2.4.1	Մակերևութային ջրի դրենաժավորման աշխատանքներ .....	10
2.4.2	Գրունտային ջրի դրենաժավորման աշխատանքներ .....	11
2.5	Կանխարգելիչ աշխատանքների պլանավորում .....	15
2.5.1	Ցցերի (խողովակների) տեղադրման աշխատանքներ .....	16
2.5.2	Սյունների տեղադրման աշխատանքներ .....	16
2.5.3	Խարսխման աշխատանքներ .....	16
3.	Ապահովության միջոցառումներ կառուցման ժամանակ .....	17

8 Մոդանքային աղետի կառավարման հրատապ պլան



## Սողանքային աղետի անհապաղ արձագանքման ձեռնարկ

### 1. Ընդհանուր դրույթներ

Եթե ենթադրվում է, որ վնասը և/կամ դեֆորմացիան առաջացել են սողանքի պատճառով, ապա իրականացվում է հետևյալ արձագանքումը.

- 1) Տուժած տարածքի և սողանքի շարժի ուղղության հստակեցում
- 2) Տեղաշարժի և դեֆորմացիայի չափում
- 3) Սողանքի ակտիվացման մեխանիզմը
- 4) Սողանքի զանգվածի շարժի գնահատում
- 5) Հետագա ընդարձակման ուսումնասիրություն
- 6) Ռիսկային տարածքների գնահատում
- 7) Մոնիթորինգի սարքերի տեղադրում և հաղորդակցության համակարգի ստեղծում

### 2. Հետազոտություն արտակարգ իրավիճակներում

#### 2.1 Տեղանքի հետախուզություն

Տեղանքի հետախուզությունն իրականացվում է տուժած տարածքները հստակեցնելու և տեղաշարժն ու դեֆորմացիան չափելու համար:

##### 2.1.1 Տուժած տարածքների հստակեցում

Եթե ենթադրվում է, որ վնասը և/կամ դեֆորմացիան առաջացել են սողանքի պատճառով, ապա նախ և առաջ պետք է հստակեցնել տուժած տարածքները և սողանքի շարժի ուղղությունը տեղանքի հետախուզության միջոցով: Տեղանքի հետախուզությունը պետք է պատշաճ իրականացվի, քանի որ հաջորդող գործողությունները, օրինակ՝ մեխանիզմի գնահատումը, հետագա շարժի և ընդարձակման գնահատումը և այլն, հիմնվելու են տեղանքի հետախուզության արդյունքի վրա:

Տեղանքի հետախուզության տարածքը ընդգրկում է ոչ միայն տուժած տարածքը, այլև ավելի լայն տարածք՝ ներառելով հետևի լանջերը և շրջակա տարածքները, քանի որ տուժած տարածքը կարող է հանդիսանալ մեծ սողանքի միայն մեկ մասը: Հարկ է նշել, որ տեղանքի հետախուզության աշխատանքների ապահովությունն ունի ամենամեծ առաջնահերթությունը:

Տեղանքի հետախուզության կետերը հետևյալն են.

##### (1) Գեոմորֆոլոգիա

Գոյություն ունեցող սողանքների և փլուզումների տարածքները հստակեցվում են հիմնականում մակրոգեոմորֆոլոգիայի դիտարկմամբ: Միկրոգեոմորֆոլոգիայի դիտարկումն իրականացվում է ակտիվացած սողանքի տարածքի գնահատման համար:

Խորհուրդ է տրվում հստակեցնել տուժած տարածքում և դրա շուրջը գեոմորֆոլոգիայի ընդհանուր հատկությունները տեղագրական քարտեզների վերծանման միջոցով: Նախընտրելի է կատարելի տուժած տարածքի ավելի ընդարձակ տեսքի դիտարկում մակրոգեոմորֆոլոգիան հասկանալու համար:

## **(2) Երկրաբանությունը և երկրաբանական կառուցվածքները**

Սողանքային տարածքի և շարժված զանգվածի պայմանների գնահատման համար կիրառվում են գոյություն ունեցող երկրաբանական քարտեզները, իսկ երկրաբանական պայմաններն ու երկրաբանական կառուցվածքները հստակեցվում են մերկացումների դիտարկման միջոցով:

## **(3) Վնասված կառույցների և գրունտի դեֆորմացիայի վայրերը**

Տների և շինությունների դեֆորմացիաները կարել է հայտնաբերել համեմատաբար հեշտ, մինչդեռ բավականին դժվար է հայտնաբերել գրունտի դեֆորմացիան, օրինակ՝ ճաքերը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ուշադիր դիտարկել գրունտը՝ տուժած տարածքը հստակեցնելու և ակտիվ սողանքի տարածքը գնահատելու համար:


Քանի որ դեֆորմացիան կարող է հայտնվել ակտիվ սողանքի վերին հատվածներում և կողքի մասում, պահանջվում է այդ տարածքների մանրամասն դիտարկում: Հստակ վնաս կարող է առաջանալ միայն ակտիվ սողանքի լեզվակի վրա, և, հետևաբար, ավելի մեծ բարձրությունների վրա գտնվող լանջերը պետք է ուշադիր դիտարկվեն՝ ակտիվ սողանքի ամբողջ տարածքը հստակեցնելու համար:

## **(4) Աղբյուր**

Սողանքային տարածքները, ընդհանուր առմամբ, հարուստ են աղբյուրի ջրով: Եթե սահքի մակերևույթը կազմում է անջրանցիկ շերտ, աղբյուրը, երբեմն, կարող է ի հայտ գալ սողանքի լեզվակի վրա: Աղբյուրի կետերի տեղադրությունները համարվում են ակտիվ սողանքի տարածքի գնահատման համար անհրաժեշտ տվյալներից մեկը:

### **2.1.2 Տեղաշարժի և դեֆորմացիայի չափում**

Վերգետնյա էքստենզոմետրերը տեղադրվում են գրունտի տեղաշարժը հստակեցնելու համար: Ընդհանուր առմամբ, վերգետնյա էքստենզոմետրերը տեղադրվում են գրունտի ճաքերի երկու կողմերում: Եթե գրունտի ճաքերը հստակ չեն կամ կանխատեսվում է ճաքերի հետագա զարգացում, տեղադրվում են լրացուցիչ էքստենզոմետրեր վերին լանջերի վրա: Նման դեպքերում, էքստենզոմետրերը տեղադրվում են գոգավոր և ուռուցիկ ճաքերի զծերի երկու կողմում, ինչպես ցույց է տրված նկար 1-ում:




Նկար 1 Վերգետնյա էքստենզիոնների տեղադրությունը

Վերգետնյա էքստենզիոնների միջոցով չափման արդյունքները կարող են օգտագործվել ոչ միայն շարժի տարածքի հստակեցման, այլև սողանքի զանգվածի հետագա շարժի գնահատման և ազդարարման ու տարահանման, ինչպես նաև կանխարգելի կառույցների շինարարության ժամանակ ապահովության համար:

Վերգետնյա էքստենզիոնների չափման ինտերվալը որոշվում է ըստ տիրող իրավիճակի, և խորհուրդ է տրվում օգտագործել էքստենզիոնները 10 րոպե կամ պակաս չափման ինտերվալով: Վերգետնյա էքստենզիոնների ավտոմատ գրանցող տեսակը կիրառվում է ռիսկային տարածքներում, որտեղ մուտքը սահմանափակված կամ արգելված է: Ավտոմատ գրանցող տեսակը կիրառվում է նաև հաճախակի գրանցումների համար՝ հիմնականում ազդարարման և տարահանման նպատակով:

Արագ շարժվող տարածքում մոնիթորինգի համար խորհուրդ է տրվում սահմանել հանույթային կետեր՝ հաշվի առնելով, որ տեղաշարժը գերազանցում է էքստենզիոններով չափվող երկարությունը:

Կիսված տախտակով հասարակ չափումը կարող է կիրառվել տեղաշարժի ժամանակավոր չափման համար և ուղղաձիգ, և հորիզոնական ուղղություններով, ինչպես ցույց է տրված նկար 2-ում: Կարելի է կիրառել նաև ճաքի երկու կողմերում տեղադրված երկու գնդասեղների միջև հեռավորության չափումը՝ հատկապես սենյակներում պատերի և սյուների վրա առաջացող ճաքերի համար: Վերոնշյալ ժամանակավոր չափումը, սովորաբար, օգտագործվում է այն դեպքերում, երբ չափում պահանջվում է շատ կետերում, կամ չափման համար՝ նախքան չափիչ սարքերի տեղադրումը: Չափման մեկ այլ տեսակ է լայնակի գծի վրա տեղադրված հանույթային ցցաձողերի ուսումնասիրության միջոցով չափումը: Տեսախցիկով դիտումը նույնպես կիրառելի է, հատկապես լանջերի և կառույցների, ինչպես նաև գետերի վիճակի և այլնի համար:



Նկար 2 Չափում կիսաված տախտակով

Չափման վայրը որոշվում է այնպես, որ հնարավոր լինի պատշաճ հստակեցնել շարժի վիճակը: Սողանքի տարածքը և շարժի ուղղությունը հստակեցնելու նպատակով խորհուրդ է տրվում տեղադրել չափիչ սարքեր շատ վայրերում: Տեղաշարժը կամ դեֆորմացիան չափելու համար կարելի է օգտագործել նաև հորատանցքի թեքաչափեր և հորատանցքի էքստենզիոմետրեր:

## 2.2 Հետագա ակտիվացման գնահատում

Նախ և առաջ իրականացվում է ակտիվացման մեխանիզմի գնահատում, իսկ հետո կատարվում են սողանքի զանգվածի շարժի գնահատում, հետագա ընդարձակման ուսումնասիրություն և ռիսկային տարածքների գնահատում:

### 2.2.1 Ակտիվացման մեխանիզմի գնահատում

Սողանքի ակտիվացման մեխանիզմի գնահատումը կարևոր քայլ է սողանքի զանգվածի շարժի գնահատման համար: Հստակեցվում են հիմնական գործոնները, ինչպես օրինակ՝ գեոմորֆոլոգիան, երկրաբանությունը և երկրաբանական կառուցվածքները, ու կատարվում է ուսումնասիրություն սողանքի հետագա ընդարձակման հնարավորության ուղղությամբ: Զուգահեռ, ակտիվացման հարուցող գործոնները գնահատվում են ազդարարման և տարահանման համակարգի ստեղծման և հրատապ միջոցառումների պլանավորման համար: Հիմնական կետերը, որոնք պետք է հստակեցվեն մեխանիզմի գնահատման համար, հետևյալն են.

- 1) Գեոմորֆոլոգիա
- 2) Երկրաբանություն և երկրաբանական կառուցվածքներ
- 3) Անձրև և գրունտային ջրի վիճակը
- 4) Մարդու կողմից կատարվող գործողություններ, օրինակ՝ փորում և հողապատնեշում

Վերոնշյալ 1) և 2) կետերը վերաբերում են հիմնական գործոնին: Չնայած հիմնական գործոնը հստակեցնելը կարևոր է, այն կարող է լիարժեք չարվել, երբ առաջնահերթ է դառնում արագ արձագանքումը:



Վերոնշյալ 3) և 4) կետերը առնչվում են հարուցող գործոնին: Հնարավոր հարուցող գործոնները բնական գործոններն են, օրինակ՝ անձրևը, ձնհալը, էրոզիան սողանքի լեզվակի վրա, երկրաշարժը և այլն, ու արհեստական գործոնները, օրինակ՝ փորումը, հողապատնեշումը, ջրամբարի կառուցումը և այլն: Շատ կարևոր է հստակեցնել հարուցող գործոնը, քանի որ արդյունավետ է պլանավորել և իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ հարուցող գործոնի վրա անբարենպաստ ազդեցությունը վերացնելու համար:

## 2.2.2 Սողանքի զանգվածի շարժի գնահատում

Սողանքի զանգվածի հետագա շարժը գնահատվում է՝ ելնելով սողանքային տարածքում տեղի ունեցած դեֆորմացիայից և սողանքային տարածքի գեոմորֆոլոգիական պայմաններից:


Պլաստիկ նյութերի սողանքի համար, որպես կանոն, ճաքերի ձևավորումից մինչև լանջի փլուզումը ժամանակային ինտերվալը համեմատաբար երկար է: Շրջանաձև սահքի մակերևույթով և լեզվակի վրա մեծ բարձրացումներով սողանքները, որպես կանոն, հանկարծակի չեն փլուզվում: Մյուս կողմից, կտրվածքում բաց ծայրով սահքի մակերևույթով սողանքները և փոքր սողանքները հակված են հեշտորեն փլուզվելուն: Ուժեղ անձրևները նույնպես նպաստում են սողանքների հանկարծակի փլուզմանը:

Հետևյալներն ունեն հետագա շարժի միտում մի քանի պայմաններում, օրինակ՝ գեոմորֆոլոգիական:

- 1) Ներքև թափող սողանք (տես Նկար 3)

Ներքև թափված նյութերի կայունությունը բավականին բարձր է:

Սողանքի սկարպը համեմատաբար բարձր է, և, հետևաբար, սկարպի հետևի վերին լանջը գտնվում է անկայունության վտանգի մեջ:




Նկար 3 Սողանքի ներքև թափվելու կտրվածքը

- 2) Սողանք, որի լեզվակային մասը բարձրացված է (տես Նկար 4)

Սահքի մակերևույթը, կարծես, գրեթե հորիզոնական կամ թեքված է դեպի սարալանջ:

Երբ զանգվածը շարժվում է, շարժված զանգվածը կուտակվում է լեզվակային մասում: Կուտակված զանգվածը կապահովի զսպման ուժ, և, հետևաբար, շարժը


չի արագանա:



Նկար 4 Լեզվակային մասի բարձրացմամբ սողանքի կտրվածքը

3) Լեզվակի վրա մեղմ լանջով սողանք (տես Նկար 5)


Սողանքը կարող է կայունանալ, որովհետև շարժված զանգվածը կուտակվում է լեզվակային մասում, և այն կապահովի զսպման ուժ:



Նկար 5 Լեզվակի վրա մեղմ լանջով սողանքի կտրվածք

4) Լեզվակի վրա կտրուկ լանջով սողանք (տես Նկար 6)

Լեզվակային հատվածում փլուզումը շարունակվում է և հանգեցնում սողանքի հետագա անկայունության:



Նկար 6 Լեզվակի վրա կտրուկ լանջով սողանք

Վերևում բերված նկարները և բացատրությունը ընդհանուր դեպքերի մասին են, իսկ հետագա շարժի վերաբերյալ դատողությունները պետք է կատարվեն՝ ելնելով կոնկրետ տեղանքի յուրահատկություններից: Հատկապես գրունտային ջրով հարուստ տարածքում անհրաժեշտ է լավ խորհել՝ հաշվի առնելով սելավի առաջացման հնարավորությունը:

Ընդհանուր առմամբ, շարժի արագությունը մեծանում է հանկարծակի, և, հետևաբար, կան դեպքեր, երբ հետագա փլուզման գնահատումը հնարավոր է շարժի արագության

մոնիթորինգի միջոցով: Եթե ի հայտ է գալիս որևէ աննորմալ պայման, լանջի գագաթի վրա ճաքերի չափումն իրականացվում է փլուզման ժամանակի գնահատման համար: Ազդարարման և տարահանման շակային համակարգն ավելացվում է մոնիթորինգի համակարգին:

### **2.2.3 Հետագա ընդարձակման ուսումնասիրություն**

Եթե սողանքը հետագայում ակտիվանա կամ սողանքային տարածքն ընդարձակվի, հնարավոր է առաջանան լուրջ վնասներ, և, հետևաբար, անհրաժեշտ է կատարել հետագա ընդարձակման մանրամասն ուսումնասիրություն: Ընդարձակման հնարավոր տարածքը գնահատվում է՝ հաշվի առնելով հետևյալ հիմնական կետերը: Խորհուրդ է տրվում տարածքում տեղադրել մոնիթորինգի սարքերը, օրինակ՝ վերգետնյա էքստենզոմետրեր:

#### 1) Գեոմորֆոլոգիա

Սողանքի գեոմորֆոլոգիական հատկությունների առկայություն, գոգավոր և ուռուցիկ ճաքերի գծերի բաշխվածություն, լեռնագագաթների և գետի հոսքերի բաշխվածություն, լեզվակային տարածքի գեոմորֆոլոգիա

#### 2) Երկրաբանություն և երկրաբանական կառուցվածքներ


Խզվածքների, երկրաբանական կառուցվածքների, օրինակ՝ կտրուկ լանջերի բաշխվածություն

#### 3) Այլ

Դեֆորմացիայի տարածքի տեղադրություն, դեֆորմացիայի տեսակ (ճաքեր, բարձրացում և այլն), տեղաշարժի փոփոխություն, աղբյուրի կետերի բաշխվածություն, բուսականության վիճակ

### **2.2.4 Ռիսկային տարածքների գնահատում**

Հետագա շարժի հնարավոր տարածքը գնահատելու համար կարող են օգտագործվել անցած աղետների գոյություն ունեցող գրառումները: Ելնելով այդ գրառումներից՝ տարածքում սողանքի զանգվածի տարածման տարածքը սահմանափակ է՝ տարածման երկարությունը հավասար կլինի գոյություն ունեցող սողանքի երկարության կրկնակի չափին, իսկ տարածման լայնությունը՝ գոյություն ունեցող սողանքի լայնության կրկնակի չափին՝ բոլոր դեպքերի մոտ 95%-ի համար: Հետևաբար, խորհուրդ է տրվում պատրաստել ռիսկային տարածքների նախագիծը, ինչպես ցույց է տրված նկար 7-ում:



Նկար 7 Շարժվող զանգվածի տարածման տարածք

Եթե հնարավոր է կառուցել սողաքի պատվար, պետք է սահմանվեն հնարավոր վարարման տարածքները հոսանքն ի վեր ուղղությամբ և հեղեղման տարածքները հոսանքն ի վար ուղղությամբ՝ ազդարարման և տարահանման համար:

### 3. Վերահսկման չափանիշները սողանքային աղետի անհապաղ արձագանքման համար

Որպես հղում՝ ազդարարման և տարահանման համակարգի ստեղծման համար սահմանվում են սողանքային աղետի անհապաղ արձագանքման վերահսկման չափանիշներ՝ հիմնականում ելնելով էքստենզոմետրի մոնիթորինգի տվյալներից:

Աղյուսակ 1 - 3 ցույց են տրված գոյություն ունեցող սողանքների վերահսկման չափանիշները: Չափանիշները նույնը չեն, քանի որ դրանք սահմանվել են՝ ելնելով կոնկրետ տեղանքի պայմաններից: Ընդհանուր առմամբ, օրական մոտ 1մմ տեղաշարժը “Խորհրդատվական” ազդարարման համար է, օրական մոտ 10մմ տեղաշարժը “Նախազգուշացման” համար է, իսկ ժամում մի քանի մմ-ից մինչև 10մմ տեղաշարժը “Տարահանման” և “Հեռու մնալու” համար է: Ազդարարումն արվում է ոչ միայն տեղաշարժի չափված արժեքի հիման վրա. տեղաշարժի կուտակումը նույնպես կարևոր է և պետք է հաշվի առնվի: Անհրաժեշտ է շատ ուշադիր սահմանել չափանիշները՝ հղում կատարելով նման դեպքերի, որովհետև որոշ սողանքներ հանկարծակի են ակտիվանում:

Ազդարարումը չեղյալ անելու համար չեն օգտագործվում ազդարարման համար

չափանիշների նույն արժեքները. չեղյալ անելու վերաբերյալ որոշումը պահանջում է ապահով իրավիճակի հաստատում:

Աղյուսակ 1 Վերահսկման չափանիշների ցանկը սահմանված տարածքներում գոյություն ունեցող սողանքների համար

No	Վերահսկման չափանիշներ վերգետնյա թեքաչափով				Այլ պարամետրեր	Նշում
	Խորհրդատվական	Եռախազգուշացում	Տարահանում	Հեռու մնալ		
1	-	4 մմ/ ժամ or 20 մմ/ օր	-	-	Տեղումներ	Չափանիշները տեղանքի հետախուզության համար են
2	1 մմ/օր	10 մմ/ օր	2 մմ/ ժամ *2 ժամ 4 մմ/ ժամ	10 մմ/ ժամ Մասնագետների որոշումը	Վերգետնյա թեքաչափ (R) Հորատանցքի տենզոմետր (R)	
3	1 մմ / օր	10 մմ/ օր	2 մմ/ ժամ *2 ժամ 4 մմ/ ժամ	10 մմ/ ժամ Մասնագետների որոշումը	Վերգետնյա թեքաչափ (R) Հորատանցքի տենզոմետր (R)	
4	1 մմ / օր	10 մմ/ օր	2 մմ/ ժամ *2 ժամ 4 մմ/ ժամ	10 մմ/ ժամ Մասնագետների որոշումը		
5	1 մմ / օր	10 մմ/ օր	2 մմ/ ժամ *2 ժամ 4 մմ/ ժամ	10 մմ/ ժամ Մասնագետների որոշումը	Վերգետնյա թեքաչափ (R)	
6	1 մմ / օր	10 մմ/ օր	2 մմ/ ժամ *2 ժամ 4 մմ/ ժամ	10 մմ/ ժամ Մասնագետների որոշումը	Վերգետնյա թեքաչափ (R) Հորատանցքի տենզոմետր (R)	
7	1 մմ/ օր *7 օր	12 – 17 մմ/օր	2 մմ/ ժամ *2 ժամ 4 մմ/ ժամ		Չափումը պետք է կատարվի բազմաշերտ տեղաշարժի չափիչ սարքով	
8	1 մմ/ օր	10 մմ/ օր	2 մմ/ ժամ *2 ժամ 4 մմ/ ժամ	10 մմ/ ժամ Մասնագետների որոշումը		
9			2- 4 մմ/ ժամ		Տեղումներ	
10			4 մմ/ ժամ		Տեղումներ	
11			1) 2 մմ/ ժամ 2) 4 մմ/ ժամ			1) : կանխարգելիչ միջոցառումների համար 2): տարահանման համար
12			2 մմ/ ժամ			Չափանիշները տեղանքի հետախուզության համար են
13	10 մմ/ օր	2 մմ/ ժամ	4 մմ/ ժամ		Տեղումներ	
14		4 մմ/ ժամ 20 մմ/ օր			Տեղումներ	Չափանիշները տեղանքի հետախուզության համար են
15		1 մմ/ օր			Տեղումներ	Չափանիշները շինարարական աշխատանքները դադարեցնելու համար են

\*X: X տևողությամբ շարունակվող

Աղյուսակ 2 Վերահսկման չափանիշների ցանկը ջրամբարի ավազանի սահմաններին մոտ գոյություն ունեցող սողանքների համար

No	Վերահսկման չափանիշներ վերգետնյա թեքաչափով		Այլ պարամետրեր	Նշում
	Խորհրդատվական	Ջրամբարը ջրով լցնելու դադարեցում		
1	1 մմ/ օր *3 օր (ձգվածություն) 0.6 մմ/ օր *3 օր (սեղմվածություն)	3 մմ/ օր *3 օր Մասնագետների որոշումը	Վերգետնյա թեքաչափ	Չափանիշներ ջրամբարի փորձնական լցման համար
2	0.4 մմ/ օր	-	Վերգետնյա թեքաչափ Ստուգում	Չափանիշներ ջրամբարի փորձնական լցման համար
3	1.2 մմ/3 օր	Մասնագետների որոշումը	Վերգետնյա թեքաչափ Ստուգում Հորատանցքի թեքաչափ	Չափանիշներ ջրամբարի փորձնական լցման համար
4	-	2 մմ/ ժամ 10 մմ/ օր	Ստուգում	Չափանիշներ ջրամբարի փորձնական լցման համար
5	-	-	Վերգետնյա թեքաչափ	Չափանիշներ ջրամբարի փորձնական լցման համար
6	0.4 մմ/ օր *3 օր	1 մմ/ օր Մասնագետների որոշումը	Վերգետնյա թեքաչափ Ստուգում	Չափանիշներ ջրամբարի փորձնական լցման համար
7	4 մմ/ ժամ			Սողանք ջրամբարի ավազանի սահմանին մոտ
8	1 մմ/ օր	Մասնագետների որոշումը	Վերգետնյա թեքաչափ Հորատանցքի տեղաշարժը չափող սարք	Չափանիշներ ջրամբարի փորձնական լցման համար
9	0.4 մմ/ օր *3 օր	1 մմ/ օր	Վերգետնյա թեքաչափ Ստուգում	Չափանիշներ ջրամբարի փորձնական լցման համար

\*X: X տևողությամբ շարունակվող

Աղյուսակ 3 Վերահսկման չափանիշների ցանկը ճանապարհի կողքի լանջերի համար

No	Վերահսկման չափանիշների վերգետնյա թեքաչափով				Այլ պարամետրեր	Նշում
	Խորհրդատվական	Շախազգուշացում	Գանիսարգելիչ միջոցառում	Ջանապարհի փակում		
1	-		-	20 մմ/ օր 4 մմ/ ժամ 2 մմ/ ժամ *2 ժամ	Թեքաչափ Արագացումը չափող սարք	Չափանիշներ թունելի փորման ժամանակ
2					Հորատանցքի տեղաշարժը չափող սարք	
3		3 մմ/ ժամ		4 մմ/ ժամ		
4		20 մմ/ օր		4 մմ/ ժամ	Տեղումներ	
5	0.02 մմ/ օր 0.5 մմ/ամիս	0.1 մմ/ օր 2 մմ/ամիս	1 մմ/ օր 10 մմ/ամիս			
6	0.02 մմ/ օր	0.1 մմ/ օր	1 մմ/ օր			
7				2 մմ/ ժամ		Տեղանքի հետախուզություն
8				2 մմ/ ժամ		Տեղանքի

					հետախուզություն
9			2 մմ/ ժամ		Տեղանքի հետախուզություն
10			4 մմ/ ժամ		Տեղանքի հետախուզություն
11			2 մմ/ ժամ 10 մմ/ օր	Տեղումներ	
12			10 մմ/ օր		Չափանիշներ կանխարգելիչ միջոցառումների ժամանակ
13		4 մմ/ օր	A: 2 մմ/ ժամ 10 մմ/ օր B: 4 մմ/ժամ 20 մմ/ օր	Տեղումներ	Չափանիշներ կանխարգելիչ միջոցառումների ժամանակ A: Աշխատանքների դադարեցում լեզվակային տարածքում B: Բոլոր աշխատանքների դադարեցում
14			10 մմ/ օր		Չափանիշներ կանխարգելիչ միջոցառումների ժամանակ աշխատանքների դադարեցման համար
*X: X տևողությամբ շարունակվող					

#### 4. Հրատապ միջոցառումներ

Եթե սողանքը ակտիվանում է, և տները/շինությունները հայտնվում են սպառնալիքի տակ, ձեռնարկվում են հրատապ միջոցառումներ ազդարարման և տարահանման համակարգի ստեղծման և սողանքի ակտիվության նվազեցման համար: Ժամանակավոր կայուն միջոցառումների համար պետք է կիրառվի 1.05 կամ ավել ապահովության նախագծային գործակիցը:

Սողանքի ակտիվության նվազեցման համար արդյունավետ է վերացնել սողանքի հարուցող գործոնը: Եթե հարուցող գործոնի վերացումը դժվար է գեոմորֆոլոգիական պայմանի կամ այլ պատճառով, կիրառելի միջոցառումներ կձեռնարկվեն՝ հաշվի առնելով սողանքի շարժի իրավիճակը և շինարարական աշխատանքների ապահովությունը:

Ստորև բերված են շատ դեպքերում կիրառված կանխարգելիչ միջոցառումների հիմնական կետերը.

##### (1) Մակերևութային ջրի դրենաժավորման հրատապ միջոցառումներ

Մակերևութային ջրի ներհոսքը դեպի սողանքային տարածք կանխվում է սողանքային տարածքում ջրանցքների միջոցով հրատապ դրենաժավորմամբ, ջրանցքի տեղափոխությամբ, սողանքային տարածքի շրջակայքում ջրանցքների կառուցմամբ և այլն: Սողանքային տարածքում մակերևութային ջրի ներթափանցումը գրունտի մեջ

կանխվում է ծածկելով մակերևույթը պլաստիկ շերտերով, դրենաժավորելով աղբյուրի ջուրը, հեռացնելով ջրավազանների կամ լճերի ջուրը բաց կանալների միջոցով:

**(2) Գրունտային ջրի դրենաժավորման հրատապ միջոցառումներ**

Գրունտային ջրի հրատապ դրենաժավորման համար կատարվում է հորիզոնական հորատում կայուն տարածքից, օրինակ՝ սողանքային տարածքից դուրս կողմը և սողանքի հետևում գտնվող վերին լանջերը: Եթե սողանքային տարածք մուտքը հասանելի է, արդյունավետ միջոցառումներ են մեծ տրամագծով հորիզոնական դրենաժավորման հորատումը և/կամ ուղղաձիգ հորատումը՝ պոմպերով գրունտային ջուրը հեռացնելու համար:

**(3) Հողահեռացման հրատապ միջոցառումներ**

Հողահեռացման հրատապ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ է ստուգել հողահեռացման թիրախային լանջերից վերև գտնվող լանջերի կայունությունը և դրանց վրա սողանքային այլ բլոկների առկայությունը: Եթե աշխատանքների թիրախային տարածքը վտանգավոր վիճակում է, պետք է օգտագործել շինարարական մեխանիզմ, որն աշխատում է առանց աշխատուժի:

**(4) Հակակշիռ հողապատնեշման հրատապ միջոցառումներ**

Հրատապ հակակշիռ հողապատնեշումը բաժանվում է ժամանակավոր հողապատնեշման և մշտական հողապատնեշման: Ժամանակավոր հողապատնեշը կհեռացվի մշտական միջոցառումների ավարտից հետո: Եթե հողապատնեշման տարածքը հասնի մինչև գետի հունը, անհրաժեշտ է ուսումնասիրել գետի երոզիայի կանխման միջոցառումների կիրառումը: Հողապատնեշման նյութերը պետք է լինեն ջրանցիկ նյութեր, քանի որ քիչ ջրանցիկ հողապատնեշը կարող է հանգեցնել հողապատնեշի հետևում գտնվող լանջերում գրունտային ջրի մակարդակի բարձրացման:

Վտանգավոր տարածքներում աշխատանքն իրականացնելու համար կնախատեսվի առանց աշխատուժի աշխատող շինարարական մեխանիզմ:

**(5) Արձագանքում՝ կապված սողանքի պատվարի հետ**

Եթե կանխատեսվում է վարարում հոսանքն ի վեր տարածքում և/կամ հեղեղում հոսանքն ի վար տարածքում, անհրաժեշտ է հեռացնել շարժվող զանգվածը կամ փորել ամբարված ջրի ելքի ջրանցք: Պահանջվում է մեծ ուշադրություն հեռացման կամ փորման համար, քանի որ ակտիվացումը կարող է հանգեցնել շարժվող զանգվածի փլուզման կամ սահքի: Աշխատանքները կիրականացվեն վերգետնյա էքստենզիոնների միջոցով ապահովության խիստ վերահսկման պայմաններում: Աշխատանքների կատարման համար կարող է նախատեսվել առանց աշխատուժի աշխատող շինարարական մեխանիզմ:

Եթե պաշտպանիչ պատվարները կառուցվել են սողանքի պատվարի հոսանքն ի վար



ուղղությամբ, պաշտպանիչ պատվարներում նստվածքի հեռացումը կլինի արդյունավետ միջոցառում: Անհրաժեշտ է վերահսկել ապահովությունը նստվածքի հեռացման աշխատանքներն իրականացնելիս՝ հաշվի առնելով սողանքի պատվարի հանկարծակի ճեղքվելու հնարավորությունը:

**(6) Հրատապ կանխարգելիչ միջոցառումների սանդղակ**

Սողանքային աղետների ուղրտում եղած փորձը ցույց է տալիս, որ սողանքներն ակտիվանում են, եթե ապահովության գործակիցը նվազում է 5%-ով և շարժը կանգնեցվում է, եթե ապահովության գործակիցը աճում է 5%-ով:



## 9 Հակաստղանքային միջոցառումների նախագծում



## Հակասողանքային կառույցների նախագծման ձեռնարկ

### 1. Ընդհանուր դրույթներ

Հակասողանքային միջոցառումները նախագծվում են ֆունկցիոնալ և ապահով կառույցների համար՝ ելնելով հակասողանքային կառույցների տարածքի ընդհանուր պլանից:

Նախագծում կարևոր է կառույցների ամրությունը, իսկ կառույցների համար նյութերը ընտրվում են՝ հաշվի առնելով կառույցների ամրությունը: Կառույցների ֆունկցիայի տարիքային վատթարացումը նույնպես պետք է հաշվի առնվի: Կառույցների շինարարության արժեքի մեջ պետք է ներառվի նաև պահպանման ծախսը:

### 2. Զսպման աշխատանքների նախագծում


#### 2.1 Մակերևութային ջրի դրենաժային աշխատանքներ

Սողանքային տարածքում մակերևութային ջրի դրենաժային կառույցները կարող են ձևախախտվել սողանքի ակտիվացման հետևանքով, և, հետևաբար, կառույցների նախագծի մեջ պետք է հաշվի առնվեն հետևյալ կետերը.

- Ճկունությունը. կառույցները պետք է գործեն, նույնիսկ եթե դրանք ինչ-որ չափով ձևախախտվել են
- Հեշտ վերանորոգումը. կառույցները կարող են վնասվել սողանքի ակտիվացման արդյունքում, և, հետևաբար, դրանց նախագծման ժամանակ պետք է հաշվի առնվի վերանորոգման հեշտությունը:

#### 2.1.1 Ջրանցքի աշխատանքներ

Ջրանցքի կառույցները բաղկացած են ջրհավաք մասերից և դրենաժային մասերից: Կառույցների սխեմատիկ պլանը ցույց է տրված Նկար 1-ում: Բացի սողանքային տարածում կառույցներից, ջրանցքեր կառուցվում են նաև հարակից տարածքում՝ դեպի սողանքային տարածք մակերևութային ջրի ներհոսքը կանխելու համար:



Նկար 1 Ջրանցքի կառույցների սխեմատիկ պլան

Ջրանցքի կառույցների նախագծի հիմնական կետերն են.

- 1) Ջրանցքի հիմքը պատրաստվում է փորման, այլ ոչ թե հողապատնեշման միջոցով՝ ջրի արդյունավետ դրենաժի համար, ինչպես ցույց է տրված Նկար 1-ում բերված մանրամասն կտրվածքի վրա: Ջրանցքի պլանը որոշվում է այնպես, որպեսզի հնարավոր լինի նվազագույնի հասցնել փորումը ջրանցքի համար:
- 2) Խորհուրդ է տրվում լայնացնել և ավելի ծանծաղ դարձնել ջրանցքի կտրվածքը՝ հաշվի առնելով ջրանցքի կառույցի պահպանությունը: Կիսախողովակի տրամագիծը 30սմ կամ ավել է:
- 3) Կիսախողովակի հիմքը լցվում է անջրաթափանց նյութերով, օրինակ՝ սեղմված կավային նյութերով կամ ցեմենտագրունտով, խողովակների ճաքերից հավաքված ջրի ֆիլտրացիան կանխելու համար: Ջրհավաք հորերը պատրաստվում են երկու ջրանցքների և ջրանցքի թեքվող կետերի միացման տեղում: Ջրանցքի երկու կողմերն էլ ծածկված են բետոնով, ցեմենտագրունտով կամ ասֆալտով՝ էրոզիան և ջրի ինֆիլտրացիան կանխելու համար:
- 4) Հիմնական ջրանցքի կտրվածքի չափերը որոշվում են հորդացած ջրերի գնահատված բացթողնման հիման վրա: Հորդացած ջրերի բացթողնման գնահատման համար կօգտագործվի 50 տարիների ընթացքում տեղումների գերազանցման հավանականությունը: Ջրանցքի լայնական կտրվածքի տարածքը նախագծվում է հորդացած ջրերի հաշվարկված բացթողման 120%-ից ավել՝ հաշվի առնելով ջրանցքում նստվածքակուտակման հավանականությունը:
- 5) Եթե ջրհավաք հորը հանդիսանում է ջրանկման կառույց, ապա հորի լայնությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով (տես Նկար 2).

$$L = k ( h_l + t )$$

որտեղ,


$L$ : Հորի երկարությունն է (մ)

$k$ : 2.5 – 3.0

$t$ : Ջրի հոսքի խորությունն է հոսանքն ի վեր և հոսանքն ի վար ջրանցքներում (մ)


$h_1$ : Հոսանքն ի վեր և հոսանքն ի վար ջրանցքների հատակների մինջև հարաբերական բարձրությունն է (մ)

$h_2$ : Հորում ջրի խորությունն է (0.2 մ - 0.5 մ)



Նկար 2 Ջրհավաք հորի կտրվածքը

- 6) Եթե ջրանցքը պատրաստված է գրունտային ջրի բարձր մակարդակ ունեցող տարածքում, ջրանցքի հետ միասին պատրաստվում է նաև դրենաժային ջրթող խողովակ:
- 7) Նկար 3-ում ցույց է տրվում ջրհավաք հորի և ջրանկման կառույցի ստանդարտ նախագիծը: Կառույցները տեղակայված են 20մ – 50մ ինտերվալով:



Նկար 3 Ջրհավաք հորի և ջրանկման կառույցի ստանդարտ նախագիծ

- 8) Ջրանցքի նյութերն են Ս-աձև երկաթբետոնը, բետոնից կիսախողովակը, պլաստմասյա կիսախողովակը, պողպատե կիսախողովակը և այլն: Եթե կանխատեսվում է ջրանցքի դեֆորմացիա, ընտրվում են ճկուն խողովակներ:
- 9) Գրունտի մակերևույթի վրա ջրանցքի կողերի բետոնե ծածկույթը արդյունավետ միջոց է էրոզիայի և ջրի ներթափանցման, ինչպես նաև խոտերի դեմ, որոնք կարող են լցվել ջրանցքը:
- 10) Անհրաժեշտ է կառույցների պարբերաբար ստուգում և անհրաժեշտ վերանորոգում, քանի որ կառույցները կարող են վնասվել սողանքի շարժի հետևանքով:

### **2.1.2 Ջրի ներթափանցման կանխման աշխատանքներ**

Ջրի ներթափանցումը կանխող աշխատանքներն են.

#### 1) Լցման աշխատանքներ

Գրունտի վրայի ճաքերը լցվում են կավային նյութերով, բետոնով և ցեմենտագրունտով: Քանի որ հնարավոր է լցման աշխատանքները արագ կատարել, դրանք կղիտվեն որպես հրատապ միջոցառում:

#### 2) Պլաստիկ շերտով ծածկելու աշխատանքներ

Գրունտի վրայի ճաքերը ծածկվում են պլաստիկ շերտերով: Քանի որ հնարավոր է այդ աշխատանքն արագ կատարել, այն կղիտվի որպես հրատապ միջոցառում:

#### 3) Ջրի ներթափանցման կանխման աշխատանքներ

Եթե տեղի է ունենում ջրի ներթափանցում ջրավազանից կամ լճերից, ջրավազանների կամ լճերի հատակը ծածկվում է անջրանցիկ նյութերով, օրինակ՝ ասֆալտով:

### **2.2 Գրունտային ջրի դրենաժային աշխատանքներ**

Գրունտային ջրի դրենաժային աշխատանքների նախագծման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի կետերին, ինչպիսիք են գրունտային ջրի մակարդակը, սողանքի վիճակը, կառույցների ապահովությունը և պահպանման հեշտությունը և այլն:

#### **2.2.1 Ծանձաղ գրունտային ջրի դրենաժային աշխատանքներ**


##### **(1) Ջրթող խողովակի աշխատանքներ**

Ջրթող խողովակի աշխատանքները նախագծելու համար պետք է ուշադրություն դարձնել հետևյալ կետերին.

- 1) Ջրթող խողովակների տեղադրման սխեման որոշվում է՝ հաշվի առնելով գրունտի և գրունտային ջրի վիճակը:
- 2) Ջրթող խողովակի մեկ կտորի երկարությունը 20մ է, և այն պետք է լինի ուղիղ: Ջրհավաք հորերը պատրաստվում են ջրթող խողովակների խցանումից և հավաքված ջրի՝ այդ խողովակներից գրունտի մեջ վերաներթափանցումից խուսափելու համար:




- 3) Ջրթող խողովակների խորությունը գրունտի մակերևույթից մոտ 2մ է, իսկ հատակը (փորված մակերևույթը) ծածկվում է անջրանցիկ շերտերով: Գրունտի մեջ խողովակների ցանց անցկացնելուց խուսափելու համար, ջրթող խողովակի շուրջը տեղադրվում են դրենաժային ֆիլտրեր, ինչպես ցույց է տրված Նկար 4-ում:
- 4) Գրունտային ջրի արդյունավետ հավաքման համար ջրթող խողովակի և հետ լցվող նյութերի միջև լցվում են ֆիլտրող նյութերը, օրինակ՝ ավազ և կոպիձ, ինչպես ցույց է տրված Նկար 4-ում:



Նկար 4 Ջրթող խողովակների աշխատանքների տիպիկ կտրվածք

- 5) Եթե մակերևութային ջուրը հավաքվում է նաև ջրթող խողովակներով, ֆիլտրող նյութերը (ավազ և կոպիձ) լցվում են մինչև գրունտի մակերևույթ՝ Նկար 4-ում պատկերված հետլիցքի փոխարեն:
- 6) Ջրթող խողովակը պատրաստված է ծակոտկեն խողովակից կամ գաբիոնից, և պետք է լինի ճկուն և ամուր սողանքի շարժի հետևանքով առաջացող դեֆորմացիայի նկատմամբ: Եթե ջրթող խողովակները տեղադրվում են կտրուկ լանջերի վրա, տեղադրվում են հենացքեր ջրթող խողովակը ֆիքսելու համար, ինչպես ցույց է տրված Նկար 5-ում:




Նկար 5 Հենացի օգնությամբ ֆիքսվող ջրթող խողովակ

## (2) Բաց ջրանցքի և ջրթող խողովակի աշխատանքներ

Բաց ջրանցքի և ջրթող խողովակի աշխատանքների նախագծման հիմնական կետերը բերված են ստորև (տես Նկար 6).

- 1) Ջրանցքի և ջրթող խողովակի երկարությունը չպետք է լինի մեծ, քանի որ գոյություն ունի վերահինֆիլտրացիայի հավանականություն: Երկարությունը որոշվում է ըստ կոնկրետ տեղանքի առկա իրավիճակի:


2) Ընդհանուր առմամբ, կառույցի միջոցով հավաքված գրունտային ջուրը գնում է 20մ ինտերվալով տեղադրված ջրհավաք հորեր և ջրանկման կառույցներ, ինչպես ցույց է տրված Նկար 7-ում:



Նկար 7 Բաց ջրանցքի և ջրթող խողովակի կտրվածքը և սխեմատիկ պլանը

### (3) Հորիզոնական հորատման աշխատանքներ

Նկար 8-ում ցույց է տրված գրունտային ջրի դրենաժավորման նպատակով հորիզոնական հորատման կտրվածքը:




Նկար 8

Հորիզոնական հորատման կառույցների նախագծման կարևոր կետերը հետևյալն են.


1) Հորիզոնական հորատանցքերը նախագծվում են այնպես, որպեսզի ներթափանցեն գրունտի այն շերտի մեջ, որտեղ կուտակված է ծածանող գրունտային ջուրը: Հորատման հորատանցքերը պլանի վրա դասավորվում են ճառագայթաձև կամ զուգահեռաձև, որտեղ սկզբնամասի եզրերի միջև

հեռավորությունը կազմում է 5մ – 10մ, ինչպես ցույց է տրված Նկար 9-ում: Հորատանցքի երկարությունը նախագծվում է այնպես, որպեսզի հորատանցքը, սահքի մակերևույթի մեջ ներթափանցելուց հետո, 5մ – 10մ ձգվի մինչև կայուն հիմքը:



Նկար 9 Հորիզոնական հորատման հորատանցքերի դասավորվածությունը

- 2) Հավաքված գրունտային ջուրը ուղղորդվում է ջրիավաք հորեր կամ դրենաժային ջրանցքներ և տեղափոխվում սողանքային տարածքից դուրս:
- 3) Հորատանցքերը պատրաստվում են գրունտի վրա, թուլացած նյութերը հեռացնելուց հետո: Էրոզիան կամ դրենաժավորված գրունտային ջրի պատճառով փլուզումը կանխելու համար տեղադրվում են մակերևույթի պաշտպանության միջոցներ, ինչպես ցույց է տրված Նկար 10-ում:



Նկար 10

- 4) Հորատանցքերի թեքությունը  $5^\circ - 10^\circ$  է դեպի վեր, որպեսզի գրունտային ջուրը դուրս հոսի ինքնահոս:
- 5) Հորատանցքերի տրամագիծը հիմնականում 66մմ է. այն մեծանում է, եթե գրունտը քիչ ջրաթափանց է (կավային գրունտ):
- 6) Հորատանցքերում տեղադրվում են խողովակներ հորատանցքի փլուզումը կանխելու համար: Խողովակների ներքին տրամագիծը 40մմ կամ ավել է, իսկ ծակոտկեն խողովակները տեղադրվում են ջրատար հորիզոնների կտրվածքներում:
- 7) Հորիզոնական հորատանցքերից գրունտային ջրի բացթողումը պետք է պարբերաբար հաստատվի կամ չափվի: Եթե խցանման կամ այլ պատճառով

բացթողնվող ջրի քանակը նվազի, հորատանցքերը պետք է մաքրվեն:

## 2.2.2 Խորքային գրունտային ջրի դրենաժային աշխատանքներ


### (1) Հորիզոնական հորատման աշխատանքներ

Ի լրումն 2.2.1 (3) ենթակետում նշված հիմնական կետերի, ստորև բերվում են խորքային գրունտային ջրի դրենաժային հորատման կառույցների նախագծման հիմնական կետերը.

- 1) Ջրատար հորիզոններից գրունտային ջրի դրենաժավորման համար հորիզոնական հորատանցքերի երկարությունը մոտ 50մ է, իսկ հորատանցքերի տրամագիծը՝ 66մմ կամ ավել:
- 2) Հորատանցքերի թեքությունը հիմնականում  $5^{\circ}$  -  $10^{\circ}$  է դեպի վեր: Ճնշումային ջրատար հորիզոններից դրենաժի դեպքում հորատումը կարող է արվել դեպի ներքև ուղղությամբ, որպեսզի գրունտային ջուրը դուրս հոսի որպես աղբյուր (ճնշման տակ ջրի հոսք):

### (2) Գրունտային ջրի ջրհավաք հորերի աշխատանքներ

Գրունտային ջրի ջրհավաք հորը պատրաստվում է համեմատաբար կայուն գրունտում, իսկ գրունտային ջրի ջրհավաք հորատանցքերը սկսվում են հորի պատից, ինչպես ցույց է տրված Նկար 11-ում: Հորի տեղադրությունը որոշվում է ըստ հետազոտության միջոցով հստակեցված երկրաբանության և գրունտի պայմանների:



Նկար 11 Գրունտային ջրի ջրհավաք հորի ընդհանուր տեսքը

Գրունտային ջրի մեծ բաշխվածության պատճառով երկու կամ ավել վայրերում հորերը պատրաստելու դեպքում, տեղադրությունները պետք է ճիշտ որոշվեն՝ հաշվի առնելով հորի միջոցով գրունտային ջրի մակարդակի իջեցման տարածքը և գրունտային ջրի ջրհավաք հորատանցքերի երկարությունը: Գրունտային ջրի հավաքումը նախատեսվում է գրունտային ջրի ջրհավաք հորատանցքերի միջոցով, մինչդեռ չի սպասվում գրունտային ջրի արտահոսք հորի պատից:

Հորի փորման ժամանակ հնարավոր է դիտարկել երկրաբանությունը և սողանքի գրունտի վիճակը, ինչպես նաև սահքի մակերևույթի խորությունն ու վիճակը: Փորման աշխատանքների ժամանակ կարող են վերցվել նաև չխախտված նմուշներ: Հետևաբար, նախընտրելի է օգտագործել այս հնարավորությունը հետազոտության նպատակի

համար:

Քանի որ սողանքային զանգվածի նյութերը, սովորաբար, հողմնահարված են և թուլացած, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել շինարարական աշխատանքների ապահովությանը:

**(ա) Գրունտային ջրի ջրհավաք հորի խորությունը**

Որպես կանոն, հորի խորությունը հետևյալն է.

- Բավականին ակտիվ սողանքի համար հորի հատակը 2 կամ ավել մետրով ավելի բարձր մակարդակի վրա է, քան սահքի մակերևույթի հատակը՝ սողանքի շարժի հետևանքով հորին հասցվելիք վնասից խուսափելու համար:
- Համեմատաբար կայուն սողանքի համար հատակը գտնվում է կայուն հիմքում՝ սահքի մակերևույթի մակարդակից 2մ – 3մ ներքև: Համեմատաբար կայուն սողանքի շատ դեպքերում սահքի մակերևույթի և ջրատար հորիզոնների մակարդակը ամբողջությամբ հստակեցված չէ, և, հետևաբար, հորը տեղադրվում է մինչև կայուն հիմքը գրունտային ջրի արդյունավետ դրենաժավորման համար:

Խորհուրդ է տրվում կրճատել հորի շինարարության ժամանակահատվածը, հատկապես բավականին ակտիվ սողանքի դեպքում, քանի որ շինարարության ժամանակ հնարավոր է գրունտի թուլացում և գրունտի ճնշման ավելացում:

**(բ) Գրունտային ջրի ջրհավաք հորի կառուցվածքը**

Գրունտային ջրի ջրհավաք հորը գլանաձև է՝ 3.5 մ - 4.0 մ տրամագծով: Տրամագիծն ավելի մեծ կլինի, եթե փորման ենթակա գրունտը կազմված լինի կոպիճից, կարծր ապարներից, ջարդված ապարներից և այլն, որը դժվարացնում է հորատումը հորից:

Հորի ներսի տարածությունը հիմնականում պետք է բաց լինի՝ ջրհավաք և դրենաժային հորատանցքերի պահպանության համար: Սողանքի ակտիվացման հետևանքով հորի փլուզման հավանականության դեպքում ներսի տարածությունը լցվում է գետաքարով կամ գլաքարով՝ որպես ժամանակավոր միջոցառում:

Հավաքված ջրի՝ գրունտի մեջ ներթափանցումը կանխելու համար հորի հատակը պետք է բետոնապատվի մոտ 50սմ հաստությամբ:

Հորի երեսպատման նյութերը հիմնականում պողպատե թիթեղներն են (երեսպատման պողպատե թիթեղ) և երկաթբետոնը, իսկ նյութերն ընտրվում են՝ ելնելով փոխադրման հեշտությունից և արժեքից ինչպես շինարարության, այնպես էլ պահպանման համար:

Գրունտի մակերևույթին հորի կառույցի վերին մասում երեսպատման պողպատե թիթեղները կամ երեսպատող բետոնը պետք է գրունտի մակերևույթից մոտ 1մ բարձր արվեն՝ ծածկելով հովանիով և ցանկապատելով: Հորի ներսում տեղադրվում են սանդղոջ կամ աստիճաններ ներքև իջնելու համար:

**բ) Պողպատե թիթեղներից գրունտային ջրի ջրհավաք հորի նախագծում**

Հորի կառուցվածքի վրա ազդող բեռը միայն գրունտի ճնշումն է, այլ ոչ թե հիդրավլիկ

ճնշումը: Գրունտի ճնշում ասելով ի նկատի ունենք միայն գրունտի ակտիվ ճնշումը, իսկ սողանքի շարժի հետևանքով առաջացած գրունտի ճնշումը հիմնականում չի ներառվում: Եթե անհրաժեշտ է, սողանքի շարժի հետևանքով առաջացող ճնշումը կարող է համարվել ավելացված: Եթե կանխատեսվում է հորի դեֆորմացիա, այն ամրացվում է հորիզոնական կապով և/կամ ուղղաձիգ կարծրացնող տարրերով, ինչպես ցույց է տրված Նկար 12-ում: Անհարթ գրունտի ճնշումը, եթե այդպիսին կանխատեսվում է, նույնպես հաշվի է առնվում նախագծման ժամանակ:

Երեսպատման նյութերի հաստությունը որոշվում է երկայնական ծովածքի նկատմամբ դիմադրության ապահովման համար՝ ելնելով երեսպատման հետևում գրունտի առավելագույն ճնշումից ( $P_{max}$ ):

$$q_A = \frac{3 \cdot E \cdot I}{f \cdot R^3} > P_{max}$$

որտեղ,

$q_A$ : Հորի երեսպատման շուրջ արտաքին թույլատրելի ճնշումն է (kN/մ<sup>2</sup>)

$E$ : Յանգի մոդուլն է (kN/մ<sup>2</sup>)

$I$ : Տարածքի իներցիայի մոմենտն է 1-մ կտրվածքի համար (մ<sup>4</sup>/մ)

$0.8I_0$ : Իներցիայի արդյունավետ մոմենտը կիրառվում է ծակոտկեն երեսպատման համար


$I_0$ : Իներցիայի մոմենտը կիրառվում է ոչ ծակոտկեն երեսպատման համար

$f$ : Ապահովության գործակիցն է (1.5 - 2.0)

$R$ : Հորի շառավիղն է (մ)

$P_{max}$ : Հորի վրա ներգործող գրունտի առավելագույն ճնշումն է

Վերոնշյալ բանաձևը թույնի 0-ական դոզայով նեղ գլանաձև երեսպատման համար է՝ հաշվի առնելով ծալքավոր մետաղական թիթեղի ազդեցությունը: Եթե երեսպատման ուժգնությունը բավարար չէ, երեսպատման ներսում տեղադրվում է H-ձև մետաղական ձող ամրացման համար:



Նկար 12 Երեսպատման մետաղական թիթեղներով գրունտային ջրի ջրհավաք հոր

Գրունտի առավելագույն ճնշման հաշվարկի համար օգտագործվում են Տերզաղիի բանաձևը և Ռենկինի Գրունտի ճնշման տեսությանը, որի շրջակա գրունտի կամարային ազդեցությունը հաշվի է առնվում: Մասնավորապես, ենթադրվում է, որ գրունտի ճնշումը չի ազդում 15մ կամ պակաս խորության վրա գտնվող ծանծաղ գրունտի վրա, և գրունտի ճնշումը համարվում է գրունտի ստատիկ ճնշման եռանկյունաձև բաշխվածությունը, ինչպես ցույց է տրված հետևյալ բանաձևում.

$$P_h = k \cdot \gamma \cdot h \quad h < 15 \text{ մ}$$

$$P_h = 15 \cdot k \cdot \gamma \quad h \geq 15 \text{ մ}$$


որտեղ,

$P_h$ : Գրունտի ճնշումն է (kN/մ<sup>2</sup>)

$k$ : Գրունտի ստատիկ գործակիցն է (0.5)

$\gamma$ : Գրունտի շերտի տեսակարար կշիռն է ( $\text{kN/m}^3$ )

$h$ : Խորությունն է գրունտի մակերևույթից (մ)



Նկար 13 Գրունտի ճնշումը հորի կողային պատի վրա

## ii) Երկաթբետոնով գրունտային ջրի ջրհավաք հորի նախագծում

Այս տեսակի հորը կիրառվում է հետևյալ դեպքերի համար.

- Հորը ընկղմվում է իր սեփական քաշի հաշվին՝ փափուկ և միասեռ գրունտի, օրինակ ավազի պատճառով,
- Գրունտը ենթակա է եռման կամ հեղուկացման գրունտային ջրի բարձր պարունակության պատճառով,
- Գրունտը ենթակա է բարձրացման, օրինակ՝ գրունտային ջրի լեռնային ճնշմամբ փափուկ կավային գրունտը:

## (գ) Դրենաժային հորատանցք

Հավաքված գրունտային ջրի դրենաժը, հիմնականում, արվում է դրենաժային հորատանցքերի միջոցով՝ ինքնահոս: Դրենաժավորումը պոմպերով կամ այլ մեխանիզմով խորհուրդ չի տրվում, քանի որ սարքավորման խնդիրների պատճառով դրենաժի դադարեցումը կարող է հանգեցնել գրունտային ջրի մակարդակի բարձրացման և սողանքի վերականգնման: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ ուժեղացված դրենաժի իրականացման ծախսը մեծ է:

Դրենաժային հորերի առավելագույն երկարությունը, ընդհանուր առմամբ, 80մ է, և հորատանցքում տեղադրվում են 80մ – 100մ ներքին տրամագծով մետաղական խողովակներ: Եթե շատ գրունտային ջուր է հավաքվում, օգտագործվում են ավելի մեծ տրամագծով խողովակներ կամ պատրաստվում է լրացուցիչ դրենաժային հորատանցք:

Եթե դրենաժային հորատանցքը շատ է երկարում, պատրաստվում է փոխանցող հոր՝ գրունտային ջրի ջրհավաք հորից 70մ – 80մ-ի վրա, և երկու հորերը միացվում են դրենաժային հորատանցքերով:

Դրենաժային հորատանցքի ելքը սովորաբար գտնվում է սողանքային տարածքում, և դրենաժավորված գրունտային ջուրը բաց ջրանցքով ուղղորդվում է դեպի սողանքային տարածքից դուրս: Դրենաժային հորատանցքերի ելքի շուրջը գրունտի լանջը



պաշտպանվում է էրոզիայից գաբիռնով, բետոնե պատով և այլն:

**(դ) Գրունտային ջրի ջրհավաք հորատանցքեր**


Գրունտային ջրի ջրհավաք հորատանցքերը պատրաստվում են ջրատար հորիզոնի յուրաքանչյուր շերտում մեկից մինչև մի քանի մակարդակներում: Հորատանցքի երկարությունը, հիմնականում, 50մ է և ձգվում է մինչև 80մ – 100մ՝ կախված թիրախային ջրատար հորիզոնի տեղադրությունից:

Հորատանցքերի մանրամասները, օրինակ՝ տեղադրությունը, ուղղությունը, ինտերվալը և համարը որոշվում են՝ ելնելով հետազոտության ժամանակ հստակեցված երկրաբանությունից և գրունտային ջրի պայմաններից: Մանրամասները պետք է համապատասխանեցվեն ըստ շինարարության ժամանակ առաջացած իրավիճակի: Հորատանցքերում տեղադրված խողովակները 40մ կամ ավել տրամագծով ծակոտկեն ՊՔՎ խողովակներ են:

**(3) Դրենաժային թունելի աշխատանքներ**

Դրենաժային թունելի աշխատանքները կիրառվում են սողանքային հաստ գանգվածով մեծ սողանքների դեպքում, քանի որ գրունտային ջրի ջրհավաք հորերը և դրենաժային հորատումները կիրառելի չեն պահանջվող խորության՝ չափազանց մեծ լինելու պատճառով: Դրենաժային թունելի աշխատանքները կիրառվում են նաև մեծ շարժ ունեցող սողանքների դեպքում, քանի որ հորերի և հորատանցքերի շինարարությունը դժվար է ակտիվ սողանքի տարածքում:

Դրենաժային թունելը, սովորաբար, կառուցվում է կայուն հիմքում՝ թունելի կայունությունը ապահովելու համար, ինչպես ցույց է տրված Նկար 14-ում, և գրունտային ջուրը դրենաժավորվում է թունելից սկսվող գրունտային ջրի ջրհավաք հորատանցքերով կամ թունելին միացված գրունտային ջրի ջրհավաք հորերով:



Նկար 14 Դրենաժային թունելի աշխատանքներ

Ստորև բերված են դրենաժային թունելի նախագծման հիմնական կետերը

**(ա) Դրենաժային թունելի սխեմատիկ պլանը**

Նույնիսկ չնայած դրենաժային թունելը կառուցված է կայուն հիմքում, հիմքը կարող է թուլանալ սողանքային թունելի շուրջ: Հետևաբար, անհրաժեշտ է պահպանել հեռավորություն թունելի և սահքի մակերևույթի միջև՝ թունելի տրամագծի կրկնակի կամ ավել չափով: Պլանի վրա թունելը նախագծված է սկարպի և կողքի ճաքերի երկայնքով, որտեղ կուտակված գրունտային ջուրը կարող է արդյունավետորեն դրենաժավորվել: Թունելի ճակատամուտքերը պետք է գտնվեն կայուն և ամուր գրունտի վրա:


**(բ) Դրենաժային թունելի երկայնական գրադիենտը**

Դրենաժային թունելը պետք է ունենա դեպի ճակատամուտք թեքվածություն ինքնահոս ձևով կուտակված գրունտային ջուրը դրենաժավորելու համար: Թունելի երկայնական գրադիենտը, որպես կանոն, 15/1,000 կամ պակաս է:

**(գ) Դրենաժային թունելի կտրվածքի նախագծում**

Թունելի կտրվածքի ձևերը տարբեր են, օրինակ՝ պայտաձև, շրջանաձև, կիսաշրջանաձև, սեղանակերպ, ուղղանկյուն և այլն, ինչպես ցույց է տրված Նկար 15-ում՝ կախված օգտագործված նյութից, կառուցման մեթոդից: Թունելի ներսը երեսպատված է և, հիմնականում, բաց է պահպանության համար: Թունելի չափը

որոշվում է՝ հաշվի առնելով կիրառելիությունը և ընդհանուր արժեքը (կառուցման և պահպանության ծախսերը): Երեսպատման նյութերն են բետոնը, երեսպատման պողպատե թիթեղներ, ծալքավոր խողովակներ և այլն:



Նկար 15 Դրենաժային թունելի կտրվածքները

#### (դ) Հրատապ տարահանման թունել

Եթե թունելի երկարությունը գերազանցում է 1,000մ, անհրաժեշտ է կառուցել հիմնանցքեր կամ թեքված թունելներ հրատապ տարահանման համար:

#### (ե) Գրունտային ջրի հավաքում

Ընդունված է, որ գրունտային ջրի դրենաժավորումը, հիմնականում, կատարվում է թունելից սկիզբ առնող գրունտային ջրի ջրհավաք հորատանցքերով: Գրունտային ջրի ջրհավաք հորատանցքերը նախագծված են հորիզոնական՝ դեպի վերև ճառագայթաձև ուղղվածությամբ: Գրունտային ջրի ջրհավաք հորատանցքերի մանրամասները որոշվում են՝ հաշվի առնելով հորատանցքի անկյունն ու երկարությունը, հեռավորությունը թիրախային ջրատար հորիզոնը, հորատանցքի և ջրատար հորիզոնի հատման հատվածի երկարությունը և այլն: Թունելում նախագծվում են հորատման աշխատանքների համար մեծ տարածություն ունեցող խցեր՝ հորատման աշխատանքներն արդյունավետ կատարելու համար: Հորատանցքերի և հորատանցքերում տեղադրվող խողովակների երկարությունը այնպիսին է, ինչպես բացատրված է 2.2.1 (3) և 2.2.2 (1) ենթակետերում:

#### (զ) Հավաքված գրունտային ջրի դրենաժավորում

Թունելի հատակին կառուցվում է գրունտային ջրի դրենաժային ջրանցքի նման կառույց՝ հավաքված գրունտային ջրի՝ հատակից դեպի գրունտը վերաներթափանցումը կանխելու համար: Եթե թունելի երեսպատման համար օգտագործվում են երեսպատման պողպատե թիթեղներ կամ ծալքավոր խողովակներ, հնարավոր է արտահոսք միացման կետերի թուլացած մասերից կամ միացնող բոլտերից: Հավաքված գրունտային ջրի արտահոսքը դեպի գրունտ կանխելու համար թունելի հատակին պատրաստվում է բետոնից դրենաժային առու:

#### (է) Դրենաժային թունելի վրա ներգործող գրունտի ճնշումը

Դրենաժային թունելի վրա ներգործող գրունտի ճնշումը որոշվում է՝ հաշվի առնելով

երկրաբանությունը, թունելի ներքին տարածքը, կառուցման մեթոդը, երեսպատման տեսակը, գրունտի յուրահաստկությունները և այլն: Աղյուսակ 1-ում բերված են հղումներ գրունտի ճնշումը որոշելու համար:

Աղյուսակ 1

Գրունտի վիճակը	Գրունտի բեռի բարձրությունը (մ)	Նմուշ
ա) Կարծր և չվնասված	0	Ժայռի կտորների անկման կամ ապարի խիստ լարված զանգվածի փլուզման դեպքում տեղադրվում է թունելի հենարան
բ) Կարծր և շերտավորված կամ թերթաքարային	0 – 0.5B	Տեղադրվում է թունելի հասարակ հենարան: Ճնշումը փոխվում է անկանոն:
գ) Մեծաբեկոր նոսր հանգույցներով	0 – 0.25B	Ոչ մի կողային ճնշում
դ) Մեծաբեկոր միջին բաշխվածությամբ հանգույցներով	0.25B – 0.35 (B+H <sub>i</sub> )	Ոչ մի կողային ճնշում
ե) Մեծաբեկոր խիտ հանգույցներով	(0.35 – 1.10) (B+H <sub>i</sub> )	Ոչ մի կամ փոքր կողային ճնշում
զ) Ջարդված առանց քիմիական վատթարացման	1.10 (B+H <sub>i</sub> )	Զգալի կողային ճնշում

- (1) Այս աղյուսակը ցույց է տալիս կամարածն մետաղական հենարանի վրա ներգործող գրունտի բեռը՝ 1.5 (B+H<sub>i</sub>) կամ ավել գրունտի ծածկույթի դեպքում  
 B: Թունելի կտրվածքի լայնությունը  
 H<sub>i</sub>: Թունելի կտրվածքի բարձրությունը
- (2) Պայմանը հետևյալն է՝ գրունտային ջրի մակարդակը ավելի բարձր է, քան թունելի պսակային հատվածը:  
 Եթե գրունտային ջրի մակարդակը ավելի ցածր է, քան թունելի մակարդակը, դ)-ի և ե)-ի համար արժեքները կարող են նվազեցվել 50%-ով:

**(ը) Թունելի հենարանի նյութը**

Թունելի հենարանի համար օգտագործվում են փայտե կամ մետաղական ձողեր: Ընդհանուր առմամբ, փայտե հենարանը օգտագործվում է ժայռային հիմքի համար կամ որոշ դեպքերում, երբ փորումից հետո հետլիցքը պետք է իրականացվի կարճ ժամանակում: Մետաղական ձողերն օգտագործվում են թունելի այն կտրվածքների համար, որտեղ ներգործուն է գրունտի ճնշումը կամ որոշ դեպքերում, երբ փորումից հետո հետլիցքը պետք է իրականացվի որոշակի ժամանակահատվածում: Վերջերս, կիրառվում է NATM (Թունելավորման ավստրիական նոր մեթոդ, որում կիրառվում է սոկրետրետոն և խարսխային բոլտեր):

**(4) Այլ մեթոդներ**

Կիրառվում է մեծ տրամագծով (300 մմ - 600 մմ) հորատանցքերով գրունտային ջրի դրենաժավորումը, եթե կանխատեսվում է գրունտային ջրի ջրհավաք խողովակների վնասում կամ ծակոտկեն խողովակների խցանում:

**2.3 Հողահեռացման աշխատանքներ**

Հողահեռացման աշխատանքներն իրականացվում են սողանքային զանգվածում բարձր լանջի վրա սողանքի տարածքը կայունացնելու համար: Ելնելով կայունության վերլուծությունից՝ որոշվում են հեռացված հողի վայրն ու ծավալը, փորված լանջի ուղիղ բարձրությունը և գրադիենտը և այլն:


Ստորև բերված են հողահեռացման աշխատանքների նախագծի հիմնական կետերը:

### 2.3.1 Փորված լանջը

Նկար 16-ում ցույց է տրված հողահեռացման աշխատանքների տիպիկ կտրվածքը: Փորված լանջի գրադիենտը և ուղիղ բարձրությունը որոշվում են հետազոտության ժամանակ հստակեցված երկրաբանական պայմանի և այլնի հիման վրա՝ հաշվի առնելով երկար ժամանակի ընթացում փորված լանջի վրա մակերևույթի վատթարացումը:

Փափուկ ապարների դեպքում փորված լանջերի գրադիենտը 1:0.5 - 1:2.0 է՝ մոտ 7մ ուղիղ բարձրության ինտերվալում 1.0մ - 2.0մ լայնությամբ բերմայով:

Ավազային լանջերի դեպքում փորված լանջերի գրադիենտը 1:1.0 - 1:1.5 է՝ յուրաքանչյուր 5մ - 10մ ուղիղ բարձրության համար 1.0մ - 2.0մ բերմայով:



Նկար 16 Հողահեռացման աշխատանքների համար փորված լանջի տիպիկ լայնական կտրվածք

### 2.3.2 Լանջերի կայունությունը թիրախային փորված լանջի հետևում

Եթե կա թիրախային լանջի վերին բարձրության վրա գտնվող լանջերի անկայունության հավանականություն, թիրախային լանջի փորումը կարող է հանգեցնել նոր սողանքի վերին լանջերի վրա: Հետևաբար, պահանջվում է հստակեցնել թիրախային լանջից վերև գտնվող լանջերի կայունությունը, նախքան այս միջոցառումների մանրամասն նախագծումը և կիրառումը:

### 2.3.3 Փորված լանջի պաշտպանությունը

Փորված լանջերը կարող են փափկել և ենթարկվել էրոզիայի անձրևի և չոր-խոնավ կրկնվող վիճակի պատճառով: Հետևաբար, անհրաժեշտ է տեղադրել դրենաժային կառույցներ, օրինակ՝ դրենաժային առուներ բերմայի վրա:

Լանջի վրա էրոզիան և հողմնահարումը կանխելու նպատակով իրականացվում է պաշտպանություն՝ փորված լանջի մակերևույթի վրա բուսականության և տեղադրված կառույցների միջոցով: Եթե հնարավոր չէ կանխել էրոզիան և հողմնահարումը բուսականության միջոցով, լանջը պաշտպանվում է բուսականության, քարե շարվածքի, հենապատերի, տոկրետբետոնի և այլնի համակցված աշխատանքների օգնությամբ:

## 2.4 Հակակշիռ հողապատնեշման աշխատանքներ

Նկար 17-ում պատկերված է հակակշիռ հողապատնեշման ընդհանուր կտրվածքը:

Հակակշիռ հողապատնեշման աշխատանքները նախագծվում են սահքի ուժի նկատմամբ դիմադրության ուժը բարձրացնելու համար՝ սողանքի լեզվակի հատվածում հողապատնեշի միջոցով: Հողապատնեշի տարածքը և ծավալը որոշվում են կայունության վերլուծության միջոցով:


Հակակշիռ հողապատնեշի նախագծման համար ստուգվում է հողապատնեշի հիմքի կայունությունը՝ ելնելով առկա հետազոտության արդյունքներից: Քանի որ հողապատնեշի հիմքը կազմում են սողանքի զանգվածի թուլացած նյութերը և սողանքի շուրջը գտնվող փափուկ նյութերը, հնարավոր է՝ նյութերը փլուզվեն հողապատնեշի կշռի հետևանքով:

Հակակշիռ հողապատնեշի բարձրությունը և հողապատնեշման լանջի գրադիենտը որոշվում են՝ ելնելով հողապատնեշման մեջ օգտագործվող նյութերի գրունտի հատկություններից և հիմքում գրունտի նյութերից: Ընդհանուր առմամբ, հողապատնեշված լանջի գրադիենտը կազմում է  $H:L = 1:1.5 - 1:2.0$ ՝ յուրաքանչյուր 5.0մ ուղիղ բարձրության վրա 1.0մ - 2.0մ բերմայով: Պահանջվում է բերմայի վրա կառուցել դրենաժային առուներ:

Ֆնական աղբյուրները կամ հորիզոնական հորատման կառույցները գտնվում են սողանքային զանգվածի լեզվակի վրա, և, հետևաբար, անհրաժեշտ է չխախտել հակակշիռ հողապատնեշմամբ գրունտային ջրի արտահոսքը: Եթե հակակշիռ հողապատնեշի տարածքում բաշխված է ծանծաղ ջրատար հորիզոն, ծանծաղ ջրատար հորիզոնի ելքը կարող է փակված լինել հողապատնեշման պատճառով: Եթե ելքը փակ է, ափի ճնշումը դեպի հողապատնեշը ավելանում է, և հետևաբար, հողապատնեշը կարող է դառնալ անկայուն: Անհրաժեշտ է անցկացնել դրենաժ հողապատնեշի հետևում՝ ապահովելու համար արտահոսքը ծանծաղ ջրատար հորիզոնից:

Հողապատնեշված լանջերը ենթարկվում են էրոզիայի և կարող են փլուզվել անձրևի պատճառով, և, հետևաբար, անհրաժեշտ է պաշտպանել լանջերը: Պաշտպանության համար կիրառվում են տնկման աշխատանքները, գաբիոնը, կարկասային աշխատանքները, մինչդեռ պինդ կառույցները, օրինակ՝ բետոնով երսպատումը նախընտրելի չէ:

Հողապատնեշված լանջերի լեզվակը պաշտպանելու համար տեղադրվում են գաբիոն, բետոնե կարկաս, սալածածկ պատեր և այլն: Եթե կիրառվում են բետոնի ծանրությամբ պատեր, անհրաժեշտ է ճշտել հիմքի վիճակը, որպեսզի պատի կառուցման հետևանքով տեղի չունենա փլուզում կամ առաջանա սողանք:



Նկար 17 Հակակշիռ հողապատնեշի ընդհանուր կտրվածքը

## 2.5 Գետի կառույցներով էրոզիայի զսպման աշխատանքներ

Եթե սողանքի լեզվակը ենթարկվի էրոզիայի, սողանքը կարող է դառնալ անկայուն և/կամ ակտիվանալ: Նման իրավիճակը կանխելու համար տեղադրվում են էրոզիան զսպող գետի կառույցներ:

Եթե գետի կառույցները տեղադրվեն գետի հունի վրա՝ անմիջապես սողանքի ներքևի հատվածում, սողանքի լեզվակի վրա տեղի է ունենում նստվածքակուտակում: Ակնկալվում է, որ նստվածքակուտակմամբ գետի կառույցը հանդես կգա որպես հակակշիռ հողապատնեշում, ինչպես նաև գետի էրոզիան զսպող գործոն: Ստորև բերվում են կառույցների նախագծման հիմնական կետերը.

- 1) Կառույցների շինարարության համար փորումը պետք է նվազեցվի, որպեսզի այն չազդի սողանքի կայունության վրա:
- 2) Գետի կառույցների հետ միասին կարող են տեղադրվել նաև գրունտային ջրի դրենաժային համակարգեր՝ սողանքի զանգվածում գրունտային ջրի մակարդակի բարձրացումը կանխելու համար:
- 3) Եթե գետի կառույցները տեղադրվել ակտիվ սողանքային գոտում, դրանք պետք է լինեն կայուն և ջրի հոսքից պաշտպանված:

## 3. Կանխարգելման աշխատանքների նախագծում

### 3.1 Հենացքերի տեղադրման աշխատանքներ

Հենացքերի տեղադրման աշխատանքները նախագծվում են պահանջվող զսպման ուժը ապահովելու համար՝ հաշվի առնելով սողանքային տարածքի գեոմորֆոլոգիան և երկրաբանությունը:

Նախագծման աշխատանքում անհրաժեշտ է ուսումնասիրել հենացքի կայունությունը իր ներքին լարվածության նկատմամբ, երբ պահանջվող զսպման ուժը ներգործում է հենացքի վրա: Ուսումնասիրության ենթակա այլ կետեր են քանդումը վերին լանջի վրա սողանքային զանգվածի շարժի հետևանքով, հենացքի հիմքի քանդումը և սողանքի նյութերի սահքը ներքև երկու հենացքերի միջև տարածության միջով:

### 3.1.1 Հենացքերի դասակարգումն ըստ ֆունկցիայի

Հենացքերով կանխարգելման աշխատանքները կարող են դասակարգվել ստորև բերվածի՝ ելնելով Նկար 18-ում նշված ֆունկցիայից:

1) Ճկվող (թեքվող) հենացից

Ճկվող հենացիցը նախագծվում է այն դեպքում, երբ տեղաշարժի ուժը և ճկման լարվածությունը ներգործում են հենացքի վրա՝ համաձայն սողանքային զանգվածի դեֆորմացիայի: Ճկվող հենացիցը բաժանվում է սեպաձև հենացքի և զսպող հենացքի:

ա) Սեպաձև հենացից


Երբ հենացիցը շարժվում է սողանքային զանգվածի հետ միասին, խողովակը ճկվում է սահքի մակերևույթի մակարդակում: Նախագիծը հիմնված է տեղաշարժի ուժի և ճկման լարվածության վրա այն պայմանով, եթե սողանքային զանգվածի սահքի ուժը գործում է սահքի մակերևույթի մակարդակում:

բ) Չսպող հենացից

Եթե չենք կարող ակնկալել գրունտի հակազդեցություն, հենացիցը նախագծվում է որպես բարձակ այն պայմանով, եթե սողանքային զանգվածի սահքի ուժը ներգործում է հենացքի վրա՝ որպես տեղաբաշխված բեռ կամ կենտրոնացած բեռ:

2) Հենացից տեղաշարժի դեմ

Տեղաշարժի դեմ հենացիցը նախագծվում է այն պայմանով, եթե սողանքային զանգվածը չի դեֆորմացվում շարժի ժամանակ (ճկման ոչ մի ուժ չի ներգործում հենացքի վրա), իսկ շարժի ուժը գործում է սահքի մակերևույթի մակարդակում՝ որպես կենտրոնացված ուժ: Նախագծումը կատարվում է միայն տեղաշարժի ուժի հիման վրա:



Նկար 18 Հենացքերի ֆունկցիաները ցույց տվող պատկերավոր կտրվածքներ

### 3.1.2 Հենացքերի կիրառման աշխատանքները

Անհրաժեշտ է ստուգել հենացքերի կիրառման համար համապատասխան պայմանները: Նախկին գրառումներում նշված շատ դեպքեր ցույց են տալիս, որ շարժվող զանգվածի հզորությունը 20մ է կամ պակաս: Կիրառման պայմանները



հետևյալն են.

- Հենացքերը կիրառելի չեն փափուկ գրունտի համար
- Գրունտը չպետք է շատ ճաքերի միջոցով բաժանվի փոքր բլոկների
- Շինարարությունը կարող է արվել կայուն վիճակում

Նախագծում հենացիցը համարվում է առաձգական մարմին, և գրունտի հիմքի հակազդեցությունը սպասելի է, բացառությամբ զսպող հենացից:

Ինչ վերաբերում է տեղաշարժի դեմ նախատեսված հենացիին, անհրաժեշտ է ստուգել, որպեսզի տեղի չունենա հենացիի փլուում ճկվելիս:

### 3.1.3 Հենացիի հորիզոնական կրողունակությունը

Գոյություն ունեն հենացի էֆեկտը հաշվարկող մի քանի բանաձևեր: Բայց հենացիի հաշվարկված էֆեկտը հենացիի շուրջը գտնվող սողանքային զանգվածի էլեկտրական ամրությունն է այն պայմանով, եթե հենացիցը անձկուն է և ունի անսահման դիմադրություն: Իրականում հնարավոր չէ, որ հենացիցն ունենա անսահման դիմադրություն: Գործնականում հենացքերի քանակը հաշվարկվում է հենացիի իրական դիմադրության հիման վրա, որպեսզի հնարավոր լինի ստանալ պահանջվող զսպման ուժը լայնության միավորի համար:

Լայնության միավորի համար հենացիի պահանջվող զսպման ուժի ( $Pr$ ;  $kN/m$ ) հասարակ հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$P.Fs = \frac{\sum(W \cdot \cos\theta - U) \cdot \tan\varphi' + c' \cdot \sum l + Pr}{\sum W \cdot \sin\theta}$$

$$Pr = P.Fs \cdot \sum W \cdot \sin\theta - \sum(W \cdot \cos\theta - U) \cdot \tan\varphi' - c' \cdot \sum l$$

որտեղ,

$Pr$ : Հենացիի պահանջվող զսպման ուժն է լայնության միավորի համար ( $kN/m$ )

$P.Fs$ : Ապահովության նախագծային գործակիցն է

$W$ : Շերտի կշիռն է

$U$ : Շերտի վրա ներգործող ծակոտկենային ճնշումն է ( $kN/m$ )

$l$ : Շերտի սահքի մակերևույթի երկարությունն է (մ)

$\theta$ : Սահքի մակերևույթի թեքման անկյունն է ( $^{\circ}$ )

$\varphi'$ : Սահքի մակերևույթի ներքին շփման անկյունն է ( $^{\circ}$ )

$c'$ : Սահքի մակերևույթի կաշչությունն է ( $kN/m^2$ )

Եթե հենացքերով և զսպման այլ աշխատանքները համակցված են, վերոնշյալ  $U$ ,  $W$  և  $l$  նվազեցվում են այնքան, որքան թույլ են տալիս զսպման աշխատանքները, իսկ հետո, հաշվարկվում է հենացիի պահանջվող զսպման ուժը:

### 3.1.4 Հենացքերով աշխատանքների վայրը

Հենացքերով աշխատանքները պետք է կատարվեն սեղմվածության տարածքում՝ սահող զանգվածի ստորին հատվածում, որտեղ սահքի մակերևույթի գրադիենտը մեծ չէ: Բացի այդ, շարժվող զանգվածի հզորությունը համեմատաբար մեծ է այդ վայրում,

որպեսզի տեղի չունենա գրունտի պասիվ փլուում:

Եթե սողանքի վերին հատվածում կանխարգելիչ միջոցառումների թիրախային տարածքը սահմանափակ է, հենացիցը կարող է գտնվել լարվածության տարածքում, որտեղ սահքի մակերևույթի գրադիենտը մեծ է: Նման դեպքում նախագիծը պետք է պատրաստվի այն պայմանով, որ չակնկալվի գրունտի հիմքի հակազդեցություն՝ հենացի ստորին հատվածում սահող զանգվածի ներքև շարժի հետևանքով:

Սեղմվածության տարածքում տեղադրված հենացի վայրը որոշվում է հետևյալ գործընթացով (տես Նկար 19):

- Սողանքի կրիտիկական հատվածում սողանքային զանգվածը բաժանվում է մի քանի շերտերի:
- Յուրաքանչյուր շերտի համար սահքի ուժը և զսպման ուժը հաշվարկվում է ստորև բերված բանաձևով:
- Լեզվակից  $T_i$  և  $R_i$  կուտակելուց հետո, հենացի տեղը որոշվում է շերտերի տարածքում, որտեղ արտահայտվում է “ $\sum R_i > \sum T_i$ ”:

$$T_i = W_i \cdot \sin \theta_i$$

$$R_i = (W_i \cdot \cos \theta_i - U_i) \cdot \tan \varphi' + c' \cdot l_i$$

որտեղ,

$T_i$ : Շերտի սահքի ուժն է (kN/մ)

$R_i$ : Շերտի զսպման ուժն է (kN/մ)

$W_i$ : Շերտի կշիռն է (kN/մ)


$U_i$ : Շերտի վրա ներգործող ծակոտկենային ճնշումն է (kN/մ)

$l_i$ : Շերտի սահքի մակերևույթի երկարությունն է (մ)

$\theta_i$ : Սահքի մակերևույթի թեքման անկյունն է (°)

$\varphi'$ : Սահքի մակերևույթի ներքին շփման անկյունն է (°)

$c'$ : Սահքի մակերևույթի կաշտնությունն է (kN/մ<sup>2</sup>)




Նկար 19 Սողանքում սեղմվածության և լարվածության տարածքները

Սեղմվածության և լարվածության տարածքները հստակեցնելու ավելի հուսալի ձևը

հիմնված է շարժի իրական չափման արդյունքների վրա՝ շարունակաբար տեղադրելով վերգետնյա էքստենզոմետրեր կտրվածքի վրա՝ գլխամասից մինչև լեզվակ:

Սողանքի լեզվակի վրա հենացներով աշխատանքների վայրը որոշելու մեկ այլ ստուգիչ կետ է հանդիսանում հենացի վայրից վերև գտնվող հատվածում սողանքային զանգվածի կշռի հետևանքով գրունտի պասիվ փլումից խուսափելը, ինչպես ցույց է տրված Նկար 20-ում:



Նկար 20 Պասիվ փլում հենացի վերի մակարդակի վրա

Պասիվ փլումից խուսափելու համար հենացի վայրը որոշվում է ըստ հետևյալ բանաձևի: Հենացի վայրում պետք է բավարարվի հետևյալ պայմանը՝ “ $P.Fs' \geq P.Fs$ ”:

$$P.Fs = \frac{\sum\{(W_{ab} \cdot \cos\theta - U_{ab}) \cdot \tan\varphi' + c' \cdot l_{ab}\} + Pr}{\sum W_{ab} \cdot \sin\theta}$$

որտեղ,

$P.Fs$ : Հենացի տեղադրումից հետո սկզբնական սահքի մակերևույթի երկայնքով ապահովության գործակիցն է [a b]

$Pr$ : Հենացի զսպման ուժն է լայնության միավորի համար (kN/մ)

$W_{ab}$ : Շերտի կշիռն է սկզբնական սահքի մակերևույթի երկայնքով [a b] (kN/մ)

$l_{ab}$ : Շերտի սահքի մակերևույթի երկարությունն է սկզբնական սահքի մակերևույթի երկայնքով [a b] (մ)

$U_{ab}$ : Շերտի վրա ներգործող ծակոտկենային ճնշումն է սկզբնական սահքի մակերևույթի երկայնքով [a b] (kN/մ)

$\theta$ : Սկզբնական սահքի մակերևույթի թեքման անկյունն է [a b] (°)

$\varphi'$ : Սկզբնական սահքի մակերևույթի ներքին շփման անկյունն է [a b] (°)

$c'$ : Սկզբնական սահքի մակերևույթի կաշռությունն է [a b] (kN/մ<sup>2</sup>)

$$P.Fs' = \frac{\sum\{(W_{ax} \cdot \cos\theta_{ax} - U_{ax}) \cdot \tan\varphi'_{ax} + c'_{ax} \cdot l_{ax}\} + \sum\{(W_{xy} \cdot \cos\theta_{xy} - U_{xy}) \cdot \tan\varphi'_{xy} + c'_{xy} \cdot l_{xy}\}}{\sum W_{ax} \cdot \sin\theta_{ax} + \sum W_{xy} \cdot \sin\theta_{xy}}$$

որտեղ,

$P.Fs'$ : Հենացի տեղադրումից հետո կանխատեսվող սահքի մակերևույթի երկայնքով ապահովության գործակիցն է [a x y]

- $W_{ax}$ : Շերտի կշիռն է կանխատեսվող սահքի մակերևույթի երկայնքով [a x] (kN/մ)
- $W_{xy}$ : Շերտի կշիռն է կանխատեսվող սահքի մակերևույթի երկայնքով [x y] (kN/մ)
- $l_{ax}$ : Շերտի սահքի մակերևույթի երկարությունն է կանխատեսվող սահքի մակերևույթի երկայնքով [a x] (մ)
- $l_{xy}$ : Շերտի սահքի մակերևույթի երկարությունն է կանխատեսվող սահքի մակերևույթի երկայնքով [x y] (մ)
- $U_{ax}$ : Շերտի վրա ներգործող ծակոտկենային ճնշումն է կանխատեսվող սահքի մակերևույթի երկայնքով [a x] (kN/մ)
- $U_{xy}$ : Շերտի վրա ներգործող ծակոտկենային ճնշումն է կանխատեսվող սահքի մակերևույթի երկայնքով [x y] (kN/մ)
- $\theta_{ax}$ : Կանխատեսվող սահքի մակերևույթի թեքման անկյունն է [a x] (°)
- $\theta_{xy}$ : Կանխատեսվող սահքի մակերևույթի թեքման անկյունն է [x y] (°)
- $c'_{ax}$ : Կանխատեսվող սահքի մակերևույթի կշռնությունն է [a x] (kN/մ<sup>2</sup>)
- $c'_{xy}$ : Կանխատեսվող սահքի մակերևույթի կշռնությունն է [x y] (kN/մ<sup>2</sup>)
- $\varphi'_{ax}$ : Կանխատեսվող սահքի մակերևույթի ներքին շփման անկյունն է [a x] (°)
- $\varphi'_{xy}$ : Կանխատեսվող սահքի մակերևույթի ներքին շփման անկյունն է [x y] (°)
- $$\alpha = 45^\circ - \frac{\varphi'_{xy}}{2}$$

### 3.1.5 Հենացքի տեսակը և ամրությունը

Հենացքի համար պողպատե նյութի ամրությունը պետք է համապատասխանի նախագծային ամրությանը: Պողպատե նյութերի ամրությունը ընտրվում է՝ համաձայն հենացքի վրա ներգործող բեռի՝ կամ ժամանակավոր ծանրաբեռնման համար թույլատրելի տեսակարար լարվածությունը, կամ երկարատև ծանրաբեռնման համար թույլատրելի տեսակարար լարվածությունը: Եթե հենացքերով աշխատանքները կիրառվում են այլ զսպող միջոցառումների հետ միասին, հիմնականում օգտագործվում է ժամանակավոր ծանրաբեռնման համար թույլատրելի տեսակարար լարվածությունը: Աղյուսակ 2-ում բերված է պողպատե նյութերի հղումային նախագծային լարվածությունը:

Աղյուսակ 2 Հենացքի նախագծային ամրությունը

Դաս	Թույլատրելի տեսակարար լարվածությունը երկարատև ծանրաբեռնման համար (N/մ <sup>2</sup> )		Թույլատրելի տեսակարար լարվածությունը ժամանակավոր ծանրաբեռնման համար (N/մ <sup>2</sup> )	
	Տեղաշարժում	Թեքում	Տեղաշարժում	Թեքում
STK400 կամ համարժեք	118	206	78	137
SM490 կամ համարժեք	162	279	108	186

### 3.1.6 Հենացքերի դասավորությունը

Ցցերը դասավորվում են սահքի ուղղությամբ գծի վրա՝ աջ անկյունում՝ հավասար

ինտերվալներով:

Հենացքերի միջև ինտերվալը որոշվում է՝ ելնելով լայնության միավորի համար հաշվարկված պահաջվող զսպման ուժից: Իրականում, հնարավոր է, որ հենացքի գրունտի հիմքը թուլացել է հորատման և երկու հենացքերի միջև եղած տարածության միջով սողանքային նյութերի ներքև սահելու պատճառով: Հետևաբար, հենացքերի ինտերվալը որոշվում է՝ հղում կատարելով Աղյուսակ 3-ին, իսկ առավելագույն ինտերվալը պետք է լինի հենացքի տրամագծից 8 անգամ մեծ չափի սահմաններում:

Նշվում է, որ հենացքերի նվազագույն ինտերվալը 1մ է՝ հենացքերի տեղադրման հետևանքով հիմքին հասցվող վնասից խուսափելու համար: Եթե հաշվարկում հենացքի պահանջվող ինտերվալը 1մ է կամ պակաս, ցցերը դասավորվում են զիգզագաձև:

Աղյուսակ 3 Հենացքերի ինտերվալը

Սողանքային զանգվածի հզորությունը հենացքի կետում	Հենացքերի ինտերվալը
1 մ – 10 մ	2.0 մ կամ պակաս
10 մ – 20 մ	3.0 մ կամ պակաս
20 մ կամ ավել	4.0 մ կամ պակաս


### 3.1.7 Հենացքերի ներթափանցման խորությունը

Մինչև հիմքը հենացքի ներթափանցման երկարությունը որոշվում է այնքան, որպեսզի հենացքի վրա գրունտի ճնշման հետևանքով տեղի չունենա հիմքի քանդում:

Անհրաժեշտ է միավորել հենացիցն ու հիմքը՝ դրանց միջև տարածությունը լցնելու միջոցով: Լիցքը կատարվում է ցեմենտային շաղախով՝ հենացքի և հորատանցքի պատի միջև տեղադրվող ցեմենտը լցնող խողովակների միջոցով:

### 3.2 Սյան տեղադրման աշխատանքներ

Սյան նախագծումն իրականացվում է պահանջվող զսպման ուժը ապահովելու համար՝ հաշվի առնելով թիրախային սողանքային տարածքի գեոմորֆոլոգիան և երկրաբանությունը: Նախագծում սյունը պետք է տեղադրվի մինչև կայուն հիմքը և այն պետք է կայուն լինի պահանջվող զսպման ուժի ներքո ներքին լարվածության տեսանկյունից: Պետք է հաշվի առնել նաև սյունից վերև գտնվող լանջի գրունտի պասիվ փլումը, հիմքի քանդումը, երկու սյուների միջև եղած տարածության միջով սողանքային նյութերի ներքև սահելը: Սյան տեղադրման աշխատանքների ընդհանուր նախագիծը ցույց է տրված Նկար 21-ում:



Նկար 21 Սյան տեղադրման աշխատանքների ընդհանուր նախագիծը

Սյան կրողունակությունը հաշվարկվում է նույն ձևով, ինչ հենացքի դեպքում:

Մեծ տրամագիծ ունեցող կառույցը, օրինակ՝ սյունը, նախագծվում է որպես թեքվող հենացից կամ անձկուն հենացից, որը չի դեֆորմացվում: Նախագծման մեթոդը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\beta = \sqrt[4]{\frac{K \cdot d}{4 \cdot E \cdot I}} / l$$

որտեղ,

$K$ : Գրունտի հիմքի հակազդման մոդուլն է (kN/մ<sup>3</sup>)

$d$ : Սյան արտաքին տրամագիծն է (մ)

$l$ : Կայուն հիմքի մեջ ներթափանցած սյան երկարությունն է (մ)

$E$ : Սյան առաձգականության մոդուլն է (kN/մ<sup>2</sup>)

$I$ : Տարածքի իներցիայի մոմենտն է (մ<sup>4</sup>)

Եթե  $\beta \leq 2$ , նախագիծը կատարվում է անձկուն հենացքի համար

Եթե  $\beta > 2$ , նախագիծը կատարվում է թեքվող հենացքի համար


Սյան ներքին տարածությունը լցվում է երկաթբետոնով:

### 3.3 Խարսխման աշխատանքներ

#### 3.1.1. Ընդհանուր դրույթներ

Խարսխման աշխատանքները բաղկացած են հետևյալ երեք բաղադրիչներից (տես Նկար 22).

- 1) Խարսխի գլխամաս (ներառյալ հակազդեցության կառույցը)
- 2) Առածգական մաս
- 3) Խարսխակայանի մաս (Խարսխի մարմինը և հիմքը ամրացման համար)



Նկար 22 Խարսխի բաղադրիչները

Հակասողանքային միջոցառումների տեսանկյունից խարսխային աշխատանքները իրականացվում են կայունացման համար՝ սողանքի զանգվածի և կայուն հիմքի միավորման միջոցով: Խարսխի գլխավախի վրա ներգործող ծանրաբեռնվածությունը առածգական մասի օգնությամբ փոխանցվում է կայուն հիմքում գտնվող խարսխակայանի մաս:

Խարսխային աշխատանքների նախագծումն իրականացվում է պահանջվող զսպման ուժը ստանալու համար՝ ապահովելով հենց խարսխի կայունությունը առանձգականության ուժի և հիմքի նկատմամբ, որտեղ տեղադրված է խարսխակայանի մասը՝ հաշվի առնելով թիրախային սողանքային տարածքի գեոմորֆոլոգիան և երկրաբանական հատկությունները:

Խարսխային աշխատանքների, օրինակ՝ տեղադրման դիրքի, խարսխակայանի մասի դիրքի, խարսխի տեղադրման ձևի, խարսխի թեքության, խարսխի չափի և կառուցվածքի ու այլնի նախագիծը որոշվում է՝ հաշվի առնելով գեոմորֆոլոգիան, երկրաբանությունը և սողանքի շարժի վիճակը:

Խարսխային աշխատանքների միջոցով ակնկալվում է երկու հիմնական էֆեկտ.


- 1) Չզման էֆեկտ.

Ակնկալվում է, որ տեղաշարժի ուժի նկատմամբ դիմադրության ուժը պետք է մեծանա՝ մեծացնելով նորմալ լարվածությունը խարսխային աշխատանքների

միջոցով, ինչպես ցույց է տրված Նկար 23-ում: Ձգման էֆեկտ ունենալու պայմանն այն է, որ սողանքային զանգվածը սեղմված կամ դեֆորմացված չլինի սեղմման ուժով՝ ապահովված լինելով խարիսխի առաձգական ուժով: Հետևաբար դժվար է ակնկալել ձգման էֆեկտ, եթե սողանքային զանգվածը բաղկացած է կավային փափուկ նյութերից կամ թուլացած ճաքած հողմնահարված ապարներից: Բացի այդ, էֆեկտը չի ստացվի, եթե սահքի մակերևույթը գտնվի խորը հատվածում:

2) Չսպան էֆեկտ

Սողանքային զանգվածի սահքի ուժի նկատմամբ զսպման ուժն ակնկալվում է խարիսխի ուժի տանգենցիալ բաղադրիչով, երբ սողանքային զանգվածը շարժվում է ներքև, ինչպես ցույց է տրված Նկար 23-ում: Խարսխային աշխատանքները կիրառվում են սահքի մեծ մակերևույթ ունեցող սողանքների համար՝ օգտագործելով պողպատե նյութերից կազմված զսպման ուժը առաձգականության ուժի նկատմամբ:



Նկար 23 Խարիսխի ֆունկցիան

Որպես հակասողանքային միջոցառումներ՝ խարսխային աշխատանքները նախագծվում են շատ դեպքերում զսպման ուժի համար: Նախագծման ժամանակ անհրաժեշտ է ընտրել ավելի արդյունավետ ֆունկցիա՝ հաշվի առնելով խարիսխի թեքությունը, սահքի մակերևույթի գրադիենտը/ խորությունը և այլն: Հնարավոր է խարիսխի նախագծի մեջ հաշվի առնել երկու էֆեկտներն էլ:

**3.1.2 Խարիսխի պահանջվող ուժի հաշվարկ**

Խարիսխի պահանջվող ուժը հաշվարկվում է ձգման էֆեկտի և զսպման էֆեկտի համար, համապատասխանաբար կիրառելով հետևյալ բանաձևերը.

- 1) Խարիսխի պահանջվող ուժը ձգման էֆեկտի համար
 
$$P.Fs = \frac{\{(W \cdot \cos\theta - U) + P \cdot \cos(\alpha - \theta)\} \cdot \tan \varphi' + c' \cdot \sum l}{\sum W \cdot \sin\theta}$$
- 2) Խարիսխի պահանջվող ուժը զսպման էֆեկտի համար



$$P.Fs = \frac{\sum(W \cdot \cos\theta - U) \cdot \tan\varphi' + c' \cdot \sum l + P \cdot \sin(\alpha - \theta)}{\sum W \cdot \sin\theta}$$

որտեղ,

$P.Fs$ : Ապահովության նախագծային գործակիցն է

$W$ : Շերտի կշիռն է (kN/մ)

$U$ : Շերտի վրա ներգործող ծակոտկենային ճնշումն է (kN/մ)

$P$ : Խարիսխի պահանջվող ուժն է (kN/մ)

$\varphi'$ : Ներքին շփման անկյունն է (°)

$c'$ : Կպչունությունն է (kN/մ<sup>2</sup>)

$l$ : Շերտի սահքի մակերևույթի երկարությունն է (մ)

$\theta$ : Խարիսխի վայրի թեքման անկյունն է (°), տես Նկար 23

$\alpha$ : Խարիսխի անկյունն է (°), տես Նկար 23

### 3.1.3 Խարիսխի վայրը և դասավորվածության ձևը

Խարիսխների տեղադրման վայրը որոշվում է՝ հաշվի առնելով հակազդեցության կառույցի կայունությունը, հակազդեցության կառույցի շուրջը գտնվող գրունտը և խարսխակայանի մասի գրունտը: Խարսխակայանի մասի դիրքը, խարիսխների ուղղությունը/ թեքությունը/ ինտերվալը պետք է որոշվեն նախագծման վաղ փուլում:

#### (1) Խարսխման աշխատանքների վայրը

Եթե խարիսխի թեքությունը դեպի սահքի մակերևույթ աջ անկյան վրա է, խարիսխի զսպման ուժը փոքրանում է, և խարիսխը կոտրվում է սահող զանգվածի տեղաշարժի ուժի պատճառով: Հետևաբար, խարիսխների վայրը պետք է որոշվի շատ ուշադիր: Ընդհանուր առմամբ, խարիսխները չեն տեղադրվում սողանքի գլխամասային հատվածում:

#### (2) Ազդեցությունը մոտակա այլ կառույցի վրա

Եթե գոյություն ունի ստորգետնյա կառուցվածք, օրինակ՝ թունելներ, խարիսխի վայրը պետք է որոշվի այնպես, որպեսզի հնարավոր լինի խուսափել գոյություն ունեցող կառույցների վրա վնասակար ազդեցությունից:

#### (3) Խարիսխի ուղղությունը

Խարիսխի ուղղությունը պետք է համընկնի սահքի ուղղության հետ:

#### (4) Խարիսխի թեքությունը

Խարիսխի թեքությունը որոշվում է ոչ միայն ամենաարդյունավետ անկյան հաշվարկմամբ, այլև գեոմորֆոլոգիայով, երկրաբանությամբ, շինարարական աշխատանքների վիճակով և այլն: Հիմնականում, չի կիրառվում դեպի հորիզոնական գիծը  $-5^\circ$  -  $+5^\circ$  թեքման անկյունը՝ հորատման տաշեղների լվացման և ցեմենտախմորի նյութերի ծորման խնդիրների պատճառով:

### (5) Խարիսխների ինտերվալը


Խարիսխների ինտերվալը որոշվում է՝ հաշվի առնելով խարիսխի ուժը, խարիսխի մարմնի տրամագիծը, ներփակ կտրվածքում խարսխակայանի մասի երկարությունը և այլն:

#### 3.1.4 Խարիսխի նախագծում

Խարիսխի նախագծման մանրամասները բերված են ձեռնարկի այլ մասում:

#### 3.1.5 Պաշտպանություն կորոզիայից

Խարիսխի պողպատե և այլ մասերը պետք է պատշաճ ձևով մշակվեն կորոզիայի դեմ մշտական օգտագործման համար, ինչպես ցույց է տրված Նկար 24-ում: Խարիսխի կառուցվածքը ժանգի դեմ պետք է որոշվի՝ հաշվի առնելով շինարարությունից առաջ և հետո ժանգոտման պայմանները: Անհրաժեշտ է ընտրել հակակորոզիոն միջոցառում՝ ելնելով վատագույն իրավիճակից:



Նկար 24 Մշտական խարիսխ

#### (1) Խարսխակայանի մասի պաշտպանությունը կորոզիայից

Խարսխակայանի մասի՝ կորոզիայից պաշտպանության ստանդարտ ձևը որոշակի դիմադրությամբ և հաստությամբ հակակորոզիոն նյութերով մասը ծածկելն է՝ հակակորոզիոն էֆեկտ ունեցող ցեմենտախմորով ներսի տարածությունը լցնելու հետ միասին:

#### (2) Առաձգական մասի պաշտպանությունը կորոզիայից

Առաձգական մասի՝ կորոզիայից պաշտպանության ստանդարտ ձևը որոշակի դիմադրությամբ և հաստությամբ հակակորոզիոն նյութերով մասը ծածկելն է՝ հակակորոզիոն նյութերով, օրինակ՝ հակակորոզիոն յուղով ճոպանի և պատյանի միջև տարածությունը լցնելու հետ միասին: Եթե ապագայում ճոպանը լարված լինի,

հակակորոզիոն նյութերը պետք է լինեն ճկուն վերաձգման համար:

**(3) Խարիսխի գլխամասի պաշտպանությունը կորոզիայից**

Խարիսխի գլխամասի՝ կորոզիայից պաշտպանության ստանդարտ ձևը պաշտպանիչ կափարիչի (գլխիկի կափարիչ) և հակակորոզիոն նյութերի (հակակորոզիոն յուղ) համակցումն է: Կորոզիայից պաշտպանությունը պետք է հնարավորություն տա անհրաժեշտության դեպքում վերաձգել ճոպանը:

**3.1.6 Հակազոդեցության կառույց**

Որպես հակասողանքային միջոցառում կիրառվող խարսխման աշխատանքների համար ստեղծվում է փորված լանջ հակազոդեցության կառույցի տեղադրման համար: Անհրաժեշտ է ուշադիր լինել փորման հետևանքով սողանքի ակտիվացումից խուսափելու համար:

Հակազոդեցության կառույցը տեղադրվում է լանջերի վրա և նախագծվում է այնպես, որ ունենա բավարար դիմադրություն խարիսխի առաձգականության ուժի նկատմամբ: Կարելի է հակազոդեցության կառույցը բաժանել մեկուսացված հակազոդեցության կառույցի և շարունակական հակազոդեցության կառույցի, որն ունի շրջանակների տեսք լանջի վրա: Հակազոդեցության կառույցի տեսակի ընտրությունը և նախագծումը կատարվում են՝ հաշվի առնելով լանջի վիճակը, խարիսխի չափսերը, կիրառելիությունը, տնտեսական արդյունավետությունը, պահպանությունը, ինչպես նաև լանդշաֆտը: Հակազոդեցության կառույցի մեկուսացված տեսակը կիրառվում է շատ դեպքերում, քանի որ մեկուսացված տեսակի տեղադրման համար փորումը, որպես կանոն, քիչ է:

**(1) Հակազոդեցության կառույցի վրա ներգործող ուժը**

Հակազոդեցության կառույցի վրա ներգործող ուժը, հիմնականում, խարիսխի ուժն է և իր հակազոդեցության ուժը (գրունտային հիմքի հակազոդեցության ուժ): Հակազոդեցության կառույցի (երկաթբետոն) նյութերի թույլատրելի տեսակարար լարվածությունը պետք է որոշվի՝ ելնելով ներգործող ուժից:

**(2) Լայնական կտրվածքի ուժի հաշվարկ**

Լայնական կտրվածքի ուժի հաշվարկը, հիմնականում, կատարվում է ճառագայթային մոդելներով: Հաշվարկի պայմանը՝ արդյոք գրունտային հիմքի հակազոդեցությունը պետք է լինի միաձև բեռ կամ խարիսխի ուժը պետք է լինի կենտրոնացված բեռը, որոշվում է՝ հաշվի առնելով գրունտի վիճակը:

**(3) Հակազոդեցության կառույցի լանջի բուսականության վերականգնում**

Խորհուրդ է տրվում ջանքեր գործադրել վերականգնելու համար այն լանջի բուսականությունը, որտեղ տեղադրվել է հակազոդեցության կառույցը՝ էրոզիայի դեմ պայքարելու և բնական միջավայրն ու լանդշաֆտը պահպանելու նպատակով:



10 Հակասողանքային միջոցառումների նախահաշվի կազմում և պատվիրում



# Մաս 1

## Ինժեներական աշխատանքների գնահատման նորմերը

(Նախագիծ)

2017

### Ինժեներական աշխատանքների գնահատման նորմերը


#### 1. Ընդհանուր աշխատանքների գնահատում

##### 1.1. Կիրառման սահմաններ

Այս գնահատման չափանիշները կիրառվում են այն դեպքում, երբ շինարարական աշխատանքների համար (բացառությամբ նավահանգիստների ու օդանավակայանների) պատվիրվում է աշխատանքային ծախսերի նախահաշիվ:

##### 1.2. Աշխատանքային ծախսեր

##### 1.2.1. Աշխատանքային ծախսերի կառուցվածքը



##### 1.2.2. Աշխատանքային հարկի կառուցվածքում ընդգրկված ծախսերի բնույթը

- (1) Ուղղակի ծախսերը ցուցադրված են վերը նշված սխեմայում:
- (2) Անուղղակի ծախսեր - սա ներառում է համապատասխան կազմակերպության աշխատակիցների աշխատանքի, սոցիալական ապահովության, անձնական և կոմունալ կարիքների հետ կապված ծախսերը: Կարևոր է հաշվի առնել, որ այլ ծախսերը ուղղակի ծախսերը կարող են վերափոխվել անուղղակի ծախսերի:
- (3) Ընդհանուր վարչարարական ծախսեր - ներառում է աշխատանքներ իրականացնող շինարարական խորհրդատուի ծախսերը, որի մեջ ընդգրկվում են վարչարարական ծախսերը և հավելյալ շահույթը:
- (4) Սպառողական հարկ - այս գումարը հաշվվում է՝ հիմք ընդունելով երկրի հարկային օրենսդրությունը:



**1.2.3. Աշխատանքային հարկի գնահատում**

**(1) Աշխատանքային հարկը անհրաժեշտ է գնահատել հետևյալ կերպ.**

$$\begin{aligned} \text{Աշխատանքային հարկ} &= (\text{աշխատանքի արժեք}) + (\text{սպառողական հարկ}) \\ &= [(\text{Աշխատանքի ծախս}) + (\text{Ընդհանուր վարչարարական ծախսեր})] + (\text{Սպառողական հարկ}) \\ &= [(\text{աշխատուժի ուղղակի ծախսեր}) + (\text{ուղղակի ծախսեր}) + (\text{այլ ծախսեր})] + (\text{ընդհանուր} \\ &\quad \text{վարչարարական ծախսեր}) + (\text{սպառողական հարկ}) \end{aligned}$$

**(2) Յուրաքանչյուր ծախսային բաղադրիչի մեծության հաշվարկ**

**1) Ուղղակի ծախսեր**

- i. Աշխատուժի ուղղակի ծախս - տվյալ աշխատանքում ներգրավված աշխատողների օրավարձ,
- ii. Ուղղակի գործառնական ծախսեր - գրասենյակային սարքավորումների, ավտոմեքենայի վարձույթի, վառելիքի, վարորդի աշխատավարձի, գրասենյակի վարձակալության, էլեկտրոտեխնիկայի և համակարգչային պարագաների օգտագործման և սպասարկման ծախսեր, որոնք ներառվում են հատուկ կազմված տեխնիկական առաջադրանքում՝ ըստ աշխատանքների բնույթի պահանջի:

**2) Այլ ծախսերը իրենց սահմանային մեծությամբ հաշվարկվում են հետևյալ բանաձևով.**

$$(\text{այլ ծախսեր}) = (\text{աշխատուժի ուղղակի ծախսեր}) \times \alpha / (1 - \alpha)$$

Այնուամենայնիվ, ընդհանուր ծախսերում  $\alpha$ -ն տոկոսային հարաբերակցությամբ կազմում է 35% (բացառությամբ ուղղակի ծախսերի):

**3) Ընդհանուր վարչարարական ծախսերը իրենց սահմանային մեծությամբ հաշվարկվում են հետևյալ բանաձևով.**

$$(\text{ընդհանուր վարչարարական ծախսեր}) = (\text{աշխատանքային ծախսեր}) \times \beta / (1 - \beta)$$

Այնուամենայնիվ,  $\beta$ -ն տոկոսային հարաբերակցությամբ ընդհանուր և վարչարարական ծախսերի 35% է կազմում:

**(3) Փոփոխությունների վերահսկում**

Պատվիրակման (outsourcing) դեպում փոփոխությունները պետք է կատարվեն հետևյալ բաղադրիչների հիման վրա և հաշվարկվեն ըստ գործող օրենսդրության:

Պատվիրակման (outsourcing) փոփոխություն =

$$= \text{Ընդհանուր գումարի փոփոխություն} \times \frac{\text{Նախորդ պայմանագրի գումար}}{\text{Նախորդ պայմանագրերի ընդհանուր գումար}}$$

- 1) Աշխատուժի ուղղակի ծախսերը փոփոխության են ենթարկվում աշխատանքի բովանդակության փոփոխության համաձայն (շինարական օբյեկտ, շինարարական աշխատանքների ծավալ և այլն):
- 2) Ուղղակի ծախսեր

- i. Աշխատանքային մեքենայի վարձակալության, վառելիքի, վարորդի վարձատրության ծախսերը ենթարկվում են փոփոխության, եթե տեղանքի ուսումնասիրության համար անհրաժեշտ է եղել ավտոմեքենայի գործածություն, սակայն ավելացել կամ պակասել են ուսումնասիրության վայրերը:
  - ii. Ճանապարհորդական ծախսերը ենթարկվում են փոփոխության՝ աշխատանքային նախնական պլանի կամ աշխատանքային բովանդակության փոփոխության համաձայն:
- 3) Այլ վարչարարական ուղղակի ծախսերը փոփոխվում են աշխատուժի ծախսերի փոփոխությանը համապատասխան:
- (4)** Աշխատանքի գնահատման այլ ծախսերի հաշվարկների համար, ըստ անհրաժեշտության, օգտագործվում են շինարարական աշխատանքների նախագծման ստանդարտ գնահատման նորմերը:

**1.3. Աշխատանքի բովանդակությունը**

Կիրառվող ինժեներական աշխատանքների տեսակներ ներկայացված են ստորև.

Աշխատանքի դասակարգում (0 ական մակարդակ)	Շինարարության դասակարգում (1-ային մակարդակ)
Գետի հունի ամրացում	Պարսպապատում, երեսպատում Գետի հունի խորացում
	Ջրարգելակ
	Պատվար
	Դրենաժի սարքավորում
	Հատակի ամրացում
Գետի հունի ամրապնդում/վերանորոգում	Գետի <i>հունի</i> ամրապնդում/ պահպանում Գետի <i>հունի</i> վերանորոգում
Գետի ափի ամրացում	Ափերի պատնեշապատում, երեսպատում Ալեհերձ պատվար, արհեստական հրվանդան Շեպերի կանխարգելման աշխատանքներ
Ճանապարհային նոր շինարարական և վերանորոգման աշխատանքներ	Ճանապարհների բարելավվում Հետիոտնային ճանապարհներ Մետաղյա կամուրջ վերին հատված Բետոնե կամուրջ վերին հատված Կամրջի ստորին հատված Թունել (NATM) Բետոնյա ծածկ Երկաթյա ծածկ Ստորգետնյա հետիոտնային անցում Ստորգետնյա ավտոկայանատեղի
Էլեկտրական և այլ լարերի ստորգետնյա փողրակ	Մեկուսացման փողրակ Էլ. Լարերի մեկուսացման փողակ Ինֆորմացիոն արկղ
Ճանապարհների ամրացում/վերանորոգում	Ճանապարհների ամրացում Ճանապարհների վերանորոգում

Նշումներ: 1) Ըստ իրականացվող ինժեներական աշխատանքների բարդության՝ վերջնահաշվարկը կատարվում է առանձին:

- Իրականացվող աշխատանքների համար աշխատանքի կառավարման պատասխանատու անձինք, ինչպես նաև ուսումնասիրություններ կատարող անձնակազմը և ինժեներական աշխատանքների պատասխատուները ընդհանուր աշխատանքների սկզբում և ավարտին իրականացնում են ընդհանուր պլանային ժողով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև միջանկյալ ժողովներ:
- Աշխատանքների իրականացման սկզբում, ինչպես նաև ընթացքում աշխատանքի արդյունքների ներկայացման համար, անհրաժեշտության դեպքում կարող է կազմակերպվել միջանկյալ ժողով:
- Ժողովների ժամանակ քննարկվող յուրաքանչյուր շինարարական աշխատանքների վերաբերյալ հնարավոր է որոշել ժամկետները, աշխատանքների սկիզբն ու ավարատը:

**1.4. Չափորոշման ստանդարտները**

**1.4.1. Գնահատման մեթոդը**

1) Աշխատանքային նախագիծ և դաշտային հետազոտություններ

Հիմնված է հետևյալ քայլերի վրա

	Բնժեներ (A)	Բնժեներ (B)	Բնժեներ (C)	Բնժեներները	Նշումներ
Աշխատանքի նախագիծ	1.4		1.0		Ամեն աշխատանքի համար
Դաշտային հետազոտություններ	0.5		0.5		1 անգամ մեկը

Դաշտային հետազոտությունների համար որպես կանոն օգտագործվում են աշխատուժի արդյունավետության նորմերը, սակայն տարածությունը մեծ լինելու դեպքում, ստեղծվում է առանձին գնահատման տեսակ:

2) Շինարարական աշխատանքների դասակարգում

Որպես կանոն, բոլոր հայտի առաջադրված մասնակիցներից հավաքվում են գնահատումները և հաշվարկվում ընդհանուր գումարը: Գնահատման համար օգտագործվում է հետևյալ աղյուսակը:

	Բնժեներ (A)	Բնժեներ (B)	Բնժեներ (C)	Բնժեներները	Նշումներ
Շինարարական աշխ. սխեմա և քանակի բովանդակության աղյուսակի ստեղծում (ներառված պլանը և աշխատանքի պրոցեսը)					
Պահանջի հաշվման ստեղծում					
Տվյալների մուտքագրում					
Ընդհամենը					

**1.4.2. Ժողով**

1) Ժողով ընդհանուր աշխատանքների վերաբերյալ:

	Բնժեներ (A)	Բնժեներ (B)	Բնժեներ (C)	Բնժեներները	Նշումներ
Ժողովի սկիզբ	0.5			0.5	
Միջանկյալ ժամանակ	0.5			0.5	Համապատասխան
Ժողովի ավարտ	0.5				

Նշումներ

1. Ժողովը պետք է ներառի, հանդիպման ժամանակահատված

**2. Աշխատանքի պայմանագիր**

**2.1. Մրցույթի հայտերի և պայմանագրային ընթացակարգերի ընտրություն**

Հայտի և պայմանագրի ընտրության ժամանակ, առաջարկվում է «Շինարարական խորհրդատուի աշխատանքի պայմանագրի ընթացակարգի ընտրության համակարգ», որը ընտրվում է աշխատանքային բովանդակությանը համապատասխան՝ գնման պայմանագրի մեթոդով:

**2.2. Ընտրողների քանակը ըստ աճուրդի և պայմանագրի տեսակի**

Ընտրողների քանակը յուրաքանչյուր մեթոդի/համակարգի համար ներկայացված է ստորև:

Պայմանագրի տեսակ/մեթոդ/համակարգ		Ընտրվող աշխտակազմի քանակ
Առաջարկվող մեթոդ		Բոլորը: Ովքեր համապատասխանում են ներկայացվող պահանջներ
Մրցույթային հայտի համախմբված գնահատման համակարգ	Ընդհանուր մրցույթի մրցունակ հայտերի համախմբված գնահատման համակարգ	Բոլոր նրանք, ում որակավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին:
	Ընդհանուր մրցույթի մրցունակ հայտերի համախմբված գնահատման համակարգ (Տեխնիկական ինտերակտիվ )	Բոլոր նրանք, ում որակավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին:
Գնային մրցակցության համակարգ	Ընդհանուր մրցույթային աճուրդի մեթոդ	Բոլոր նրանք, ում որակավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին:
	Պարզ հրապարակային առաջարկի մրցույթային հայտ	Մոտ 10 հոգի
	Առաջադրված մրցույթային հայտ	Մոտ 10 հոգի

Շինարարական խորհրդատվության աշխատանքների հայտի, պայամանագրային ընթացակարգի դասակարգումը

Առաջադրված մրցույթային հայտ	Ընդհանուր մրցույթային հայտ	Մրցույթային հայտի համախմբված գնահատման համակարգ	Առաջարկվող համակարգ/մեթոդ
<p>Պլանավորած գումարը (1000 ՀՀ դրամ)</p> <p>Առաջադրվել են մոտ 10 հոգի</p> <p>6000</p> <p>5800</p> <p>5000</p> <p>4000</p> <p>3000</p> <p>2000</p> <p>1000</p> <p>(ԱՀԿ համաձայնագիր)</p> <p>Պարզ հրապարակային առաջարկությունների մրցույթային հայտ (Հնարավոր է գնանշումների համակցված կիրառում)</p> <p>Պարզ հրապարակային առաջարկությունների մրցույթային հայտ (Հնարավոր է գնանշումների համակցված կիրառում) կամ Առաջադրված մրցույթային հայտ (Հնարավոր է գնանշումների համակցված կիրառում)</p>	<p>Ընդհանուր մրցույթային աճուրդ (ԱՀԿ համաձայնագիր)</p> <p>Ընդհանուր մրցույթային հայտ (Հնարավոր է գնանշումների համակցված կիրառում)</p>	<p>Ընդհանուր մրցույթային հայտ (ԱՀԿ համաձայնագիր)</p> <p>Ընդհանուր մրցույթային հայտ (Գնահատման համընդհանուր ձևը ընդունվում է)</p> <p>Ընդհանուր մրցույթային հայտ (Հնարավոր է գնանշումների համակցված կիրառում) կամ «Ինժեներական աշխատանքների ինտերակտիվ համակարգ» (Հնարավոր է գնանշումների համակցված կիրառում)</p>	<p>Հասարակ հրապարակային առաջարկ «Մասնագիտական փորձաքննության համակարգ» կամ «Փորձաքննության համակարգի կոմիտե» (ԱՀԿ համաձայնագիր)</p> <p>Հասարակ հրապարակային առաջարկի տեսակ «Մասնագիտական փորձաքննության համակարգ» կամ «Հետազոտությունների մեթոդի կոմիտե» (ԱՀԿ համաձայնագիր)</p> <p>Պարզ հրապարակային առաջարկի տեսակ «Մասնագիտական փորձաքննության համակարգ մեթոդ» կամ «Փորձաքննության համակարգի կոմիտե»</p>

**3. Սողանքների վերահսկման ինժեներական աշխատանքներ (Հողային աշխատանքներ)**

**3.1. Հողային աշխատանքներ**

**3.1.1. Հողային զանգվածի փոփոխությունները դասկարգվում են հետևյալ 3 վիճակներով:**

- ✓ **Լեռնային հատվածի գրունտային զանգված.....հորատում:**
- ✓ **Փուխր գրունտային զանգված..... տեղափոխման ենթակա գրունտային զանգված:**
- ✓ **Կոմպակտացված գրունտային զանգված.....լիցքավորված գրունտային զանգված:**

Այս 3 հողի ծավալի փոփոխության վիճակները արտահայտվում են հետևյալ հավասարումով, գրունտի ծավալի *փոփոխությունը համարենք* L և C տառերը:

$$L = (\text{Փուխր գրունտային ծավալ (մ}^3\text{)}) / (\text{Լեռնային ծավալ (մ}^3\text{)})$$

$$C = (\text{Խտացված գրունտային ծավալ (մ}^3\text{)}) / (\text{Լեռնային ծավալ (մ}^3\text{)})$$

Դասակարգման անվանում	Փոփոխման գործակից L	Փոփոխման գործակից C	1/C	L/C
Գլխավոր կատեգորիա				
Քարքարոտ հող	1.20	0.90	1.11	1.33
Ավազահող և ավազ	1.20	0.90	1.11	1.33
Կպչուն հող/ կավահող	1.25	0.90	1.11	1.39

Նշումներ.

1. Սույն աղյուսակի ընդհանուր (գրունտային ծավալ) գործակցի պահանջը L և C-ն է:
2. 1/C-ն օգտագործվում է որպես կոմպակտացված գրունտային զանգվածը Լեռնային հատվածի գրունտային ծավալի փոխակերպման դեպքում:

*1/C-ն կիրառվում է գրունտը խտացնելուց հետո վերջնական ծավալը որոշելու համար:*

3. L/C-ն օգտագործվում է փուխր գրունտային զանգվածը խտացված գրունտային զանգվածի փոխակերպելու դեպքում:

**3.1.2. Հողային աշխատանքների շինարարական ընդհանուր նկարագրություն**

**(1) Կիրառման տիրույթը**

Այս գնահատման ստանդարտները կիրառվում են հետևյալ հողային աշխատանքների համար:

- 1) Հորատում
  - Հիմնական հողային աշխատանքներ
  - Հիմնական սարքավորումների գործածությամբ մինչև 5 մ խորքային աշխատանքներ:

- 2) Հողի և ավազի բեռնափոխադրում:  
Հիմնական բեռնափոխադրման աշխատանքներ:
- 3) Հարթեցում

Իրականացվում է տվյալ երկրին համապատասխան շինանյութով

- 4) Ճանապարհային պաստառի լիցք (ընդհանուր առմամբ )
- 5) Ճանապարհային ծածկի լիցք (ընդհանուր առմամբ )
- 6) Կավահող (փուխր) (ընդհանուր առմամբ )

Գրունտը՝ 60 մ –ից ավել տարածություն

Մանրախիճ ապարերը՝ 30 մ ավել

- 7) Բեռման ենթակա գրունտ (Փուխր)
- 8) Մարդկային ռեսուրսների գործածություն

Հողի բեռնման համար օգտագործվում են մարդկային ռեսուրսներ

- 9) Մանրացում/ ջարդում
- 10) Գրունտային հումք

Ճանապարհային և գետի պատվարի համար նախատեսված գրունտային հումքի ձեռք բերում(զնում)  
(տեղական առաքվող միավորի գին և աճուրդային գին ):


- 11) Գրունտի ավելցած զանգվածի հեռացում

Ավելացած գրունտային հումքը տեղափոխվում է/ հեռացվում է դրա համար նախատեսված թափոնների վայր:



**(2) Շինարարական աշխատանքների ընդհանուր նկարագիր**


1) Շինարարական աշխատանքների բլոկ-սխեմա



Նշումներ.

- Միայն կրկնակի գծով շրջանակի գրվածներն են համապատասխանում սույն շինարարական փաթեթին:
- *Ժայռաբեկորների տեղափոխումը և կուտակված գրունտը հաշվում են անհրաժեշտության դեպքում ( Ապարային հորատման աշխատանքների համար ընտրվում է «առկա» կատեգորիան: Մանրացված գլաքարի, բեռնվող փուխր գրունտի կամ կավահողի (փուխր գրունտ) դեպքում հաշվարկվում է առանձին):*
- Մարդկային ռեսուրսները օգտագործվում են տեղանքում սահմանափակումներ առաջանալու դեպքում (երբ մեքենաներին հասանելի չէ տվյալ հատվածում աշխատանքներ իրականացնելը)
- Յուրաքանչյուր շինարարական փաթեթի աշխատանքային նպատակ համաձայնեցված է [2-2 հոդային աշխատանքների փաթեթին համապատասխան բլոկ-սխեմայով]

2) [Ճանապարհային պաստառի լիցք], [Ճանապարհի ծածկի լիցք], [Նախապատրաստական գրունտ ]



Նշումներ.

1. Սույն շինարարական աշխատանքների միայն կրկնակի շրջանակի նշվածներն են գնահատվում:
2. Հարթեցումը իրականացվում է անկախ հողի տեսակից և կարծրությունից:

### 3.1.3. Արհեստական լանջի /դարավանդի/ շեղերի կառուցում

(1) Շեղերի ձևավորման շինարարական աշխատանքներ

- Կիրառվող շին.աշխատանքներ

Տվյալ նյութը կիրառվում է շեղերի և փորվածքի գրունտի մակերևույթի ձևավորման համար:

- Կիրառվող տեսակները

Մանրախիճ գրունտ, ավազ և ավազահող, կոհեսիվ կավահող, թուլակազմ/ փափուկ քարեր I • II , միջին կարծրության քարեր. լանջի վրայի ամուր քարեր:

(2) Շինարարական աշխատանքների ընդհանուր նկարագիր


1) Լիցքի միջոցով շեղերի մակերևույթի ձևավորման աշխատանքները իրականացվում են լանջի մակերեվույթի կոմպակտացման ճնշման եղանակով:

2) Փորվածքի միջոցով շեղերի ձևավորման շինարարական աշխատանքներ:


Լանջի կտրվածքի ձևավորումը իրականացվում է լանջի մակերեսային հատվածի կտրվածքի/փորվածքի միջոցով հարթեցման/ձևավորման աշխատանքները:



Նկ. 3-2 Լիցքով հարթեցման շին.աշխատանքների բլոկ-սխեմա



Նկ. 3-3 Փորվածքով հարթեցման շինարարական աշխատանքների բլոկ-սխեմա



Նշում.

Սույն շին. աշխատանքների գնային փաթեթին համապատասխանում է կրկնակի շրջանակի գրվածները

**3.1.4. Թեթևակշիռ հումքով շինարարական աշխատանքներ**


**(1) Կիրառման տիրույթը**


Որպես թեթևակշիռ հումքի լիցքի համար օգտագործվում են Փրփռապոլիստիրոլ՝ գրունտի բարձրացման, շեպերի, դարավանդի, ինչպես նաև կամուրջի վերջնամասերի հակակշռի համար: Փրփռապոլիստիրոլային աշխատանքները կիրառվում են մարդկային ռեսուրսների կիրառմամբ, ֆիզիկական աշխատանքի անհրաժեշտության դեպքում:

**(2) Շին.աշխատանքների ընդհանուր նկարագիր**


Շին.աշխատանքների բլոկ-սխեման նկարագրված է ստորև

**1) Պատվարի մակերևույթի շինանյութ լինելու դեպքում շին. աշխատանքներ**






2) Պատվարի մակերկրային շինանյութ չլինելու դեպքում շին. աշխատանքներ



Նաշումներ.

1. Միայն ամբողջական շրջանակով գրվածներն են համապատասխանում տվյալ քայլերին:
2. Չորատման սարքավորումների տեղադրումը, կոպճաքարային հիմքը, ավազային շերտը, շիբինները, քարաբեկորները և բետոնյա ծածկը ներառվում են անհրաժեշտության դեպքում:



### 3.2. Գրունտային ջրերի հեռացման աշխատանքներ

#### 3.2.1. Սողանքի կանխարգելման աշխատանքներ (գրունտային ջրերի կուտակման ցամաքորդային աշխատանքներ)


##### (1) Կիրառման տիրույթը

Տվյալ սարքավորումները և նյութերը անհրաժեշտ են, որպեսզի Հորատման մեքենայի միջոցով տարվեն շինարարական աշխատանքներ, ցամաքորդային հորատանցքի կրկնակի խողովակներով, որը կունենա մոտավոր 90-135 mm տրամագծով անցքեր, հորատանցքի լայնությունը կլինի 80 m կամ քիչ տրամագիծ իսկ անկյունը մոտ 10 աստիճան:

Հորատման/ ցամաքորդային աշխատանքները իրականացվում են հորատման կրկնակի խողովակով մեքենաների միջոցով, որտեղ անցքերի տրամագիծը 90-135 mm իսկ երկարությունը 80 m, խողովակի անցկացման անկյունը մոտ 10 աստիճան:

##### (2) Աշխատանքի նկարագիր

Շինարարական աշխատանքերը ստանդարտացված են ստորև ներկայացված բլոկ-սխեմայով





**(3) Շինարարական աշխատանքների քայելըը**

1) Մողելի ընտրություն

Սարքի և դրա նորմերի ընտրությունը ցուցադրված են հետևյալ նորմատիվային աղյուսակում:

Աղյուսակ 3-1. Սարքի ընտրություն

Սարքավորման անվանում	Ստանդարտները	Միավոր	Քանակ	Օգտագործման եղանակ
Boring Machine Հորատման մեքենա	Rotary percussion type · Skid type Ռոտացիոն հարվածող/ ճնշիչ տեսակ 55kW	Պլատֆորմ	1	
Հեղուկային նյութի պոմպ Grout Pomp	Հորիզոնական կրկնակի գործող մխոցով 200ℓ / րոպե	"	1	
Շինարարական ստորջրյա/ մոտորային պոմպ	<b>Պոմպային</b> 50mm տրամաչափով և ընդհանուր պոմպի գլխիկը 50 m. Normal type (diving pump) Diameter 50 mm, Total delivery head 30	"	1	(Նշում 1) Ջրամատակարարում
Շինարարական գրունտային ջրերի/ստորջրյա մոտորային պոմպ		"	1	(Նշում) 1, 2 Ջրահեռացման համար
Ակտիվացման գեներատոր Activation generator	Դիզելային վառելիքով աշխատող, գազի արձակումով սպառման (2 գլխիկով/ստանտարդ )125kVA	"	1	(Նշում) 3

Նշումներ.

• Եթե շինարարական աշխատանքները անցկացվում են դաշտային պայմաններում և գործածվող նշված սարքավորումների ստանդարտները՝ ինչպիսիք են գրունտային ջրերի մոտորային պոմպը չեն համապատասխանում տվյալ բարդ պայմաններին, ապա այն հաշվվում է առանձին :

• Աշխատանքների ստորջրյա պոմպը հաշվի է առնվում, եթե միայն աշխատանքները կատարվում են հորատանցքում:

• Մոտարային գներատորը վերցվում է վարձույթով:

2) Ցամաքուրդային աշխատանքներ

Ցամաքուրդային աշխատանքները իրականացվում են Բորինգ մեքենայով ջրհորի հորատման համար: Հարկավոր է նշել, որ նման աշխատանքների իրականացումը կատարվում է ամեն գրունտի տեսակին համապատասխան:

i. Անձնակազմի կազմավորում

Անձնակազմի կազմավորման համար օգտագործվում է հետևյալ աղյուսակը:

Աղյուսակ 3-2 Անձնակազմի ստեղծում

Հողային աշխատանքների գլխավոր ինժեներ	Մասնագետ քանվորներ	Բանվորներ
1	1	2

ii. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Հորատման աշխատանքների իրականացման ժամանակը ներառված հորատման խողովակի դուրս բերումը պետք է կազմի օրական 7 ժամ:

iii. Հորատման աշխատանքների քայլերը

Շին.աշխատ. վայր	Պահող խողովակի տրամաչափը		Հողի որակ Առաջընկալող տրամգիծ	Հորատման աշխ. օրերի քանակ			
	VP Խողովակ	SGP խողովակ		Կավ, ավազ	Հոսող հող, կոպիճ	Ժայռաբեկորներ, քարաբեկորներ	Փափուկ քարեր
Գրունտի մակերես	40 mm	40 A	90 mm	0.31	0.46	0.63	0.50
	50 mm, 65 mm	50, 65 A	115 mm	0.42	0.57	0.71	0.60
	75 mm	80A, 90 A	135 mm	0.50	0.65	0.76	0.66
Ջրհոր	40 mm	40 A	90 mm	0.37	0.54	0.75	0.60
	50 mm, 65 mm	50, 65 A	115 mm	0.50	0.67	0.83	0.70
	75 mm	80A, 90 A	135 mm	0.59	0.77	0.90	0.78

Նշումներ.

• Տրամագիծի չաափսը համապատասխանում է հորատման խողովակի արտաքին տրամագծին:

• Ներառած է նույն լաստակի շարժը:

• Եթե հորատման անցքի երկարությունը գերազանցում է 50 մ, իրականացվում է կոմպենսացում հավելյալ 20 % ընդհանուր երկարությանը համարժեք:

iv. Տարատեսակ այլ ծախսեր

Տարատեսակ այլ ծախսերի մեջ են մտնում ֆենը, ակվարիումը, աշխատուժը և այլն, որոնց ընդհանուր գնային արժեքի սահմանը ներկայացված է ստորև:

	Գրունտի մակերես	Ջրհոր
Տարատեսակ այլ ծախսեր	0.4	0.6

3) Հորատհանուկի խողովակի գործընթացը և կարգավորման աշխատանքներ Այս աշխատանքները իրենից ներկայացնում են հորատհանուկի խողովակի աշխատանքային գործընթացը՝ գրունտի ներմուծան ժամանակ:

i. Աշխատակազմ

Հողային աշխատանքների գլխավոր ինժեներ	Հատուկ բանվորներ	Հասարակ բանվորներ
1	2	2

ii. Հորատհանուկի խողովակի գործընթացը և ներմուծման փուլերը/քայլերը  
Հորատհանուկի խողովակի գործընթաց և ներմուծման աշխատանքի փուլերը ներկայացված և հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 3-7

Շին.աշխ. վայր			Երկրի մակերևույթ			Դրենաժային հոր		
Հորատանցքային սարքավորումները			VP	SGP		VP	SGP	
Strainer processing			մկս առ	մկս ս	Չկ ճ	մկս առ	մկս ս	Չկ ճ
Անվանում	Ստանդարտներ	Ագրեգատ/ մեխանիզմ Unit /Միավոր						
Հողային աշխատանքների գլխավոր ինժեներ			0.05	0.03	0.03	0.07	0.04	0.04
Հատուկ բանվորներ			0.11	0.07	0.07	0.14	0.09	0.09
Հասարակ բանվորներ			0.10	0.07	0.07	0.14	0.08	0.08
Խողովակաշարերի տեղադրման բանվոր			—	0.60	0.24	—	0.86	0.50
Հորատման մեքենայի օգտագործման վճար	Rotary percussion type · Skid type		—	0.10	0.10	—	0.10	0.10

	Ռոտացիոն հարվածող/ ճնշիչ տեսակ 55kW							
Տարատեսակ այլ ծախսեր			—	10	15	7	8	11

Նշումներ.

- V P խողովակը ստանդարտացված է JISK6741
- Տարատեսակ այլ ծախսերի մեջ են մտնում, խողովակի, ֆենի, էլեկտրականության, աշխատուժի, սարքավորումների մաշվածության և այլ ծախսեր, որոնց գնային հաշվարկը ներկայացված է վերը
- Հորատման մեքենայի աշխատանքային ժամերը օրական 7 ժամ:
- iii. Հորատման սարքավորումներ
  - Գործածության ստանդարտացումը իրականացվում է VP խողովակով, սակայն ակտիվ կամ վտանգավոր սողանքային տարածքում եթե հնարավոր են գործածվող խողովակի վնասներ գործողությունների ընթացքում, կարելի է օգտագործել SGP խողովակ:
  - Կիրառվող խողովակի ընտրության համար հետևում են ստորև ներկայացված աղյուսակին

Աղյուսակ 3. 8 Կորուստի չափանիշներ

Շին.աշխ. վայր	Անվանում	Ստանդարտներ	Կորուստները
Գրունտի մակերես	Ամուր/կարծր վինիլ քլորիդ խողովակներ	V P Ընդհանուր խողովակ	+0.03
	Ածխածնային պողպատ խողովակների անցկացում, պողպատյա խողովակներ	SGP առանց պտուտակների սև խողովակ	+0.04
Զրհոր	Ամուր/կարծր վինիլ քլորիդ խողովակներ	V P Ընդհանուր խողովակ	+0.06
	Ածխածնային պողպատ խողովակների անցկացում, պողպատյա խողովակներ	SGP առանց պտուտակների սև խողովակ	+0.08

**4) Սարքավորումների տեղադրման և դուրս բերման աշխատանքներ**

Սարքավորումների, տեխնիկայի տեղադրման և դուրս բերման աշխատանքների նորմերը ներկայացված են ստորև

Աղյուսակ 3-9 Սարքավորումների տեղադրում և տեղահանման աշխատուժի արդյունավետության միավոր; (լուրաքանչյուր 1 անգամը)

Շին. աշխատանքների վայր			Երկրի մակերևույթ	Ցամաքուրդային ջրհոր
Անվանում	Ստանդարտներ	Ագրեգատ/մեխանիզմ Միավոր		
Հողային աշխատանքների հիմնական համակարգող		մարդ	0.9	3.1
Մասնագետ բանվորներ		„	1.8	2.6
Աշխատանքներ բարձրության վրա		„	-	1.7
Բանվորներ		„	1.8	6.0
Թրթուրավոր կռունկ վարձակալություն	Հիդրավլիկ վերամբարձ կռունկի -դուրս բերում գազի կանխար-գելման միջոցառումների տեսակի (2-րդ ստանդարտային արժեք)4.9 տ կախվելիություն	օր	0.7	2.5
Այլ տարատեսակ ծախսեր		%	-	4

Նշումներ:

- Ցամաքուրդային հորի աշխատանքներում ներառվում է նաև լաստակների տեղադրումն ու տեղահանումը/հեռացումը:
- Նույն վերը նշված լաստակների տեղաշարժը ներառվում է հորատման աշխատանքի քայլում:
- Տեղանքում բարդություններ առաջանալու դեպքում այն վերանայվում է վերոհիշյալ աղյուսակից առանձնացված:
- Տարատեսակ ծախսերը, դրանք լաստակի հումքի և աշխատուժի ծախսերն են, որոնց ընդհանուր գումարը բազմապատկվում է վերը նշված աղյուսակի գործակցի հետ և հաշվվում են որպես մաքսիմալ գումար:

**5) Լաստակների տեղադրման մեքենայի տեղադրում և դուրս բերում**

Լաստակների տեղադրման մեքենայի աշխատանքների նորմերը ներկայացված են ստորև

Աղյուսակ 3.10

(յուր. 100 մ<sup>3</sup> դատարկ տարածքի համար)

Շին. աշխատանքների վայր			Երկրի մակերևույթ	
Անվանում	Ստանդարտներ	Միավոր	Երկրի մակերևույթ	
			Հարթ մակերես	Թեք մակերես
Հողային աշխատանքների հիմնական համակարգող		մարդ	2.4	3.1
Աշխատանքներ բարձրության վրա		„	2.4	3.1
Բանվորներ		„	4.7	6.2
Թրթուրավոր կռունկ վարձակալություն	Հիդրավլիկ վերամբարձ կռունկի -դուրս բերում գազի կանխար-գելման միջոցառումների տեսակի (2-րդ ստանդարտային արժեք) 4.9 տ կախվելիություն	օր	0.3	0.5
		%	29	20
Այլ տարատեսակ ծախսեր				

### 3.2.2. Ցամաքուրդային հորի և հորատանցքի լվացում և մաքրում

#### (1) Կիրառման տիրույթը

Սույն հրահանգը կիրառվում է սողանքի կանխարգելման սարքավորումների համար, ինչպիսիք են հորիզոնական հորատանցքերն ու գրունտային ջրերի կուտակման հորերի մաքրումը բարձր ճնշման պոմպերը ( $\phi 30 \text{ mm} \sim \phi 150 \text{ mm}$  130 մ-ից ավել խորությամբ)

Որպես մաքրման աշխատանքների քայլեր, ջրահեռացման հորի համար կիրառվում է 4 քայլ իսկ ցամաքուրդային հորի համար 3 քայլ:


#### (2) Ինժեներական աշխատանքների նկարագիր

Ինժ. աշխատանքների բլոկ-սեխաման ներկայացված է ստորև.

##### 1) Հորատանցքային աշխատանքներ

Նկ. 2-1 Ինժ. աշխատանքների բլոկ-սխեմա (Հորի ներքին աշխարտանքներ)


Կրկնել այնքան անգամ, որքան անհրաժեշտ է



#### 2-2 Հորի շրջակայքի աշխատանքներ

Նկ. 2-1 Ինժ. աշխատանքների բլոկ-սխեմա (Հորի արտաքին աշխարտանքներ)

Կրկնել այնքան անգամ, որքան անհրաժեշտ է



(Նշում) Միայն լրիվ գծած շրջանակով գրվածներն են համընկնում տվյալ քայլերի հետ:

### 3.2.3. Լեռնային հատվածում ջրուղու ինժ.աշխատանքներ

#### (1) Կիրառման տիրույթը

Սույն հավելվածը կիրառվում է ջրային ուղու շին. աշխատանքների համար սողանքի կանխման և կտրուկ թեքության փլուզման կանխարգելման համար: Կիրառվող յուրաքանչյուր շին. աշխատանքի մեթոդ ներկայացված է ստորև.

1) Լեռնային ցամաքուրդային ուղիներ, ցամաքուրդային ուղիներ, լեռնային հատվածների թեթև ցամաքուրդային աշխատանքներ, լեռնային հատվածների փակ ջրագիծ,

- Մեքենաների տեղադրմամբ

Կիրառվում են երկաթբետոնե Սձև ունեցող ջրագծային փողրակներ, որոնց քաշը ավել է 100կգ /հատը և պակաս քան 450 կգ/հատը

- Բանվորական ուժի տեղադրմամբ

Կիրառվում են երկաթբետոնե Սձև ունեցող ջրագծային փողրակներ, ծալքավոր ջրագծային խողովակներ, զսպանակաձև խողովակներ, որոնց քաշը ցածր է 100 կգ/հ-ից:

2) Կուտակված ջրերի հաշվարկման աշխատանքներ

- Ջրերի կուտակման ավազանի տեղադրում

Կիրառվում է արտադրանքի ներքին տարածության 1 ք.մ. -ից ցածր ջրհավաք ավազանի տեղադրման համար:

- Երկաթբետոնե ջրհավաք ավազանի տեղադրում

Տեղադրումը իրականացվում է մեքենաների կիրառմամբ՝ երկաթբետոնե ջրհավաք ավազանի 150 կգ-ից ավել ապրանքի/ արտադրանքի և 1700 կգ-ից պակաս քաշով :




**(2) Ինժեներական աշխատանքների պլան**

Շինարարական աշխատանքերի բլոկ-սխեմաները ներկայացված են ստորև.

*2-1 Շին.աշխ. բլոկ սխեմա*

1. Լեռնային հատվածների ջրհավաք կանալի և ցամաքուրդային հորի դեպքում



2. Լեռնային հատվածների թեթև ստորգետնյա ցամաքուրդի դեպքում



11 Հակատղանքային կառույցների սպասարկում



## **Մաս 2**

### **Հակասոդանքային կառույցների սպասարկման ուղեցույց**

(Նախագիծ)

**2017**

### **1.1 Հակասողանքային կառույցների սպասարկման ուղեցույց**

(մեջբերում սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների օգտակար ծառայության ժամկետի երկարացման ծրագրի մշակման ուղեցույցից )

Սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցները հանդիսանում են լանջային աղետի կանխարգելման գործառույթ ունեցող կարևոր սոցիալական կապիտալ և պետք է շարունակաբար անել այնպես, որպեսզի նրանք ամբողջությամբ կատարեն իրենց դերը:

Սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների կառավարիչների և այլնի կարևոր պարտականություններն են գոյություն ունեցող Սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների գործառույթի անկման կանխարգելումը, սահմանված գործառույթները և կարողությունը երկար ժամանակ պահպանելու ու ապահովելու համար կառույցի սպասարկման պլանի մշակումը և կայուն կերպով գործարկումը:

Որպես սպասարկման պլանի նախապայման, կարևոր է երոզիայի կառավարման թիրախային կառույցների գործառույթների և կարողության վիճակի ճշգրիտ հստակեցումը ստուգման միջոցով, ինչպես նաև անհրաժեշտ է պատրաստել սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների գրանցամատյանը, իրականացնել գնահատում ամենամյա ստուգումների արդյունքների հիման վրա, ճշգրտորեն իրականացնել պահպանման, վերանորոգման, վերակառուցման, արդիականացման և այլ միջոցառումներ:

Սպասարկման պլանը կազմված է մի շարք գործընթացներից, ինչպիսիք են ստուգման, գնահատման, պահպանման, վերանորոգման, վերակառուցման, արդիականացման կոնկրետ պլան կազմելուց, իրականացնելուց և այլն:

### **1.2 Հիմնական հասկացություններ**

Սույն ուղեցույցում օգտագործվում են հետևյալ հասկացությունները .

**Սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների սպասարկման պլան** - Սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների սպասարկման պլանը, պահպանման ենթակա օբյեկտը պաշտպանելու տեսանկյունից, գոյություն ունեցող սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների հուսալիության աստիճանը հստակեցնելու և երկար ժամանակ դրանց գործառույթներն ու կարողությունը պահպանելու ու ապահովելու նպատակով՝ պահպանման, վերանորոգման, վերակառուցման, արդիականացման միջոցառումներ ճշգրտորեն իրականացնելու համար է: Պլանը մշակելու և իրականացնելու ժամանակ կառույցների պահպանման, վերանորոգման, վերակառուցման, արդիականացման համար պահանջվող ընդհանուր արժեքը նվազեցնելու և բյուջեների տարբերությունները վերացնելու համար ցանկալի է ներառել «կանխարգելիչ տեսակի սպասարկում»:

**Գործառույթ** - Կարողություն, որը պետք է ունենա սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցը լանջային աղետը կանխարգելելու համար:

**Կարողություն** - Սողանքի կանխարգելմանն առնչվող տվյալ կառույցների ամրությունը, կայունությունը և այլնը, որոնք անհրաժեշտ են կառույցին գործառույթը կատարելու համար և որը պետք է պահպանել կառուցվածքային տեսանկյունից:

**Հուսալիության աստիճան** - Տվյալ սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների գործառույթների և կարողության չափերը՝ գործառույթների և կարողության համեմատած, որ պետք է ունենան:

**Ստուգում** - Ուսումնասիրություն՝ սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների գործառույթների և կարողության անկման և այլնի իրավիճակը հստակեցնելու նպատակով:

**Գնահատում** - Ստուգման արդյունքների հիման վրա սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների հուսալիության աստիճանի ճշգրիտ հստակեցում:

**Սպասարկում** - Աննշան աշխատանքներ սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների գործառույթները և կարողությունը ապահովելու համար:

**Վերանորոգում** - Գոյություն ունեցող սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների գործառույթները և կարողությունը ապահովելու և վերականգնելու նպատակով վերանորոգել և բերել այն վիճակին, ինչպիսին էր մինչ վնասվելը կամ վատթարանալը:

**Վերակառուցում** - Սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների գործառույթներն ու կարողությունը ապահովելու և վերականգնելու հետ մեկտեղ նաև հետագա բարելավումը:

**Արդիականացում** - Դադարեցնել գոյություն ունեցող սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների օգտագործումը և այդ կառույցների փոխարեն ստեղծել համարժեք գործառույթներ և կարողություն ունեցող կառույցներ:

**Վերականգնում աղետից հետո** - Աղետի ժամանակ վնասված կառույցների սկզբնական տեսքը վերականգնելը:

Ստորև ներկայացված են սողանքի կանխարգելմանն առնչվող, հակասողանքային, կտրուկ լանջերի փլուզումը և ձնահյուսը կանխարգելող կառույցների ① պահպանման, ② վերանորոգման, ③ վերակառուցման, ④ արդիականացման օրինակներ:

(1) Սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների սպասարկման օրինակներ

1. Պահպանում - Լեռնային վտակի պահպանման կառույցներից ծառերի, խոտերի հեռացում և այլն:
2. Վերանորոգում - Էրոզիայի կառավարման պատվարի մաշված և քանդված մասերի վերանորոգում, պատվարից թափվող ջրից և քարերից գրուտը

պաշտպանող կառուցատարների վերանորոգում և այլն:

3. Վերակառուցում - Իրականացվում է վերանորոգման հետ միասին: հիմնական մեթոդներին համապատասխանեցրած էրոզիայի կառավարման պատվարի լայնացում, բարձրացում և այլն:
4. Արդիականացում - Պատրաստել գոյություն ունեցող պատվարին համարժեք նոր պատվար և այլն:

(2) Հակասողանքային կառույցների սպասարկման օրինակներ

1. Պահպանում - Հորատանցքի մաքրում և լվացում, ջրանցքում կուտակված հողի և ավազի հեռացում և այլն:
2. Վերանորոգում - Ջրանցքի ճեղքերի լցում, ցամաքուրդային հորի ռեգերվուարի ճեղքերի լցում, կոռոզիայի ենթարկված ցամաքուրդային հորի շրջապահ խողովակի երեսպատում երկաթյա և երկաթբետոնե սեգմենտներով և այլն:
3. Վերակառուցում - Կոռոզիայի ենթարկված ջրհավաք խողովակի փոխում կոռոզիայի դժվարությամբ ենթարկվող նյութով և այլն:
4. Արդիականացում - Ջրհավաք խողովակի և ջրահեռացման խողովակի կրկին տեղադրում և այլն:

(3) Կտրուկ թեքությամբ լանջերի փլուզումը կանխարգելող կառույցների սպասարկման օրինակներ

1. Պահպանում - Լանջով տեղաշարժված, հողի, ավազի և խոտերի հեռացում և այլն:
2. Վերանորոգում - Տորկրետացման աշխատանքների հետևի կողմի խոռոչների լցում կրաշաղախով, տորկրետացման աշխատանքների լոկալ վերանորոգում, հենապատի ճեղքերի վերանորոգում և այլն:
3. Վերակառուցում - Գրունտային հենապատի լայնացում բետոնով երեսպատելու միջոցով, լանջի ամրացում և այլն:
4. Արդիականացում - Նոր հենապատի կառուցում:

### **1.3 Սպասարկման պլանի մշակման հիմնական սկզբունքները**

Սպասարկման պլանը մշակելու դեպքում կառույցների ստուգման միջոցով պետք է հստակեցնել գործառույթների անկման ու կարողության վատթարացման պատկերը, գնահատել կառույցի հուսալիության աստիճանը: Միաժամանակ անհրաժեշտ է դիտարկել միջոցառումների առաջնահերթությունը՝ հաշվի առնելով աղետի կառավարման տեսանկյունից սողանքի կանխարգելմանն առնչվող առանձին կառույցների ավերվածության վիճակը գետի վերին հոսանքի տարածքում և շրջակայքում, պահպանման ենթակա օբյեկտի հետ դիրքային հարաբերությունը,



կառույցի կարևորությունը, անցյալում աղետների պատմությունը, միջոցառումների համար ծախսերը և այլն:

Կառույցների ստուգման տվյալները անհրաժեշտ է մշտապես արձանագրել և պահել որպես ներկա իրավիճակի հստակեցման և ապագայում վատթարացումը գնահատելու համար կարևոր տեղեկություն:

#### **1.4 Կառույցներից պահանջվող գործառույթները և կարողությունը**

Ստորև ներկայացված են հակասողանքային օբյեկտների գործառույթներն ու հնարավորությունները.

(1) Հակասողանքային կառույցների գործառույթները

Հակասողանքային կառույցներից պահանջվող գործառույթները ամփոփված են ստորև.

- 1) Կանխարգելման աշխատանքներ - Սողանքը կանխարգելելու գործառույթ,
- 2) Մակերևութային ջրերի՝ գրունտի մեջ թափանցելու կանխարգելում - ջրանցքի աշխատանքներ, ներթափանցումը կանխարգելող աշխատանքներ,
- 3) Գրունտային ջրերի ցամաքուրդի միջոցով սահքի ուժի թուլացում - գրունտային ջրերի ցամաքուրդ (հորիզոնական հորատում, ցամաքուրդային հորի աշխատանքներ, ցամաքուրդային թունելի աշխատանքներ, գրունտային ջրերի արգելափակման աշխատանքներ),
- 4) Վերին հատվածի հողահեռացման միջոցով սահքի ուժի թուլացում - վերին հատվածի հողահեռացման աշխատանքներ,
- 5) Հակակշիռ հողապատնեշման միջոցով դիմադրության ուժի ավելացում - հակակշիռ հողապատնեշի կառուցման աշխատանքներ,
- 6) Գետի և լեռնային վտակի երոզիայի կանխարգելում - պատվար, ամրացման աշխատանքներ, ջրի վերահսկման աշխատանքներ, ավապաշտման աշխատանքներ:

(2) Կանխարգելման աշխատանքներ - Սողանքի կանխարգելող գործառույթ, կանխարգելիչ ուժի միջոցով սահքին դիմադրում. հենացքերի տեղադրման աշխատանքներ, սյան աշխատանքներ, խարիսխային աշխատանքներ:


Հակասողանքային կառույցները կառավարելիս անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել, որպեսզի վերոհիշյալ առանձին կառույցներից պահանջվող գործառույթների անկում չլինի և պետք է անել անպես, որ սողանքի կանխարգելման պլանի տեսանկյունից գործառույթները երկար ժամանակ կատարեն իրենց դերը:

#### **1.5 Սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների սպասարկման պլանը**

##### **1.5.1 Սպասարկման պլանը**

Սպասարկման պլանում, ստղանքի կանխարգելմանն առնչվող կառույցների գործառնությունները և կարողությունը երկար ժամանակ պահելու և ապահովելու նպատակով, պլանում սահմանված թիրախային տարածքներում գոյություն ունեցող ստղանքի կանխարգելմանն առնչվող կառույցների համար ամփոփվում է հետևյալը.

- Պլանի թիրախային տարածքում ստղանքի կանխարգելմանն առնչվող կառույցների սպասարկման պլանի սկզբունքները
- Ամենօրյա սպասարկման սկզբունքները
- Հուսալիության աստիճանի հստակեցում՝ հիմնված ստուգման արդյունքների վրա
- Վերանորոգման, գործառնությունների վերականգնման, արդիականացման առաջնահերթության դիտարկումը և տարեկան պլանի մշակումը
- Հետագա հսկողության մեթոդները (հետագոտության ու դիտումների մեթոդները և դրանց ուշադրություն պահանջող կետերը)
- Միջոցառումները (վերանորոգման, վերակառուցման և արդիականացման մեթոդները)



Պատկեր 1. Վերանորոգման, վերակառուցման և արդիականացման տարեկան պլանի մշակման ընթացքը

### **1.5.2 Պլանի մշակման սկզբունքները թիրախային տարածքներում**

Սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների ներկա վիճակը հստակեցնելու համար անհրաժեշտ է ստուգումները իրականացնել համապատասխան ժամանակ: Ստուգման ժամանակ անհրաժեշտ է ճշգրիտ հստակեցնել սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցներից պահանջվող գործառույթների և կարողության ներկա վիճակը: Եթե ստուգման արդյունքում հայտնաբերվում է հիմքի լվացում, կառույցի կայունության և այլնի արդյունավետության ու գործառույթների վրա ազդեցություն թողնող խնդիրներ կամ այն դեպքերում, երբ անզեն աչքով դժվար է որոշել գործառույթների ու կարողության անկման ու վատթարացման չափերն ու պատճառը, ըստ անհրաժեշտության իրականացվում են մանրամասն ստուգումներ:

### **1.5.3 Ամենօրյա սպասարկման սկզբունքները**

Սպասարկման պլանում պետք է նկարագրվեն ամենօրյա սպասարկման սկզբունքները: Ցանկալի է ֆինանսական տարվա սկզբում ապահովել ամենօրյա սպասարկման, ինչպես նաև աշխատանքների իրականացման ընթացքում կառավարման համար անհրաժեշտ ծախսերի համար միջոցներ:

Ստորև ներկայացված են հակասողանքային կառույցների ամենօրյա սպասարկման օրինակը և իրականացման սկզբունքները.

(Հակասողանքային կառույցներ)

- Ցամաքուրդային հորատանցքի մաքրում
- Մակերևութային ջրերի ցամաքուրդային կառույցի վրա կուտակված սահած հողի և այլնի հեռացում

### **1.5.4 Հուսալիության աստիճանի հստակեցում**

Սպասարկման պլանում պետք է ամփոփել հուսալիության աստիճանի գնահատման արդյունքները՝ հիմնվելով ստուգման արդյունքների վրա:

Հուսալիության աստիճանի գնահատումը իրականացվում է միջոցառումների քաղաքականությունը, ըստ վնասների չափերի, դիտարկելու նպատակով: Հուսալիության աստիճանը, հիմնվելով սողանքի կանխարգելմանն առնչվող յուրաքանչյուր կառույցի ստուգման արդյունքների վրա, գնահատվում է համապարփակորեն՝ ակնկալվող գործառույթների ու կարողության տեսանկյունից հաշվի առնելով տեղանքի իրավիճակը:

Աղյուսակ 1, Սոդանքի կանխարգելմանն առնչվող կառույցների հուսալիության աստիճանի գնահատում

Հուսալիության աստիճան	Վնասների չափերը
Միջոցառումներ անհրաժեշտ չեն	Իրավիճակ, երբ տվյալ կառույցը վնասված չէ կամ թեև աննշան վնասված է, սակայն չի հայտնաբերվել տվյալ կառույցի վնասից բխող գործառնություն անկում կամ կարողության վատթարացում
Հետագա հսկողություն	Իրավիճակ, երբ տվյալ կառույցը վնասված է, սակայն գործառնություն անկում և կարողության վատթարացում, որը կարող է խնդիր դառնալ, չկա: Այդ իրավիճակում միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա, սակայն քանի որ հնարավոր է հետագայում անհրաժեշտություն առաջանա, պետք է հետևել ընթացքին կանոնավոր և արտակարգ ստուգումների միջոցով
Միջոցառումների անհրաժեշտություն	Իրավիճակ, երբ տվյալ կառույցը վնասվել է և այդ վնասին հետևել է տվյալ կառույցի գործառնություն անկում կամ կարողության տեսանկյունից կայունության ու ամրության անկման մտահոգություն կա

**1.5.5 Առաջնահերթության դիտարկումը և տարեկան պլանը**

Տարեկան պլանը կազմում են ի լրումն հստակեցված հուսալիության աստիճանի՝ համապարփակորեն հաշվի առնելով ջրհավաք ավազանի ավերվածության վիճակը, պահպանման ենթակա օբյեկտի հետ դիրքային հարաբերությունը, կառույցի կարևորությունը, անցյալում ադետների պատմությունը, կայունությանն առնչվող ընթացիկ ստանդարտների հետ համապատասխանությունը, միջոցառումներ իրականացնելու դեպքում դրանց իրագործելիությունը, ազդեցությունը միջավայրի վրա, ծախսերը և այլն:

Պլանը մշակելիս նպատակադրում են մոտ տաս տարի ժամանակահատված և առանձնացնում վերանորոգում ու վերակառուցում պահանջող կառույցները: Մոտավորապես հինգ տարի անց, ըստ անհրաժեշտության, պետք է վերանայել պլանը՝ հիմնվելով ստուգման արդյունքների և միջոցառումների իրավիճակի վրա:

Քանի որ սոդանքի կանխարգելմանն առնչվող կառույցների համար միջոցառումների առաջնահերթությունը դիտարկելու ժամանակ ջրհավաք ավազանի ավերվածության պատկերը կարևոր կետ է, ստուգման ժամանակ պետք է հստակեցնել ոչ միայն կառույցի հուսալիության աստիճանը, այլև շրջակայքի պայմանները:

**1.5.6 Հետագա հսկողության մեթոդները (հետազոտության ու դիտումների մեթոդները և ուշադրություն պահանջող կետեր)**

Հուսալիության աստիճանի գնահատման արդյունքում, եթե տվյալ կառույցը վնասված է, սակայն գործառնություն անկում և կարողության վատթարացում տեղի չի ունեցել, որոշվում է իրականացնել հետագա հսկողություն: Պետք է հստակեցնել հետագա

հսկողության ենթակա կառույցների վնասվելու պատճառները: Միաժամանակ անհրաժեշտ է սահմանել դիտման մեթոդները, նախապես դիտարկել, թե որքան պետք է լինի գործառույթների անկումը, որպեսզի իրականացվեն միջոցառումները և ստուգման հաճախությունը:

Վնասների դեպքում, որոնք քանակապես դժվար է հստակեցնել, կարևոր է հնարավորինս արձանագրել վնասների աճն ու փոփոխությունները՝ միննույն դիրքով ու անկյունով լուսանկարելու ու ժամանակագրական կարգով արձանագրելու և այլ եղանակներով:

### **1.5.7 Կանխարգելիչ միջոցառումներ (վերանորոգման, վերակառուցման և արդիականացման մեթոդները)**

Միջոցառումները դիտարկելիս պետք է հաշվի առնել շրջակայքի պայմաններն ու վնասների պատճառները, միջոցառումների համար պահանջվող ծախսերը, իրագործելիությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, սողանքի վիճակը և այլն: Նաև նոր տեխնոլոգիաներ կիրառող մեթոդների դեպքում, ինչպես օրինակ ինտերնետային սարքավորումները, դրանց գործածումը կարելի է դիտարկել NETIS (նոր տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համակարգ) և այլ տեղեկատվության հիման վրա:

Որպես կառույցի արդյունավետ օգտագործում վերանորոգման հետ համատեղ կարելի է կատարել գործառույթների բարելավում: Վերակառուցումը ոչ միայն վերականգնում է գործառույթներն ու կարողությունը, այլև բարելավում դրանք: Կառույցի օգտագործումը դադարեցնելու և նորից կառույց կարգի բերելու՝ արդիականացման դեպքում նույնպես լինում են գործառույթի բարելավման դեպքեր՝ կառույցի համապատասխան վայրի օգտագործման տեսանկյունից:

## **2. Կառույցների ստուգման ուղեցույց**

### **2.1 Ընդհանուր դրույթներ**

Կարևոր է ստուգումների միջոցով ճշգրտորեն հստակեցնել գործառույթների և կարողության վիճակը:

Սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցները հեղեղների և երկրաշարժերի պատճառով վնասվում և ժամանակի ընթացքում մաշվում են: Մյուս կողմից բնական պայմանները, որտեղ տեղակայված են կառույցները, շատ բազմազան են՝ հոսող ջրերի չափերի, սելավային հոսքի և փլուզումների չափերն ու հաճախությունը, ինչպես նաև տեղագրությունը, երկրաբանությունը, հողի որակը և այլն: Կառույցի տեղադրումից ի վեր, շատ են կառույցի շրջակայքի պայմանների փոփոխությունները՝ պայմանավորված օրինակ հեղեղին ու երկրաշարժին հետևող փլուզումների ու սելավային հոսքի առաջացմամբ և քամուց ծառերի ընկնելով: Քանի որ շրջակայքի փոփոխությունները մեծ ազդեցություն են թողնում կառույցների վնասվածքների վրա,

ստուգման ժամանակ անհրաժեշտ է հստակեցնել ոչ միայն կառույցը, այլև շրջակայքի պայմանները:

## 2.2 Տերմինների սահմանում


Սույն ուղեցույցում (նախագիծ) օգտագործված տերմինների սահմանումը հետևյալն է.

Տերմին	Տերմինի բացատրություն
Ստուգում	Հետազոտություն, որն իրականացվում է սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցի գործառույթների և կարողության անկման ու այլնի վիճակը հստակեցնելու համար:
Ստուգման պլան	Կառույցի ստուգումը ճշգրտորեն և արդյունավետ իրականացնելու համար պլան
Կանոնավոր ստուգում (ներառյալ շրջայց-ստուգում)	Պլանով սահմանված որոշակի ժամկետներում և ժամանակահատվածում սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների գործառույթների անկման, կարողության վատթարացման և այլնի վիճակը հստակեցնելու համար պարբերաբար իրականացվող հետազոտություն:
Արտակարգ ստուգում	Հորդառատ անձրևների և երկաշարժի ժամանակ սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների գործառույթների անկման, կարողության վատթարացման և այլնի վիճակը հստակեցնելու համար ոչ պլանային հրատապ իրականացվող հետազոտություն:
Մանրամասն ստուգում	Առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար իրականացվող հետազոտություն, որոնք հնարավոր չէ ստանալ կանոնավոր (ներառյալ շրջայց-ստուգման) և արտակարգ ստուգման ժամանակ:
Շրջայց-ստուգում	Ամենօրյա սպասարկման աշխատանքներն իրականացնելու համար սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցները շրջել-նայելը:
Կառույցի հուսալիության աստիճանի գնահատում	Ելնելով կանոնավոր և, ըստ անհրաժեշտության, մանրամասն ստուգումների արդյունքներից և հիմնվելով սողանքի կանխարգելմանն առնչվող առանձին կառույցների կառուցվածքային ու նյութերի առանձնահատկությունների վրա, հստակեցվում է գործառույթների անկման, կարողության վատթարացման և կառույցի շրջակայքի վիճակը, և ըստ դրանց չափերի գնահատվում է հուսալիությունը: Ելնելով գնահատման ստանդարտներից հուսալիության աստիճանը դասակարգում են հետևյալ երեք տեսակի:
Հուսալիության աստիճան A (Միջոցառումներ անհրաժեշտ չեն)	Իրավիճակ, երբ տվյալ կառույցը վնասված չէ կամ թեև աննշան վնասված է, սակայն չի հայտնաբերվել տվյալ կառույցի վնասից բխող գործառույթի անկում կամ կարողության վատթարացում:
Հուսալիության աստիճան B (Հետագա հսկողություն)	Իրավիճակ, երբ տվյալ կառույցը վնասված է, սակայն գործառույթի անկում և կարողության վատթարացում, որը կարող է խնդիր դառնալ, չկա: Ներկա իրավիճակում միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա, սակայն քանի որ հնարավոր է հետագայում անհրաժեշտություն առաջանա, պետք է հետևել ընթացքին կանոնավոր և արտակարգ ստուգումների միջոցով:
Հուսալիության աստիճան C (Միջոցառումների անհրաժեշտություն)	Իրավիճակ, երբ տվյալ կառույցը վնասվել է և այդ վնասին հետևել է տվյալ կառույցի գործառույթի անկում կամ կարողության տեսանկյունից կայունության ու ամրության անկման մտահոգություն կա:
Մասեր	Կառույցի բաղադրիչ մասերը, որոնք դակարագվում են ըստ կառուցվածքի, նյութի և դիրքի:
Մասերի ձևախախտման	Ստուգման թիրախային կառույցի յուրաքանչյուր մասի ձևախախտման չափը:

մակարդակ	
Ձևախախտման մակարդակ a	Իրավիճակ, երբ տվյալ տվյալ մասերը վնասված չեն կամ թեև աննշան վնասնված են, սակայն չի հայտնաբերվել տվյալ մասերի վնասից բխող գործառույթի անկում կամ կարողության վատթարացում:
Ձևախախտման մակարդակ b	Իրավիճակ, երբ թեև տվյալ մասերի վրա առաջացել են վնասներ և ներկայումս միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն չկա, սակայն վնասների հետագա առաջխաղացումը ստուգելու համար անհրաժեշտ է կատարել հետագա հսկողություն կանոնավոր և արտակարգ ստուգումների միջոցով:
Ձևախախտման մակարդակ c	Իրավիճակ, երբ տվյալ մասերը վնասվել են և կարողության կայունության ու ամրության անկման մտահոգություն կա:
Վատթարացում	Ժամանակի ընթացքում առաջխաղացող բաղադրիչների և նյութերի կարողության անկումը:
Վնաս	Վատթարացումից բացի այլ պատճառով բաղադրիչների և նյութերի կարողության անկում (հեղեղի, լանջի տեղաշարժի և երկրաշարժի հետևանքով առաջացած ճեղքեր, առանձնացում, վնասներ)

### 2.3 Կիրառման տիրույթը

Սույն ուղեցույցում նկարագրված են սպասարկման ուղեցույցի ստորև բերված գծագրի «վերանորոգման, վերակառուցման, արդիականացման տարեկան պլանի մշակման ընթացքից (P II -1, գծագիր-1)» գծերով շրջապատված «կառույցների ստուգման» և «կառույցների հուսալիության աստիճանի հստակեցման» մեթոդները:



## **2.4 Ստուգման և հուսալիության աստիճանի գնահատման ընթացակարգը**

Ստուգումը և հուսալիության աստիճանի գնահատումը իրականացվում է հետևյալ ընթացակարգի հիման վրա .

1. Կանոնավոր և արտակարգ ստուգում
2. Մանրամասն ստուգում (ըստ անհրաժեշտության)
3. Միավոր մասերի շեղումների մակարդակի գնահատում
4. Կառույցի շրջակայքի վիճակի գնահատում
5. Կառույցի (կամ կառույցների խմբի) հուսալիության աստիճանի գնահատում

## **2.5 Կառույցների ստուգումը**

### **2.5.1 Ստուգման մեթոդները**

#### **(1) Ստուգման պլանը**

Միստեմատիկ և արդյունավետ ստուգում իրականացնելու համար պետք է մշակել ստուգման պլանը, որում ամփոփված լինեն ստուգման վերաբերյալ հետևյալ հիմնական կետերը .

- Թիրախային տարածքը (համաձայն օգտակար ծառայության ժամկետի երկարացման ուղեցույցի)
- Թիրախային տարածքում ստուգման թիրախային կառույցները (համաձայն սպասարկման ուղեցույցի)
- Ստուգումների մեթոդները
- Ստուգումների իրականացման համակարգը
- Ստուգումների իրականացման ժամանակաշրջանը

Նախքան ստուգման պլանը մշակելը պետք է հավաքագրել և ամփոփել գոյություն ունեցող կառույցների վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, ինչպիսիք են կառույցների գրանցամատյանը, որում ամփոփված են տարածքի անվանումը, կառույցի անվանումը, կառույցի տեսակը, գտնվելու վայրը, կառույցի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև աղետների պատմությունը և այլն: Բացի այդ պետք է հնարավորին չափով ամփոփել նաև նախագծի համար հիմք հանդիսացող ստանդարտները:

#### **(2) Ստուգման տեսակները**

Ստուգումներն իրականացվում են կառույցի գործառույթների անկման վիճակը հասկանալու, կառուցվածքային վնասների չափերն ու պատճառները հստակեցնելու համար: Ստուգումները բաժանվում են երեք տեսակի:



Ստորև աղյուսակում ամփոփ ներկայացված են «կանոնավոր ստուգումները», «արտակարգ ստուգումները» և «մանրամասն ստուգումները»:

Ստուգումների տեսակը	Նպատակը	Իրականացման ժամանակաշրջանը	Իրականացման մեթոդները
Կանոնավոր ստուգումներ	Ստուգում են կառույցի վիճակը և կառույցի վրա անմիջական ազդեցություն ունեցող շրջակայքի պայմանները:	Իրականացվում է ստուգման պլանի հիման վրա:	<ul style="list-style-type: none"> <li>• Հիմնականում ակնադիտական ստուգում և այլն:</li> <li>• Ստուգման արդյունքները յուրաքանչյուրը ամփոփվում են ստուգման թերթիկում:</li> <li>• Յուրաքանչյուր կառույցի տեսակի համար սահմանում են ստուգման կետերը:</li> </ul>
Արտակարգ ստուգումներ	Ստուգում և հստակեցնում են հեղեղների, երկրաշարժների և այլնի հետևանքով սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների վնասների առկայությունը կամ բացակայությունը, դրանց չափերը և կառույցի վրա անմիջական ազդեցություն ունեցող շրջակայքի պայմանները	Իրականացվում է հեղեղներից, երկրաշարժերից և այլ երևույթներ տեղի ունենալուց անմիջապես հետո հնարավորինս վաղ շրջանում:	Համաձայն կանոնավոր ստուգումներին:
Մանրամասն ստուգումներ	Իրականացվում է այն դեպքում, երբ կանոնավոր և արտակարգ ստուգումների ժամանակ շեղումների չափերն ու պատճառները հստակեցնելը դժվար է:	Իրականացվում է ըստ անհրաժեշտության:	Ըստ անհրաժեշտության հստակեցնում են իրավիճակին համապատասխան մեթոդներով չափումներ, մուրճով թեստ, մոնիտորինգ և այլն :

**(3) Ստուգումների իրականացման համակարգը**

Մտածելով տեղանքում անվտանգության մասին, ստուգումներն անցկացնում են մի քանի հոգով: Նաև պետք է իրականացնեն ստուգումների համար անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների տիրապետող ինժեներները:

**(4) Ստուգումների իրականացման ժամանակը**

Կանոնավոր և արտակարգ ստուգումները պետք է իրականացվեն ստուգման պլանի հիման վրա:

Հիմնականում մանրամասն ստուգումներն իրականացվում են այն ժամանակ, երբ կանոնավոր և արտակարգ ստուգումների միջոցով դժվար է հստակեցնել շեղումների չափերն ու պատճառները:

**(5) Ստուգման մեթոդները**

Ստուգումները իրականացնելիս պետք է ուշադիր լինել հետևյալ կետերին .


- 1) Որպես կանոն ակնադիտորեն ստուգել կառույցի շեղումների առկայությունը կամ բացակայությունը և արձանագրել:
- 2) Որպես կանոն լուսանկարել: Որպեսզի հնարավոր լինի համեմատել նախորդ անգամվա հետազոտության լուսանկարների հետ և հստակեցնել վիճակի փոփոխությունները, պետք է լուսանկարել նույն անկյունից, նույն սահմաններում և այլն:
- 3) Շեղումներ հայտնաբերված հատվածները լուսանկարելիս, դրանց չափերը հասկանալու համար, ըստ անհրաժեշտության, պետք է համատեղ օգտագործել մետր (չափման գործիք), ձող և այլն:
- 4) Ըստ շեղումների պատկերի, ցանկալի է վիճակը ստուգել ոչ միայն ակնադիտորեն, այլև օգտագործելով մուրճ և այլ պարզ գործիքներ:
- 5) Ինչ վերաբերվում է ակնադիտորեն հայտնաբերված շեղումներին, հստակեցված վիճակը, ներառյալ տեղադրության մասին տեղեկությունները, պետք է գրանցել ստուգման թերթիկում: Պետք է կցել նաև լուսանկարը: Այս դեպքում ցանկալի է բարելավել աշխատանքների կարողությունը՝ շարժական ԳՏՀ և ԳՏՀ ֆունկցիա ունեցող ֆոտոապարատների կիրառման և այլ միջոցներով:
- 6) Շեղումներ հաստատված հատվածներում ցանկալի է հստակեցնել տարբերիչ նշաններն ու այլ չափման կետերը և հեշտացնել հետագա հսկողությունը: Մանրամասն ստուգումների ժամանակ պետք է կատարել շեղումներ նկատված հատվածների չափումներ և ձտել քանակապես հստակեցնել դրանց չափերը:
- 7) Ստուգումների ժամանակ ցանկալի է ունենալ նախագծման ժամանակի գծագրերն ու նախորդ անգամվա ստուգացանկը և կառույցի գործառույթների պահպանման տեսանկյունից ստուգել վատթարացման ու վնասների տեսքն ու չափերը, ինչպես նաև դրանց առաջընթացը:

### **2.5.2 Ստուգման թիրախային կառույցներն ու ստուգման ենթակա հատվածները**


Հակաստղանքային կառույցները, իրենց մեջ ներառում են հենացների աշխատանքներ, խարիսխային աշխատանքներ, մակերևութային ջրի ցամաքուրդային աշխատանքներ, ցամաքուրդային հորի աշխատանքներ, հորիզոնական հորատման աշխատանքներ, ցամաքուրդային թունելի աշխատանքներ, լանջի պաշտպանիչ աշխատանքներ, գետային ջրատեխնիկական կառույցներ, ինչպես նաև գետի սպասարկման համար նախատեսված ճանապարհը:

Ստուգումների թիրախ պետք է համարել նաև հակաստղանքային կառույցների վրա ուղղակիորեն ազդող շրջակայքի պայմանները:


Սողանքային աղետի կառավարումը Հայաստանի Հանրապետությունում  
Հակասողանքային կառույցների սպասարկում




Հորիզոնական հորատման աշխատանքների կառույցի մասերը






Ցամաքորդային ջրհորի աշխատանքների մասերը



Ցամաքորդային թունելի մասերը





### 2.5.3 Ստուգման ենթակա կետերը

(1) Յուրաքանչյուր կառույցից պահանջվող գործառույթներն ու կարողությունը Եթե ստուգման ժամանակ հայտնաբերվել է թիրախային մասերի շեղումներ, ապա

պետք է գնահատել արդյո՞ք դրանք աննշան են, թե ոչ: Պետք է դիտարկել, թե ինչպիսի ազդեցություն կթողնեն այդ շեղումները տվյալ կառույցի գործառնությունների ու կարողության վրա անուշադրության մատնելու դեպքում:

Այդ պատճառով ստուգում իրականացնող անձիք, յուրաքանչյուր մաս ստուգելիս, պետք է բավականաչափ ընկալեն տվյալ կառույցներից պահանջվող գործառնություններն ու կարողությունը:

Ստորև աղյուսակում ամփոփ ներկայացված են կառույցներից պահանջվող գործառնություններն ու անհրաժեշտ կարողությունը.

Կառույցների դասակարգում	Պահանջվող գործառնություններ	Անհրաժեշտ կարողությունը
Ջրանցքի աշխատանքներ	Սողանքի գապող գործառնություն	Հակասողանքային կառույցների կայունություն, ամրություն և այլ կառուցվածքային կարողություն
Հորիզոնական հորատման աշխատանքներ		
Ցամաքորդային հորի աշխատանքներ		
Ցամաքորդային թունելի աշխատանքներ		
Հողահեռացման աշխատանքներ		
Հակակշիռ հողապատնեշի աշխատանքներ		
Էրոզիայի կառավարման պատվարի աշխատանքներ, ամրացման աշխատանքներ, ալեկործան, պաշտպանիչ աշխատանքներ		
Հենացքերի աշխատանքներ, սյան աշխատանքներ	Սողանքը կանխարգելող գործառնություն	
Խարիսխային աշխատանքներ		
Սպասարկման համար նախատեսված ճանապարհ	Դեպի հակասողանքային կառույցները տանող ճանապարհի անվտանգությունը ապահովող գործառնություն	Մեքենաների ապահով երթնելման համար ճանապարհի երեսքի և այլնի ամրության պահպանումը

**(2) Հակասողանքային կառույցների և կառույցների շրջակայքի վիճակի ստուգում**

Հակասողանքային կառույցների ստուգումն իրականացնելիս կարևոր է գնահատել վատթարացման, կոռոզիայի, վնասների, ձևափոխությունների պատճառներն ու մեխանիզմը, պրոգրեսի արագությունն ու խնդիրները գործառնությունների և կարողության անկման դեպքում: Որպես հակասողանքային կառույցների գործառնությունների ու կարողության անկման հիմնական պատճառ կարելի է նշել վատթարացումը տարիների ընթացքում և սողանքի կրկին սահելը: Այդ պատճառով ստուգման թիրախ պետք է լինեն ոչ միայն կառույցները, այլև շրջակայքի վիճակը:

Ստորև աղյուսակում ներկայացված են հակասողանքային կառույցների ստուգման ենթակա հիմնական կետերը.

Կառույց (տեսակ)	Մասեր	Վնասներ, որոնց վրա պետք է կենտրոնանալ	Ստուգման ժամանակ ուշադրություն պահանջող կետեր
Զսպման աշխատանքներ Հորիզոնական հորատում	Հորատանցքի բերանի պաշտպանիչ աշխատանքներ	Վատթարացում ու կոռոզիա, վնասներ ու ձևախախտումներ	<ul style="list-style-type: none"> <li>• Ակնադիտական ստուգման միջոցով ստուգել տեսանելի մասերի շեղումների առկայությունը կամ բացակայությունը:</li> <li>• Ցանկալի է արձանագրել ջրհավաք խողովակից ջրահեռացման պատկերը (ծավալը) (վերոնշյալը ընդհանուր է յուրաքանչյուր մասի համար)</li> <li>• Ստուգել տարիների ընթացքում փոփոխության հետևանքով առաջացած պողպատյա բաղադրիչների կոռոզիայի ու բետոնե բաղադրիչների վատթարացած վիճակը:</li> <li>• Ստուգել սողանքի ակտիվության և այլնի հետևանքով հորատանցքի պաշտպանիչ աշխատանքների, ջրհավաք խորշի վնասների ու ձևախախտումների վիճակը:</li> </ul>
		Հողի ու ավազի կուտակումներ	• Ստուգել հողի ու ավազի, բույսերի մնացորդների և այլ կուտակումների վիճակը:
	Ջրհավաք խողովակ (հորիզոնական հորատում)	Վատթարացում ու կոռոզիա, վնասներ ու ձևախախտումներ	<ul style="list-style-type: none"> <li>• Ստուգել տարիների ընթացքում փոփոխության հետևանքով առաջացած ջրհավաք խողովակի կոռոզիայի (պողպատե) և վատթարացած (ռետինե) վիճակը:</li> <li>• Սողանքի ակտիվությամբ և այլնով պայմանավորված ջրհավաք խողովակի վնասների ու ձևախախտման վիճակը:</li> </ul>
		Խցանում առաջացնող նյութերի փակչում	• Ստուգել ջրհավաք խողովակի բերանին հավաքված խցանում առաջացնող նյութերի (երկաթի մանրեններ, ցեխ, ջրիմուռներ) վիճակը:

Չսպասարկվող աշխատանքներ Ցամաքուրդային ջրհորի աշխատանքներ	Մարմինը	Վատթարացում ու կոռոզիա, վնասներ ու ձևախախտումներ	<p>Կարևոր և մեծ արդյունավետությամբ ցամաքուրդային հորի համար պետք է մտնել ներքը և արձանագրել վնասների ու ձևախախտումների դիրքը, մասշտաբները և ձևախախտման ուղղությունը: Քանի որ ներսի ստուգումների ժամանակ կա թթվածնի պակասի, օրգանական գազերի, ընկնելու և այլ վտանգներ, ստուգումներն իրականացնելուց առաջ պետք է ստուգել անվտանգությունը:</p> <p>Ներս չմտնելու դեպքում պետք է հաշվի առնել կառույցի մարմնի վնասների, ճեղքերի, թեքությունների առկայությունն ու բացակայությունը, ջրի կուտակման առկայությունն ու բացակայությունը, ջրհավաք խողովակի բերանի վիճակը և կատարել ակնադիտական ստուգում:</p> <p>Ցանկալի է արձանագրել ջրհավաք խողովակից ջրահեռացման վիճակը (ծավալը) (վերոնշյալը ընդհանուր է յուրաքանչյուր մասի համար)</p> <p>Արձանագրել մարմնի վնասներն ու ձևախախտման վիճակը դիրքը, մասշտաբները, ձևախախտման ուղղությունը: Հատկապես ճեղքերի դիրքը, ձևախախտման ուղղությունը և այլնը կարևոր տեղեկություն են ուժի կիրառման ձևը գնահատելու համար և պետք է պատշաճ կերպով արձանագրվեն:</p> <p>Պետք է արձանագրել տարիների ընթացքում փոփոխության հետևանքով առաջացած մարմնի կոռոզիայի (պողպատյա բաղադրիչներ) և վատթարացման (բետոնե և այլ բաղադրիչներ) վիճակը դիրքը, մասշտաբները և այլն:</p>
	Ջրհավաք խողովակ	Վատթարացում ու կոռոզիա, վնասներ ու ձևախախտումներ	<p>Ստուգել տարիների ընթացքում փոփոխության հետևանքով առաջացած ջրհավաք խողովակի կոռոզիայի (պողպատե) և վատթարացած (ռետինե) վիճակը:</p> <p>Սողանքի ակտիվությամբ և այլնով պայմանավորված ջրհավաք խողովակի վնասների ու ձևախախտման վիճակը:</p>
	Խցանում առաջացնող նյութերի փակչում	Ստուգել ջրհավաք խողովակի բերանին հավաքված խցանում առաջացնող նյութերի (երկաթի մանրեններ, ցեխ, ջրիմուռներ) վիճակը:	
Ցամաքուրդային խողովակ	Վատթարացում ու կոռոզիա, վնասներ ու ձևախախտումներ	<p>Ստուգել տարիների ընթացքում փոփոխության հետևանքով առաջացած ցամաքուրդային խողովակի կոռոզիայի (պողպատե) և վատթարացած (ռետինե) վիճակը:</p> <p>Սողանքի ակտիվությամբ և այլնով պայմանավորված ցամաքուրդային խողովակի վնասների ու ձևախախտման վիճակը:</p> <p>Ստուգել ցամաքուրդային խողովակի խցանմամբ պայմանավորված ջրի կուտակման առկայությունը կամ բացակայությունը:</p> <p>Ցամաքուրդային խողովակի մուտքի և ելքի ջրի ծավալը համեմատելու և այլ մեթոդներով ստուգել ցամաքուրդային խողովակից արտահոսքի առկայությունը կամ բացակայությունը:</p>	

Զսպված աշխատանքներ		Խցանում առաջացնող նյութերի փակչում	<ul style="list-style-type: none"> <li>Ստուգել ցամաքորդային խողովակի բերանին հավաքված խցանում առաջացնող նյութերի (երկաթի մանրեներ, ցեխ, ջրիմուռներ) վիճակը:</li> </ul>
	Անվտանգության միջոցներ (ստուգումների համար նախատեսված աստիճան, ծածկ, պաշտպանող ցանկապատ, դուռ, կողպեք և այլն)	Վատթարացում ու կոռոզիա, վնասներ ու ձևախախտումներ	<ul style="list-style-type: none"> <li>Ստուգել կառույցների կոռոզիայի, վատթարացման, վնասների, ձևախախտումների և այլնի վիճակը:</li> </ul>
	Ջրանցք, ջրհավաք խորշ, ջրանկման կառույց	Վատթարացում ու կոռոզիա, վնասներ ու ձևախախտումներ	<ul style="list-style-type: none"> <li>Ակնադիտական ստուգման միջոցով պետք է ստուգել տեսանելի մասերի շեղումների առկայությունը կամ բացակայությունը: (վերոնշյալը ընդհանուր է յուրաքանչյուր մասի համար)</li> <li>Ստուգել տարիների ընթացքում փոփոխության հետևանքով առաջացած պողպատյա բաղադրիչների կոռոզիայի ու բետոնե բաղադրիչների վատթարացած վիճակը:</li> <li>Ստուգել սողանքի ակտիվության և այլնի հետևանքով ջրանցքի աշխատանքների, ջրհավաք խորշի ու ջրանկման կառույցի վնասների ու ձևախախտումների վիճակը:</li> </ul>
		Հողի ու ավազի կուտակում	<ul style="list-style-type: none"> <li>Ստուգել ջրանցքի, ջրհավաք խորշի, ջրանկման կառույցի հողի ու ավազի, բույսերի մնացորդների և այլ կուտակումների վիճակը:</li> </ul>
Հողահեռացման, հակակշիռ հողապատնեշի աշխատանքներ	Հողահեռացման աշխատանքներ կատարված լանջ, հակակշիռ հողապատնեշի աշխատանքներ կատարված լանջ	Լանջի ճեղքերի, մակարդակների տարբերությունների, իջվածքների, բարձրացումների, փլուզումների, ուռուցիկության, աղբյուրի ջրի առկայություն կամ բացակայություն	<ul style="list-style-type: none"> <li>Ստուգել լանջի ճեղքերի, մակարդակների տարբերությունների, իջվածքների, բարձրացումների, փլուզումների, ուռուցիկության, աղբյուրի ջրի առկայությունը կամ բացակայությունը:</li> </ul>



Սպասարկման համար նախատեսված ճանապարհ	Ճանապարհի լանջի պաշտպանիչ աշխատանքներ Ջրահեռացման կառույցներ	Լանջի աշխատանքներ ի, ջրահեռացման վիճակը և այլն	<ul style="list-style-type: none"> <li>• Ստուգել արդյո՞ք հնարավոր է մեքենայով երթնեկել սպասարկման համար նախատեսված ճանապարհով:</li> <li>• Ստուգել սպասարկման համար նախատեսված ճանապարհի վրա տեղադրված լանջի պաշտպանիչ աշխատանքների, լեռնային վտակի հետ հատվող ճանապարհի վրա առվի կամ խողովակի, կամրջի և այլ ցամաքուրդային հատող կառույցների ու ճանապարհի մակերևույթի վիճակը:</li> <li>• Այն կետի շրջակայքում, որտեղ կենտրոնացած է ճանապարհի երկայնական ցամաքուրդը, պետք է ուշադրություն դարձնել ջրանցքի երոզիայի և լանջի տեղաշարժի առկայությանը կամ բացակայությանը:</li> <li>• Անհրաժեշտ է սպասարկման համար նախատեսված դարպասի և այլնի փակող հարմարությունների ստուգում և սպասարկում:</li> </ul>
Կառույցների շրջակայքում գտնվող լանջ	Լանջի ձևախախտում	Ճեղքեր, մակարդակներ ի տարբերություններ, իջվածքներ, բարձրացումներ, փլուզումներ, ուռուցիկություն	<ul style="list-style-type: none"> <li>• Կառույցի շրջակայքում գտնվող լանջի ձևախախտումները և այլնը պետք է ստուգել ակնադիտորեն: Պետք է ստուգել նոր ճեղքերի, մակարդակի տարբերությունների, լանջի փլուզման, աղբյուրի ջրի և այլնի առաջացման առկայությունը կամ բացակայությունը, հակասողանքային կառույցների ու տվյալ կառույցների տարածքում գտնվող ճանապարհի, հենապատի ու այլ քաղաքացիական շինարարության կառույցների, կանգնած ծառերի շեղումների առկայությունը կամ բացակայությունը, տեղաբաշխումը, պրոգրեսը և այլն:</li> </ul>
	Շինություն (քաղաքացիական շինարարության, ճարտարապետական և այլ կառույցներ)	Ճեղքեր, մակարդակներ ի տարբերություններ, շեղումներ, ձևախախտումներ	
	Աղբյուրի ջուր	Աղբյուրի ջրի վիճակի փոփոխություն	

**2.6 Կառույցների հուսալիության աստիճանի գնահատումը**

**2.6.1 Հուսալիության աստիճանի գնահատման գաղափարը**

Մասի կամ մասերի յուրաքանչյուր խմբի շեղման մակարդակը համարում են a, b և c: Առանձին կառույցների հուսալիության աստիճանը արտահայտում են՝ միջոցառումներ անհրաժեշտ չեն A, հետագա հսկողություն B և միջոցառումների անհրաժեշտություն C:

**Մասի կամ մասերի խմբի շեղման մակարդակի գնահատումը**

Շեղման մակարդակը	Վնասների և այլնի չափերը
a	Իրավիճակ, երբ տվյալ տվյալ մասերը վնասված չեն կամ թեև աննշան վնասնված են, սակայն չի հայտնաբերվել տվյալ մասերի վնասից բխող գործառույթի անկում կամ կարողության վատթարացում:
b	Իրավիճակ, երբ թեև տվյալ մասերի վրա առաջացել են վնասներ և ներկայումս միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն չկա, սակայն վնասների առաջխաղացումը ստուգելու համար անհրաժեշտ է կատարել հետագա հսկողություն կանոնավոր և արտակարգ ստուգումների միջոցով:
c	Իրավիճակ, երբ տվյալ մասերը վնասվել են և կարողության կայունության ու ամրության անկման մտահոգություն կա:

Սոդանքի կանխարգելմանն առնչվող կառույցների հուսալիության աստիճանի գնահատումը

Հուսալիության աստիճան	Վնասների և այլնի չափերը	Նիշը
Միջոցառումներ անհրաժեշտ չեն	Իրավիճակ, երբ տվյալ կառույցը վնասված չէ կամ թեև աննշան վնասնված է, սակայն չի հայտնաբերվել տվյալ կառույցի վնասից բխող գործառույթի անկում կամ կարողության վատթարացում:	A
Հետագա հսկողություն	Իրավիճակ, երբ տվյալ կառույցը վնասված է, սակայն գործառույթի անկում և կարողության վատթարացում, որը կարող է խնդիր դառնալ, չկա: Ներկա իրավիճակում միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա, սակայն քանի որ հնարավոր է հետագայում անհրաժեշտություն առաջանա, պետք է հետևել ընթացքին կանոնավոր և արտակարգ ստուգումների միջոցով:	B
Միջոցառումների անհրաժեշտություն	Իրավիճակ, երբ տվյալ կառույցը վնասվել է և այդ վնասին հետևել է տվյալ կառույցի գործառույթի անկում կամ կարողության տեսանկյունից կայունության ու ամրության անկման մտահոգություն կա:	C













**2.6.2 Հակասոդանքային կառույցների հուսալիության աստիճանի գնահատում**

Հակասոդանքային կառույցների յուրաքանչյուր մասի շեղման մակարդակը գնահատում են հետևյալ կերպ .

- a. Շեղումներ չկան կամ աննշան վնասներ
- b. Վնասներ կան, սակայն գործառույթների ու կարողության անկման չի հասել
- c. Առկա է գործառույթների ու կարողության անկում

Հակասոդանքային կառույցների յուրաքանչյուր մասի շեղումների մակարդակի գնահատման ստանդարտների համար կարելի է հղում կատարել հետևյալ աղյուսակին .







Հիմնական մասերի շեղման մակարդակի գնահատման ստանդարտներ (հորիզոնական հորատում)

Շեղման մակարդակը		Հորիզոնական հորատման աշխատանքներ			
		Հորատանցքի բերանի պաշտպանիչ աշխատանքներ, ջրհավաք խորշի վատթարացում, կոռոզիա, վնասներ, ձևախախտումներ	Ջրհավաք խորշում հողի ու ավազի կուտակումներ	Ջրհավաք խողովակի վատթարացում, կոռոզիա, վնասներ, ձևախախտումներ	Ջրհավաք խողովակին խցանում առաջացնող նյութերի փակչում
a	Աննշան վնասներ	<input type="radio"/> Շեղումներ չկան <input type="radio"/> Աննշան վատթարացում, կոռոզիա, վնասներ ու ձևախախտում 	<input type="radio"/> Հողի ու ավազի կուտակումներ չկան <input type="radio"/> Հողի ու ավազի աննշան կուտակումներ 	<input type="radio"/> Շեղումներ չկան <input type="radio"/> Աննշան վատթարացում, կոռոզիա, վնասներ ու ձևախախտում 	<input type="radio"/> Խցանում առաջացնող նյութեր չեն փակչել <input type="radio"/> Բերանին քիչ քանակությամբ խցանում առաջացնող նյութեր են փակչել <input type="radio"/> Գրունտային ջրերի բացթողումը հաստատված է 
b	Վնասներ կան, սակայն գործառնությունների ու կարողության անկման չի հասել	<input type="radio"/> Մի մասի վատթարացում, կոռոզիա, վնասներ ու ձևախախտում 	<input type="radio"/> Մի մասում կուտակվում են հող ու ավազ 	<input type="radio"/> Ջրհավաք խողովակի մասնակի վատթարացում, կոռոզիա, վնասներ ու ձևախախտում 	<input type="radio"/> Խողովակների մեծ մասին քիչ քանակությամբ խցանում առաջացնող նյութեր են փակչել (մոտավորապես խողովակի բերանի 25%-ից պակաս) <input type="radio"/> Գրունտային ջրերի դուրսթողումը հաստատված է 
c	Առկա է գործառնությունների ու կարողության անկում	<input type="radio"/> Արտահոսք վատթարացման, կոռոզիայի, վնասների ու ձևախախտման հետևանքով 	<input type="radio"/> Ջուրը եզրերից դուրս է հոսում հողի ու ավազի կուտակման հետևանքով 	<input type="radio"/> Ջրհավաք խողովակների մեծ մասը վատթարացել է, ենթարկվել կոռոզիայի, վնասվել և ձևախախտվել 	<input type="radio"/> Խողովակների մեծ մասին մեծ քանակությամբ խցանում առաջացնող նյութեր են փակչել (մոտավորապես խողովակի բերանի 25%-ից ավել) <input type="radio"/> Ենթադրվում է, որ խցանման հետևանքով գրունտային ջրերի դուրսթողումը կանգնել է 
Գնահատման տեսանկյուն		<ul style="list-style-type: none"> <li>• Ջուր հավաքելու անկարողությունը և հավաքած ջրի արտահոսքն ու եզրերից դուրս հոսելը կարող են հանդիսանալ գրունտային ջրի մակարդակի բարձրացման հիմնական գործոն և հանգեցնել սողանքի կայունության իջեցմանը:</li> <li>• Գրունտային ջրերի դիտման և գրունտային ջրերի ցամաքորդային աշխատանքների միջոցով հեռացվող ջրի ծավալի դիտման տվյալները արժեքավոր տեղեկություն են գրունտային ջրի ցամաքորդային աշխատանքների հուսալիության աստիճանի գնահատման համար:</li> </ul>			
		<ul style="list-style-type: none"> <li>• Հորատանցքի բերանի պաշտպանիչ աշխատանքների վատթարացման, կոռոզիայի, վնասների ու ձևախախտման շարունակումը կարող է</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ջրհավաք խորշում հողի, ավազի և այլնի կուտակման շարունակության դեպքում կարող է հավաքված ջուրը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Վատթարացման, կոռոզիայի, վնասների ու ձևախախտման շարունակումը կարող է հանգեցնել հորիզոնական հորատման ջրի</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Եթե ջրհավաք խողովակը խցանվի խցանում առաջացնող նյութերի պատճառով, ապա կառաջանա ջրի հավաքման անկարողություն:</li> </ul>

*Սողանքային աղետի կառավարումը Հայաստանի Հանրապետությունում  
Հակասողանքային կառույցների սպասարկում*

	հանգեցնել հորիզոնական հորատման ջրի հավաքման անկարողությանը և հավաքված ջրի արտահոսքին:	եզրերից դուրս հոսել:	հավաքման անկարողությանը:	
Ստուգման ժամանակ ուշադրություն պահանջող կետեր	<p>Ակնադիտական ստուգման միջոցով ստուգել տեսանելի մասերի շեղումների առկայությունը կամ բացակայությունը: Ցանկայի է արձանագրել ջրհավաք խողովակից ջրահեռացման վիճակը (ծավալը):</p>			
	<ul style="list-style-type: none"> <li>• Ստուգել տարիների ընթացքում փոփոխության ենթարկվելու հետևանքով պողպատե բաղադրիչների կոռոզիայի ու բետոնե մասերադարձիչների վատթարացման վիճակը:</li> <li>• Ստուգել սողանքի ակտիվությամբ պայմանավորված հորատանցքի պաշտպանիչ աշխատանքների և ջրհավաք խորշի վնասների ու ձևախախտման վիճակը:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ստուգել ջրհավաք խորշում հողի, ավազի, բույսերի մնացորդների և այլնի կուտակումը:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ստուգել տարիների ընթացքում փոփոխության հետևանքով առաջացած ջրհավաք խողովակի կոռոզիայի (պողպատե) և վատթարացած (ռետինե) վիճակը:</li> <li>• Սողանքի ակտիվությամբ և այլնով պայմանավորված ջրհավաք խողովակի վնասների ու ձևախախտման վիճակը:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ստուգել ջրհավաք խողովակի բերանին հավաքված խցանում առաջացնող նյութերի (երկաթի մանրէներ, ցեխ, ջրիմուռներ) վիճակը:</li> </ul>

Հիմնական մասերի շեղման մակարդակի գնահատման ստանդարտներ (ջրանցքի աշխատանքներ)

Շեղման մակարդակ		Ջրանցքի աշխատանքներ (ջրանցք, ջրհավաք խորշ, ջրանկման կառույց)	
		Ջրանցքի, ջրհավաք խորշի, ջրանկման կառույցի կոռոզիա, վատթարացում, վնասներ ու ձևախախտում	Ջրանցքում, ջրհավաք խորշում, ջրանկման կառույցում հողի ու ավազի կուտակում
a	Աննշան վնասներ	<ul style="list-style-type: none"> <li>Շեղումներ չկան</li> <li>Աննշան վատթարացում, կոռոզիա, վնասներ ու ձևախախտում</li> </ul> 	<ul style="list-style-type: none"> <li>Շեղումներ չկան</li> <li>Աննշան վատթարացում, կոռոզիա, վնասներ ու ձևախախտում</li> </ul> 
b	Վնասներ կան, սակայն գործառնությունների ու կարողության անկման չի հասել	<ul style="list-style-type: none"> <li>Մի մասի վատթարացում, կոռոզիա, վնասներ ու ձևախախտում</li> <li>Արտահոսք չկա</li> </ul> 	<ul style="list-style-type: none"> <li>Հողի ու ավազի մասնակի կուտակում</li> <li>Արտահոսք չկա</li> </ul> 
c	Առկա է գործառնությունների ու կարողության անկում	<ul style="list-style-type: none"> <li>Արտահոսք վատթարացման, կոռոզիայի, վնասների ու ձևախախտման հետևանքով վնասված</li> </ul> 	<ul style="list-style-type: none"> <li>Ջուրը եզրերից դուրս է հոսում հողի ու ավազի կուտակման հետևանքով</li> </ul> 
Գնահատման տեսանկյուն		<ul style="list-style-type: none"> <li>Սողանքի ակտիվության և ջրանցքի կողմում երոզիայի հետևանքով ջրանցքը կարող է վնասվել և ձևախախտվել:</li> <li>Եթե ջրանցքի, ջրհավաք խորշի, ջրանկման կառույցի կոռոզիան, վատթարացումը, վնասվելը, ձևախախտումը շարունակվի, ապա հավաքված ջրի արտահոսքի առաջացման վտանգ կա:</li> </ul>	
		<ul style="list-style-type: none"> <li>Հավաքված ջրի արտահոսքը և եզրերից դուրս հոսելը կարող են հանդիսանալ գրունտային ջրերի բարձրացման հիմնական գործոն և հանգեցնել սողանքի կայունության իջեցմանը:</li> </ul>	
Ստուգման ժամանակ ուշադրություն պահանջող կետեր		<ul style="list-style-type: none"> <li>Ակնադիտական ստուգման միջոցով ստուգել տեսանելի մասերի շեղումների առկայությունը կամ բացակայությունը:</li> <li>Ստուգել տարիների ընթացքում փոփոխության ենթարկվելու հետևանքով պողպատե բաղադրիչների կոռոզիայի, բետոնե բաղադրիչների վատթարացման վիճակը:</li> <li>Ստուգել սողանքի ակտիվությամբ պայմանավորված ջրանցքի, ջրհավաք խորշի, ջրանկման կառույցի վնասների ու ձևախախտման վիճակը:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Ստուգել ջրանցքում, ջրհավաք խորշում, ջրանկման կառույցում հողի, ավազի, բույսերի մնացորդների և այլնի կուտակումը:</li> </ul>

### **2.6.3 Մասերի շեղման մակարդակի ստուգումն ու արձանագրումը, տեղանքի վիճակի հստակեցումը**

Ստուգման ժամանակ պետք է մոտավորապես հստակեցնել և արձանագրել շեղումների վայրը, չափերն (լայնություն, երկարություն, խորություն) ու առանձնահատկությունները: Դրա հետ մեկտեղ պետք է անպայման լուսանկարել:

Շեղման հատկությունը (պրոգրեսիվ է, թե ոչ) կամ շեղման պրոգրեսի չափը պարզելու համար արդյունավետ է կառուցման տարվա հստակեցումը և տվյալ կառույցի մասերի անցյալի ստուգումների արձանագրության հետ համեմատումը:

Ցանկալի է հստակեցնել հակասողանքային կառույցներին հարակող լանջի շրջակայքում առաջացած ճեղքերի, իջվածքների, բարձրացումների, փլուզումների, աղբյուրի ջրի և այլնի շեղումների առկայությունը կամ բացակայությունն ու տվյալ կառույցների շեղումներ առաջացած մասերի հետ դիրքային հարաբերությունը:

### **2.6.4 Ստուգումներին առնչվող տեսակետները**

Կառույցների հուսալիության աստիճանը գնահատելիս կարևոր է տեսակետը, թե արդյո՞ք սողանքի կանխարգելմանն առնչվող կառույցների գործառնությունները և կարողությունը համապատասխան կերպով պահպանվում են: Այդ պատճառով ստուգումներն անհրաժեշտ է իրականացնել տեղանքում ստուգումների փուլից մինչև կառույցների ու կառույցների շրջակայքում առկա իրավիճակի առանձնահատկությունները բավականաչափ ընկալելուց հետո::

### **2.6.5 Հուսալիության աստիճանի գնահատման ուշադրություն պահանջող կետերը**

Հուսալիության աստիճանի համապարփակ գնահատման համար ուշադրություն պահանջող կետեր

(1) Կառույցի սպասարկման մասին անհրաժեշտ է դիտարկել տեսակետից, թե արդյո՞ք կառույցի գործառնությունն ու կարողությունը ապահովվում են: Հուսալիության աստիճանը անհրաժեշտ է գնահատել տեսակետից, թե արդյո՞ք հաստատված երևույթն ազդում է կառույցի գործառնությունների ու կարողության վրա:

(2) Կառույցների մեջ կան նաև այնպիսիները, որոնց տեղադրումից հետո երկար ժամանակ է անցել: Հետևաբար անհրաժեշտ է դիտարկել վատթարացման առաջխաղացումը՝ ելնելով կառուցման տարուց անցած տարիների քանակից, կառույցի վերակառուցումից և այլն: Վատթարացման արագությունը ստուգելը կարևոր գործոն է հուսալիության աստիճանը գնահատելիս:

(3) Անցյալում կառույցների վնասվելու մասին տվյալները արժեքավոր տեղեկություն են կառույցի սպասարկման վերաբերյալ հղում կատարելու համար:

(4) Հակասողանքային կառույցները տարբեր տեսակի կառույցների ու բաղադրիչ նյութերի բարդ համակցություն լինելուց բացի, յուրաքանչյուրը զսպման,

կանխարգելման տարբեր տեսակի գործառույթների համակցության միջոցով ձգտում են կանխարգելել սողանքը: Այդ պատճառով պետք է գնահատել հուսալիության աստիճանը՝ հասկանալով յուրաքանչյուր կառույցի նպատակը:

(5) Հակասողանքային կառույցների յուրաքանչյուր մասի շեղման մակարդակը, յուրաքանչյուր առանձին կառույցների շեղման մակարդակը գնահատելուց հետո, հաշվի առնելով յուրաքանչյուրի գործառույթները և դիրաքային հարաբերությունն ու չափերը, կարելի կարելի է խմբավորել ըստ կառուցվածքի տեսակի և գնահատել յուրաքանչյուր խմբի հուսալիության աստիճանը:





Առանձնացված հավելված 4 Սողանքային տարածքներում ջրօգտագործման և  
հողային աշխատանքների օպերացիոնալ կանոն



## Սողանքային գոտում պարտականությունների և վարվելակերպի կանոններ

### 1. Ընդհանուր բնութագիր

Սույն ձեռնարկի նպատակն է սահմանափակել սողանքավտանգ տարածքներում մարդկային գործողությունները՝ սողանքային ակտիվացումը կանխելու, պատճառված վնասները նվազեցնելու, բնակչության նորմալ կենսապայմանները պահպանելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց տարածվածությամբ, զարգացման ակտիվությամբ և ինտենսիվությամբ մարդկանց կյանքին ու առողջությանը, ինչպես նաև հանրապետության ենթակառուցվածքներին և այլ կենսաապահովման օբյեկտներին սպառնացող վտանգի չափերով լրջագույն գործոնների շարքին են դասվում սողանքները: Սողանքային երևույթները լայն տարածում ունեն լեռնային և նախալեռնային գոտիներում: Հանրապետության տարածքում Ճապոնիայի կառավարության հատկացրած դրամաշնորհով Ճապոնական միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից 2004-2006 թվականների ընթացքում իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման ուսումնասիրություն» ծրագիրը: Օդալուսանկարների վերծանումով բացահայտվել են 2 հա և ավելի մակերեսով 2504 սողանքային տեղամասեր: Սողանքային տեղամասերի ընդհանուր մակերեսը 1216 քառ. կմ է, ինչը կազմում է հանրապետության ընդհանուր մակերեսի 4,1%-ը: ընդ որում՝ 960 համայնքներից սողանքներով վնասված են 233-ը, ավտոճանապարհների ցանցի 7400կմ-ից 240 կմ-ը(3,2%) շուրջ 280 սողանքով, երկաթգծերի ցանցի 870 կմ-ից 4,8-ը (0,5%) 10 սողանքով և այլն:

### 2. Սողանքի ակտիվացման պատճառներ

Սողանքային տեղաշարժերը ուղղակիորեն կախված են տեղանքի ջրաերկրաբանական կառուցվածքից, ապարների լիթոլոգիական կազմից, ապարների շերտերի տեղադրման ձևից, ստորերկրյա ջրերի առկայությունից, տեղադրման խորությունից, անտառածածկույթի կամ խոտածածկույթի խտությունից, գերխոնավացումից, տարածքի սեյսմոակտիվությունից, մարդու տնտեսական գործունեության բնույթից, երկրաբանական և երկրաձևաբանական պայմանների առանձնահատկությունների անտեսումից, որոնք հանգեցնում են ապարների ամրության նվազմանը և սողանքի առաջացմանը:

Սողանքի ակտիվացման պատճառները բաժանվում են 2 խմբի՝ բնածին և տեխնածին

#### 1) Բնածին պատճառներ

- ա) երկրաբանական կառուցվածք
- բ) տեղանքի ձևը (կտրուկ լանջեր),
- գ) ջրաերկրաբանական պայմաններ
- դ) կլիմայական պայմաններ, մեծ քանակությամբ տեղումներ , արագ ձնհալք և այլն,
- ե) հողի էրոզիա
- զ) սեյսմիկության բարձր աստիճան, անկայուն լանջերի հիմքերի ողողում գետահուններում և այլն:

## **2) Տեխնաձին պատճառներ**

- ա) լանջի հատում,
- բ) սողանքային լանջի գերբեռնում, կառուցապատում,
- գ) չկանոնակարգված և անկանոն ոռոգում,
- դ) անկայուն լանջերի վրա ծառահատում և այլն:

## **3. Սողանքավտանգ տեղամասերում համայնքի և բնակիչների պարտականությունները:**

### **(1) Համայնքի խնդիրները**

- ա) Համայնքի ղեկավարը իրականացնում է հսկողությունը հողամասերի օգտագործման, դրանց նկատմամբ սահմանափակումների պահպանման նկատմամբ,
- բ) Սողանքի ակտիվացման մեղմման նպատակով առաջարկվում է թույլ չտալ սողանքային վտանգի ուժեղացմանը նպաստող գործողություններ, վերահսկել, իրազեկել բնակչությանը սողանքային ակտիվացմանը նպաստող գործողություններից գերծ մնալու և սողանքային տեղամասերում վարվելակարգի կանոնների վերաբերյալ:
- գ) Սողանքավտանգ տարածքներում վերահսկել շինարարական նպատակներով տարվող աշխատանքների ընթացքը, ոռոգման աշխատանքների վերահսկում և կանոնակարգում, հետևել ոռոգման համակարգի անխափան վիճակի պահպանմանը,
- դ) Սողանքային տեղամասերում նախանշաններ նկատելու դեպքում անհապաղ տեղեկացնել համապատասխան մարմիններին՝ անհրաժեշտ խորհրդատվություն ստանալու և հետագա գործողությունները ճիշտ կազմակերպելու համար,
- ե) Հանայքի տարածքում առկա հակասողանքային և հակասելավային կառույցների անխափան աշխատանքների ապահովում:

### **(2) Բնակիչների խնդիրները**

- ա) Խուսափել շինարարական աշխատանքների ընթացքում սողանքային լանջերի հատումներից, որոնք կարող են առաջացնել անկայուն լանջերի փլուզումներ,
- բ) կառուցապատման ընթացքում խուսափել, լանջի ծանրաբեռնումներից շինություններով,
- գ) ոռոգման աշխատանքների խստագույն վերահսկում, թույլ չտալ ջրերի ներծծում հողի շերտի խորքերը, սահմանափակել անկանոն ոռոգման աշխատանքները, հետևել ջրատար համակարգերի անխափան աշխատանքին,
- դ) արգելել անկայուն լանջերի վրա ցանկացած տիպի ծառահատումները:

## **4. Գործնական կանոնակարգեր**

### **(1) Գործնական կանոնների շրջանակը**

Սույն գործնական կանոնների կիրառման շրջանակը Հավելված 1-ում՝ Սողանքների բաշխվածության քարտեզում, նշված տարածքն է: Ինչ վերաբերում է այլ տարածքների,

որոնք ներառված չեն քարտեզում, այն կիրառելի է, եթե ԱԻՆ համարում է դա անհրաժեշտ՝ ելնելով փորձագիտական կարծիքից:

## **(2) Թույլատվություն պահանջող գործողություններ**

Ելնելով Հոդված 3-ի բովանդակությունից՝ եթե սողանքային տարածքում գտնվող համայնքը և բնակիչները իրականացնում են հետևյալ գործողությունները, ապա անհրաժեշտ է թույլտվություն Մարզպետարանից.

- ① Հատում, փորում. թույլտվություն հատման և փորման դիրքերի, բարձրության և խորության համար
- ② Հողապատնեշում, նստվածքի փոխադրում. թույլտվություն հողապատնեշման և նստվածքի փոխադրման վայրի, բարձրության և ծավալի համար
- ③ Տների և շինությունների կառուցում. թույլտվություն վայրի և չափի համար
- ④ Կոնվեկցիա սողանքային տարածքի դրսից. թույլտվություն դիրքի, խողովակի տրամագծի և նյութի համար, որից պատրաստված է խողովակը
- ⑤ Ոռոգում սողանքային տարածքում. թույլտվություն ջրցողման քանակի և ժամանակի համար
- ⑥ Ծառահատում. թույլտվություն հատման տարածքի, ծառաբների տրամագծի և այլնի համար

## **(3) Թույլտվության չեղարկում**

Եթե ԱԻՆ որոշում է կայացնում՝ ելնելով փորձագիտական կարծիքից, մենք կարող ենք չեղարկել Հոդված 4 (2)-ում նշված թույլտվությունը, պահանջել պայմանների փոփոխություն, չեղարկել գործողությունները և վերականգնել սկզբնական վիճակին:

## **(4) Համայնքը**

և բնակիչները ենթարկվում են պատասխանատվության (ֆինանսական կամ այլ պատճամիջոց) սույն վարվելակարգը խախտելու դեպքում:

## **(5) ԱԻՆ լիազորությունները արտակարգ իրավիճակներում**

Արտակարգ իրավիճակում, որտեղ սողանքը կարող է հասցնել լուրջ վնաս բնակիչների կյանքին և հասարակական ենթակառուցվածքներին, ԱԻՆ կարող է իրականացնել հետևյալ լիազորությունները վտանգավոր տարածքի համար.

- ① Վտանգավոր տարածք մուտք գործելու սահմանափակում և չմտնելու հրամաններ
- ② Վտանգավոր տարածքի բնակիչներին տարահանման առաջարկ
- ③ Ոռոգման և ջրատար կառույցների օգտագործման և անկանոն օգտագործման սահմանափակում
- ④ Հրատապ միջոցառումների իրականացման հրաման համայնքում սողանքը կայունացնելու նպատակով
- ⑤ Ի լրումն վերոնշյալի, ցուցումներ և հրամաններ՝ կապված այնպիսի հարցերի հետ, որոնք համարվում են անհրաժեշտ մարդկային վնասը և հանրային կորուստը կանխելու համար՝ հիմնվելով փորձագետներից ստացված ցուցումների վրա

### <Հավելված>

1. Սողանքների բաշխվածության քարտեզ
2. Սողանքի նշաններ
3. Թույլտվության ստանդարտի հղումային արժեք
4. ԱԻՆ կողմից իրականացվող աշխատանքներ՝ լիազորությունները և իրավասություններ

### **Հավելված 1. Սողանքային երևույթների բաշխվածություն ՀՀ-ում**

#### **Հավելված 2. Սողանքի նախանշաններ**

- 1) Տան դռներն ու պատուհանները դժվարությամբ են փակվում կամ սեղմված են:
- 2) Տան առաստաղի, հատակի և պատերի ծեփերի վրա ճաքեր են առաջանում:
- 3) Հողի մակերևույթին, մայթերին, ճանապարհներին հայտնվում են ճաքեր, որոնք աստիճանաբար ընդարձակվում են: Լանջերի հիմքերի մոտ հողն ուռչում է:
- 4) Հայտնվում են ստորգետնյա ջրերի նոր ելքեր:
- 5) Ցանկապատերն ու ծառերն սկսում են «տեղաշարժվել»
- 6) Հողամասում առաջանում են փոսեր:
- 7) Թույլ աղմուկ է լսվում հողից, որը սողքի ակտիվացմանը զուգընթաց ուժեղանում է:

**Հավելված 3. Թույլտվության ստանդարտի հղումային արժեք**

Հարուցիչներ	Թույլտվություն պահանջող գործողություն	Թույլտվության կետեր	Թույլտվության ստանդարտի հղումային արժեք
Տարածքի փոփոխություն	Հատում, հորատում	· Հատման ծավալը (բարձրություն)	· 2մ կամ ավել ուղղահայաց բարձրությամբ հատումների համար պահանջվում է թույլտվություն
		· Փորման ծավալը (խորություն)	· 2մ կամ ավել ուղղահայաց խորությամբ հորատման համար պահանջվում է թույլտվություն
	Հողապատնեշում	· Հատման և փորման դիրքը	· Խուսափեք հատումից և փորելուց սողանքի եզրամասում · Խուսափեք հատումներից և փորելուց կառույցներից, օրինակ կացարաններից և հակասողանքային կառույցներից մինչև 5մ հեռավորության վրա
		· Հողապատնեշման ծավալը (բարձրություն) · Հողապատնեշման վայրը	· 5մ կամ ավել ուղղահայաց բարձրությամբ հողապատնեշման համար պահանջվում է թույլտվություն · Խուսափեք հողապատնեշումից սողանքի գագաթնային հատվածում · Խուսափեք հողապատնեշումից այն չափով, որ այն կարող է կանգ առնել և ավելացնել մակերևութային և գրունտային ջրերը
Զարգացմանն ուղղված գործողություն	Տների և շինությունների կառուցում	· Տների և կառույցների վայրը	· Խուսափեք սողանքի գագաթնային հատվածներում տների և կառույցների շինարարությունից · Սողանքային տարածքում և դրա շուրջը ստվածներում տների և կառույցների շինարարության համար պահանջվում է թույլտվություն
		· Տների և կառույցների ծավալը (կշիռ)	· 1 մ <sup>2</sup> 10 տ կամ ավել ծավալով կառույցների շինարարության և բարելավման համար պահանջվում է թույլտվություն
Ոռոգում	Սողանքի կոնվեկցիա դրսից	· Խողովակի տեղադրությունը	· Խոխափեք խողովակներն անցկացնել այնպիսի վայրերում, որտեղ կան սողանքային մեծ տատանումներ
		· Ջրթող խողովակի տրամագիծը	· 100 սմ <sup>2</sup> կամ ավել լայնական կտրվածքով տարածք զբաղեցնող ջրատար խողովակի տեղադրման համար պահանջվում է թույլտվություն
		· Նյութ, որից պատրաստված է ջրթող խողովակը	· Խուսափեք երկաթե, բետոնե կամ այլ նյութերից պատրաստված խողովակներ օգտագործելուց, որոնցից արտահոդքի հավանականությունն ավելի ցածր է
	Ջրցանում	· Ցանվող ջուր (քանակ) · Ջրցանման ժամանակը	· · Խուսափեք ջրցանումից ուժեղ անձրևների և ձնհալի սեզոնին
Ծառահատում	Ծառահատում	· Ծառահատման ծավալը	·
		· Հատված ծառի բնի տրամագիծը	·

**Հավելված 4. Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող աշխատանքներ լիազորությունները և իրավասություններ**

- 1) արտակարգ իրավիճակներում ժամանակ մարդկանց կյանքի ու առողջության փրկումը և պահպանումը.
- 2) արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը
- 3) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման միջոցառումների, փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների, կազմակերպում ու համակարգում,
- 4) նախարարությանն օրենքով ամրագրված իրավասության շրջանակներում հատուկ թույլատրողական և վերահսկողական գործառույթների իրականացում
- 5) իր խնդիրների կատարումն ապահովելու նպատակով իրավունք ունի՝ օրենքով սահմանված կարգով անարգել օգտագործելու կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների կապի, տրանսպորտի միջոցները և այլ գույքը (բացի հատուկ նշանակության, դիվանագիտական, հյուպատոսական, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներին, միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցներից և այլ գույքից)՝ հետագա համարժեք փոխհատուցմամբ.
- 6) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման և այլ աշխատանքներում ներգրավելու բնակչությանը.
- 7) արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքների կազմակերպման և իրականացման նպատակով հանձնարարություններ տալու պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին, քաղաքացիներին.
- 8) արգելելու մուտքը արտակարգ իրավիճակի, փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման և այլ աշխատանքների կատարման վայր ու պահանջելու բոլոր անձանցից պահպանել անվտանգության կանոնները:
- 9) պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, քաղաքացիները պարտավոր են աջակցել ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությանը արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման ու քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կազմակերպման և իրականացման ժամանակ:
- 10) Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցել արտակարգ իրավիճակների հետևանքներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանն ու կատարել այդ ուղղությամբ փրկարար ծառայության ծառայողների բոլոր ցուցումները:



Առանձնացված հավելված 5 Պիլոտային ծրագրի թեկնածու տեղամասերի ցուցակ



List of Candidates of Pilot Project Areas

No.	Name	Map	Inventory sheet	Altitude (m)	Width (m)	Length (m)	Area (ha)	Hazard	Risk	Priority	Houses damaged	Houses in risk	Other damages	Site visit		Evaluation				
																1	2	3	4	Fin
0	Voghjaberd (Active blocks)	K-38-138	KOTA-138-0160	1,570	1,913	2,906	287	I	H	A	150	250	Main road etc.	18/Aug	Too big, Partly very active, Measures to be studied	A	B	B	A	
																5	3	3	5	16
1	Voghjaberd (whole area)	K-38-138	KOTA-138-0160	1,570	1,913	2,906	287	I	H	A	150	250	Main road etc.	18/Aug	Too big, Partly very active, Measures to be studied	A	C	B	D	
																5	0	3	-3	5
2	Dilijan "Mets Tala"	K-38-114	TAVU-114-0280	1,325	900	550	62	II	H	B	2,000	2,000		22/Aug	Too big, Rather stable after drainage tunnel renovated	B	D	C	C	
																3	-3	0	0	0
3	Getahovit	K-38-115	TAVU-115-0271	756	450	200	5	II	H	B	550	?		22/Aug	Good for pilot project, Very active Serious damage to houses	B	B	A	A	
																3	3	5	5	16
4	Arapi	K-38-112	SHIR-112-0020	1,484	440	220	5	I	H	A	200	600		21/Aug	Good for pilot project, Very active Serious damage to houses	A	B	A	A	
																5	3	5	5	18
5	Ayrum	K-38-102	TAVU-102-0033	510	250	100	2	I	M	B	0	0		22/Aug	No residential house, MTC be in charge Measures will be taken in on-going project	B	B	C	B	
																3	3	0	3	9
6	Dilijan international school	K-38-114	TAVU-114-0120	1,389	650	700	40	III	M	C	?	?		22/Aug	Private property Activeness still unknown (stable?)	C	C	C	B	
																0	0	0	3	3
7	Sisian-pass	J-38-008	VAYO-008-0460	2,418	1,100	5,400	263	I	M	B	0	0	Main road etc.	19/Aug	Very active, No residents, Main road seriously damaged	B	B	D	D	
																3	3	-3	-3	0
8	Kapan (Manukyan)	J-38-033	(SYUN-033-2050)	874	300	500	10	III	M	C	0		Apartment buildings	20/Aug	Very active Measures to be studied	C	B	C	A	
																0	3	0	5	8
9	Hovq	K-38-115	TAVU-115-2260	1,197	1,000	4,400	628	I	H	A	70	?	Main road etc.	22/Aug	Too big Relocation to be studied	A	C	B	D	
																5	0	3	-3	5
10	Haghatsin	K-38-114	TAVU-114-0800	1,082	950	660	49	II	H	B	17	17	Main road etc.	22/Aug	Too big Long-term measure to be studied	B	C	C	B	
																3	0	0	3	6

Category		Rank			
1	Priority (Seriousness of hazard and risk in the areas)	A	B	C	D
2	Possibility of applying countermeasures to other areas	High	Moderate	Fair	Poor
3	Cooperation and intention of residents and local managing staffs in the areas	Excellent	Good	Fair	Poor
4	Scale of active landslide (A; ha)	A<=1	1<A <=10	10<A <=100	100<A
Point		5	3	0	-3

